ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

I

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ДЕРЕНИК ДЕМИРЧЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

В ЧЕТЫРНАДЦАТИ ТОМАХ

ТОМ

I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա 65545 II

ՏԱՌԶՈՒՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Ար—2
Դ 35

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱԲԱԲՅԱՆ Ս. Բ., ԲԵԺԱՆՅԱՆ Ա. Ա., ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ Խ. Մ.,
ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Գ., ԻՆՃԻԿՅԱՆ Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ Պ. Հ.,
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս.

Տեխսաբ կազմեցին և ծանոթագրեցին
Մ. Ս. ՍԱՂՅԱՆ, Մ. Մ. ՄԵԼԻՔՅԱՆ

Հատորի խմբագիր
Ա. Գ. ԶԱՔԱՐՅԱՆ

Դ $\frac{70303}{703\ (02)-76}$ 65—75



Դ. Գեմիրճյան

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա ժողովածուն Դ. Դեմիրճյանի երկերի առաջին ամբողջական, գիտական հրատարակությունն է։ Այն ընդգրկում է գրողի հարուստ և բազմաժանր գրական ժառանգության բոլոր կարևոր ստեղծագործությունները։ Համապատասխան բաժիններում ներկայացված են հիմնական երկերի գոյություն ունեցող տարբերակները և նշված են տեքստային տարբերությունները։ Ծանոթագրությունների բաժնում տրված են անհրաժեշտ մատենագիտական տեղեկություններ, ինչպես և տվյալներ երկերի ստեղծագործական պատմության վերաբերյալ։ Օգտագործված են գրողի արխիվը, երկերի բոլոր հրատարակությունները և պարբերական մամուլը։

Երկերը հատորներում տեղաբաշխված են ըստ ժանրերի և ժամանակագրության, հետևյալ կարգով.

Առաջին հատոր՝ *Բանաստեղծություններ, քառյակներ, պոեմներ, թարգմանություններ.*

Երկրորդ հատոր՝ *Պատմվածքներ.*

Երրորդ հատոր՝ *Պատմվածքներ.*

Չորրորդ հատոր՝ *Վիպակներ, գեղարվեստական ակնարկներ, մանրապատում.*

Հինգերորդ հատոր՝ *«Համառոտ անմահներ», երգիծական պատմվածքներ, ֆելիետոններ.*

Վեցերորդ հատոր՝ *«Նոր մոնումենտալ», «Քաղաք» վեպերը.*

Յոթերորդ հատոր՝ *«Վարդանանք» (Ա գիրք).*

Ութերորդ հատոր՝ *«Վարդանանք» (Բ գիրք).*

Ինններորդ հատոր՝ *«Մեսրոպ Մաշտոց»*
Տասներորդ հատոր՝ *Դրամատիկական երկեր.*
Տասնմեկերորդ հատոր՝ *Դրամատիկական երկեր.*
Տասներկուերորդ հատոր՝ *Հոդվածներ.*
Տասներեքերորդ հատոր՝ *Հոդվածներ, ճառեր, ելույթներ.*
Տասնչորսերորդ հատոր՝ *Հուշեր, օրագրեր, նամակներ, ասույթներ։*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1893—1899

ԱՊԱԳԱՆ

Մանուկ առվակը առաջ է հոսում,
Դեպ՝ ծովն է վազում անույշ խոխոջով,
Եվ ճանապարհին նա կյանք է սփռում՝
Դալար խոտերին գրկախառնվելով։

Բայց... Երբ որ դառնա ալիք կատաղած,
Նա կխորտակե ահեղ նավերին
Եվ ամեն բոպե մրրկով բռնված՝
Կբախե կուրծքը կարծր ժայռերին ...

AMOUR-Ի

Ամո՛ւր, ինչո՞ւ դու ինձ նվիրեցիր
Այդ ծաղիկները չքնաղ, աննման,
Որ այդպես քնքույշ, այդպես սիրալիր
Միջնորդ են դառել կյանքի, հաշտության ...

Ա՜խ, մի՞թե դրանց հեզ թերթիկներին,
Որոնց Պառնասի զնփյուռն է շոյել,
Իր հետ չի՞ տանիլ աշնան զիլ քամին,
Լեսան անզո՞ր է իր գրկում թաղել ...

ԿՈՒՅՍ-ԳԵՏԱԿ

Գետակը ինչպես մի կույս ամոթխած՝
Հեռու դաշտերի մթնումն է թաքնվել,
Իսկ վառ լուսնակը ամպերից կամաց
Կախարդիչ դեմքն է նրան դարձրել ...

Եվ հիմա հեռու, մթին դաշտերում
Փայլում է կույսը չքնաղ ծիծաղով.
Իսկ սիրահարված լուսինը բարձրից
Իր ուխտն է կնքում բորբոք համբույրով ...

ՆԱՎ

Կարապի նման թևերը պարզած,
Սահում է նավը ջրերի կրծքով.
Հեռանում է նա ինչպես աքսորված,
Մշուշում ուրա՜խ, անվա՜խ թաղվելով ...
Քամին է շնչում,—
Թևերը շարժում
Եվ հալածվածիս իր մոտն է կանչում.
«Ինչո՞ւ չես գալիս, անմեկին ընկեր,
Թո՛ղ տանջող մտքեր ...
Գնա՜նք,
Հեռանա՜նք,
Ուր կուրծքն է հուզվում մեծ օվկիանային,
Ուր ազատ թռչում հալածված քամին ...»։

ՄԵՆԱ՞Կ, ԼՌԻ՞Կ ...

Մենա՞կ, լռիկ տխրում էի պարտեզում
Իսկ լուսինը դողդողում էր երկնքում.
Աստղերի հետ հալածվածին չխղճաց,
«Նա տանջվում է»,—միայն ասաց ու գնաց ...

Մենա՞կ, լռի՞կ, որպես պոկված տերևիկ
Դողում էի, իսկ իմ շուրջը փոթորի՞կ ...
Քամին եկավ, քամին երգեց ու դողաց,
«Նա տանջվում է»,—միայն ասաց ու գնաց ...

Մենա՞կ, լռի՞կ, որպես նսեմ ուրվական
Գնում էի աշխարհային իմ ճամփան,
Մարդիկ եկան, մարդիկ անցան, նայեցին,
«Նա տանջվում է»,—ասացին ու գնացին...

Մենա՞կ, լռի՞կ, որպես սառը մահարձան
Կանգնած էի անդնդի մոտ կորստյան.
Դու մոտեցար, ինձ սառնադեմ նայեցիր,
«Նա տանջվում է»,—ասացիր ու գնացի՞ր ...

ՔՆԱՄ ԵՐԵԽԱ

Շա՞կ, շուք,—օրորոցն է ճռնչում,
Մո՞ւշ, մո՞ւշ,—իմ բալիկն է խոր ննջում:
Հեռո՞ւն, որտեղ՝ չգիտեմ,
Մի չար ճիվաղ մեքենա
Գոռգոռում է բոցաբեմ,—
Գազաններ է երկնում նա:

Զրա՜խկ, զրա՜խկ,—ծնծկըվում է ու երկնում,
Դրա՜նգ, դրա՜նգ,—գազաններ է նա ցկնում...
Թնդանոթներ բյուր հազար,
10 Արյունբուռ՜ւշտ, սոսկալի,
Եվ ցկնում է ում համա՜ր,—
Իմ այս ննջող խեղճ բալի։
Շա՜խ, շո՜ւկ,—օրորոցն է ճռնչում,
Մո՜ւշ, մո՜ւշ,—իմ բալիկն է խոր ննջում։

ՄԱՆԿԱՆ

Ահա սիրուս. ցավ ու հոգսեր, մութը ինչպես դերեզման՝
Սիրո՛ւն մանկիկ, քնքո՛ւշ մանկիկ, քեզ եմ բերում այս անգամ.
Շա՛տ փնտրեցի՝ բայց չգտա սրտիս համար դեղ ու ճար,—
Դարդս շա՛տ է, անմեղ մանկիկ,—դու աղոթիր ինձ համար ...

5 Ես տեսնում եմ իմ եղբորը մի՛շտ հալածված ու անտեր,
Նա տանջվո՛ւմ է, նա թափում է աղի-լեղի արցունքներ.—
Կյանքս նրա՛ն նվիրեցի ու ես եղա ուժասպառ,
Ես հոգնա՛ծ եմ, քնքո՛ւյշ մանկիկ,—դու աղոթիր ինձ համար ...

Ես ուզում եմ արցունք թափել, արցունք չունի՛մ թափելու,
10 Ես ուզում եմ կորչել; թուչել, դեպի հեռու ու հեռո՛ւ,
Բայց իմ հոգին շղթայո՛ւմ են այս դարդերը անհամար,
Հուսահա՛տ եմ, անո՛ւշ մանկիկ,—դու աղոթիր ինձ համար ...

Ես է՛լ անմեղ մանուկ էի՝ ինչպես դու ես, իմ մանկիկ,
Գիշերները ես շա՛տ էի աղոթում գո՛հ ու լռիկ.
15 Իմ աղոթքը շա՛տ էր մաքուր, մանկական ու հուսավա՛ռ,
Բայց ե՛ս հիմա չեմ աղոթում,—դո՛ւ աղոթիր ինձ համար ...

Աստղի նման փայլեցին ու հանգա՛ն իմ վառ օրերը,
Եվ իմ դեմքին էլ չեն ժպտում ոսկեշողուն աստղերը,
Գիշերները այնպես սիրուն էլ չեն բազմում դաշտ ու սար.
Ա՛խ, իմ հոգին մանկակա՛ն չէ,—դու աղոթիր ինձ համար ...

Գուցե շո՛ւտ գա վերջին օրս, այն վե՛հ, ահեղ դատաստան,
Երբ ամենքը աղոթք անեն, երգեն տխուր շարական,
Ախ, ա՛յն ժամին, երբ ես անխոս, հանդարտ թողնեմ այս
աշխարհ,—
Վերջի՛ն անգամ, սիրո՛ւն մանկիկ,—դու աղոթիր ինձ համար...

ԵՐԳ

Այն հովտի մեջ կախարդական՝
Ուռենին էր սոսափում,
Եվ նրա տակ ալեծածան
Առուն անուշ խոխոջում։
Երբ լուսինը իր շողերը
Երկնքումն էր վառվռում,
Եվ իր նսեմ, խոլ ստվերը
Առվի ծոցում դողդողում,—
Մենք կնքեցինք այն վա՛ռ գիշեր
Մեր սուրբ ուխտը հավիտյան,
Ուռենին էլ սոսափում էր
Մի մեղեդի քաղցրաձայն ...

Այն հովիտը հիմա մթին՝
Հառաչում է ու տխրում ...
Օ՜, տեսնում եմ իմ ուռենին
Այն հուսահատ վայրերում։
Փայլո՛ւն գիշեր, փայլո՛ւն գիշեր,
Ո՞ւր հեռացար այս հովտից.
Սիրո՛ւն աչեր, սիրո՛ւն աչեր,
Ո՞ւր չքացաք իմ սրտից ...

Տերևներին՝ դեղնած, խղճո՛ւկ՝
Հալածում է ցուրտ քամին,—
Հիշատակնե՛ր, գնո՞ւմ եք դուք,—
Տարե՞ք ձեզ հետ այս հոգին ...

ՍՈՆԵՏ

(Մ. Ա.-ին)

Ա՜խ, մի՛ հրամայիր ծանր լռությամբ,
Որ ես քեզ երբե՛ք, երբե՛ք չսիրեմ ...
Հոգիս սպրում է սրտիդ ջերմությամբ,
Եվ դու չե՛ս տեսնում որքան տանջվում եմ ...
Ես կցանկայի զգացմունք լինել,
Փոթորկե՛լ, հուզվե՛լ սրտիդ խորքերում ...
Ես կցանկայի արցունքի փոխվել,
Որ թառամեի քո վառ աչերում ...

Ես կցանկայի մի երազ լինել,
Երա՛զ մանկական, անդրաշխարհային,
Վառելով սրտումդ ահեղ ցնորքներ ...

Ես կցանկայի քո սերը երգել,
Որպես օվկիանը արև-արքային,
Խռովելով կրծքիս ահեղ ալիքներ ...

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ...

Լո՜ւռ գիշեր է. որպես նսեմ ուրվական՝
Թափառում եմ ես նրա տան առաջին,
Շուտով պետք է քայլամոլոր հեռանամ,
Նոր ուժ տալով իմ այս սիրո տանջանքին ...

Բարի գիշե՞ր ... Ահա հանգա՞վ ճրագը,
Պատուհանը մթության մեջ թաղելով.
Խորհրդավոր, լո՞ւռ է նրա սենյակը,
Որպես տաճար, նվիրական, անվրդով ...

Բարի գիշե՞ր... Տե՛ս լուսինը դալկացած՝
Քուն է մտնում այն ձյուն ու ծով ամպերում,
Եվ թախծալի ստվերներով փաթաթված՝
Բարդիները լուռ ննջում են պարտիզում ...

Բարի գիշե՞ր... Ահա լռեց ամե՞ն ինչ...
Օ՜, ամենքին բարի գիշեր պիտի գա,—
Միայն սի՛րտս է, որ քուն չունի վշտերից,
Միայն սիրո՛ւս բարի գիշեր էլ չկա ...

ԹՈՂ ՀԱՄԱՌ ՎԻՇՏԸ ...

Թող համառ վիշտը զարթնելով նորից
Վրդովե հոգուս հանգստությունը.
Մոտ մի՛ դար, երբեք մի՛ խղճա դու ինձ,
Ի՞նչ անեմ, ո՞ւշ է կարեկցությունը։

Մենության մեջ եմ վերքերս բուժում,
Նրանց ձեռ տալու դու չմոտենա՛ս.
Կարող եմ, թե՝ չէ,—ես չե՛մ ափսոսում.
Բայց այն բուժելու դու չմոտենա՛ս ...

Ես չե՛մ հավատում կյանքի խնդության,
Ես չե՛մ հավատում սիրո պսա՛կին.
Եթե կա՛ կյանքումս սիրելու մի բան,
Այդ իմ տանջա՛նքն է, թախի՛ծը խորին ...

Ա.ՀԱ. ԿԱԹԻԼԸ ...

Ահա կաթի՛լը ցուրտ արցունքներիս ...
Օ՜, կյանքի մռայլ, գիտեմ չե՛ս հեռու,
Բայց մինչ հասնե՛լդ ... Ավա՛ղ այս սրտիս,—
Դեռ շա՜տ արցունք կա իղուր թափելու ...

5 Այս մառախլապատ ու փշոտ ուղին՝
Գիտեմ, շիրի՛մն է ինձ հասցնելու,
Բայց մինչ կհնչե կոչնակը վերջին,—
Դեռ շա՜տ տանջանք կա իղուր տանելու ...

Մ. Ա.-ԻՆ

Աստղերը որպես մահվան կերոններ՝
Լուռ դողդողում են դառնաշունչ քամուց ...
Ցուրտ է իմ սիրտը, ցո՛ւրտ որպես ձմեռ,
Օ՜, նա հոգնած է վշտով զարկելուց ...

5 Ո՞ւր ես, ախ, ո՞ւր ես, իմ մահվան հրեշտակ,
Դու, որ երկինքս դարձրիր գերեզման,
Դու, որ խեղճ սրտիս տալով լո՛կ տանջանք՝
Իմ վառ սիրո հետ խաղ արիր միայն ...

Ախ, ո՞ւր ես, արի՛, թող քո հայացքը
10 Ջտա ինձ ո՛չ սեր, ո՛չ մտերմություն ...
Գոնե կլսես հառաչա՛նք,
Որպես մի օտար աղոթքի հնչյուն ...

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ
(Նվեր իմ ընկերներին)

Պատանեկան անմեղ կյանքի այս երազոտ օրերում,
Սիրո անհուն տանջանքները, վշտերն էլ են սիրելի.
Ձեր փառքը մի՛շտ կանմահանա մեր բաբախող սրտերում,
Փոթորիկնե՛ր պատանեկան օրերի ...

Պատանեկան անմեղ սիրը մեզ տանում է մի աշխարհ,
Որտեղ չկան հառաչանքներ, տխուր ձայնը շղթայի ...
Օ՛ նոքա մի՛շտ սիրելի են— սիրելի եք մեզ համար,
Փոթորիկնե՛ր պատանեկան օրերի ...

Երբ մեր սիրտը չունի հանգիստ՝ փոթորիկ ենք որոնում,
Որպես ծովի մի սիրահար, մի անհանգիստ նավաստի ...
Օ՛, այն դուք եք կյանքի խաղաղ, մեռած կուրծքը վրդովում,
Փոթորիկնե՛ր պատանեկան օրերի ...

Երբեմն մեզ վիշտն է մաշում, ձանձրանում ենք այս կյանքից,
Նշա՛ն, որ մեզ սպառնում է մի կործանող սև ոգի ...
Այն դո՛ւք եք, որ սև մտքերը հալածում եք մեզանից,
Փոթորիկնե՛ր պատանեկան օրերի ...

Բայց շո՞ւտ կգա ծերությունը, որպես ձմեռ դառնալից
Պետք է չորնան արցունքները և չունենանք սփոփիչ ...
Դո՛ւք կմնաք մեզ հիշատակ, մեզ հավիտյան պաշտելի,
Փոթորիկնե՛ր անցած-կորած օրերի ...

ԼԱՑՈՂ ՈՒՌԵՆԻ

Ես երազ տեսա ... Պառկած էի ես
Լացող ուռենու զով ստվերի տակ,
Որ թեքված վրաս մի վշտակցի պես
Կուզեր իմանալ իմ դաղտնի տանջանք ...

2—179

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ես հիվանդ էի վերջին վշտերով,
Զունեի ուրիշ մի այլ սփոփանք.
Միայն ուռենին էր կարեկից շնչով
Գաղտնի վշտերիս ընկերը միակ։

Նա որպես մի կույս՝ սգավոր, տրտում,
Երկար վարսերը փռած իմ կրծքին՝
Թափում էր վրաս գիշերվա մթնում
Այրող արցունքը— նվերը վերջին։

Մ.-ԻՆ

Քո սրտի մեջ երբեք ես չեմ որոնել
Անմիտ ցնորք և վաղանցուկ հեշտանքներ.
Հանգիստ ժամեր գտնել ես չեմ ցանկացել,
Ոչ էլ դրախտի հնչյուններ ...

Ուզում էր արձագանքը դուրս կանչել
Մաքուր, աղատ զգացումիս աղբյուրին ...
Օ՛հ, ինձ պետք էր պատասխանը դուրս խլել
Այս իմ տանջող մտքերին ...

Այդ չունեիր, բայց թող քո մեջ բորբոքվեր
Ոչ լոկ կրքեր, այլ խարույկը իմ մահվան ...
Հպարտ հոգիս թող նրա մեջ պատրաստվեր
Ոչնչանալ հավիտյան։

Օ՛, թող այնտեղ գահավիժվեր իմ հոգին
Մտքերիս հետ՝ անհուն, անվերջ հոսանքով
Եվ թող նոքա ընդմիշտ անհետ կորչեին
Այն բոցերում թաղվելով ...

ՀՐԱԺԵՇՏ

Բաժանման ժամը հասնում է ահա
Ինչպես բաժակը մահվան թունով լի.
Օ՜, նա չէ սպասում, միշտ անզուգ է նա,—
Նա մահվան նման երազներ չունի ...
5 Բարյա՜վ մնաք, դո՛ւք, ի՛մ բարեկամներ
Եվ դո՛ւք վշտերիս միշտ համր վայրեր ...

Ձեզ ի՞նչ փույթ, թե ես հեռու ձեզանից
Պիտ տանջվեմ անխոս, անմռունչ, դաղտնի ...
Անվերջ տանջվելիս էլ չի՛ք տեսնիլ ինձ,
10 Մենակ և հեռու իմ հոգին կլինի ...
Վշտերի ժամի՛ն հիշեցեք դուք ինձ,—
Եվ ձեր սրտերում իմ հոգին կապրի ...

Ո՞վ գիտե, գուցե տանջվողի սրտից
Վերջին հույսերն էլ կորչին, հեռանան.
15 Դուցե շիրիմը այս վաղ օրերից
Ինձ պատրաստել է իմ սառ օթևան։
Աղոթքների մեջ հիշեցեք դուք ինձ
Եվ ձեր սրտերում կապրեմ հավիտյան։

Եթե ինձ հիշեք՝ ինչպես հավիտյան
20 Կորած ընկերին՝ այդպես հիշեցեք ...
Հիշողությունը չի լինիլ ունայն,
Երբ արցունքներով նվիրագործեք ...
Երբ դուք լաց լինեք,—օ, ե՛ս կլինեմ այն.
Արցունքի միջով իմ վիշտը տեսեք ...

ՌՈՄԱՆՍ

Երկու հայդուկներ գնում—փախչում էին
Դեպի Ռումինիա տաճկական զորքից,
Եվ, երբոր Դանուբն անցան, մյուս ափին
Նստեցին հոգնած փոշուց ու տապից ...

5 Եվ վերջին անգամ հայացքը հառած
Կապուտին տվող վեհ Բալկաններին,
Հայրենի երկրում աղոթքը սովրած՝
Նոքա լուռ, տխուր սրմնջում էին։

Դանուբն հոսում էր պղտոր կոհակով,
10 Խուլ որոտում էր ձորերի միջին,
Եվ մութ ալիքը անվերջ տրտունջով
Անխնա ծեծում էր քարին ու ափին ...

Մի հայդուկն ասաց. «Ա՜խ ի՜նչ կարոտով
Ես կմեռնեի հեռու Դանուբից ...
15 Ի՜նչպես կուզեի, որ մահը շուտով
Ինձ ազատեր այս վիրավոր սրտից ...

Ո՛չ, հայրենիքը մերը չի դառնա —
Թող հիշատակն էլ Դանուբը տանի»,—
Ասաց ու նետեց քսակը մեռաքսյա,
20 Որ նա լցրել էր հողով հայրենի ...

Մյուսն ասաց. «Ի՞նչ է սև մահվան քունը,
Երբ օտար երկրում նրան պիտ դնեմ,
Սարսափելի չէ տանջանք-արյունը,
Թե բոլորի հետ ես նրան տեսնեմ։

25 Ո՛չ, ընկեր, դեռ չի բոլորիլ տարին,
Աշխարհի բանը կգնա իր կարգով.
Այնտեղ կզարթնի Բալկանի որդին —
Եվ շտապ՝ կա՜նցնենք Դանուբի ջրերով ...

Լսի՛ր. գնդակը երբոր սուլելով
30 Գա, ամուր բախի իմ անվախ կրծքին,
Դու լվա՛ վերքերս Դանուբի ջրերով
Եվ թաղիր այստեղ, Դանուբի ափին։

Եվ կռվից հետո կպառկեմ ահա,
Եվ հանգիստ կլինեմ ես բոլոր հոգով,
35 Որ լաց եմ նզել մեր երկրի վերա
Արցունքի փոխան սրտի՛ս արյունով։

Կանցնի ժամանակ—ողջ կանցնի անհետ,
Փոշիս կխառնի գեղջուկի գութան.
Կերգե գեղջկուհին, Դանուբն էլ նրա հետ
40 Մի օրոր կերգե հավիտենական ...»։

Ա՜խ, ԵԹԵ ԱՅՆՏԵՂ ...

Ա՜խ, եթե այնտե՜ղ գերեզմանից ետ,
Դեռ կա՛ մի այլ կյանք անհայտ ու անհուն,
Եվ եթե մահը դեպ երանավետ
Այն կյանքի դիրկն է մեր հոգին տանում,—
5 Օ՜, ինչպես կյանքը ես կթողնեի,
Ուր ջինջ մաքրության չկա սուրբ տաճար,
Ես դեպի այնտե՜ղ, այնտե՜ղ կերթայի,
Դեպ այն կյա՛նքն անհուն, հեռու, փրկարար ...
Եվ կամ գուցե նա մի խորհրդավո՜ր,
10 Մի անվե՜րջ կյանք է իր սարսափներով.
Ի՞նչ փույթ, կերթայի՛ շուտով, քանի որ
Այս կյանքն ավերեց հոգիս իր թույնով.
Ես կթողնեի շղթա ու տանջանք,
Արժե՞ր վշտանալ այս կյանքի համար.
15 Ես կթռչեի մտքից էլ արագ
Դեպ հեռո՜ւ, հեռո՜ւ անծանոթ աշխարհ ...
Օ՜, եթե այնտե՛ղ, գերեզմանից ետ,
Կա՛ դարձյալ աշխարհ մի երանավետ ...

ՎԱՅՐԻ ՍԵՐ

Արի՛ մոտս, սիրո՛ւն աղջիկ,
Առանձնանանք հեռո՛ւ մի տեղ.
Մեր վերևը— աստղո՞տ երկինք,
Լուսինն էլ մեղմ լողա այնտեղ։

5 Եվ մենք նստած երկնքի տակ՝
Երգենք վայրի՛, օտա՞ր մի երգ.
Ո՛չ մի խոստում իրար չտանք,
Դավի մասին էլ չխորհենք։

Ո՛չ աստղերին բռնենք վկա
10 Մեր հարատև սիրո համար,
Ո՛չ էլ մեր այս երկրի՛ վրա
Երդվենք՝ հավետ սիրել իրար։

Բաժանումը մեզնից հեռի՝
Սիրե՛նք իրար, անհոգ սիրենք.
15 Թող մեր սերը լինի վայրի՛,
Սկիզբ ու վերջ էլ չհիշե՛նք ...

ՆՐԱՆ

Մանուկ, զգում եմ, որ այս վերջինն էր,
Այս տանջող, անմիտ, երկնային սերը.
Չէ՛, հոգիս, անվերջ ինձ տանջանք միայն
Միշտ չեն սահմանել բախտի խաղերը։

5 Եվ չեմ կորչիլ ես,—այդ տանջանքները
Բոլոր ուժերս չեն խլել ինձնից.
Հոգուս կրակը, անհուն հույզերը
Այլ կյանքի համար պատրաստ են վառվել։

Ինձ համար արդեն հուզվում է հեռուն՝
10 Ինչ որ փնարում եմ— անհուն փոթորիկ.
Եվ շա՛տ կան ինձ պես՝ շատերից թաքուն՝
Անվերջ տառապող՝ ո՛չ շներ— մարդիկ ...

Գնալու համար դեռ կա ճանապարհ,
Նա ինձ վաղո՛ւց էր իրա մոտ կանչում.
15 Եվ ես ընտրեցի նրան ինձ համար
Դեպի վտանգը իմ ընտրած կյանքում ...

Արդեն վառվում է խարույկը սրտիս.
Կամ նա կճայթև ամենի գլխին,
Եվ կամ այրելով ուղեղս ու հոգիս՝
20 Մոխիրների տակ կթաղե իմ դին ...

*

* *

Քանի՛ ժամանակ քեզ չէի տեսել.
Հոգիս հոգնել էր կյանքի խաղերից.
Տեսա քեզ. բայց մենք որքա՛ն ենք փոխվել,—
Հետք չէ մնացել անցյալ օրերից։

5 Այն հայացքնե՛րը, այն չար երգերը,
Այն լուռ, թունավոր, հպարտ սրտերը,
Կյանքը մեղանից վազուց իրա հետ
Քշել-տարել է հեռու և անհետ ...

Հիմա գարունը իր թարմ բույրերով
10 Քեզ հետ տանջում է իմ մատաղ հոգին.
Ա՛խ, ինչո՞ւ մենք էլ չենք ապրում, անգին,
Գարնան սրտերով, գարնան երգերով։

ՔԵԶ Ի՞ՆՉ ՊԱՏԱՀԵՑ ...

Քեզ ի՞նչ պատահեց, օ՜, ջահել հասակ,
Ինչո՞ւ այսպես շո՛ւտ թունավորվեցիր.
Ի՞նչն է քեզ մաշում, կասկած ու տանջա՞նք,
Թե՞ տեսած կյանքից շատ բան սովրեցիր։

5 Օտար, շտապող ճամփորդի նման՝
Նայի՛ր, անցնո՞ւմ են քո տարիները ...
Օրերդ անհետ կորչում են անձայն,—
Ո՞ւր են, ի՞նչ եղան քո երազները։

Ինչո՞ւ ես նայում ուրիշի կյանքին,
10 Կամ անզոր կուլին, փոքրոգի անկման,
Ինչո՞ւ ես տարվում ուրիշի ցնորքին,
Ստրկին հատուկ վհատ հաշտության ...

Զգո՛ւյշ կաց, կանցնեն այս տարիները,
Առաջ կնայես,—ծերություն ու մա՛հ.
15 Ինչ որ կորցնես՝ էլ այն օրերը
Ետ չե՛ն տա, կանչես— էլ ետ չեն դառնա։

Սովորականը թոթափի՛ր քեզնից,
Ընտրի՛ր քո ուղին և առա՛ջ գնա.
Եվ եթե դժգոհ կլինես կյանքից՝
20 Անողո՛ք կուլիր ու մենա՛կ մնա ...

*
* *

Մարդիկ շրջում են անհոգ խմբերով,
Շրջում են պայծառ արեգակի տակ.
Եվ նրանք ի՞նչ գիտեն, թե ի՛նչ ցնորքներով
Ես էլ շրջում եմ նրանց միջ մենակ։

5 Արևը մութն է երևում աչքիս,
Շրջում եմ օտար ամենքի համար,
Եվ ինձ ասում եմ. «Ո՞ւր է նազելիս,
Ա՛խ, ինչո՞ւ նա էլ դարձավ ինձ օտար»...
Բայց ինձ տանջե՞լ է ուզում նազելիս.
10 Չգիտեմ թե ուր կորչեմ, հեռանամ։
Մարդկանց ծիծաղն էլ ճնշում է հոգիս,
Զգացմունքներիս չկա բարեկամ։

ՀԵՐԻՔ, ՍԻՐՏ ԻՄ ...

Հերիք, սիրտ իմ, ի՞նչ ես տարվել հուսահատող վշտերին.
Մի կողմ նետիր լռությունդ, խոսիր այժմ մարդկանց հետ.
Ի՞նչ ես կանգնել ու նայում դու ժանգոտված մտքերին.
Նոր մտքերի համեմատ՝ կռիվ մղիր այսուհետ։

5 Տե՛ս, անհամար խարույկների բոցերն երկինք հասցրած՝
Կյանքի դժոխքն հազարներին կուլ է տալիս կատաղած.
Ահա գործդ այնտե՛ղ է, գո՛րծ սրբազան ու հանուր,
Իսկ դու ի՞նչ ես սպասում, ո՞ւմ ես նայում, դեպի ո՞ւր։

Ետ մի՛ նայիր, նախորդներդ իրանց կյանքը անցրին.
10 Իրանց կյանքի համա՛ր միայն՝ իրանց գործն էլ վերջացավ.
Էլ նրանց մի՛ որոնիր պիտանին ու ցանկալին.
Հնանալով և իրանք,—իրանց գործն էլ հնացավ։

Նայի՛ր շուրջդ, նոր սերունդը շտապում է ու քայլում.
Ողջո՛ւյն նրան, թող այսուհետ նա ո՛ւժ առնե, մեծանա.
15 Եվ թո՛ղ ծաղրեն նախորդները, նրանք մեզ չեն հասկանում,
Թող ետ մնան. նոր սերունդը թող այժմ առա՛ջ ընթանա։

Բավակա՛ն է, որքան նրանք պառավացած շրթունքով
Հնքիաթացրին իրանց խոսքը, զրույց արին և մեզ հետ.
Բավական է նրանց փտած դավազանի հարվածով
20 Հայրենիքի ժողովուրդը առաջ գնա այսուհետ։

Մենք հպարտ ենք նայում նրանց սին, քմահաճ միտումին.
Նրանք կյանքը նեխեցին, նրա մեջն էլ թող ապրեն.
Տաք է այնտեղ նրանց համար, հաշտված իրանց վիճակին՝
Միայն այնտեղ թող իրանց առակները ծամծըմեն ...

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Ինձ՝ հայրենի երկար ճամփան
Տարավ մի գյուղ իջեցրեց.
Օ՛, աղմուկը երեկոյան
Որքա՛ն հուշեր զարթեցրեց ...

Հովիվ ու գառ իջան սարից,
Տուն են վազում աղմկելով,
Հնձվոր, մշակ եկան դաշտից,
Ուրախ, անհոգ «լե-լե»-ներով։

Ես հիշեցի մանուկ օրեր,
Անշուք տնակն իմ հայրենի,
Խաղաղ ու պարզ երեկոներ,
Դեմքեր ծանոթ ու ընտանի ...

Այնտեղ անամպ իմ ճակատին
Երեկոյան ասողն էր փայլում,
Պատուհանից լուռ գիշերին
Լուսինն անույշ ու մեղմ ժպտում։

Շուրջս լռեց. քողի նման՝
Սար, ձոր ու գյուղ՝ մութը ծածկեց ...
Բայց աղմուկը երեկոյան
Որքա՛ն հուշեր զարթեցրեց։

ՕՏԱՐ ԳԱՐՈՒՆ

Դարձյա՞լ գարուն ... Հուշերս էլի զարթնելով
Ինձ դուրս տարան հեռուները շրջելու ...
Ես ձորն իջա, ուր հովն անուշ մրմունջով
Գետի դալար ափն էր իջնում հանգչելու։
5 Սիրա՜ծ վայրեր... Մտամոլոր ու օտար
Շուրջս եմ նայում՝ նրանք ինձ չեն ճանաչում,
Նոր գարունը մանուկ շնչով հեշտարար՝
Անցած սիրուս օրորանն է գուրգուրում.
Աշունքի՞ն էր, որ ես նրան կորցրի,
10 Սիրուս հետ էլ իմ գարունը չքացավ,
Այնուհետ ձորն ու պերճ տեսքը ծառերի,—
Ողջ այս վայրը սրտիս նման սևացավ,—
Այժմ ինչո՞ւ է գարունն անհոգ շնչելով՝
Սիրուս աշնան մեռած վայրը նորոգում,
15 Թող իմ ուռին տերևազուրկ մնալով
Տխրի՛. էլ չի նա իմ սերը օրորում ...
Ես չե՞մ ուզում այս նոր գարունն հեշտարար,
«Նա» էլ չկա, թող գարունն է՛լ չլինի ...
Սիրուս սև՛ է, միտքս կնճռոտ ու խավա՛ր,
20 Երգս վշտո՞տ, այստեղ նա էլ չի՛ երգվի ...
Թող էլ հովիտն այսուհետ չպաճուճվի
Ուռիների այս տոնական զարդերով.
Թող էլ գետը աշխուժելով չթռչի
Այս նոր— օտար գարնան անհոգ երգերով ...
25 Բայց զո՞ւր... էլ ինձ լսո՛ղ չկա. մանկան պես՝
Հովիտ ու ծառ զարգարվել են կանաչով,
Միայն ժա՜յռը,—հի՛ն ծանոթս խստատես՝
Ինձ է նայում խոժո՛ռ ու մե՛րկ հայացքով ...

ՆԱ՛, ՈՎ ՏԱՆՋՎԵԼ Է ...

Նա՛, ով տանջվել է անհույս ու գաղտնի
Վիրավոր հոգին մենության հանձնած,
Միայն այնպիսի՛ սրտին է հայտնի
Իմ վի՛շտը, սի՛րտը թույներով լցված։

Ժպտում եմ, երբ որ սիրտս է խոր ճմլում,
Երբ կտո՛ր-կտո՛ր կյա՛նքս է փշրվում.
Երբ ես լռում եմ,—ինձ չեն մոտենում,
Երբ վիշտս եմ պատմում,—ինձ չեն հասկանում ...

Բայց ամենից շատ ով վիշտս դիտեր,
Նա՛, որ իմ սիրտը պետք է ամոքեր,—
Հենց նա՛ իմ վերքին նոր վերքեր բարդեց,
Հենց նա՛ իմ սրտի ողջ տեղին շանթեց ...

ԱՆԱՌԻԿ ՍՐՏԵՐԻ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նա շա՛տ էր սիրում. գիշեր ու ցերեկ տանջվեց նա երկար,
Տանջվեց նա մենակ, հալումաշ եղավ սիրտն է՛լ, հոգին է՛լ ...
Եվ նրա անսիրտ սիրելին սառն էր իբրև մի ժեռ քար,
Եվ հեգ տանջվողին նա երբեք չուզեց բարեկամ լինել։
Տանջվողը զնաց. սիրելուց հեռու թափառեց երկար,
Հիմա էլ սրա հոգին սկսեց ջերմ սիրով զարթնել ...
Հիմա էլ սրա սիրելին սառն էր իբրև մի ժեռ քար,
Եվ հեգ տանջվողին նա երբեք չուզեց բարեկամ լինել։
Այսպես փոխառփոխ, հեռվից երգեցին իրանց սիրերգը,
Մինչև որ բախտը նրանց որոշեց մի կարճ հանդիպում.
Այստեղ միասին երգեցին նրանք սիրո ողբերգը,
Վերջին սրցունքով կնքեցին սերն ու վերջին բաժանում ...

ՓՈԹՈՐԻԿ

Օ, ի՞նչ ուժգին հուզվեցիր,
Ահեղաշունչ փոթորիկ.
Դո՛ւ, որ իրար խառնեցիր
Սար, ձոր, անտառ ու երկինք ...
Այդ զայրացկոտ շանթերով,
Հսկայական վազքերով,
Այս վեհ սրտում բնության
Չկա ոչինչ քեզ նման։
Ի՞նչ ես պտրում դու երկար,
Ի՞նչ ես թողել ետևից,
Որ բարկացկոտ դու եկար,
Հեռու, անտես կողմերից։
Քո մեջ վաղուց գուցե կար
Մի ցավ խոշոր, ամեհի,
Թափառել ես դու երկար
Անապատում ամայի.
Գուցե ահեղ շանթերով
Ամպերն իրար խառնեցիր,
Հսկայական թևերով
Լայն օվկիանը գրկեցիր,
Ե՛վ չնչին ուժն օվկիանի,
Ե՛վ քծնանքը դու տեսար.—
Հպարտ հոգիդ ամեհի
Վիրավորվեց. հեռացա՛ր ...
Ուժիդ դեմ ուժ էլ չկա՛.
Չունես ընկեր հավասար.
Մենակ, ազատ ու հսկա
Ցափում ես դաշտ, ձոր ու սար։
Դու մտրակն ես բնության.
Դու անեծք ես շանթահար.
Եկար ու այս վարանման
Վախճան տվիր դողահար։

Վիշտդ ազատ դարձրիր
Անձրև-արցունք, մի հեղեղ,
35 Հուր ու կայծակ շինեցիր
Բարկությունդ խելահեղ.
Ամպերն իրար կուտելով՝
Դաժանացար, սևացար,
Անտառները փետելով՝
40 Դու վեր ու վար սլացար.
Հեղեղ-հեղեղ հորդելով՝
Անդունդները խուժեցիր,
Ցասկոտ ձայնդ թնդելով՝
Դեպ լեռնիվեր վազեցիր.
45 Հարվածեցիր շանթահար
Լեռան խոհերն հնացած,
Հսկա լեռը դողահար
Զարթնեց քեզնից սարսափած ...
...Օ, ինչ ուժգին շանթեցիր,
50 Ահեղաշունչ փոթորիկ.
Դո՛ւ, որ իրար խառնեցիր
Սար, ձոր, անտառ ու երկինք ...
Ես էլ քեզ պես կուզեի
Բարդ ու կուտակ հույզերով
55 Սրտիս մրրիկն ամեհի
Ժայթքել ուժգին շանթերով.
Բայց նա ամուր վանդակված
Գալարվում է սրտիս մեջ,
Որպես ափով բռնված
60 Ալիքների եղևէջ,
Ինչպես հեղեղ՝ լեռներից
Անդունդն ընկած խորավիհ
Էլ չի կարող խորքերից
Հանել մի ձայն կորովի,—
65 Այնպես խուլ է ու անձայն
Իմ փոթորիկն հոգեկան,

Գալարվում է անվախճան
Հուզումներով մոլեկան...
... Ինչո՞ւ շուտով լռեցիր,
Ահեղաշունչ փոթորիկ,
Դո՛ւ, որ իրար խառնեցիր
Սար, ձոր, անտառ ու երկինք ...

ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԻՆ

Փոթորիկն ուժգին աղմուկ է հանում ...
Լսում եմ նրան՝ քաշված սենյակս ...
Ա՛խ, տեսնես հիմա նա ի՞նչ է անում,
Նա՛, գարունքվանիից կորած թռչնակս ...

Գուրգուրե՞ց նրան գարունը արդյոք՝
Գրկած տանելով ամեն տեղ իր հետ.
Ունի՞ իր սրտին մտերիմ մի ոք.
Խաբե՞լ է նրան սիրո մի վարպետ ...

Գուցե նա ինչպես մի ծաղիկ աշնան՝
Հողմահարվելով անապատն ընկած,
Դողում է գունա՞տ և քնքույշ գարնան
Նախկին ջերմ հուրը աչերումն հանգած ...

Ա՛խ, գուցե հոգին հուզվում է վշտոտ՝
Այս փոթորկից էլ սաստիկ և ուժգին.—
Ուզում եմ հաշտված երթալ նրա մոտ,
Եվ սիրով թեքվել դողահար կրծքին ...

ՔՈՒՌԻ ԱՓԻՆ

Նստած եմ լուռ գետի ափին.
Նա վշշում է, հանդարտ հոսում,
Եվ հով տալով սրտիս տապին՝
Նա խոսում է. ի՞նչ է ասում ...

Ալիքները անդուլ երգով
Ափերին են զարկում այս լուռ,
Հեղհեղում են, փախչում շարքով,
Անվերջ գալիս, գնո՞ւմ են— ո՞ւր ...

Հենց այդպե՛ս են անքուն մնում
Խո՛ր-խո՛ր մտքերս այս հորդ ու բյուր.
Հենց այդպե՛ս են գալիս, գնում
Երազնե՞րս, օրե՞րս,— և ո՞ւր ...

Հենց այդպե՛ս է իմ երգն օտար ...
Երգով անդուլ սի՛րտ եմ ծեծկում,—
Սիրան իմ առաջ լուռ ու ժիր քա՞ր,
Իսկ ես մրմո՞ւնջ, անբո՛ւյն, անքո՛ւն ...

Հոսանքին եմ նայում տխուր.
Նա աչքերս է իր հետ տանում.
Ես մո՛ւթն ու խո՛ր՝ լսում եմ լուռ,—
Նա իմ առաջ կյա՞նքս է պատմում ...

ԷՆ ՄԱՐԴԻԿ ...

Ա՜խ, էն մարդոց կյա՛նքը չորնա,
Կյա՛նքս կերան մաշեցին.
Վարդս տեսան՝ ձեռքես առան,
Տրորեցի՛ն, չորցուցի՛ն.
Յարս տեսան՝ ձեռքես առան,
Ինձի աչքեն գցեցին,—
Օ՜ֆ, էն մարդիկ ջահե՛լ-ջիվան
Արև՛ կյանքս սևցուցին ...

ՃԱՄՓԻՆ

Հայրենիքիս վա՛ռ երազով՝
Դիշերն ինձի քուն բերեց.
Յարաբ ո՞վ էր անուշ ձենով
Խորունկ քնես ձեն տվեց.
«Վե՛ր կաց, ճամփո՛րդ, զարի՛պ ախպեր,
Բարի լուսը բացվե՛ր է.
Երազիդ մեջ շա՛տ ես լացեր,
Աչքվներդ թրջե՛ր է ...»։

Արևն ելավ ցոլցլալով
Աղոթրանի պալատեն,
Սև թևերը թափ-ծափ տալով՝
Հավքեր կանցնին երկնքեն։
Զարի՛պ հավքեր, դարդո՛տ հավքեր,
Ես է՛լ դարդլու ճամփորդ եմ.
Կեցի՛ք, հավքեր, մեկտե՛ղ երթանք,
Ես է՛լ ձեզ պես զարիպ եմ ...

Ա՜խ, մեր գեղեր-տեղերն կերթամ,—
Էնոնց շա՛տ եմ կարոտցեր.
Թռչնա՜ծ սրտով՝ դարդլո՜ւ կերթամ,—
Գյոզալ յա՛ր եմ կորուցեր.
Գողտուկ լալով՝ սիրտս էլման
Արտրսուքով լցվե՛ր է.—
Ազիզ մո՛րս, ջանի՜ս կերթամ,—
Աշխա՛րք ինձի մոռցեր է ...

Ա՜Խ, ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ԷԼ ...

Ա՜խ, մինչև օրս էլ անբույն թռչնի պես՝
Անտեր մնացի ցրտին ու աշնան.
Եվ մինչև օրս էլ մնացի՝ այնպես
Անսեր ու անհաց, խե՛ղճ թափառական ...

3—179

Սիրս ապուշին սերս վիջեցի,
Հիմարին խոնարհ ունկնդիր եղա,
Երկար ականջին երգս հնչեցի,
Մի ուրիշին էլ շալակս առա.

Հարսնացու գտա շառերի համար,
«Կենացի վրա» երկար ճառեցի,—
Ա՜խ, նրանց համար կյանքում շա՜տ երկար
Եվ ջա՛նք թափեցի, և՛ բրտնեցի՛ ...

Եվ այքս մնա՛ց խոնարհ խենթի պես
Որ ինձ էլ բախտը կժպտա՛ մի օր,—
Ա՜խ, դրանից էլ մնացի՛ այսպես,
Անսեր ու անհա՛ց, անտեր ու մոլո՛ր ...

ԹԵ ԹԱՐՄ ԿԱՂՆԻՆ Է ...

Թե թարմ կաղնին է մեղմիկ շշնջում՝
Մանուկ ոտները գլխիս տարածած,
Թե մանուկներն են անուշ կարկաչում՝
Դալար խմբերով շուրջս բոլորված.—
Երնե՛կ, ասում եմ, դեռ թա՜րմ կմնա
Ձեր վառ դարունը, սիրունիկնե՜րս ...
Խաղացե՛ք սիրուս թարմ շիրմի վրա,—
Վաղն էլ պիտ կոխեք սառ գերեզմա՜նս ...
Պտակնե՛ր հյուսեք ձեր մատա՜ղ կյանքին,
Նրանք իմ գլխիս կսևանա՜ն, չորնա՜ն.
Պտակներ բերեք լոկ սիրո՜ւս շիրմին,
Քանի որ նա՜ էր ձեր գարնան նման ...
Ա՜խ, նոր սե՜ր չկա, որ գա նորոգի՝
Թառամած կյանքս, իմ անո՛ւշ կյանքս ...
Ես էլ մնում եմ, որ մա՛հս տանի
Աղի՛ ու լեղի՛ տառապանքներս ...

Գիտե՛մ, երբ ձեզ հետ ինձ է՛լ է գրկում
Բնության վեհ երգն հավիտենական,—
Նա ձեր մանկության օրո՞ն է երգում,
Բայց իմ խեղճ կյանքիս վերջի՛ն շարական ...
Բնության անկյունը թող քամին քշե՛
Մեկ-մեկ վայր ընկած չոր տերևներս,
Եվ ավլած հովտում թող ազատ շնչե
Ձեր դալար կյանքը, սիրունիկնե՛րս ...

ԽՈԺՈՌ ՆԱՅՈՒՄ Է ...

Խոժոռ նայում է աշնան գիշերը ...
Քամին դուռ-երդիկ ծեծո՞ւմ է, ծեծկո՞ւմ.
Անձրևն է շաչում, հետն էլ իմ սիրտը՝
Վիրավոր, տխուր բախում է, զարկո՞ւմ ...

Դո՞ւռն էին ծեծում,—այդ ո՞վ է ծեծում,
Կորած թռչնի՞կս է, արի՛, նե՞րս արի ...
Քամի՞ն էր ծեծում ... Ա՛խ սի՞րտս է ծեծում.
Այդ սե՞րս է, սե՞րս, նա՛ է, քուն չունի ...

ՄԻ՛ ՀԱՎԱՏՍ. ...

Մի՛ հավատա դու շատ նրանց,
Մի հավատա, սիրո՛ւս,
Որ իմ սերը ջերմ ու անանց
Վառ ու խո՛ր չէ սրտումս ...

Մարդիկ այնքա՞ն սովորել են
Իրար խաբել-դավելու,
Որ հավա՞տն էլ կորցրել են
Ջերմ ու անանց սիրելու ...

* * *

Զանձրույթը սրտիս հետո՞ւ եմ փախչում
Այսքան ցրտաշունչ, ուշիղ աշխարքից,
Գիշերվա բողով ճամփան է թաքչում,
Անձրևն է մաղում պղտոր երկնքից։

5 Անտառը դանդա՞ղ տանում է բերում
Իր հաղարավոր հսկաներն անքուն,
Եվ հողմը աշնան քշում է թաղում
Գետնի ցուրտ խորշում տերևներն անգույն։

Այդ խորշը գթոտ մի սիրտ է հիմի
10 Ամեն արյունոտ, խեղճ սրտի համար։
Ախ ե՞րբ ինձ էլ հողմն այնտեղ կտանի,
Արի բա՛ց գիրկդ, գթառա՛տ խավար։

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

I

Անուշ գարնան շող ու ցողով
Ծաղիկները դուրս ելան.
Գարնան կարոտ սրտերն են այս
Որ նազելով բաց ելան։

5 Սի՛րտ իմ, միայն դո՛ւ չես բացվում,
Դու գարնան խորթ, լուռ ու մունջ,
Եվ քեզ համար ինչքան դարե՛ն
Այնքան ցա՛վ է ու մրմո՛ւնջ։

II

Գարունն եկավ շող ու շաղով,
Ջով ջրերի ձա՛յնն ելավ.
Եկավ թռչունն երգ ու խաղով,
Աշխարք երգի ծո՛վ դառավ։

5 Ելա՛վ բլբուլ՝ վարդ ու ծաղկունք
Ելան բազման երկնի տակ,—
Ու միայն դո՛ւ չեկար, հայդո՛ւկ,
Անո՛ւշ քնար հողի տակ ...

ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս, ՄԱՆՈ՛ՒԿ ...

Դու գիտե՞ս, մանո՛ւկ, ինչքա՞ն եմ տանջվում՝
Երբ ամեն անգամ կորցնում եմ սե՛րը ...
Մանո՛ւկ, այդ միայն ես ինքս եմ զգում,
Ե՞ս գիտեմ միայն սրտիս դարդերը ...

Ախ, գիտե՞ս որքա՛ն խուլ գիշերներին՝
Ես անիծե՛լ եմ, տանջվե՛լ, բայց լռե՛լ ...
Ի՞նչ արած, մանո՛ւկ, բախտի հաճույքին
Ջոհվում են սիրտն է՛լ, հոգին է՛լ, սերն է՛լ ...

Ուզեցի սիրել հեռո՛ւ թույներից,
Հեռո՛ւ դավերից, աղա՛տ, անկապա՛նք,—
Հենց դրա՛ համար զրկվեցի սերից,
Հենց դրա՛ համար մնացի մենակ ...

Ով որ ցա՛վ ունի, դարման է՛լ ունի,—
Պանդուխտն հայրենիք, որբն ապաստան,
Միայն իմ սի՛րտն է, որ ոչինչ չունի,
Հիշատակներն էլ ճնշում են նրան ...

ԹՈ՛Ղ, ԸՆԿԵՐ, ԹՈ՛Ղ ...

Թո՛ղ, ընկեր, թո՛ղ մենք միշտ օտար լինինք,
Մարդկանցից հեռո՛ւ, սարեսա՛ր լինինք,
Խուլ դուռ ու խուլ սիրտ մի՛ ծեծել, ընկեր.
Թո՛ղ խեղճ ու անքուն, միշտ թափա՛ռ լինինք ...

Օրեցօր կորան մեր ընկերները,
Մե՛կ-մե՛կ հեռացան, մեկ-մեկ մանրացան,
Թող դա՛ռն ու մենա՛կ լինին օրերը,
Թո՛ղ ճնշեն սիրտը ժեռ քարի նման ...

Հեռացի՛ր, տանջվի՛ր,—քեզ կմոռանա՛ն,
Մեռի՛ր,—արյունդ ոչ ոք չի՛ տեսնի ...
Թո՛ղ մեր արցունքներն հորդ աղբյո՛ւր դառնան,
Թո՛ղ, ընկե՛ր, սրտերս հենց այդպե՛ս մեռնի...

Բոլո՞ր հեռացան ... դի՜հ, ընկե՛ր, մենք էլ
Մնացինք դուրսը. ցո՛ւրտ է ու խավա՛ր ...
15 Թո՞ղ, մենք չե՛նք կորչի, կեր թա՜նք փնտրելու
Որբերի նման անկյուն մեզ համար։

Եթե չենք գտնի, թո՛ղ որ չգտնենք,
Թող մնա՛նք օտար ու թափառական.
Գոնե կլինի մի քա՛ր, ուր և մե՛նք
20 Հոգնած գլուխներս կթեքենք վրան։

Խո՛ւլ են դռները, ով որ տուն ունի՝
Ո՞վ դուռ բաց կանի հոգնած ճամփորդին,—
Է՛հ, այս գիշերում թող ասա՜ծ պահի
Անտուն ու անտեր կյանքի որբերին ...

ՍԵՐՆ Ի՞ՆՉ Է ...

Սերն ի՞նչ է, վայելքն ի՞նչ է,—
Սև ու դաժան օ՛ձ է նա ...
Ում սրտում որ բույնը դնե՝
Նա պիտ խոցվի՛, սևանա՛ ...

5 Սե՛րը, գարնան զարթնող օ՛ձ է,
Հեռո՛ւ, շա՛տ կխայթե քեզ ...
Ահա սիրտս սև ու խոց է.—
Ա՛խ, սև շա՛տ եմ լացել ես ...

Ա՜Խ, ԻՆՉ ՄԱՐԴԻԿ ...

Ա՜խ, ինձ մարդիկ խելա՛ռ տեսան,
Վրաս քար շա՜տ նետեցին.
Քարերն եկան՝ սրտի՛ս դիպան,
Վերքերն երկար մնացին ...

5 Բայց քո նետած քարը խոշոր՝
Սիրուս խելառ օրերում,—
Թաքցրել եմ շատ խո՜րն ու խո՜ր
Սրտիս արնոտ խորշերում ...

ԱՅԴՊԵ՞Ս, ԷԼ ՉԵ՞Ս ՍԻՐՈՒՄ ...

Այդպե՞ս, էլ չե՞ս սիրում դու ինձ
Եվ ատում ես օրեցօր.
Եվ ես հեռո՞ւ կերթամ քեզնից,
Կթափառեմ սա՞ր ու ձո՞ր ...

Ե՞ս եմ այնտեղ միակ արքան,
Պիտի շրջեմ երգելով.
Ծառ ու ծաղիկ շա՞տ պիտի լան,
Իմ խոր վիշտը տեսնելով։

Այնտեղ կասե՞մ, երբ դարունքին
Դու այցելես ձոր ու սար՝
Ծառ ու ծաղիկ, ո՞ղջ քո դեմքին
Նայեն խոռ՞վ ու օտա՞ր ...

Կասեմ, որ քեզ շվաք չտա՞ն,
Ոչ էլ կո՛ւրծքդ զարդարեն,
Քանի որ դու չա՞ր ես այդքան,
Չա՞ր ու սիրո՞ւն տարորեն ...

Ա՜Խ, ԹԱՌԱՄԵՑԻՆ ...

Ա՜խ, թառամեցին, մեկ-մեկ վա՞յր ընկան՝
Դալա՞ր թերթերս,—ջահե՞լ օրերս ...
Բայց այս աշխարհում մարդիկ չիմացան
Իմ կյանքի ցնցը,—տառապանքնե՛րս ...

Լեռան ծաղկի պես՝ մնացի մենակ,
Եկա՛վ թռչունը, տերևս տարավ,
Եկա՛վ պաղ քամին, թաղեց ձյունի տակ,
Մի սի՛րտ կար, այն էլ շար մուկը կերավ ...

Բայց այդ մուկ-թռչուն-մարդիկ չիմացա՞ն
Իրանց ձեռքերով բացած վերքերս ...
Ա՜խ, թառամեցի՜ն, մեկ-մեկ վա՞յր ընկան
Կյանքիս թերթե՛րը,—ջահել օրե՛րս ...

Ա՜խ, ԻՄ ԽԵՂՃ ԿՅԱՆՔՈՒՄ ...

Ա՜խ, իմ խեղճ կյանքում մի անգա՛մ միայն
Ժպտացին այն վառ աչքերն ու անցա՜ն ...
Դուցե կորել են և ա՜յս աշխարհից,
Բայց կարո՞ղ է որ չի կորել ինձնից ...

Ա՜խ, այն ասողնե՛րը գիտեն, թե որքա՜ն
Անտուն ու անքուն նրա՜նց եմ փնտրել,
Այն վառ ծաղկո՛ւնքը գիտեն, թե որքա՜ն
Սիրունիկներիս տե՜ղն եմ հարցրել ...

Ա՜խ, գիտեն, թե ես ինչքա՜ն եմ խնդրել,
Որ նրանց տեսնե՜մ, գրկերը ընկած՝
Ա՜խ, պատմեմ թե ես որքա՜ն եմ լացել,
Եվ որքա՜ն խորը սիրել եմ նրանց ...

ՈՒՐ ԵՆ...

Ո՞ւր են, արդեն վա՜ղ են մարել ինձ համար
Սիրո աչքերն այնքա՜ն անուշ ու թովիչ ...
Պղտոր սրտով հիմա մոլոր ու օտար՝
Ես փախչում եմ այս պա՜ղ, անսե՜ր աշխարհից...

Դատարկ հովտում աշնան հողմն է շառաչում.
Երկրի ծերո՜ւկ, մթնա՜ծ սրտի երգն է այդ,
Իմ սրտումն էլ վայրի՜ երգս է մրմնջում,
Այս հովտի պես սիրտս էլ շո՛ր է ու գունատ ...

Գ. Գեմիրճյան, 1910-ական թվականներ

ԵՐԲ ՎԱՌ ԳԱՐՈՒՆՆ Է...

Երբ վառ գարունն է այճնում նազելով,
Եվ ես գնում եմ մենակ շրջելու,
Երբ կույս անտառն է զարդան օրորով
Իր դալար երգը տարածում հեռու,
Երբ անտառների արքան է ճոճում
Դարավոր կատարն իր զիլ շշուկով,
Կամ գարուն կյանքի տղան է տանում
Իր դալար կյանքը երջանիկ երգով,—
Երա՞զ է կարծես, երա՞զ ինձ համար ...
Ես մտամոլոր՝ կյանքի խնջույքում,
Ես որպես մունջ հյո՞ւր մենավո՛ր, օտա՞ր
Լոկ սրտիս դազտուկ տրտունջն եմ լսում ...
Ես միշտ ասում եմ. այս բոլորն անցնե՞ր,
Գոնե շո՞ւտ ցնդեր տխուր կյանքիս հետ,
Կամ գոնե սրտիցս այս քա՞ղը ընկներ,
Որ տառապա՞նքս էլ վերջանար անհետ ...
Ասում եմ. ժա՞մ է, հեռանա՞մ, կորչե՞մ,
Տա՛մ տուրքս այս խիստ դատավոր բնության,
Ա՞խ, արդեն ժա՞մն է, որ ավլեմ, ժողովե՞մ
Զոր տերևներս, տանե՛մ գերեզման ...
Թեքվում եմ կրծքիս լուռ մտորմունքով՝
Եվ սկսում եմ վշտանա՛լ, տխրե՛լ.
Չէ՞ որ լա՞վ գիտեմ, որ մի՛շտ տրտունջով
Եվ լոկ վշտով եմ ես կյանքս անցրել ...
Գիտե՛մ ես, որ միշտ կյանքի հովվերգը
Գարունքի նման շուրջս չի խայտա.
Հիվանդի նման կգա՛ ողբերգը,
Անհույս անքալով այս օրն էլ կերթա ...
Գիտե՛մ, որ ես միշտ կյանքի խորթ որդիս՝
Կյանքս մաշել եմ միշտ խուլ դռներում,
Եվ վերջին շո՛ղն էլ հանդած արևիս՝
Ես ի՛նքս եմ խեղդել մռայլ ամպերում ...

Դ. Գեմիրճյանի մայրն ու հայրը

Ա՜խ, դառած անվե՜րջ մի թափառական՝
Բախո՛ւմ եմ ամուր պատահած սիրտը,
35 Եվ սերս հիմա շնչի՛ն է ինչքան,
Կորա՜վ նա, ո՞ւր է իմ հզո՜ր սերը ...
Լեռների շա՛րը, ձորերի ժա՛յռը
Խոժո՜ռ ու մե՜րկ են նայում ինձ հիմա,
Եվ անտառների վիթխարի մայրը
40 Էլ ինձ չի՜ կանչում, այլ՝ խո՜րթ ես, դնա՜ ...
Դահավիժեցի՜ն, ժայռերի՜ն դիպան
Վառ երազներիս ամարաթները,
Դիցուհիներիս ուրուներն անցա՜ն,
Հանգա՜ն վառ կյանքիս արեգակները ...

45 Ա՜խ, ջահելություն,—անփո՛ւյթ ինքնասպան,
Դու էլ ի՜նչ շտապ անցնո՜ւմ, դնո՜ւմ ես ...
Ա՜խ, ջահելություն, ի՜նչ վաղ եմ ես քեզ
Անմի՛տ դահիճս՝ տանում դերեզման ...
Տանե՛մ քեզ, տանե՛մ, թաղե՜մ հողի տակ,
50 Դու չա՛ր, քմահա՛ճ, խեղճ ջահելություն ...
Դու որ վախկոտ ես, քաշված ու մենա՛կ
Ջահելությո՜ւն ես,—սի՜ն ջահելություն ...
Ասա՛, ո՞ւր է քո փայլուն պատկերը,
Քո սո՜ւրբ ուժերը, հզո՜ր երդերը ...
55 Ճակտիդ դիզվեցի՜ն սև-սև ամպերը.—
Օ՜հ, ջահելություն,—օ՜, հպարտություն ...

*

* *

Մանկուց անհա՛շտ եմ, նեղսի՛րտ ու կոպի՛տ,
Ու երբ զայրույթս հոգիս բռնկի՝
Օ՛ձ պիտի դառնամ, ես պիտի խայթե՛մ.—
Ու քիչ էլ ճամփաս մոլոր է գուցե ...
5 Բայց վնաս ճակատս դեռևին կդնեմ,
Երբ զե՛մս ելնես, ո՛վ ճշմարտություն.
Ես քո ստրուկն եմ, կոպիտ բանվո՛ր եմ,

Քո խելքն մարգարեն անտուն ու անքուն։
Ես քեզ եմ փնտրում, որ կանչես դու ինձ,—
10 Հպա՜րտ արծիվդ, սե՜գ թմբկահարդ,
Ես քի՜զ եմ գալիս խավարի խորքից ...
Կուզեի դառնալ ազազիլ դա՛մփոդդ,
Իբրև վեհ պահնորդ շեմքումդ կանգնած՝
Հպա՛րտ, անողոք, գիշատչի առաջ ...

* * *

Մե՛գ ու մշուշ, ձյո՛ւն ու ձմե՛ռ
Մո՜ւնջ երկիրը քուն մտավ,
Ու ամեն ինչ խորին գիշեր
Իր սև թևի տակն առավ։
5 Ծառ ու անտառ սառույց հագած՝
Քնած են լո՜ւռ ու շվա՜ր,
Սառ վերմակը գլխին քաշած՝
Մեռել են դա՛շտ, ձո՛ր ու սա՛ր ...
Ո՛չ մի ծպտուն, ո՛չ մի շշուկ.
10 Շունչ, հով էլ չի դողդողում,—
Սիրան է միայն խորն ու ծածուկ
Թույլ ու թալուկ բաբախում.
Բաբախում է նվա՜ղ, նվաղ
Ու լո՜ւռ նա էլ քուն է մտնում
15 Խորի՛ն, շքե՜ղ երազում ...

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

Սառո՜ւյց ու ձմե՛ռ,
Լուռ ու խո՛ր գիշեր ...
Մերուկ, ցո՛ւրտ հսկան սառցե թևերով
Երկիրն է գրկել,
5 Սառցակույտ դեռով,—ամուր շղթայով
Ձեռ ու ոտ կապել.

Զյուն ու մեղ շնչով, սառցե համբույրով
Կրծքին է սեղմել
Լա՜յն, մե՜ծ երկիրը լռա՜ծ ու մեռա՜ծ ...
Մեզի խո՜ր ծովում թալուկ շողալով
Լուսինն է մարում,
Սառած մշուշը նվա՜ղ ցոլալով
Եղյամ է դնում.
Ու ամենուրեք մա՜հ ու գերեզման.
Ու սի՛րտս է միայն,
Երազող սի՛րտս է արթո՜ւն՝ կրծքիս տակ,
Ու ես մենակ եմ, անսահման մենակ։

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Գարունն եկա՜վ շողշողալեն,
Հետն էլ բլբուլ զընգզնգալեն,
Աստղն վզնոց՝ ցոլցլալեն,
Բարո՜վ եկար, ծի՛լ գարուն։

Բարո՜վ եկար, անո՛ւշ գարուն,
Դուք է՛լ վարդեր, բլբուլնե՛ր.
Ախ, ո՞ւր մնաց կյա՛նքս նշխուն.
Ո՞ւր է սերս, բլբուլնե՛ր ...

Է՜լ տեսար ինձ, նշխո՛ւն գարուն,
Տեսար, թեև դեռ կ'ապրի՛մ,—
Բայց վա՛յ գարուն, որ սի՛րտս արուն՝
Կ'ապրի՛մ, կ'ապրի՛մ ու կ'ապրի՛մ...

II

Հազար սրտերն ի՞նչ են երգում
Վարդով, ծաղկով ցնծալեն,—
Գարո՛ւն, սրտեր դո՞ւ ես զուգում
Երգովդ անուշ զնգալեն ...

5 —Սիլ սրտերին մի՛շտ է գարուն,
Սերը կարմի՛ր, շողո՞ւն է,
Սի՛րտը թող վառ կանաչ լինի՝
Կյանքը միշտ է՛լ նշխուն է.
Մենակ ափսո՛ս սիրտդ է արուն,
10 Սրտիդ ծալքում սե՛րդ է սև.
Կյանքը թեկուզ կանաչ լինի,
Արև կարմիր՝ սի՛րտդ է սև.
Տա՛ր սևերդ ծալի՛ր շիրմում,
Թող արևը կարմիր դա,
15 Կյանքն էլ նշխուն թե սև լինի,—
Սիրտդ պիտի լուռ մխա ...

III

Ես մի մեծ դա՛րդ եմ քաշում,
Դարդիս ինչի՞ն հք իմաց.
Օր-օրի սի՛րտս եմ մաշում,
Գիտնք թե էլ սի՞րտ մնաց։
5 Կյանքիս բաղը՝ ընկավ քա՛ղը,
Չեմ քաշում՝ հասնիմ վաղը.
Վաղըս անցա՛վ,—ա՛խն եմ քաշում,
Գիտնք թե էլ սի՞րտ մնաց ...

1900—1910

Ա Ր Ծ Ի Վ Ը

Այստեղ ապրում էր արծիվ վեհ արքան,
Որ ազատությամբ մենա՛կ էր հարբում.
Հայրենին ազա՛տ, ձյո՛ւնն հավերժական՝
Եվ սիրան արծվանիկ լա՛յն-լա՛յն էր տրոփում,
Երբ ամպի ճեղքից օվկիանն էր շողում
Գոռ ալիքների թոչող վաշտերով,
Երբ խոր հատակում անդունդն էր դողում
Փոթորիկների ահեղ շնչերով.—
Աղա՛տ է ապրել այստեղ մի անգամ.
Եվ դու սողո՞ւմ ես— հեռո՛ւ բարեկամ։

Այստեղ ապրում էր արծիվն ամեհի,
Քաջազոր արքան ժայռերեն դահի.
Այս բարձունքից էլ ընկա՛վ գահավեժ,
Ընկա՛վ նետի պես անդունդը մահի.
Այստեղ ամպերի քարվանն է իջնում,
Որոտն է թաքչում— լեռան բնակիչ,
Այստեղից քամին իր գաղթն է գնում,
Ուր կյանքն է սլաց, ու մա՛հը—թռիչ.—
Աղա՛տ է հանգել այստեղ մի անգամ.
Եվ դու սողո՞ւմ ես—հեռո՛ւ բարեկամ։

*
* *

Ա՛խ, այն տարիքը ո՞ւր կորան, անցան,
Ինչպես է՞լ կորան և հուշեր դարձան.
Եվ ո՞ւր ես հիմա, գիտնա՞մ երանի,
Եվ տեսնես ինձ էլ հիշո՞ւմ ես հիմի ...

Ա՛խ, ուր էլ լինի՛ս, ո՞ւմն էլ որ լինի՛ս,
Այդ աղիզ սիրտդ ումն էլ որ տանի՛ս,—
Քո դա՛րդդ իմն է, էրնեկ դա՛րդդ առնեմ,
Դու անո՛ւշ ապրիր, թող ի՞ս սև մեռնեմ ...

Եվ սիրտս հիմի սև տան է նման,
Ուր մի ժամանակ դո՛ւ էիր ապրում,
Կարոտս լցված, նստել է դռան,
Եվ ճամփի՛դ մնում և ծո՛վ է կարում ...

*
* *

Ո՞վ ես, լո՞ւռ ոգի,
Իմ հոգո՛ւց հոգի,
Որ ինչպես եղեմ
Կամ թարմ լուսադեմ՝
Ինձ մո՛տ ես թռչում,
Միշտ ի՛նձ ես կանչում
Տոչոր ու վառման
Կարոտի նման ...
Կամ ասես թե մի
Կորա՞ծ, վաղեմի՞
Սրտի բարեկամ՝
Տեսել այս անգամ—
Հի՞ն երգն ես ասում,
Եվ անո՛ւշ խոսում
Կյանքի թա՛րմ օրից,
Հուշերի խորից ...

Եվ ձայնդ առնելիս՝
Այնպե՞ս սրտիս մոտ,
Ախ, այնպե՞ս ծանոթ
Ճանաչ ես դալիս։
Չգիտե՞մ ով ես,
Բայց սիրտ ծով ես.—
Դու սե՞րն ես բարի,
Ախ, արի՛, արի՛ ...

*

* *

Ա՛խ, իմ անուշ ծաղիկները
Գարունքի հետ դնացին,
Ա՛խ, իմ անուշ ծաղիկները
Գարունքի հետ դնացին։

Նրանց հետքից այսուհետև
Էլ ոչ մի «ա՛խ» չի հասնի,
Եվ ի՞նչ ծաղիկ նոր գարունքին
Տրտում աչքը կշոյի։

Կասես բոլոր ուրախություն
Նրանք սրտոնս քաղեցին,
Կասես բոլոր ուրախություն
Հետներն առան դնացին։

*

* *

Դժգո՞ւյն, թախծալի՞, արտո՞ւմ ձևերով,
Ձյունի պաղ ձորձեր պատկած են դաշտում.
Եվ մի՞շտ միևնույն դունատ ձևերով
Քնած են խորունկ մահվան սառ դաշտում։

Տե՛ս մի պտտուհան։ Ահա մի հիվանդ՝
Որի արդե՞ն ճակտին դալուկն է մահվան՝
Նայո՛ւմ է դաշտին միամի՛տ, հանդա՛ր,
Եվ անդո՞ր հուսով մնում է դարնան ...

*

* *

Մրափը աշնան կախում է ինձ հեզ.
Թոշնում եմ դաղտնի թախծող վարդի պես.
Տարվել եմ, խորհում, սակայն ո՛չ էլ սեր,
Հասե՞լ են արդեն թափվելուս օրեր։

5 Եվ զուր եմ, իզուր կանչում իմ գարնան.
Իզուր եմ վշտով կանչում և նրա՛ն,
Որ այնքա՞ն անուշ գարնան էր նման։

Աշունն է եկել ու բերել թախիծ.
Դե՛, արի՛, ո՞վ քուն, արի տա՛ր դու ինձ.
10 Քաղցր է քնելը վերքերով սիրո,
Քաղցր է քնելը սիրելուց հետո։

*

* *

Տեսնես դուք էլ, անո՛ւշ աստղեր,
Ձեր այդ անհուն պալատում
Իմանո՞ւմ եք սիրո խաղեր,
Սիրո խինդն ու տրտմությունն։

5 Է՞հ, ո՞վ գիտե, թե ի՞նչ հավերժ
Կյանքի խինդն է ձեր սրտում,
Որ մեր վշտին նայում էք լուռ,
Նայում խաղաղ ու ժպտում։

ԿԱՅՄ

Ծովի բացերն ազատ, վայրի,
Ուր մրրիկն է արտանջում զուր՝
Ընկած է գիրկն ալիքների
Մի կայմ բեկված, հուսակտուր։

Մերթ նա զարթնում, նեավում է վեր,
Մերթ հուսաբեկ իջնում էլի,
Եվ քանի որ կյանքն է ավեր՝
Չի արտնջում արդեն հիմի։

Զոնի մի կլք ձգտի որին.
Իր կյանքն արդեն տխուր կատակ՝
Մեկ վե՞ր, մեկ վա՞ր, օրը օրին,
Հածում է զուր, հոգնած, մենա՞կ։

* *

Հանգա՞վ երազ... Ահա կրկին գունատ օր
Նայում է ինձ աչքովն իր թաց ու պղտոր.
Ափսո՞ս, հանգան զվարթուններն հրածին,
Որ զորշ կյանքիս պերճ երազում ծաղկեցին։

Եվ ո՞ւր եկար, տխո՛ւր ցերեկ, այսպես վաղ,
Ինչո՞ւ այդ պաղ ձեռքով բերիր արթնություն ...

Գնա՛, գնա՛, ինչպես ընկերդ անուրախ
Հանգավ երեկ՝ թեզ պես տխո՞ւր, ապարդյուն ...

*
* *

Ա՞խ, ես հիվանդ եմ,
Հիվա՞նդ՝ ձանձրությա՞մբ ...
Եվ որպես անձև, անծիր մի սև ամպ,
Որ անհուն օդում չունի տեղ, դադար,—
Ես է՞լ նրա պես անձև տենչերով՝
Զգիտեմ երբեք, թե ո՛ւր եմ գնում,
Ես է՛լ շրջում եմ ծա՞նրը՝ իմ մթնով՝
Հազար սրտերի ծածուկ անհունում.
«Դեպի ծո՞վ, դեպի ծո՞վ»,—հոգնա՞ծ, ծարավի՞

10 Ասում եմ հանկարծ՝ մի տենչով մղված ...
«Դեպի ծո՞վն անբավ, որ հազա՞ր գաղտնիք,
Հաղար մի՞ աք, երա՞զ իր մեջը ունի ...
Դեպի լեռնե՞րը վեհությունն խորհող,
Դեպ անտառնե՞րը գաղտնապահ, վայրի,
15 Դեպ ջրվեժնե՞րը, որ լույս-ամպի պես
Գահավիժվում են խորքերն անդունդի»...
Բայց ես հիվա՞նդ եմ,—
Ինքն իրան լափող մի ծա՞բավ խարույկ,
Որ գալարվելով իր ցավիցն անձուկ՝
20 Ուզում է հատնի,
Բայց որ այրելու
Դեռ մի սիրտ անհաղ ու շա՞տ բան ունի։

*

* *

Այս գիշեր վշտից ծանրացած հոգով՝
Ինչպես քար ծովում՝ սուզվեցի ես քուն.
Եվ դու ասպղի պես եկա՛ր ժպտալից,
Մտերի՞մ ու հե՞զ՝ ինչպես իրիկուն։

5 Այնքա՞ն կարոտով կանչում էի քեզ,
Իմ սիրա՛ծ հոգի, իմ հոգո՛ւ սիրած,
Ա՜խ, քեզնից այնքա՞ն դժդոհ էի ես,—
Բայց ո՞չ, դու եկա՞ր երազով թռած ...

Օ՜, լի՞ք ես սիրով, բայց ո՛չ դեպի քեզ.
10 Քեզ չե՞մ սիրում էլ, հոգեղե՞ն մարմին,
Այլ ա՛յն երազը լուսաշո՞ղ ու հեզ,
Որ քո ձեռն առած՝ ժպտաց իմ աչքին ...

Եվ ինչո՞ւ ապրել, էլ ինչո՞ւ տանջվել
Այս անգո՞ւթ, հիմա՞ր մեր արթնության մեջ,
15 Երբ որ կա ժպտուն մի երա՞զ աշխարհ,
Ուր սերն է անո՞ւշ ու խնդությունն անվե՞րջ ...

*

* *

—Ասա՛, ի՞նչ ես պաշտում դու.
«Մոռացել եմ, չգիտեմ».
—Ունի՞ս ընկեր, բարեկամ.
«Էլ չեմ պարում, չգիտեմ»։—
Բայց ես արդեն ձանձրացած
Ամպ եմ օտար, անհանդարտ,
Բա՞րձր, մենակ, հեռացած՝
Գնում եմ լուռ, անընդհատ։
Ու կապույտն եմ սիրում ես,
Կապույտը ջինջ ու ժպտուն,
Ու ձգտում եմ ամպի պես
Դեպի հեռուն ու հեռո՞ւն։

*

* *

Շա՜տ տերևներ թափվեցին
Հուսակտուր այս գիշեր.
Շա՜տ հառաչներ ողբաձայն
Լսում էի այս գիշեր։

Ախ, նրանց հետ թափվեցին
Շատ երազներ իմ գարնան.
Մե՞րկ են արդեն սար ու ձոր,
Ձայնն է գալիս իմ աշնան։

*

* *

Իր հին խմբի հետ նստած տանիքում
Երգում է հերոսն ու սազին զարկում.
Երգում է, հիշում կռիվներն անցած
Օրեր դարաքաշ, բայց և փառապանծ։

5 Երգում է աշխույժ, գինու պես եռման,
Կանչում, վրնջում նժույգի նման.
Եվ ինչո՞ւ չերգի—խաղա՞ղ է աշխարք.
Երգել է չէ՞ որ և նե՛ղ ժամանակ։

Եվ ահա զվարթ այն երգը երգից,
10 Որ ժողովուրդը նրան նվիրեց,
Նվիրեց նրան մի օր օրհասի
Եվ գովեց սիրած անունն հերոսի։

Ու իրենց քաջով ընկերներն հպարտ՝
Հանաք ծաղրեցին երգը հերոսի.
Քո երգը երգել քեզ ի՞նչ կսազի»։
15 «Երգում ես՝ երգի, բայց դու հերոս մարդ,

Զարկեց իր սազին հերոսը նորից
Ու մին էլ երգեց զվարթ, սրտաբաց.
Երգեց... Ու այստեղ ախրած իր երգից՝
20 «Էհ, ինչո՞ւ չերգեմ»,—ասավ ամպամած։

«Սարը գանձ ունի, Աստվածն իր աշխարք,
Ազգը՝ փրկություն, հանճարը՝ իր փառք,
Ծովը՝ բանաստեղծ, ոսկին՝ իր կծծին ...
Հերո՞սն ինչ ունի մի երգից բացի։

25 Կերգեմ միշտ այսպես, ու կերթամ մի օր
Այնտեղ, ուր էլ չէ՛ ոչ ոք ունեոր ...
Կդառնամ ես ձեր հողը փրկության
Որ դուք էլ կյանքով խնդաք հավիտյան»։

ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ

Իր մոր աղքատ դրկում վստահ,
Մանկության մեջ անուշ-օրոր,
Քնած է նա իբրև արքա՝
Իր պնատության ծոցումն անդորր։

5 Մինչդեռ վշտից ծեծված ու կոր,
Լքվա՜ծ արդեն, շուքի նման
Աղերսում է մայրը անզոր՝
Անցորդներին անպատասխան։

Բայց ի՞նչ փույթն է քնած մանկան
10 Այս աշխարհի ցավն ու աղետ.
Եվ ի՞նչ ունի մանուկ արքան
Անսիրտ բախտի խաղերի հետ,—

Երբ ոսկեհույլ թիթեռներով
Լի է երկինքն իր մանկության,
15 Երբոր լուսով, ծաղիկներով
Իր Աստվածն է ժպտում իրան։

Քնի՛ր, մանո՛ւկ և չարթնանա՜ս
Քեզ է՛լ աշխարհ պիտ չժպտա.
Է՜հ, մի՛ զարթնիր, որ չիմանաս
20 Ինչքան տխո՜ւր, ինչ դա՜ռն է նա։

*

* *

Խո՜ւլ անքում է ցուրտ աշուն՝
Հիվանդ ընկած անտառում.
Ես գնում եմ ու կորչում
Այդ հեծեծող անտառում։

5 Հեռո՜ւն՝ դաժան բուի պես
Կախում է մութն իր թևեր,
Ու գնո՜ւմ եմ, գնում՝ ես
Դեպի անլույս մի գիշեր ...

Ն Ա.

Քո սենյակի մթնում անշուք
Նստել տխուր՝ հսկում է քեզ,
Ու զորված ու անշշուկ
Նայում վրադ՝ սիրող մոր պես։

5 Բայց ո՞վ է այդ սևեր հագին
Մտերիմդ քեզ անծանոթ.
Գուցե սիրող անհո՞ւն մի կին
Քեզ իր շո՞ւքն է զրկել կարոտ։

Մենություն է նրա անուն,—
10 Կյանքիդ վերջի լուռ այցելուն.
Նոճու ստվեր պի՛տ հագնի նա
Ու գա թեքվի շիրմիդ վրա։

*

* *

Մա՜նր մի ձեռ քաշում է հար
Էությունս դեպի իրան,
Մա՜նր մի ձեռ՝ դեպ ինձ մեկնած
Մի հավերժող մե՜ծ լռության։

5 Ու չգիտեմ ո՞ւր է քաշում
Ամուր ու սառ պողպատի պես.
Նրա հզոր ճիրաններում
Ճրմլրված ենք կամքս ու ես։

Չե՛մ հասկանում դավը անհաս.
10 Չեմ հասկանում ոչ էլ իրան ...
Ու ծալվո՛ւմ է, ծալվում վրաս
Թևը մի խոր հավերժության։

*
* *

Աշունը եկել՝ տխո՞ւր, պառավձայն
Մի երգ է երգում, ձգում ընդունայն
Ու տրամեցնում հոգիս իր նման։
Տխո՞ւր է այդ երգն
Հառաչի նման,
Եվ հիշեցնում է ողբերգը թաղման։

ՆԱՊՈԼԵՈՆ

Հպարտ են Ալպերն իրենց բարձունքում,
Բայց է՛լ հպարտ է Մոնբլանն երկնքում.
Այնտեղ խոլ բուքեր՝ բռնած կոծապար՝
Թռչում են, սուլում, ճչում խելագար։

Պառկած է Մոնբլան վերևն Ալպերի,
Եվ չէ՛ սոսկ մի սար այդ մեծ լեռ-հսկան.
Նապոլեոնն է, նա, այն մե՞ծն ամեհի՝
Քնած իր քնով հավիտենական։

Սուլում են, վայում հողմերը անքուն,
Միշտ ձայն են տալիս, գոռում ականջին.
Ու մեծ ուժգնաձայն հոգվոց են երգում
Էն վե՞րն հավերժող ձյունների միջին։

Եվ քնած է նա, արծա՞թ Նապոլեոն,—
Ձեռքերը խաչած իր մեռած կրծքին,
Մաքուր պատանքած ձյունովն հավերժի
Ու այն նոանկյուն գլխարկը գլխին։

Քնած է այնտե՞ղ, Եվրոպի դիմաց,
Դարերին նվեր՝ ամպերի վրա,
Որ երբ մոռանան մարդիկ ամեն բան,
Նային ու հիշեն գործքերը նրա։

Գեմիրճյանների ընտանիքը

Եվ գուր կչանա ժամանակն համառ
Նրան չնջելու երկրի երեսից.
Իզուր կռռնա տարերքը խելառ.
Նա չի՛ զարթնի էլ, շարժվի այնտեղից։

25 Եվ չեն ծառանա ռամիկ սերունդներ
Նրա դեմ՝ բահով արքայակործան,
Կմաշվին բահեր, կմեռնեն ձեռներ,
Ու չեն կործանի այդպես մի արձան։

Եվ կանցնեն դարեր ... կգա ռազմատյաց
30 Մի նոր, թզուկ ցեղ, նրան ձանձրալի.
Ու շար ոգու պես լեռնում կաշկանդված՝
Մոռացված կապասի արձանը մնծի։

Իզուր կզարթնի բյուրամյակներին՝
Արդյոք չե՞ն լսում փողեր ռազմական.
35 Իզուր կժպտա լեգեոններին,
Որ ճեղքեն բուքերն ու իր մոտը գան։

Եվ խուլ բուքերի երգերովն անվերջ
Կքնի այնտեղ արձանը լքված,
Այնտե՛ղ, հավերժի արծաթ ձյունի մեջ՝
40 Անփառք, անանուն, մենակ, մոռացված։

ԼԻՃ ԼԵՄԱՆ

Մնաս բարո՛վ, Լեմա՛ն, դու անուշ Լեման,
Ալպերի քուրիկ՝ կապտաչյա ու հեզ,
Ալպեր, որ գլխիդ պահնորդի նման
Հպարտ, անխռով հսկում են միշտ քեզ։

5 Կանգնած են ահա սառցի թագերով
Եղբայրներդ հզոր՝ Ասածուց կարդված,
Ալպերդ առնական՝ արծաթի ճոշերով,
Անցած ռազմերում արդեն ճերմակած։

Անհայտ մի մորից մի օր ծնվեցիք
10 Մի քույր՝ յոթ եղբայր,—Ալպեր ու Լման.
Դու՝ խարտյաշ, ինչպես հեքիաթի աղջիկ,
Նրանք՝ վեհ հսկա, լազվարդ քեզ նման։

Սովոր էի քեզ, սովոր քո ժպտին,
Ահե՛ղ բնության ծնունդ հեզաչիկ,
15 Ընկած մի հատո՛ր երկնի կապուտին,
Հսկա հոր սիրած դու կրտսեր աղջիկ,

Ինչքա՜ն պիտի հիշեմ ծիծաղդ արծաթի,
Շղարշ մեզի տակ տրոփը կրծքիդ,
Աստղե կոճակներն այս քո զգեստի,
20 Ճայե՜րդ ճերմակ՝ նստած գոգնոցիդ։

Եվ դո՜ւք, վեհափա՜ռ Ալպեր Սյուիսի,
Հզո՛ր դյուցազներ աշատ կեցվածքով,
Եվ դո՜ւ, ո՜վ աշխարհ կապտի, փերուզի,
Մնացե՛ք բարով, մնացե՛ք բարով։

ԵՐԳ

Լուսնակն ելավ ամպն ի վեր,
Գիշերն ամպշող, ի՜նչ անուշ,
Հովը եկավ տարուբեր,
Շնկշնկում է ի՜նչ անուշ։

5 Շվին հեռուն հառաչեց,
Գանգատ արավ՝ ի՜նչ անուշ.
Հովը ծամերդ ինձ բերեց
Քշփշալով՝ ի՜նչ անուշ։

1911 — 1918

*
* *

Անտառի միջում
Աշունն է շրջում
Եվ նվում իրա
Ջութակի վրա։

5 Նվում է լալով
Տխուր, անհանգիստ.
Նրան լսելով
Տրտմում է հոգիս։

Նրան լսելով
10 Ես կյանքն եմ հիշում ...
Մոտ է փչելու
Եվ իմ սա՜ռ աշուն։

ԴԵՊԻ ՏՈՒՆ

Օրը գնաց. տարավ ճրագն երկնքից
Ու մարելով՝ փակից դուռը նուսից,
Մթնաժուռնց լեռնադաշտը վայրենի,
Սրթսրթում է քամին ազատ, հայրենի։

5 Ահա կապույտ անդընդներից դուրս եկան
Մանկության ասողները իրենց ժպտով մանկական,
Ճահի՞ճ ահա իր լռությամբ սիրելի,
Եղեգնե՞ր միշտ մտորուն, թախծալի։

Օ՞, հայրենի՞ք, դաշտե՞ր մանկության վայրենի,
10 Ես զգում եմ վրան մի ձեռ դուրգուրոտ,
Որ քաշում է ինձ դեպի քունն հայրենի,
Մի քուն հավերժ, այստեղ դաշտում երկնամոտ։

ԱՆՈՒՐՋ

Հեռո՞ւ մի տնակ, ոսկի լուսամուտ,
Քնած են վրան մարմար կաղնիներ,
Եվ վառ լույսի հետ խաղում են անփույթ
Ջյունի թավռուն ուրախ թիթեռներ։

5 Ոսկի մի ճրագ, մի բաց ոսկե դիրք,
Թեքվել է վրան երեսդ զողտրիկ,
Հոսում է գիշեր, և լուռ սենյակում
Օջախն անրջով աչքերն է փակում։

*
* *

Մի՛ արամիր, քո՛ւն եղիր,
Ու կանցնի քո ձանձիր.
Ինչքա՞ն խոր վիշտ լինի,
Որ քնում չքնի։

5 Քո՛ւն եղիր՝ շոյվելով
Լռության ձեռներով,
Ու այսպես ամեն բան
Կլուն հավիտյան։

*

* *

Քարափնները կիտեցին
Սև նոթերն իրար դեմ,
Մվարեց եղևնին
Ինչպես հավ տխրադեմ։

5 Բյուր տատղերն անրջում,
Եվ ջրեր խոր շնչում ...
Այսպես խո՞ր կլինի
Նաև քունն իմ շիրմի։

*

* *

Մի դատա՞րկ սենյակ,
Ես մեջը մենակ ...
Ինչպես մի անուրջ հանկարծ եկար ներս՝
Մի երգ շրթունքիդ անուշ աղբրի պես,
5 Աչերդ լցված ծիծաղ ու եղեմ,—
Գարո՞ն իմ աղջիկ՝ աշուն սրտիս դեմ։

Դեռ խակ թևիդ մեջ մի փունջ խըտտած,
Բաղեղ գանգուրով ճակատդ պատած
Եվ պարզ աչերումդ այնքա՞ն հոգի կար՝
10 Անո՞ւնդ տվի ... Բայց դու լուռ հանգար։
Մի դատա՞րկ սենյակ
Ես մեջը մենակ ...

*

* *

Գիշեր է, չա՞ր բու՝
Իմ գլխիս վերև.
Դանդա՞ղ, ձանձրալի՞
Մաղում է անձրև։

Զարթնել եմ, լսում,
Լսում... Բայց ինչո՞ւ.
Էլ ո՞ւմ եմ սպասում,
Էլ ի՞նչ է գալու։

Ինձ համար ոչինչ,
Էլ գալու չկա
Այս ախուր, աշուն
Աշխարհիս վրա։

Մաղում է անձրև
Վերջ չունի, երբե՞ք.
Ցավեր է հաշվում,
Բյուր ցավեր մեկ-մեկ։

*

* *

Ասում են հեռո՞ւն, հեռո՞ւն մի հովտում
Ապրում է սերը ու բախտը ժպտում ...
Ասում են իմ բախտն այնտե՞ղ կգտնեմ,
Ու ես ձգտում եմ... Բայց ո՞ւր—չգիտեմ...

Ու երբ սևաչյա իջնում իրիկուն,
Ու ես քայլում եմ դաշտերով թաքուն,
Ուզում եմ գնա՞մ, հեռանա՞մ, կորչի՞մ
Այն սիրո աշխարհն անհուն ու վսեմ ...

Ասում են հեռո՞ւն, հեռո՞ւն մի հովտում
Ապրում է սերը ու բախտը ժպտում։

ՆՎԵՐ ՎԵՐՆԱՏԱՆ
ՄԵՐ ՆԱՀԱՊԵՏԻՆ՝ Ղ. ԱՂԱՅԱՆԻՆ

•

Ինչ թեթև է թրթռում թիթեռը, ինչի՞ց է, որ չի հակվում դեպի գետինը։

—Անհոգ է նա. հոգսն է միայն, որ ծանրացնում է մարմնի բաշը և հակում դեպի գետինը։ Նայի՛ր, նստեց ճահճի տիղմի
5 *վրա։ Ինչի՞ց է որ այնպես ճերմակ-մաքուր են նրա թևերը։*

—Անմեղությունը կեղտ չի վերցնում։ Ինչպե՞ս մի բոպե հանգիստ չի նստում տեղը, ինչպե՞ս պոկվում է տեղից, ինչպես ուզում է թռչել վե՛ր, վե՛ր, դեպի երկնքի կապույտ անդունդը։

10 *—Ճշմարիտ է. ինչպես գոլորշին, ինչպես ջերմությունը, ինչպես աղոթքը՝ այնպես էլ մաքուր և ջերմ սրտերը թռչում են վեր, միշտ վեր, դեպի եթերքի ջինջ կապույտը։*

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Երբ մանուկ էինք՝ սիրում էինք խաղալիք։ Դարձանք պատանի՝ սիրեցինք մեր նմանին։ Երիտասարդ էինք՝ սիրեցինք փառք, գործ, գիտություն։ Կծերանանք՝ պիտի սիրենք հարգանք, դրամ, հանգիստ և մեր սերունդը։

5 *Սակայն երբ անհունի դռներին հասած՝ պիտի լսենք հավիտենության շունչը՝*

Գիտե՞ս ինչ պիտի սիրենք.

—Աղո՞թք ...

ՇԱՆԹԻՆ

Սարը վեր, սարը վեր, գոչելով
Գնում ենք ծիծաղով, կանչելով
Սարը վեր գարունքով
Թող երթանք մենք սիրով
Մինչև որ սարի վերհ կատարին
Կողջունենք սարը վար գիշերին։
Սարը վար երբ կիջնենք
Հուռ անուշ կենջենք
Սարը վար սուզելով մեր հոգին
Ու գիշեր կգրկեն ամենքին։

Ն. ԱՊԲԱԼՅԱՆԻՆ

Ի՞նչ ընծայեմ քեզ, քո հոգուն սազական։

Բայց ի՞նչ եմ հարցնում. արդյոք ի՞նչ է սազում ընծայել այն հոգուն, որ տիեզերական լրջության է ունկնդիր.—

Միա՛յն և միա՛յն մի խաղալիք։

Այո, խաղալի՞ք... Որովհետև ինձ թվում է որ այդ իմաստության ճամփադ բռնելով՝ կհասնես այն մեծ իմաստության, որի անունն է մանկություն։

Խաղա՛ խաղալիքը.—դրանումն է և՛ գեղեցկությունը, և՛ իմաստությունը, և՛ կյանքը։

Բայց մի՛ կոտրիր խաղալիքը, որ տեսնես թե ինչ կա նրա մեջ։

Ավա՛ղ, խաղալիքների մեջ ոչինչ չկա, խաղալիքների մեջ ունայնություն է ու տխրություն։

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Է՛յ, Ավո՛ջան, հիշո՞ւմ ես
Ալագյազը վերհ ու վես,
Շիրակ դաշտը ծովի պես,
Մենք ճամփորդներ՝ դուն ու ես։

5 Ա՜խ, ինչ լա՜վ էր, հրաշալի՜,
Ես էլ Շիլլեր իբրև թե.—
Դու քեզ հաշվող մի Գյոթե,
Երկուսս էլ վեհ պատանի՝

Հայրենի ծով դաշտերում
10 Փնտրում էինք, դեգերում
Մերթ լուռ ու խոր ձորերում,
Մերթ լեռների գահերում։

Ախ ինչ լա՜վ էր այն օրեր ...
Է՜յ Ախուրյան, է՜յ ձորեր,
15 Է՜յ տխրամած քարափներ,
Է՜յ մտորող, լուռ շամբեր։

Է՜յ թուխ գյուղեր հայրենի,
Ձորեր ժեռուտ, վայրենի,
Ճամփեք տխո՜ւր, ամայի,
20 Վանքեր սև-սև՜, թախծալի...

Մի՞տդ է ձեր գյուղն ու ջաղաց,
Ձայնը ջրի երգասաց,
Ուռենիները մենակյաց,
Լուռ մտքերով կռացած ...

25 Մի՞տդ է հովը մեղմակի,
Վեհ գիշերը Շիրակի,
Ձայնը քարվան-զանգակի,
Քո մտքերը միստիկի ...

Պտակում էինք ձեր կտրան,
30 Աստղոտ երկինք մեր վրան՝
Ու մտքերով սո՜ւր թռչում
Դեպի աստղեր ու կորչում ...

5—179

Հե՜յ, հիշո՞ւմ ես Ղոշավանք ...
Այն խրճիթը որ մտանք ...
35 Այն գիշերը երաղանք ...
Քամու սուգն ու ավայտանք ...

Ապա Անի՜ն պանծալի,
Շքեղ տիկինն երբեմնի,
Իր զարդերով հրաշալի,
40 Հիմա փշուր, սգալի ...

Ապա ձո՜րը Մանթաշի,
Զորը ծաղկի, անուշի,
Այն վրանը դամիշի,
Ուր նստեցինք մենք ճաշի։

45 Մի՞ստ է, որ հյուր գնացինք
Ալագյազին երկնաձիգ
Այն գիշերը գեղեցիկ,
Աստեղավառ, թափանցիկ։

Հասանք լեռան գահույքին,
50 Դաշտը մնաց մեր տակին,—
Ողջ Շիրակը լա՜յն, անվե՜րջ,
Պատառ-պատառ մուժի մեջ։

Հիշո՞ւմ ես, որ նայելով
Ներքև դաշտին լայնածով՝
55 Ասինք՝ տե՛ս, տե՛ս, քառասում
Աշխարքը նոր է ծնվում։

Հիշո՞ւմ ես որ ճամփեքին
Հարց կտայիր ամենքին՝
Թե ի՞նչ բան է այս աշխարհ ...
60 Ու շատ հարցեր անմեկին։

Այն ծերուկն էլ մի՞ոբդ է,
Որ՝ «աշխարքը», ասավ թե,
«Ծառ է, կերթա ու կուգա
Քամին կերթա՝ ինքը կա»։

65 Մի՞ոդ է ուխտը Հառիճի,
Բակը վանքի առաջի,
Ջահելների պարը վեհ,
Օրոր-շորոր հովի պես։

Մի՞ոդ է Մարոն խաղասող,
70 Ձայնը զանգակ դողացող,
Նրա «ա՜խը» սիրտ հուզող,
Լեվեն զիլ, զիլ սլացող ...

Ո՞ւր են, ո՞ւր են այն օրեր,
Այն ծաղկունքը ցոլցլուն,
75 Այն ջրերը զզզուն,
Այն հովերը օրորուն ...

Թռա՜ն, կորա՜ն այն օրեր
Հավքերի հետ, հովի հետ,
Մարոյի զի՜լ երգի հետ,
80 Կորան անհետ ու հավե՜տ ...

ԻՆՁ

Դու ուզում ես ոչնչացնել թո՞ւյնը ...
Դու ուզում ես դրանով մեռցնել մա՞հը ...
Եվ հետո էլ ասում ես որ սիրում ես
Գեղեցիկ բանե՞րը—թիթեռը, ծաղիկը,
5 Առողջությունը, սերը ...
Բայց ասե՞մ ամենագեղեցիկ բանը աշխարհիս երեսին,—
Կյա՜նքը...
Դու ուզում ես ոչնչացնել նրա թո՞ւյնը ...
Մի՜.
10 Ամենագեղեցիկ բաները թույնից են շինում։

*
* *

Սենյակս ունայն
Քնել շիրմի պես,
Արթուն ենք միայն
Ժամացույցն ու ես։

5 Եվ սա իր մուրճով
Մեծում է երկար,
Տաշում իր ոճով
Մի սառ շիրմաքար։

Ա՛խ, տաշում է նա
10 Որ դնի՝ հանգիստ
Իմ կյանքիս վրա,
Իմ անուշ կյանքիս։

ՆԱԶԱՆԻՆ

Ուր գնացիր հեչ չգտար մեկ բախտավոր, լավ՝ Նազանի՛,
Ծով է աշխարք հոո՞ւն-հոո՞ւն, մենք էլ միջին նավ, Նազանի՛.
Մեկ վարդ չկար, մեկ նունուֆար, որ չուններար դավ, Նազանի,
Ինչո՞ւ եկար էս դառն աշխարք, որ էսքան կար ցավ, Նազանի։

5 Սիրտդ էնդո՞ւր ծով է դառել էս ցավերի ծովերի մեջ,
էնդո՞ւր անհույս երդ ես երգում անապատի հովերի մեջ ...
Զա՛րկ չոնդուրիդ, հյուսի՛ր երգերդ էս դարդերի բովերի մեջ
Աշխարքի չոր ծառի ճյուղքին դու մի զարիպ հավ, Նազանի ...

*

* *

Ամենից առաջ բալին չէ՞ զարթնում
Փերուզ երկնի տակ,
Հետո էլ նշին ոսկեկար անում
Կապան սպիտակ.
5 Դեղձին չէ՞ արդյոք գցում հարսի պես
Իր մոռը գլխին ...
—Ախ, դիտե՞մ երբ է մահին նմանում
Ծաղիկը դեղին։

Ա. Ր Ա Ք Ս

(Տանկական ավանդություն)

Ի՞նչ կա աշխարքում ավելի ահեղ
Քան մեծ մարգարեն Մահմեդն հրահեղ.
Ահա վեր կացավ սամումի նման,
Եկավ կանգնելու Հայքին հանդիման։

5 Է՜յ, ո՞վ կա էդտեղ, եկեք ընդառաջ,
Գլուխ վեր բերեք, փարեք ոտներին.
Ահա նա՝ ամպում պահված մի շառաչ,
Լավա է կասես սարերի գլխին։

Եվ կանգնեց հպարտ, նայեց մարգարեն,
10 Որ սարերն ամեն գլուխ վեր բերեն.
Նայեց ու նայեց, զարմանքը տարավ,
Ինչո՞ւ չեն նրանք թեքվում դեպ հարավ։

Եվ տեսավ ահա Տիգրիս ու Եփրատ
Եվ սեղն Արաքս՝ արքաներ հպարտ՝
15 Արծաթ բաշերով սառցե գահերից
Գալիս են ազատ, քաշվում չեն իրենից։

Ի՞նչ, չի՞ն իմանում ո՛վ է մարգարեն.
Ո՞վ, չեն կամենում գլուխ վեր բերեն
Եփրատն ու Տիգրիս ուժից գինովցած
20 Եվ սեղն Արաքս լեն սիրար լցված։

—Հնազանդվեցե՞ք. զոռաց երեքին
Բոցոտ մարգարեն ձենով մոլեգին.
Գլո՞ւխ տվեք ինձ ... Որ էսպես զոռաց
Հայքը՝ սար ու ձոր սարսափից դողաց։

25 Անսացին նրան Տիգրիսն ու Եփրատ.
Եվ նրա հուժկու ձենին հնազանդ՝
Ընկան ձեռն ու ոտ ու հեզ գնացին
Նեբքե՛, դեպ հարավ, երկիրն հրածին։

Մենակ սեղն Արաքս կանգնեց հակառակ,
30 Եվ բիրտ շրջելով երեսն ու քամակ՝
Բռնեց նոր ճամփա դեպի արևելք,
Ու ետ չի նայում էն օրից երբեք։

*

* *

Սրանք չե՛ն իմ սրտի սիրելի տեղերը.
Իմ սրտի սիրելի տեղերն են միշտ նրա՞նք,
Միշտ նրա՞նք, սև Քուռի վերի ժեռ դահերը,
Որտեղից մոտիկ են երկնքի ջահերը,
5 Որտեղ լուռ տխրում են մտորող շամբերը.
Որտեղ ինձ ընկեր են ցիներն ու ամպերը ...

Է՜յ զուլալ Զըլդըր-լիճ, երկնքի՞ դու ժպիտ,
Երկնքի՞ բաժակից վայր թափած մարգարիտ,
Է՜յ Սախալ Տութան սար, աշխարքի դու սեղան,
10 Ասածու շնչի՞ մոտ դու շնչող լեռնասատան։

Դո՛ւք եք իմ սիրելին, անապատ, սեղ լեռնե՞ր,
Դո՛ւք եք իմ սիրելին, դիժ հեծյալ քամիներ,
Դո՛ւք ցիներ, սև շուքե՞ր, անդունդնե՞ր, դժոխքնե՞ր,
Մենության, լռության, խստության ցասումներ ...

*
* *

Եվ մի՞թե իրավ ես չեմ բանաստեղծ,
Եվ մի՞թե իրավ մենակ երգելով՝
Ես փոքր կերթամ աշխարհից այս մեծ.
Եվ չեմ եկել ես աստծու կանչելով։

Մե՜ծ է իմ հոգին, բարձրաբերձ հոգին.
Ահա նա աստծու շնչին է հասնում,
Նրա վերամբարձ գագաթի տակին
Ձեր քարավանն անցնում և ինձ չի հասնում։

Ու չեք տեսնի ինձ, և ո՜չ ձեր հոգին
Կհասնի այսօր իմ մեծ խոյանքին,
Հոգուս գագաթի լուրթյանը խոր։

Ու կերթաք ինձնից ... Եվ ճամփին մեկ-մեկ
Կնայեք ինձ հետ, կկանգնեք, կասեք՝
Ո՞վ է այն ոգին խորունկ, ահավոր ...

ԳԱՐՈՒՆ ՋԱՏԻԿ

Ջյունը ծաղկից ձնի ծաղկով,
Ծաղիկ ձնից ծառը ճյուղքով,—
Ամեռ գարուն տեսան իրար,
Եկավ սիրուն Ջատիկն հայոց։

Ջյուն ու երկիր լցված լացին
Տարվան պայծառ լուսաբացին.
Համբուրվեցին, խոր հաշտվեցին—
Եկավ բարի Ջատիկն հայոց։

Ճամփա բացվեց հալածվածին,
10 Նորից վնգաց բահ ու կացին,
Մայեց անուշ գառ նորածին,—
Եկավ դարուն Զատիկն հայոց։

Հայրենիքիցս այրեցավեր
Ծխեր վաղուց ելել են վեր,
15 Ընդունվել են մեր զոհ-ցավեր ...
Կարմի՞ր արյուն Զատիկն հայոց։

*

* *

Իրիկվա՛ն զանգակ, իրիկվա՛ն զանգակ,
Դու իմ խեղճ ազգի արտասվի կոչնակ,
Հնչում ես մեղմիկ և խոր ձայնիդ մեջ
Մի հույս եմ լսում և մի վիշտ անվերջ։

5 Երբ ինձ է հասնում զողանջդ տխուր,
Հին-հին օրերի ձայներ եմ լսում,
Դարերի ձայներ սրտամաշ, զարհուր
Որից շարունակ խոսում ես, խոսում,

Խոսում ես ի՞նչ խոր, ի՞նչ մեղմ ու տրտում
10 Եվ ինչքա՞ն անուշ բերում ես վերից
Եվ ներողություն, և խաղաղություն,
Իրիկվան զանգակ, իրիկվան թախիծ ...

1940—1956

*
* *

Հայրենի՜ երգ, որտեղի՞ց
Թռար, եկար իմ սրտին,
Հնչում այսպես Թախծալից,
Թաքուն սրտիս ականջին։

5 Ո՞վ ուղարկեց քեզ ինձ մոտ,
Ո՞վ է փնտրում այնտեղ ինձ,
Դրեց քեզ հետ խոր կարոտ,
Սեր ու ծաղիկ ու Թախիծ։

Ի՜նչ ես ասում, կանչո՞ւմ ես,
10 Գիտե՜մ, ժա՜մ է, գալիս եմ,
Գալի՜ս, հո՜ղ իմ արևկեզ,
Գալի՜ս, սե՜ր իմ, համբուրեմ։

*
* *

Հայրենի՜ գետեր, գետե՜ր Հայրենի,
Դուք դեռ կաք հիմի, հոսում եք այնպես,
Ինչպես օրերին մանո՜ւկ, երանի՜,
Ինչպես ձեզ տեսել, սիրել եմ ես ձեզ։

5 Երգեցե՜ք դարձյալ, Հայրենի՜ գետեր,
Խայտացեք այնպե՜ս, ինչպես այն օրեր,
Ես միայն երբեք չեմ դառնա էլ ես,
Ես միայն երբեք չեմ լինի ձեզ հետ։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

Վե՛ր կաց, սի՛րտ իմ, բացվեց ահա էն օրերի օրը մեծ,
Ճակատագիրն արդեն շրջեց վերջին էջն ահարկու,
Վե՛ր կաց, որ դու պատրաստ լինես ինքդ էլ այսօր ասելու—
Լինե՛լ կամ չլինե՛լ մեզ։

5 Եվ այն այստե՞ղ կարող էիր տարվել դու սին խոհերով,
Երբ զայրացած հայրենիքը զավակներով միասին
Ծառանալով օրհասի դեմ վեր է կացել վճռական՝
Տալու դրոհը վերջին։

Երբ մեր ահեղ մարշալները ինչ կայծակներ ցնցահար՝
10 Շանթոտում են դու ֆաշիզմին մահ սփռելով ամեն կողմ,
Երբ մեր պողպատ միլիոնները ճմլում են ողջ անդադար
Միլիոններին ֆալանգող։

Ահա բոսոր դրոշներով ինչպես արնոտ այշալույս՝
Վառվում է ռազմադաշտը հորիզոնից հորիզոն.
15 Այնտեղ հիմա բյուր քաջերի սիրտն է տենչում խռովահույզ
Հաղթանակի, կռվի առն։

Եվ ո՞վ գիտե ի՛նչ հերոսներ ծնեց ռազմը այս գիշեր,
Եվ ինչպե՛ս է մահը մեռնում նրանց ահեղ հարվածից,
Բայց և քանի՞սն ընկան պոկված մեր բոլորի սրտերից,
20 Որ ստեղծեն կյանքը մեր։

Ասա, էլ կա՞ աշխարհիս մեջ այլ բան ավել դեղեցիկ,
Քան այդ անմահ հերոսների գործին լինել շահատակ,
Երբ փրկարար նրանց կոչը գոչգոչում է հեռածիգ ...
«Մա՛հ ֆաշիզմին դժնդակ»։

Դե վե՛ր, դե վե՛ր, էլ չմնաց այլ ոչինչ բան ասելու,
Քան միմիայն մի խնդություն՝ մի հայրենիք սուրբ ու վեհ,
Վե՛ր կաց, սիրտ իմ, որ դու ես վառես՝ նրան ձոնելու
Սիրո հզոր մի հրդեհ։

Վե՛ր կաց ցասկոտ ու վե՛ր կացրու ամենքին ու ամեն բան,
Դու է՛լ գնա ողջ երկրի հետ՝ տարված նրա վեհ կոչին.
Մինչև ծագի ողջ մարդկության օրը խնդուն հաղթության։
Մի օրն հավետ ու վերջին։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Դու ինձ եկար հիվանդի տես,
Ու երբ դռնից մտար դու ներս,
Հետըդ եկավ Շիրակը վեհ,
Արագածը ադամանդե,
Ասաղածորան զիշերներ խոր,
Շամբեր լուռ-լուռ՝ երազ անդորր,
Արոտների թախիծն անուշ.
Ծաղիկ... Եվ շատ օրերի հուշ ..
Տեսա օրերն այն երջանիկ,
Որ ո՛չ մի տեղ, երբեք չկան,
Որոնց համար եթե կուզես,
Հագիր ոտիդ երկաթ մաշիկ,
Ու առ ձեռդ երկաթ մական,
Գնա փնտրի՛ր թե որ գտնես ...

Երբ Հայաստանն է երգում
Դաշտում, ձորերի խորքում,
Ես քո ձայնն եմ լսում միշտ՝
Սրտախոր ու լիավիշտ։
Ժողովրդի երգն ես դու՝
Տրամաթախիծ ու անքուն,
Ամեն տեղ ես՝ դուրսն ու տուն,
Երբ Հայաստանն է երգում։

ՆՐՍ. ՕՋԱԽՈՒՄ

(«Գյանջևիական գիշերներ» շարքից)

Լո՜ւռ, սո՜ւս, այստեղ է նա՝ հավերժողը,
Մեծն Գյանջևին, լսո՞ւմ ես նրա
Շշունջն իմաստուն. նա է խոսողը
Անհուն բարբառով այս դաշտի վրա։
Այստեղից է նա երկինքն ընթերցել,
Աստղագիր և հուր այս գիրքն ահարկու,
Այս վայրերին են խոհերով նայել
Նրա աչքերը—աշխարհներ երկու։
Այստեղ է մարդուն նա վեհացրել,
Տվել մեծ տառը սուրբ մարդկայնության,
Հավերժություն է նա միշտ ուսուցել
Ադրբեջանցուն և ողջ մարդկության։
Ապա ինչո՞ւ եմ սարսուռով մի սուրբ
Մոտ զգում նրան՝ ինչպես աղգակցի,
Ինչո՞ւ եմ սիրով ինձ զգում ընդհուպ
Միաժամ հայ և ադրբեջանցի։
Ապա ինչո՞ւ եմ հպարտ նաև ես,
Որ կա աշխարհում մի վեհ Նիզամի,
Եվ Ադրբեջան ժողովրդի պես
Վերցրել իրավունք ես էլ մտերմի։
Այստեղ երազ է արթնությունն ասես,
Այստեղ շնչում են ալեոր դարեր,
Այստեղ ուղտերի քարավանի պես
Անցել են հպարտ վեհ պատմություններ։
Այս չինարները հեքիաթ են դյութող,
Այս սաղարթներում բեյթեր են հնչում,
Քյասիդ, զազել է անվերջ ամեն կողմ,
Լեգենդներ ողջ այս դաշտի միջում։
Այդ նա՞ է, միշտ նա խոսում ու երգում,
Ամեն ինչից վեր է ձգտում՝ սիրուն արթուն,

Երկու հավերժ բան նա ընտրեց կյանքում.—
Մեկն՝ հավերժություն, մեկը՝ մարդկություն։
Նա սեր է և հույս, միտք, լույսի աղբյուր,
Նրա օջախն եմ ընկել հուսով լի,
35 Նրան եմ եկել ուսելու և հյուր,
Բե՜ր ողջ մարդկության,—նա հյուր կընդունի։
Խաղաղ է, անդորր Ադրբեջանը
Աստղերը ճակատին հանց գիշեր անհուն,
Անդորր է սիրուս Նիզամու տանը,
40 Լսում եմ նրան և իմաստանանում։

ՄԵԿԸ ԵՎ ՄՅՈՒՍԸ

Ո՞վ է քծնողը—մի փուչ, ստոր մարդ,
Նրա գործն ի՞նչ է—քծնել անընդհատ.
Քծնում է ինչքան իր ուժն է պատում՝
Ում որ էլ գտնի իր շրջապատում։

5 Է՜հ, քծնել կուզի շատ մարդ աշխարհում.
Քծնողին ի՞նչ կա, նա ի՞նչ է կորցնում.
Նա միշտ կքծնի՜, հա՜, այդ քծնողը —
Բայց քծնվո՜ղը, բայց քծնվո՜ղը ...

Ասե՞նք ճշմարիտն ու չթաքցնենք.
10 Քծնողը շատ է խորամանկ ու ննդ.
Գիտի մարդկային մի կողմը թերի,
Որ մարդը շատ է գովքերին գերի։

Դրա համար էլ թողնենք քծնողին
Ու դառնանք իրե՜ն—այդ քծնվողին,
15 Շատ էլ քծնում է ստոր քծնողը —
Բայց քծնվո՜ղը, բայց քծնվո՜ղը ...

Տեսնում ես մեկը՝ համեստ էր, լավ մարդ.
Հենց պոստը գրավեց՝ էլ դարձավ հպարտ.
Ուշ է ընդունում, դժվար է խոսում.
«Ի՞նչ».—հարցնում ես քեզ,—«քծնա՞նք է ուզում»։

Պոստը գինի է, զարկում է գլխին.
Դիմացի՞ր, թե չէ՝ վա՜յ անշնորհք խմողին,
Հենց այդ է փնտրում վարպետ քծնողը.—
Բայց քծնվո՞ղը, բայց քծնվո՞ղը ...

Քծնանքն ամենից մեծ թույնն է կյանքում.
Ինչ կուզես ասա՝ քաղցր է կուլ գնում,
Մարդ կա՝ քծնող է կոչում ուրիշին,
Բայց քիչ չի ինքն էլ գերվում այդ ուժին։

Շատ էլ չխոսենք քծնողի վրա.
Նրա համար ի՞նչ. ստոր, փուչ է նա,
Ո՞վ է քծնողին սնունդ տվողը,
Նա՜, քծնվո՞ղը, նա՜, քծնվո՞ղը ...

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Գ Ա Ր Ո Ւ Ն

* *

Ի՞նչ քաղցր են երգում աստղերը համակ.
Թե՞ հովն է հեռուն ձգում իր ջութակ.
Աղբյո՞ւրն է մնչում արծաթ սառցի տակ.—
Ո՞չ, սի՞րտս է դարնան երգում ինքն իրան։

*
* *

Ինչքան ծիլ ծաղիկնե՞ր ծնվեցին այս գիշեր,
Ինչքան վառ ծաղիկնե՞ր զարթնեցին այս գիշեր,
Ինչքան թարմ դռնակնե՞ր բացվեցին այս գիշեր,
Դուրս ելան շուշաննե՞ր, անուշնե՞ր, մեղուշնե՞ր։
5 Ինչքան զի՞լ որոտաց սիրո ձայնն այս գիշեր.—
Մի ձայն էլ ինձ հասավ... Աչքս թա՞ց այս գիշեր ...

*
* *

Կարո՞ղ է լսել մարդ գարնան հեքն առաջին.
Ո՞վ լսի նրա մե՞ղմ ծլելը առաջին.
Ո՞վ պիտի ունկ դնի սրտիս լո՞ւռ հառաչին
Քեզնի՞ց զատ, որ միա՞յն լսում ես ու լռում։

*
* *

Սրտիս խորքում երգ են երգում, ուզում եմ լսեմ.
Բայց էնպե՞ս են անուշ երգում, ախր ո՞նց լսեմ.
Քո անունդ են երգում տալիս. ուզում եմ քեզ լսեմ,
Բայց վախենամ՝ ինքդ լսես, հետո ինձ մեղադրես ...

6—179

* *

Դու մի վե՜հ գիշեր ես՝ ծովացած լուսընկա՜,
Ունքերիդ շուքի տակ մի անո՜ւշ գաղանիք կա.
Մի վերք տալ գիտես դու, որ ինչ խոր՝ այնքան սո՜ւր,
Որ ինչ սուր՝ այնքան հո՜ւր ու այնքան սրտին դո՜ւր։

* *

Այդ կրակ շուրթերդ ի՞նչ՝ երբ մի շուրթ չեն վառում.
Այդ մարմար մատներդ ի՞նչ՝ երբ մի սպագ չեն մարում.
Ի՜մ անհաս, ի՜մ հրաշք, ե՛կ մի օր, կատարվի՜.
Ե՜կ, ասա՜ շասվելուդ, թող մահն է՛լ մի մեռնի ...

* *

Էրնե՜կ մի գիտնայի թե ի՞նչ է քո ուսում,
Եվ դեմքդ միշտ գրքիդ՝ ինչե՞ր ես միշտ ասում.
Մի համբո՜ւյր շուրթերիդ, որ այդքան չխոսեն,
Որ այդքան չլռեն՝ ինչից սիրտն է խոսում։

* *

Ի՞նչ կլներ՝ լիներիր մի քիչ բաց, քիչ անկարգ,
Մի քիչ էլ անբարո՜, մի քիչ էլ թեթևաբա՜րք,
Մի քիչ էլ առվակին ու վարդի՜ն լսեիր՝
Առավե՜լ լիներիր բարեպաշտ, ներդաշնակ ...

* *

Սիրտ հավքն էս ինչո՞ւ խելք-խրատ չգիտե.
Էս ինչո՞ւ իր բնի տեղն ընտրել չգիտե.
Ախր տես ո՞վ եմ ես, նայիր տե՛ս ո՞վ ես դու.—
Ո՞ւր թառեց մեր սրտում՝ էդ ինքն էլ չգիտե ...

*

* *

Կանչեցի՝ հեռո՞ւ ես,
Հիշեցի... Կորա՞ծ ես ...
Լսիր, ջա՜ն, ի՜մ միակ, ի՜մ թաքուն, իմ դժվար,
Ե՞կ մի ժամ ու մոռցի՛ր թե կա մարդ, կա աշխարհ,
5 Եկ ոտնե՛րդ ընկնեմ ես, մեկ լինի՞ չլնելուն,
Մեկ սիրե՜ս չսպասած, մեկ չասե՜մ «ո՜վ» և «ո՜ւմ»...

*

* *

Ի՜մ անուշ սխալմունք, չանելո՜ւ,—բայց եղա՞ծ.
Ի՜մ գարնան գժություն, ի՜մ էսպե՜ս ուզած սեր.
Արի դո՜ւրս, մարդ չկա, լուսնա՜կ է, մի՜ քաշվիր.
Շա՜տ է նա մեղպեսներ տեսել ու դառել ծեր։

*

* *

Ավերվե՜ր դպրոցդ, ուր դու լուրջ ես այդքան.
Վարդ ու թուփ կոտրեին սեղան, դուռ, որչափ կան.
Քամին զար ցրիվ տար գրքերդ մի՛շտ ունայն,—
Որ էլ կարդ չպահե՜ս, որ չանե՜ս՝ ինչ որ չե՜ս։

*

* *

Ի՜մ գարունքի քաղցր սխալ, հարկավոր չէր, բայց էլ եղա՞ր ...
Ի՜մ սրտի սեր, ի՜մ չլնելիք, սրտիցս դուրս երբե՛ք չեկար ...
Երբ քեզ գրկել ես կամեցա՝ լոկ երա՞զդ մնաց գրկիս,
Երբ երազդ համբուրեցի՝ լոկ անունդ կպավ շուրթիս։

*

* *

Լսի՛ր, ջա՜ն, ի՜մ ափսոս, ի՜մ ձեռից զնացած
Մի՛ աչքիս երևա՝ երբ հնարդ էլ չկա՞ ...
Արի վա՜ռ երազում, որ հնարն հեշտանա՞
Մի ասե՜մ չասվելուն, մի ականջդ իմանա՞ ...

*
* *

Թե ե՛ս քեզ կորցրի՝ նեղի՛ր իմ կարճ խելքին.
Թե դո՛ւ պիտ կորչեիր՝ նեղի՛ր իմ խամ սրտին.
Ի՞մ անուշ սխալմունք, եղի՛ր՝ երբ եղել ես,
Մի սեր էլ աշխարհում թող լինի հենց էսպե՞ս...

*
* *

Էլ ինչո՞վ ապրեմ ես առանց քեզ, մենավո՞ր,
Երբ քեզնից չունիմ հույս, ի՞մ երազ հեռավոր.
Ա՞յս էր քո խոստումը երազում ինձ տված,
Ի՞մ գարնան որոնած, ի՞մ աշնան դանված ...

*
* *

Էլ ինչո՞վ ապրեմ ես այս օրերն իմ աշուն,
Ի՞մ վճիտ երեխա, ի՞մ ջահել, ի՞մ նախշուն,
Դու՝ աղբյուր լուսեղեն՝ սերած թարմ ձյուներից,
Ես՝ պղտոր մի սև գետ՝ եկած մութ ձորերից։

*
* *

Ա՞խ, է՛ն օր կորցրի քեզ՝ երբ է՛ն օր գտա քեզ,
Ա՞խ, է՛ն օր գտա քեզ՝ երբ կորցրա՛ծ էի քեզ ...
Մի՞թե չեմ դիպչելու քո նկար մատներիդ,
Մի՞թե չի կպչելու մի՞ հյուլես հյուլեիդ ...

*
* *

Ի՞մ կյանքիս միակ ժպիտ, ի՞մ սրտիս ճշմարտություն,
Ի՞մ հոգուս միակ ախորժ, ի՞մ դեղ ու առողջություն,
Դո՞ւ, որ իմ ձեռքից կորար՝ ի՞մ անձն էլ կորչել պիտեր—
Գոհարն էնդուր է միշտ կորչում, որ է անգի՞ն, որ ունի տե՞ր։

*

* *

Ի՞նչ եղար, ո՞ւր կորար, կա՞ս մի տեղ, արդյոք ո՞ւր,
Էս խավար քաղաքում դու մի հուր՝ աչքս ջուր.
Ծո՞վն եկավ կուլ տվեց քեզ անգին քարի պես,
Թե՞ շիրիմիս կանգնած ես, ձա՞յնդ չեմ առնում ես։

*

* *

Չլնի՞ թե, ճերմա՛կ վարդ, շորացար սև խավրում,
Չլնի՞ թե, ե՛ս եմ ողջ, դու չկաս աշխարհում.
Չե՞մ տեսնում, չե՞մ տեսնում, չե՞մ տեսնում քեզ մի օր,
Չե՞մ տեսնում ոչ մի մարդ ինձ նման դժվարում ...

*

* *

Լո՞ւռ եմ ես, որ լսես,
Ի՞մ դժվար լսելիք ...
Մի՞թե իրավ քե՞զ եմ տեսնում, ի՞մ լույս երազ ...
Երազածն ի՞նչպես տեսնի մարդ արթմնի ...
Թե՞ ինքս է՞լ արդեն չկամ, ե՞ս եմ երազ,
Դո՛ւ ես կյանքում, դու ես շողում, դո՛ւ արթմնի։

*

* *

Թե ոսկեթել ծամիդ մե՞կն էլ քո Նաղաշի շիրմին կախվեր՝
Քո թել կտրած Նաղաշն էլի՞ կվերկենար, ո՞տդ կնկներ ...
Դեռ քեզ չե՞մ մոռցել ես, չե՞մ մեռել, ի՞մ վերջին,
Դեռ ես կա՞մ՝ ոնց քեզ տեսած օ՞րն առաջին.
Ի՞մ միակ արշալույս, ի՞մ վերջին վերջալույս,
Պլպլում եմ՝ քեզ տեսնեմ ու հանգչեմ, աչքի՛ս լույս ...

*

* *

Ո՞նց ես քեզ ձեռքից կորցրի, ո՞նց ավի քեզ էն մեկին.
Ո՞նց սիրաս հանդարտ պահեմ քեզ տեսած նրա գրկին.
Ո՞նց հաշտվեմ, տեղն ի՞նչ առնեմ, ի՞մ անտուր, ի՞մ միակ կյանք...
Կյանքն էնդուր է միշտ անգին, որ քանց ինքն՝ էլ չունի՛ գին։

*

* *

Այդ քո ծավ աչքերիդ ինչքա՞ն եմ կարոտել,
Այդ անգութ հեռու տեղդ ինչքա՞ն եմ ես ատել ...
Ո՞ր գարնան պիտի դաս, ի՞մ թռչնիկ անընտել,
Ի՞մ դժվար, ի՞մ երբեք, ի՞մ մի օր չլինելու ...

*

* *

Էսպե՞ս է, սի՞րաս, էն չկա՞, սի՞րաս, չի՛ լինի, սի՞րաս,
Էն կորավ, սի՞րաս, ի՞նչ արած, սի՞րաս, էս մի՞շտ է
էսպես ...

Էրնեկ գա՞մ երազիդ ու սիրտդ գողանամ,
Վեր կենաս ինձ փնտրես՝ ես մոքիցդ հեռանամ,
Ու երբ էլ միտդ ընկնեմ՝ դաս՝ քո սիրտն ուրանամ,
Ինձ սիրես, միտ բերես ու ես քեզ մոռանամ ...

*

* *

Դու շուշա՞ն լուսընկա, դու ծովի՞կ շողշողուն,
Դու հեքիա՞թ հարավի, դու ասողիկ փողփողուն,
Դու ալիք կարկաչո՞ւն, դու հեռուն, դու հեռվո՞ւմ,
Երբ քեզ եմ գալիս ես՝ դու հալչում, երազվո՞ւմ։

*

* *

Ի՞մ լուսընկա, իմ մարմար գիշեր, պիտի գնա՞մ.
Ի՞մ ասողալի կապույտ հեքիաթ, պիտ՝ հեռանա՞մ.
Էդ քու անուշ պատմվիլդ ո՞ւր իմանամ,
Ո՞ւր իմանամ, երազանամ, անէանա՞մ։

*

* *

Շատ ծաղկի սեր կխմես՝ ի՞մն էլի միտդ կնկնի.
Շատ կդաս, գալո՞ւդ մատաղ, կփնտրես, ինձ չես
գտնի ...
Գնո՞ւմ ես, գնա՛, ջա՛ն, օրհնվի՞ քո ճամփան.
Դու քոնը՝ դեպի կյանք, ես իմը՝ դե՛պ՝ տապան։
Մի՞ անգամ, մի վերջի՛ն նայի՛ր ինձ քաղցրացած,
Ու գնա՛, դա՞ռն եկած ու անո՞ւշ գնացած ...

*

* *

Իմ բոլոր բա՞ռերս,
Իմ բոլոր քա՞ղցրս,
Դու էիր, ցա՞վս ...
Եկան ասին այց ես արել բարեկամիդ դերեզմանին,
Վրան զարնան փունջ ես դրել լույս մատներով դրախտային ...
Էրնեկ չէ՞ր ինձ, շիրիմումն էի՝ ձեռդ մի վարդ սրտիս դներ,
Ու երբ շունչդ հողիս դիպչեր՝ հազա՞ր հառաչ ոտքդ ընկներ...

*

* *

Ա՞խ, սիրտս անմեկին այնպե՞ս կարոտում.
Սիրում է մեկին՝ չգիտեմ թե ո՞ւմ ...
Ապրիլին էր, որ քեզ տեսա, իմ նո՞ր գարուն.
Վարդի նման հագված էիր՝ կո՞կ ու սիրուն.
Մոտովս անցար, ինձ խփեցիր մի վառ թերթով.
Էդ ի՞նչ ուժ էր... Ո՞տդ գցեց ինձ պես գերուն։

*
* *

Կյանքն է հոգն դատարկ չինի.
Կուզես թո՛ւյն լիս, կուզես՝ գինի՝.
Սի՛րա իմ, ժուժկալ մի՛ լինի զուր.—
Լի՛ց, զո՛հն ես դու մեկնումինի։

Կարծեմ իմ նոր սերս գիտե՞ն փարիսեցիք ու նոր դպիրք.
Որ քո չքնաղ ոտների տակ ես պատռել եմ խրատց գիրք.
Կարծեմ գիտեն, որ ես վաղուց ծուռ ճամփեքով ման եմ գալիս.—
Բայց և գիտե՞ն, որ ես տեսա նրանց զողտուկ քեզ նայելիս։

*
* *

Ա՞խ միշտ սերից սեր՝ Թիթեռի նման՝
Թռչում եմ, այրվում աշխարքիս վրա,
Քանի մեջս կա մի շա՞տ դժգոհ բան,
Որի գերին եմ՝ — և իմ սիրտն է դա ...

Դեմս եկար զարնան նման ծաղիկներո՞վ, կրակելո՞վ,
Ալ ու կրակ շողշողա՞լով, շո՞ղ ու շախտա՞վ, թավալո՞վ.
Թիթեռի պես ծիծաղելո՞վ, սգվոր սիրտս բաց անելո՞վ
Սիրտս բացիր նո՞ր երգերով, նո՞ր գինիով, նո՞ր վարդերով։

*
* *

Այդու դեռն կանգնել էր մեկն ու զիլ կանչում դավը բռնած.
Ի՞նչ բանի եք, գժե՞ր, եկե՞ք, կյանքը գնա՞ց, գինին մնա՞ց...
Մի վառ ծաղկով զարկեցիր ինձ ու անց կացար դու իմ մոտով.
Ախ, ի՞նչ անուշ գարուն փչեց քո էդ ծաղկից զվարթ հոտով.
Մատա՞ղ լինեմ էդ մատներիդ, որ էն ծաղկով լցրին հոգիս
Աստղե՞ր, երգե՞ր, գինի ու քե՞ֆ, հազրեվարդեր, խունկ ու նարգի՞ս։

*
* *

Էս զարնան մատաղ հավքերն ի՞նչ բարակ ձգում են «վա՞շ».
Ի՞նչ սուր են հառաչ հանում նոր հովերն անուշ-մատղա՞շ.
Ի՞նչ թեկ-թեկ սվսվում են էս ծաղկունքն ալ ու խաշխաշ ...
Թե՞լ դառա էսքան ձենից.—սե՞ր եմ ես, ու սիրտս է մա՞շ ...

*

* *

Քա՜ղցր ես՝ ոնց առողջացում, ուրախ ես՝ ոնց առողջություն,
Յանկալի՜ ես, ինչ բարի լուր, փնտրված էս՝ ինչ փրկություն,
Հազա՜ր տարվա տրտմությունս մեկ վայրկենում սրբում ես դուն.
Քեզ տեսնելիս այնպես եմ ես, ոնց մի զարիբ դառնում եմ տուն։

*

* *

Սիրաս գինու զվարթ գավ էր՝ կոտրեցի՜ն...
Բայց փշրանքում երգ ու բույրեր մնացին։
Ջա՜ն, քեզ էնդուր եմ հավան, որ գինով վառ աչքեր ունես,
Ունքերիդ տակից էլ բարակ ու մանրիկ նայել ունես,
Շուրթերիդ արանքն էլ ծածուկ ատամի մեկ ժպիտ ունես,
Իրրև չե՜ս ինձ մոտիկ տալիս՝ բայց անո՜ւշ աչքերդ են սրտիս։

*

* *

Էն պաղ-պաղ կույսերի միջին իմ սրտի քունը միշտ տարավ.
Էն սուտ-սուտ սրբերի միջին իմ հոգին սառեց ու մեռավ.—
Մատա՜ղ եմ էդ դարնան ձայնիդ, որ կլկլաց ժիր գինու նման,
Կլկլաց ու լցվեց իմ հոգին ու բացեց քնֆս նոր գարնան։

*

* *

Ատեցի՜ օրենք ու խրատ՝ էդ մանրիկ ոտներդ սիրեցի.
Էլ թողի՜ ճշմարտի ճամփան՝ ոտներիդ ուղին գնացի.
Էդ գինով աչքերիդ միջին կյանքի իմաստը կարդացի ...
Մոլո՜ր եմ, հենց քա՜ղցր մոլոր՝ ուրա՜խ եմ զոր-գիշեր բոլոր։

*

* *

Լսո՞ւմ եք, վարդե՞ր, զվարթնե՞ր, զարդե՞ր,
Լսե՞ք, ա՜յ նորեր... Կա՞րճ են ձեր օրեր...
Գալիս ես քեֆով ու էշխո՞վ՝ գինու և երգի նման,
Էդ անուշ ու մանտրիկ ժպտով՝ գողունի լուսնակի նման,
Թեթև ես դու պարի նման, էնդուր եմ ես թրթռում էսքան,
Բաներ շա՞տ ունես դարդիման՝ ի՞սկ և իսկ իմ սրտիս նման...

*

* *

Թո՛ւյլ տուր թեռվդ ինձ գիրկդ բերեմ,
Եվ շուրթերովդ մեկ ինձ համբուրեմ։
Էդ մանրիկ ոտքերն որ ունես՝ առաքինի՞ ես, սուրբ ե՞ս...
Էդ նազուկ մատներն որ ունես՝ դու բարեպա՞շտ ես, սո՞ւրբ ես...
Էդ դրախտի հասակդ որ ունես՝ դու առաքյա՞լ ես, սո՞ւրբ ես...
Չկա՞ քեզնից վեր մի ինչ, չե՞մ ուզում քեզնից վեր ոչինչ։

*

* *

Ամեն թանկ բաներն ունես՝ ամաչն ու խրատը չունես.
Ամաչն ու խրատն որ չունես՝ ամենից թանկ բանը ունե՞ս.
Ես էլ հո բան չունեմ ուրիշ՝ քե՛զ միայն ունեմ իմ սրտիս.
Քեզ էլ որ իմ սրտի՞ս ունեմ՝ ամենից թանկն ունեմ սրտիս։

*

* *

Ասա՛ մատներիդ՝ ուսնա՞կ, մեատքսի՞,
Բերանս փակեն, որ շատ չխոսի՞...
Թե գեղեցկին դու չդովես՝ կա՞ մեկ հանցանք դրանից վեր.
Թե զովքիցդ էլ կրակն ընկնես՝ կա՞ մեկ պատիժ դրանից վեր.
Թե ունեցաս էն մեծ խելքն էլ՝ ու մեղք չանես՝ որ չզղջաս,
Հենց էդքան մե՞ծ խելքիդ համար՝ կա՞ մեծ անխելք քեզանից վեր։

*
* *

Մեկ էլ պիտի լույսը բացվի՞, որ քեզ տեսնեմ.
Երկա՞ր գիշեր, վախնամ լույսի՛ն ես չհասնեմ.
Աստղերի հետ կերոն դառել՝ վառվում եմ ես.
Նրանց ի՞նչ փույթ, ե՞ս հատնում եմ, ե՞ս վառվ եմ։

*
* *

Ի՞մ ոսկե դու գինի, ի՞մ գինի ծիրանի,
Կմեռնեմ, կլնեմ կա՞վ, որ քեզ միշտ դառնամ գա՞վ։
Լույսն եկա՞վ, օրն եկա՞վ, ե՞կ, մաղե՞ր ծիրանի,
Ե՛կ, շողե՞ր ոսկեթել, առավո՞տ գարունի,
Ե՛կ, աչքե՞ր ոսկեթաս, ե՛կ ծիծղո՞ւն իմ գինի,
Լույսն եկա՞վ, լո՞ւյս իմ, ե՛կ, խինդն եկա՞վ, խի՞նդ իմ, ե՞կ ...

*
* *

Գերուն էսպես ազատ պահել չի՛ լինի.—
Ի՞նչ գերիդ եմ, երբ թևերիդ շղթա՞ն վզիս չլինի ...
Ի՞մ սրտիս ծածուկ սեր, ո՞նց թաքուն պահեմ քեզ,
Ի՞մ գինի խենթ ու ժիր, ըմպե՞լ եմ արդեն քեզ,
Աչքերդ հոսել են աչքերիս լույսի պես,
Լցվա՞ծ եմ քեզանով, ես դո՞ւ եմ, և դու՝ ե՞ս...

*
* *

Ջա՞ն, մի՛ մաշիր աչքիդ լույսը բարոյության գրքի վրա,
Հազար խրատ ու գիտություն չարժեն մեկ թանկ շողին նրա.
Դի՛ր դրախտի անմահ ոտդ էդ գիրք ասած շիրմաքարին,
Վա՞ղ է մեռել բարոյություն, ո՞ւմ ես պարում, ի՞մ սրբություն...

*

* *

Ի՜մ վերջին թաս կայտառ գինի, ի՜մ ուշացած, ի՜մ նուշացած,
Ձեռքս թեթև՜ բռնում է քեզ ու բարձրանում դեպի Աստված.
Դու էն ժամին ստեղծվեցիր՝ երբ ժպտում էր բարին Աստված,
Ու էն անմահ ժպտից մի շող անո՜ւշ դեմքիդ կաթեց մնաց ...

*

* *

Է՜հ իմ սիրտն էլ էսպե՜ս ուզեց, որ դու էս գիժ բանը անե՜ս.
Հա՜, իմ ջանս, ես գիտեի, որ լոթի ես, դու էդ կանե՜ս.
Ինչ աշխարքում չէիր տեսել՝ դու է՜ն տեսար, դու է՜ն արիր,—
Բայց աշխարքն էլ ե՞րբ էր տեսել մեկ դարդիման աղջիկ քեզ պես...

*

* *

Էս երկնի մարդրիտը, էս շողշող լուսնակը
Տեսնես ո՞ր հեքիաթի մանյակից մի հատիկ՝
Ընկել է էս ծովը, էս փերուզ հատակը ...
Եվ դո՜ւ, ի՞նչ հեքիաթ էս, ի՜մ հրաշք, իմ պատիկ։

*

* *

Մի պահ ե՜ս,—և փոշի ենք դուն և ես ...
Ո՞վ պիտի քեզ փնտրի, կանչի՝ ջա՜ն, ո՞ւր ես ...
Տխո՜ւր եմ, ջա՜ն, մի վա՜րդ ղրկիր՝ ուրախանա՜մ.
Վարդի հետն էլ մի համբո՜ւյր դիր՝ զվարթանա՜մ.
Ամեն թերթում մի՜կ համբույր դիր՝ թող լիանա՜մ.
Ի՜նքդ արի... Ոտներդ ընկնեմ, երջանկանա՜մ։

*

* *

Լոթի՜ ես, քա՜ղցրն ես, լա՜վն ես, էնդո՜ւր եմ քաղցրացել էսպես,
Շատո՜վ ես տեսքով ու խոսքով, էնդո՜ւր եմ ես բացվել էսպես,
Կանոն ու խրատ չդիտես՝ անառակ իմ սրտիս նման,
էնդո՜ւր եմ սգաշորս հանել իմ հազա՜ր-հազա՜ր տարվան ...

*

* *

Լոթի՜ ես, անո՜ւշ ես, լա՜վն ես՝ էնդուր եմ քիզ հավան էսքան.
Գինի՜ ես դու սիրտ բաց անող՝ էնդուր եմ լավ քիֆով էսքան.
Էնքան եմ ես գինով քեզնով՝ աշխարքն է պտտվում գլխիս.—
Վախեմ թե պտուտից սահեմ ու նազուկ ոտներդ ընկնեմ։

*

* *

Սև ունքերիդ նոճերի տակ
Երկ-պատուհան ու կիսափակ
Գինետուն կար անուշ գինով,—
Ո՞ւմ ծախեցիր կրակ գնով ...
Քանի որ կաս կյանքիս այդում՝ սգաշորս պետք եմ հանած.
Ինձ պետք է մի զվարթ կապա՝ քո մատներով ոսկեկարած.
Սփռի՛ր վրաս վարդի թերթեր՝ մարգարիտե ցողով ջրած,
Տո՛ւր ինձ մի թաս ոսկե գինի, վրան արծաթ փրփուր շարած։

*

* *

Լոթի՜ ես գինո՛ւ նման... Գինի՜ ես լոթու նման ...
Ջա՜ն, էդ քո աշխույժ քայլով՝ դու ժիր ես քիֆի նման.
Էդ մանրիկ ժպիտն որ ունես, թեթև ես լույսի նման,
Լա՜վ խոսք ես դու սիրտս բացող՝ լսվում ես երգի նման։

*

* *

Դու չես գալիս՝ կա՜մքդ լինի, բարեկա՜մ,
Ասա՜ պատիկ էդ ոտներիդ՝ նրա՜նք գան ...
Ուրա՜խ եմ, ամա՜ն, ուրա՜խ, լալիս եմ, լացս է ուրա՜խ,
Ի՜մն ես, թե իմը չես դու՝ էլի՜ եմ, ջա՜ն, էլի՜ ուրախ.
Քանի որ աշխարքում դու կաս՝ ինձ համար մա՜հն էլ է ուրախ.
Թող ես հո՜ղ դառնամ ոտիդ՝ ուրա՜խ եմ, մատա՜ղ եմ, ուրա՜խ։

*

* *

Դարդիման ես, քնֆի աղջի՜կ, դու ծիծա՜ղն ես երկնածովի.
Դու դալիս ես գինո՜վ, խորո՜ւնկ՝ ինչպես գիշեր ջե՜րմ հարավի,
Մի՜շտ կարծում եմ թե իմ գիրկն ես ու աչքերդ են մո՜տ շուրթերիս
Օ՜րն առաջին, որ քեզ տեսա՝ դու թվացիր հի՜ն սիրելի։

*

* *

Ի՜մ գինի ծիրանի, ի՜մ ազնիվ ոսկի դավ,
Առանց էդ վառ գինու՝ ես ու դու՝ անշունչ կավ.
Դու գինով է՜դ գինով, ես՝ քեզնո՜վ, քո աշխո՜վ,
Լի՜ մնաս էդ գինով, ես՝ քեզնո՜վ, քո խաղով ...

*

* *

Այս կյանքը, որ սին է արդեն և կոտրվող չինի՝
Մի քիչ խնդում պահել է ինձ—տակին մի կում գինի.
Ջա՜ն, բեր էդ քո նազուկ ձեռով էս մի կումն էլ խմենք.
Վերջին կումն է—քանի գնա՝ անո՜ւշ պիտի լինի։

*

* *

Քեզ է՜լ եմ մատաղ ես, նրան է՜լ, ի՜մ մատաղ,
Բյուր մատաղ նրան եմ, հազարն էլ քի՜զ, մատա՜ղ.
Նա գիշեր սևահեր, ադամանդ, ասղալի,
Դու գարնան ոսկի օր, դու ծամեր ծիրանի.
5 Նա է քուն, երազանք, դու արթուն զվարթ այդ,—
Հազար «ա՜խ» նրա՜ն եմ, բյուր էլ քի՜զ, ի՜մ մատաղ։

*

* *

Երկու վարդ սիրեցի. մինը լո՜ւյս, ճերմակ վարդ.
Մյուսը կարմի՜ր վարդ, մթի՜ն վարդ, բոսո՜ր վարդ.
Ինչքան սև՜ տվիր ինձ, իմ լո՜ւյս վարդ, ճերմա՜կ վարդ.
Մատա՜ղ քեզ, մյո՜ւս վարդ, իմ վա՜ռ վարդ, ի՜մ զվարթ։

*
* *

Լսիր, ջա՜ն, չերթա՛ս ժամ՝ պսակվիս, ի՜մ մատաղ,
Ջանե՛ս մարդ ամուսին, որ չանես հազա՜ր ախ.
Մի՜ մանի ոսկի բանտ՝ դառնաս հավք անուրախ,
Սիրով է՛լ չկապվիս, թե հրեշտակ կապի քեզ...

*
* *

Ի՜մ վերջին մայիս օր, ի՜մ վերջին թաս գինի,
Ի՜մ վերջին խնդություն, ի՜մ ժպիտ վերջինի ...
Աշխարքի դռան մոտ ճամփո՜ւ ես դնում ինձ,
Տո՛ւր քեզնից մի հաղորդ, ես գնա՜մ, ես ճամփո՜րդ ...

*
* *

Մի վարդ ունեմ դժվար հիվանդ.
Ասավա՜ծ, ի՞նչ լուր պիտի առնեմ.
Վախեմ էնքա՜ն դժվարանա,
Չդիմանա... Որ ես մեռնե՜մ...
Մեկ ճերմակ վարդ ասավ, Նազա՜շ, հիվանդ եմ.
Գնամ պառկեմ, վախե՛մ հոգիս ավանդեմ,
Ասի՝ հոգի՛, հոգի՛ս կտամ՝ չմեռնես.
Ասավ՝ էդ մե՜կ խոսքդ էլ բավ է՝ ապրեմ ես։

*
* *

Թեկուզ ծաղկունք հազա՜ր զուգսով դեմդ գան,
Թեկուզ աստղունք հազա՜ր ժպտով բարև տան,
Թեկուզ շուրջդ հավք ու ջրե՜ր զնդզնգան,—
Արժե՞քն ինչ է՝ երբ նուշ յա՜րդ հետդ չէ ...

*

* *

Ափսո՜ս, թռչուն էն օրերին,
«Ա՜խ» կանչեցինք, թռցրինք,
Ափսո՜ս, և մեր է՞ն «ախ»-երին,—
Մեր կյանքն էին՝ թռցրինք...
Լա՜ց է լինում մայիս օրը հոնգուր-հոնգուր,
Ո՞նց բարկացել, ո՞նց է գոռում աղեկոուր.
Է՜հ, ջահե՜լ սիրտ, թող լա՜ մի քիչ, վնա՜ս չունի,
Էրնե՜կ նրա սիրտ լացին մե՜ծ-սրտանի ...

*

* *

Գարունն եկել, գորգ է փռել
Մվե՜ն-ծվե՜ն, ձոր ու քարա՜փ.
Լա՜վ գորգեր են սեր անելու՝—
Անխե՜լք զույգեր... Ողջը պարա՜պ...
Հիմար էի երբեմն ես իմաստունի չափ,
Եվ հիմի էլ իմաստուն եմ մի հիմարի չափ,
Ես չըմպեցի իմ վառ գինին, երբ որ փրփրում էր նա.
Անփրփուրն եմ հիմա խմում, ե՜ս եմ փրփրում հիմա։

*

* *

Ո՞վ է մտել մեր վառ այգին, շուշա՜ն, հասմի՜կ, վարդե՜ր, հասե՜ք,
Ջահելության գողը, չլնի՞ ժամանակը... Փախե՜ք, փախե՜ք,
Փախե՜ք՝ կգա՜ ու կտանի քաղցր բուրմունք, շո՜ղն աչքերի,
Սե՜ր սրտից մեծ-սրտանի,—հպարտությունն էս օրերի՝ ...

*

* *

Էն ո՞ր օրվա դարբասի մոտ մի սև գիշեր կանգնած չէր ...
Ո՞ր գիշերի խավար դռան մի արշալույս վառված չէր։
Ասա՜, մի՞թե երեկ չէիր աղջիկ պստիկ ու նազանի.
Ասա՜, երբ է՞լ վեր վազեցիր վառ դրախտի նոճու նման.
Կրա՜կ ես դառել, քայլ ես փոխում ռաշի նման մեծ-սրտանի.—
Քեզ տեսնելիս սիրտս է թրթռում, վախե՜մ սերդ հոգիս հանի ...

*

* *

Մի՛ լար, մի՛ թացիր աչքերդ. աչքիդ լույսն ափսո՞ս է՝ կանցնի՛.
Մի՛ տխրիր, նոր գարուն հասակդ մի օր է վառ մայիս՝ կանցնի՛.
Ջա՛ն, ի՞նչ ես էդ դարդին գերվել, գիշե՛ր է, վերջ կտա՝ կանցնի՛,
Աշխարքն էլ հեքիաթ է էսպես, մի՛ շտապիր, կհատնի՝ կանցնի՛։

*

* *

Ինչքան մա՛րդ, չասես՝ մա՛հ՝ միշտ կա մա՛հ, ազահ մա՛հ.
Թե կա մա՛հ՝ ակամա՛, թե կամա՛ կդա մա՛հ.
Էս պալատում քեֆ էր մի օր,—քեֆն ու պալատ անց կացան.
Հիմա մի բու ավերակում արտնջում է վի՛շ, կու-կո՛ւ ...
Դու ուրա՛խ կաց, կյանքը անցավ, երգերն եղան ցիրուցան,—
Անցնելը մե՛կ դարդ է արդեն, դարդ անելը միշտ երկու ...

*

* *

Հանդիպեցինք, զրուցեցինք,—դու՝ արշալո՛ւյս, դու՝ խնդամա՛ծ,
Ես՝ մթընշող, ես՝ տխրամած
Զրուցեցինք, բաժանվեցինք,—ինձ նայելուց՝ դու տխրադե՛մ,
Քեզ նայելուց ես ժպտադեմ։

*

* *

Գալիս էին թրվռալով երկու գարուն, երկու նախշուն,
Եկավ անցնի նրանց կողքով մի մտորուն, մի լուռ աշուն։
Նայեց նրանց խոր թախծելով մի մտորուն, մի լուռ աշուն,
Ու չտեսան, անցա՛ն երգով երկու գարուն, երկու նախշուն։

*

* *

Ախ, ո՞նց մոռանամ քեզ, ի՞նչդ մոռանամ ես ...
Աչքե՞րդ են գոհար, ծա՞մդ ոսկիլար,
Դե՞մքդ նուրբ նշխար, շո՞ղքդ չնաշխարհ,
Մի՞ջքդ ուռի ծառ, ձա՞յնդ էն պայծառ.—
5 Ո՞ւր ես, է՛յ ջան, ո՛ւր. ես՝ մոխիր, դու հո՛ւլ ...

*

* *

Դու լա՜վն արա. վերջը էլի՞ լավությունից լավ բան չկա.
Դու լա՜վն արա. որ չմնա՝ լավությունը պիտի մնա.
Դու մտիկ տուր ամպ-երկնքին՝ ո՞նց է ուտում ինքը իրան,—
Բայց և նայիր ո՞նց է պայծառ՝ երբ ցողել է երկնի վրան։

*

* *

Հե՛ր ինք, ախպե՛ր, գազազնցի՞նք էս միշտ անկար աղքատներից.
Գազազնցի՞նք, էլ ձանձրացա՞նք, էս սիրտը քար հարուստներից.
Օ՜հ, երկու բան սի՛րտ է պատռում, երկու բան կա զարհուրելի՜...
Մին՝ գոռալը թշվառների, մին՝ լռելը վայելողների։

*

* *

Թե Աստված աշխարքն էսպես է սարքել՝
Իմ խելքըս էլ ի՞նչ.
Թե մի շյուղն անգամ չի ուզում շակել
Իմ ասելս էլ ի՞նչ.
5 Թե աշխարհ գալս, աշխարհից գնալս
Իմ կամքով չէ՛ր իսկ՝—
Ուզել չուզե՞լ ինչ, ե՞ս ինչ, աշխա՞րհն ինչ։

Ա. Յ Լ, ՔԱ. Ռ Յ Ա. Կ Ն Ե Ր

*
* *

Անվերջ էի կարծում կյանքը—գետի պե՞ս,
Սերն ու խնդում առատ, անբավ—գետի պե՞ս,
Մեծսրտանի շատ ման եկա—գետի պե՞ս,
Քրքո՞ւր, փրփո՞ւր փշրվեցի—գետի պե՞ս։

*
* *

Դե՛, հասնում ենք, քի՞չ մնաց,
Ծովը անցանք, լիճ մնաց,
Մի սա՛ր, մի ձո՛ր, մի քար է՛լ—
Բայց կյանքիցն էլ ի՞նչ մնաց։

*
* *

Քեզ հետ առողջ եմ ու գեղեցիկ,
Քեզ հետ երիտ եմ ու երջանիկ,
Չի՞ անցած քեզ հետ կյանքս դեռ,
Չե՞ն թափված այդ գրքիս վարդ էջեր,
5 Քեզ հետ ես նա՛ եմ, ինչ էի —
Մի վառ արշալույս մայիսի։

*
* *

Հողը ծաղիկ է դառնում,
Ծաղիկը բույր,
Բույրը սեր է դառնում
Եվ սերը երգ.
5 Որքան անհուն են ուղիներդ բյուր,
Ո՜վ մեծ երգ,—
Տիեզերք։

*
* *

Մի ծաղիկ նետեցի գետի մեջ՝ գնա՜ց.
Մի հառաչ նետեցի գետի մեջ՝ գնա՜ց.
Միշտ նրանց գնացած ճամփան եմ խորհում,
Կյանքիս պես, որ ընկավ գետի մեջ՝ գնա՜ց։

*
* *

Վառվում էր սիրտս բոցկլտած, հուրիկ,
Եկար երազում, իմ կորած քուրիկ,
Ջուր ածիր սրտիս, հանգանք սիրտս ու ես
Ու մոխիր դառանք սրտիդ ու քեզ պես։

*
* *

Մութն է շաղվում կյանքիս վրա,
Քեզանից եմ սպասում լույս,
Սպասում եմ ցայտին նրա՝
Երբ քեզանից չկա՛ մի հույս...

ՊՈԵՄՆԵՐ

ԿՅԱՆՔԻ ՏԵՍԻԼԸ

«ԿՅԱՆՔԻ ՏԵՍԻԼԻ» ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Ճամփե՞մ հիմի ձեզ, անո՜ւշ ուրուներ,
Սերե՛ր վաղեմի, իմ հի՛ն ընկերներ,
Ճամփե՞մ հիմի ձեզ անհայտ հեռուներն,
Ո՞վ դանձեր իմ խոր, անբուժ մենության։
Եվ ո՞ւր եք գնում, ում մո՞տը արդյոք ...
Ոմանց թե գիտեմ, շատին եմ ես խորթ,
Եվ ում ծանոթ չեմ—դրանով եմ անհոգ,
Եվ ում էլ գիտեմ—դրանով կասկածոտ։
Լեռնե՛ր վեհապանծ,—սյունե՛ր հավերժի,
Ձորե՛ր ձառագեմ, հյուսքե՛ր ջրվեժի,
Խոհո՜ւն անտառներ, հովե՛ր տարուբեր,
Վարդե՛ր բոցավառ, երազո՜ւն թփեր,
Դե՛, ժամ է արդեն. գնացե՛ք բարով՝
Ձեր բազմանորոգ, անվերջ կյանքերով,
Ձեր հավերժական անդուլ երգերով,
Գնացե՛ք, տարե՛ք թափորը ձեր վեհ։

Եվ դուք, հեգնված գորտե՛ր, չըղջիկնե՛ր,
Բայց ձեզ երգողի սիրա՛ծ անուններ.
Համեստ՝ ձեր կոչմամբ, բայց մեծ՝ էությամբ,
Հզոր տիեզերի անլույծ գաղտնիքներ.
Պիտի ընդունե՞ն ձեզ այնպես սրտանց,
Ինչպես Անթարը սիրեց ձեզ մի օր.
Պիտի հասկացնե՞մ արդյոք ձեզ նրա՜նց,
Ովքեր չգիտեն բնությունն հզոր։
Աստվա՛ծ կերտեց ձեզ—բանաստեղծն այն մեծ,

Որ ինձ է՛լ կկրանց—բանաստեղծ համեստ։
Է՜հ, գնա՜ք բարով, մի՛ նայեք էլ ետ,
Գնացե՛ք դուք էլ այս թափորի հետ։

Ձեզ է՞լ ճամփեմ ես—մնամ չքավոր,
Դո՜ւք, ո՜վ լռության խոհուն ասավածներ,
Էլ ո՞ւմ ունկնդրեմ հոգով մենավոր,
Երբ ձե՛զ կարոտեմ, գաղանի՛ իմ ձայներ։
Ա՜խ, էլ ո՞ւմ ... Եթե մի բառ կոպտաձայն,—
Իր չոր խորթությամբ՝ թեպետ և անկեղծ,—
Դա խեղճ ականջիս,—ձեզ սովո՞ր այնքան,—
Խոցե կոչվողիս օտար բանաստեղծ ...
Բայց ո՛չ, գնացե՛ք, էլ մի՛ նայեք ետ,
«Կանգնել չի սիրում մեր ցեղը տարերք»,
Գնացե՛ք, մի օր ես կլնե՛մ ձեզ հետ,
Քանի մեր տունն է այս մեծ Տիեզերք։

ՎԱՅՐԻ ԼԵՌՆԵՐ

Ձայն

Բազմեց սարերին գիշեր սեահեր,
Աստղերը ճակտին,
Քանդեց ուսերից իր սև գիսակներն
Ու փռեց չորս դին։
Ձլեց եղանակն անդուլ ջրերի,
Խոսեց կախարդիչ հեքիաթի նման.
Ձայներ են գալիս խորքից տիեզերի,
Եվ աշխարհ դյութված լսում է նրան։

Երկրորդ ձայն

Այն դու ժայռերն են, ինչպես երկու ամպ՝
Իրարու դիմաց մթնել են ահա,
Կարծես դիմարգել կանգնած պատահմամբ
Սասռում են իրար երկու ամրահա։

Երրորդ ձայն

Այն գետն է անքուն, որ ահեղ ձորում
Ինչպես մի քարվան չվում է իր շուն,
Որ մեկ գոռալով՝ մեկ նվաղ մարում
Պարում է ճամփան խավարի միջում։

Անքար

Բաղմեց սև գիշեր... բացեց խավարչտին,
Անհուն անդունդներն իր կույր աչքերի,
Եվ խոր երկնային պարապի միջին
Թափեց իր սափորն առատ աստղերի։
Քնե՜ց, խաղաղվե՜ց աշխարհն ամբծու՝
Նրա թևի տակ, հզոր հոգածու.
Ահա իր անվերջ մի շունչն է քաշում
Հսկա քնի մեջ, պառկած մշուշում։
Միայն քնած չեն աստղերն անքարբառ.
Եվ իր անհզրին հենված՝ մշտարթուն
Հսկում է հպարտ ասված ալեփառ՝
Խորհելով անհուն մի հավերժություն։—

Քամին

Մի հե՜վք անհատնում ...

Անքար

Այս տանը մե՜ծ, անհունացած,
Լռության մեջ խորհրդավոր՝
Բարբառում է խորին ասված
Մտերմաբար ու ահավոր։
Ահե՜ղ բարբառ, որից հիմով
Դողում է շենքն այս տիեզրի,
Ու անսում են, քայլում մեղմով
Տարրերն ահեղ, անսասանելի։
(Ամպերն անցնում են)։
Այդ ո՞ւր ես գնում, անհ՜զր գիշեր,

Դո՜ւ, անհո՜ւն փեթակ բյուր աշխարհների.
Եվ ո՞ւր ես տանում այսքան գաղտնիքներ—
Ոսկի մեղուներն անվերջ ասողների։
Խոսի՛ր, ո՜վ դիշեր,
90 Խոսե՛ք, Տիեզերի գաղտնապա՜հ ուժեր,
Ինձ ո՞վ կբացանի դեպի Տիեզերք,
Ո՞վ կտա կյանքի գաղտնիքն ու վայելք։

Մի ամպ

Ե՜ս։

95 Անքար

Դո՞ւ, ամպդ պառավ, հեռացի՛ր, փորձի՛չ,
Այս տիեզերքում անհուն, ահավոր՝
Դու ո՞վ ես և ի՞նչ։

Ամպ

100 Ես ո՜վ եմ, հա հա՜... Մասնի՜կս հզոր
Այս անծայրածիր ահեղ տարերքի—
Ես ա՜մպ հասարակ, ես նյո՜ւթն եմ հզոր,
Գաղտնիքը անլույծ մեծ Տիեզերքի։
Եվ ի՞նչ, մոռացա՞ր նրան, որի հետ
105 Մոլեգնում էիր պարերդ անհեթեթ,
Հզոր, բոցակերպ թռչում ու գոռում
Անծայր տիեզերի հսկա շուրջպարում։
Դե՜հ, կանգնել չունի մեր ցեղը տարերք —
Երկար է ճամփան դեպի Տիեզերք.
110 Գնա՜նք, կիմանաս գաղտնիքը հսկա.
Սակայն ով որ գա՝ մինչ վերջ պիտի գա ...

Անքար

Ասա՛ սկզբից.
Ո՞ւր ես տանում ինձ։

Ամպ

Ես քեզ տանում եմ այն տունը անհուն,
Մշտափոխ աշխարհն այն կախարդության,
Որ միշտ օրորվում հիմքով անկայուն,
Քանդվում է, հյուսվում... Ու կա հավիտյան։

Անքար

Դեպի բնությո՞ւնն ամեհի, կախարդ,
Դեպի թագուհի՞ն գաղտնալի, հպարտ ...
Բնությա՞ն զավակ, քեզ հետ միատեղ՝
Ուրա՜խ եմ, առո՜ւյգ և միշտ է՛լ զորեղ։

Ամպ

Տեսե՞լ ես արդյոք այն ձորն ահավոր,
Որ անդնդներով անտակ ու անել՝
Դժոխքի նման ձառագեմ ու խոր՝
Երկիրը կարծես երկու կես արել,
Բանտեր է փորել շորսդին մութումութ,
Ուր թափառում են մեզերը կապույտ.
Ուր շունչ քաշելիս ջրվեժներն ահեղ
Գեհենն է կարծես եռում խելահեղ.
Ուր գետերն ընկած դես-դեն փրփրալից՝
Վազում են դեղնած իրենց զայրույթից.—
Երթա՜նք այդ աշխարհ, պարե՜նք, թափառե՜նք,
Ու այսպես անվերջ՝ դեպի Տիեզե՜րք...

Անքար

Տե՛ս, լուսատուն էլ ընկավ մեր առաջ՝
Ճամփա ցույց տալու լապտերով կանաչ։

Ամպ

Թնդում են ձորերը, ջրերը տնքում,
Լռում են տարրերը երկրի մութ խորքում,
Եվ հիշում թե ինչպես երբեմն ամպաձև
Իրենք էլ երկնքում ճախրել են թեթև,
Այն վերը, որտեղ ի՞նչ անհունություն,
Ի՞նչ արբեցնող լայն ազատություն։

Անքար

Լռում է տերևը, ահու չի խոսում.
150 Միայն խոր լռության շշունջն եմ լսում.
Եվ կանգնած՝ զորքի պես՝ ծառերը հսկա
Ապշում են թե ինչպես մի ծպտուն չկա.
Եվ հիմի լռության միամիտ մի ասուված
Նայում է ակնապիշ ու լսում պնլացած ...
155 Ո՞ւր ենք մենք, դժոխքո՞ւմ,
Թե՞ հպարտ բարձունքում։

Ամպ

Ահա զոռզոռաց սահանքը թունդ ձայն,
Ինչպես գահավեժ ջարդված ամդահա.
160 Ի՞նչ ճարճատյուններ ... Կանգնի՛ր, բարեկա՛մ
Ծառեր է բերում հինգհարյուրամյա։

Անքար

Եվ ի՞նչ թնդյուններ ...
Կարծես անդնդում
165 Հազար հսկաներ
Վազում են, դոփում ...
Արծի՞վն էր՝ թռավ ...

Ամպ

Կանգնի՛ր, հորանջից այստեղ մի անդունդ.
170 Լսո՞ւմ ես գետի զոռոցը՝ վո՞ւշ-վո՞ւշ.
Տե՛ս, նավերի պես ամպերը կապույտ՝
Անդնդի վրա սողում են զգույշ։

Քամին (անդնդից)

Հո՜ո՜ո՜...

175 Առաջին մշուշ

Լռում է սարի ժայռերեն ոգին.
Եվ պողերն ահա ցցել ամպից վեր՝
Աչքերը ցցել իր ջրվեժ միրքին՝
Նայում է... Եվ ձի՞դ անցնում են դարեր։

180 Երկրորդ մշուշ
Բյուրավո՞ր դարեր՝ մի վայրկյան միայն։

Ամպ
Պա՛, պա՛, պա՛, քամին տես ո՞նց է փչում,
Մազերս թել-թել պոկվում են թռչում
185 Դե պի՛նդ կաց, տղա՛, սաստկացավ ահա
Պարն հսկայական ...
Տի՛ս որ չճախրես անդնդի վրա
Տերևի նման։

Անքար
190 Այս ո՞ւր եմ եկել... խելքս է պտտվում,
Հոգուս մեջ պարի չափեր են զարկվում։

Լեռներ
Սև-Սա՞րն է նայում մթին մուժերից,
Թե՞ ամպը դաժան սողում ծովերից։
195 —Մթինն է հերսոտ։
—Պատմի՛ր մեզ, պապի՛, դու աչքով տեսար.
Ինչպե՞ս կռվեցին Մթինն ու Սև-Սար։
Ինչպես կռվեցին Մթինը հերսոտ
Եվ ահեղ Սև-Սար— երկուսն էլ որսո՞ղդ ...
200 Պոկեցին ձորից ժայռեր ահագին
Ու տո՞ւր թե կտաս՝ մեկ մեկի կրծքին ...

Լեռներ
Հա՛...

Մինը
205 Սարե՞ր են հեռվից շարան ու շուրան
Տընկ հա տընկ գալիս, թե՞ ամպի քարվան։

Ամպեր
Բարո՞վ ձեզ, սարե՛ր,
Աշխարհի՛ տերեր։

210 Սարեր

Այ բարո՜վ, բարո՜վ,
Էս ո՞ր ծովերով։

Ամպեր

Սարեր ու ծովեր՝ շարան ու շուրան
215 Ճոճվում ենք, դնում մեր անվերջ ճամփան,
Պարելով այս մեծ հարսնիքն անվախճան,—
Դեպի Տիեզե՜րք ...

Անբար

Ողջո՜ւյն, վեհափառ աշխա՜րհ ամենի,
220 Որ վսեմ դիրքովդ այդ հսկայական՝
Փռված ես իմ դեմ անկարգ ու վայրի՝
Նման օրերիդ ստեղծագործման,
Երբոր դեռ քեզնով խոր ոգևորված՝
Քեզ նոր էր հյուսում բանաստեղծն ասված։
225 Երկնայի՜ն ատաղձ, ներշնչա՜նք խորին,
Որով զբաղվեց Վարպետը վերին։
Ողջո՜ւյն քեզ, ողջո՜ւյն, նախաստե՜ղծ աշխարհ,
Որից չեն անցել ծերացնող դարեր.
Կարծես մնում է ստեղծման խոսքի
230 Էակն առաջին դողդոջ ու երեր։

Ամպ

Վերևը անդունդ, ներքևը անդունդ,
Ահե՜ղ հորանջներ, այստեղ հողմն է թունդ.
Դե՛, իջնե՛նք դժոխք. միշտ այնտեղ հովտում
235 Լուսնի շողերն են պարում ու խնդում։

Անբար

Տես լուսինն ինչպես աշունքի նման
Դրել է հովտում լույսերի եղյամ,
Թփերն ու ծաղկունք՝—նախշունիկ հարսներ,—
240 Ջուգվել են, հագել արծաթե շորեր։

Գետը

Խոր խոր ձորեր ոլոր մոլոր
Գնում եմ ես, ձեն տալիս,
Ճամփա՜ տվեք, քարե՛ր խոլոր,
245 Այս ձորերի ճամփորդիս։

Ստվերներ

Վա՜յ, լուսնակն ելավ ...
Դե՛ մտեք շուտով
Ջով-հով փչակներ,
250 Հով-զով ծմակներ։
Ա՜յ, մեզ չտեսավ։

Լուսնակի լույսը

Քրքջալով դուրս է փախչում
Ակն-աղբյուրը քարափից.
255 Լալ ու գոհար ծոցի միջում
Փախցրել է սարդափից։

Աղբյուր

Ի՜նչ սոսկալի քարափ է սա՝
Մեջեմեջ ու մութումութ.
260 Օխա՜յ, հազիվ հարսնիք հասա
Երթամ պարին հասնիմ շուտ։

Հով

Էհե՜յ, ծառեր, ա՜յ ծաղիկներ,
Մարգագետիններ՝, շուշաններ՝,
265 Լա՛վ զուգվեցեք, հավաքվեցե՛ք,
Արի՛ք հարսնիք այս գիշեր։
Ով ում սիրո կարոտն ունի,
Ով՝ ասելիք, ով՝ լսելիք,
Ով փնտրածն է ուզում տեսնի,
270 Թո՛ղ գիշերս գա հարսնիք։

Լուսնակի լույսը

Ծաղիկները մի տե՛ս ինչպես
Պար են բռնել արոտում,
Եվ նրանցից մի՛նն էլ ասես
275 Մի դարդ չունի իր սրտում։

Ծաղիկներ

Լուսնակն ելավ շարմաղերես,
Արի՛ք, արի՛ք, քուրիկնե՛ր.
Հովեր, շողեր եկել են տես,
280 Արի՛ք, անո՛ւշ քուրիկներ,
Արի՛ք, արի՛ք, դիշերն անո՛ւշ,
Հովերն եկան՝ սրինգն անո՛ւշ,
Ծառ ու ծաղիկ օրո՛ր-շորոր,
Իրար եկան՝ համբույրն անո՛ւշ։

285 Զայներ

Տեսե՛ք՝ կախված լուսնի շողից
Սարդի թելը եկավ հեռվից
Զոր տերևը սրինգ արել՝
Հովն է փչում, պետք է պարել ...
290 Նե՛րս համեցեք, վարդի՛ թերթիկ,
Լապտերապո՛չ լուսատուտիկ։

Ուրձագանք

Գալիս են հա՛, գալիս հարսնիք,
Գորտե՛ր, ծղրի՛դ, տե՛րև, ալի՛ք.
295 Հա՛յ ղլեցին շվին, պկուն՝
Հովեր, առուն, քամին, կկուն։

Զայն

Լուսնակ դիշե՛ր, արծա՛թ դիշեր.
Դե՛ խելոքներ, դե՛ մեր գժեր,
300 Հարսանի՛ք է, լա՛վ քեֆ արեք,
Զուր չկորչի այս հրավերք։

Փառք աստծու՝ տներս անհուն,
Օճորքներս երկինքն անսյուն,
Դահլիճ ունենք մի լայն աշխարք,
.305 Տեղ շա՜տ, արի՛ք ովքեր որ կաք։
Ծառ ու ծաղիկ հարսնևորներ,
Հով ու ծղրիդ սաղ ածողներ,
Ժայռ ու բլուր ունկնդիրներ՝
Արջն ու կկուն մեզ փեսացու։
.310 Էլ ի՞նչ կուզեք, ամենքս այստեղ՝
Չի մնացել դուրսը ոչ ոք.
Հարուստ, աղքատ մեկ են այստեղ՝
Թեկուզ տխուր, թեկուզ անհոգ։

Ծղրիդ

.315 Չի՛կ, չի՛կ, չի՛կ, չի՛կ,
Արի՛ք, քնքուշ
Հարսն ու աղջիկ,
Տվեք անուշ
Մի մի պաչիկ,
.320 Ածեմ՝ պարեք
Խունջիկ-մունջիկ։

Ջրվեժ

Պարել կուզեք՝
Այսպե՛ս պարեք,
.325 Այսպե՛ս պարեք,
Ջարդոտեցե՛ք։

Կոնդ (ջրվեժի տակից)

Վա՜յ կողքերս ջարդվեց գնաց,
Քե՛զ եմ ասում, մի քիչ կամա՜ց։

.330 Ալիքներ

Թռի՛, թռի՛, կամաց չկա.
Կանգնել չունի պարը հսկա։

8—179

Ժայռ (ջրվեժի տակից)

Ի՞նչ էի ես և ի՞նչ եղա,
Ո՞ւր էի ես և ո՞ւր եկա,
Սրա վերջն եմ մնում՝ թե գա,
Բայց որ ճաքես՝ վերջը չկա։

Քարափ

Քունս է տանում, դարերի քուն ...

Դիմացինը (զարթնելով)

Ամպեր են ճոճվում, գետերը գոչում,
Անցել են դարեր—այս ո՞ւր ենք հիմի։

Առաջինը

Անցել են դարեր,
Է՛լ կանցնեն դարեր ...
Գնում ենք, քնի՞...

Գետը

Վա՜յ, ուշացա... Ճամփա՜, ճամփա՜։

Արձագանք

Դե՛, ղլեցե՛ք—ծղրիդը՝ չի՛կ,
Գորտ խաթունը՝ քորա՜կ, քորակ,
Հովը՝ հո հո՜, մոծակը՝ ծի՜կ,
Ես էլ հա հա՜— այ քեզ հարսնիք։

Գորտերը

Մե՛րն է աշխարհ, լա՛վ պարեցեք,
Լավ սիրեցեք, զի՛լ երգեցեք ...

Ամպ

Ինչպես հեղեղ ձիերի՝
Սանձակոտոր մի վազքով
Տարրերն անսասա Տիեզրի
Սլանում են երկնքով։

Կծկվում են, կաղկանձում՝
Բռնած մի պար սլացիկ,
Տիեզերյան հնոցում
Սարքած ահեղ մի հարսնիք։
Ու գնում են այնտեղերք,
Ու խոհերը ճակատին՝
Ընկողմել է Տիեզերքն
Հավերժության անդնդին։

Բոլոր տարրերը

Մի քույր էինք, դառանք հազար,
Պար բռնեցինք, կորցրինք իրար.—
Հիմի փնտրի՛, թե որ գտնես ...
Գոռա՛, ճաքի՛, չեն լսի քեզ։

Անքար

Պարզաչի՞կ ծաղկունք, հոյակա՞պ ժայռեր,
Տարուբե՞ր հովեր, մրահոն շուքեր,
Ո՞վ դուք չքավոր ու մերկ արքաներ,
Չքավոր՝ ձեր մեծ, հզո՞ր աստծու պես.
Ձեզ եմ գալիս ես, ապրենք միասին
Տարերքի կյանքով,
Անդուսպ վայելքով։

Ձայն

Այստեղ ամեն
Լուսնակ գիշեր
Հավաքվում են
Հին-նոր գժեր,
Խաղում են պար
Իրենց համար,
Շվի փչում
Ու կշկշում։
Յուրտ ձմեռն էլ
Առնում ավել՝

Զյունն են ավլում
395 Կամ խոր քնում։
Կուզես՝ արի,
Դու է՛լ պարի,
Ավլի դու էլ,
Քնի դու էլ։

400 Պարողները
Ուզող-չուզող չեն հարցնում,
Մեջ են քաշում, խաղացընում,
Ապրողին՝ կյանք, մեռնողին՝ մահ,—
Մեռցընում են, ապրեցընում։

405 Ամպ (Անթարին)
Դե՝, երգի՛ր, պարի՛ր, վայելի՛ր, գոռա՛,
Իսկ ես կորորվեմ այս գետի վերա.
Գնա՛, կշտացի՛ր կյանքի վայելքից,
Վաղը միասին կմեկնենք հովտից։

410 Մի հավերժահարս (այրից դուրս գալով)

Բլուրն է թավիշ, ծաղկունքը քնքուշ,
Նստեմ աղբրի մոտ ու երգեմ անուշ.
Տե՛ս ամպն է քնկոտ հորանջում ահա,
Օրոր է գալիս ջրերի վրա։
415 Հը՞, դադար չունես, տարերքի՛ սև ճուտ,
Դեմքդ բարկացկոտ փոխում ես շուտ-շուտ.
Գիտե՞մ, բարեկա՛մ, ինչու ես հեգնոտ.—
Փոթորիկ ունիս էգուց առավոտ.
Հազար պղինձներ ահեղ ղողանջով
420 Պիտի գլորես սարերի լանջով։
Այս գիշեր ջադուն կերակուր կեփի.
Ամպն հյուր է բերել մի ադամորդի,
Մի ադամորդի, որ դառել տարերք՝
Ճամփա է ընկել դեպի Տիեզերք։
425 Հա՛, հա՛, հա՛...

Անբար

Ասա՛, ո՞վ ես դու, նազելի՛ շուշան ...

Հավերժահարս

Ո՞վ եմ—չգիտեմ.
Գուցե մի երազ,
Գուցե խկություն,
Որ դարձյալ երա՛զ...

Մեռնում է կանաչ, թոշնում է գարուն.
Դեղնում է հովտի ծածկոցը սիրուն,
Գահավեժ ընկնում արծիվն իր գահից.—
Ոչինչ այս երկրում չի պրծնում մահից.
Բայց մահ չկա ինձ համար,
Ես անցնում եմ դարեդար։

Գուսան

Ապրողին՝ կյանք, մեռնողին՝ մահ.
Թռե՛ք, թռե՛ք, օխա՛յ, օխա՛յ։

Չաղու (անձավից դուրս գալով)

Պո՛, պո՛, պո՛, պո՛, եռում է հա՛,
Եռում կաթսան Տիեզերքի ...
Հը՞մ, էլ սրան պաղիլ չկա,—
Անհատնում է փայտը տակի։

Մկներ և բուներ (մոտ վազելով)

Օհո՛, եկա՞ր, Կարի՛ք-Մարիկ,
Որտե՞ղ էիր։

Չաղու

Հին չաղացում, ճահճի փորում,
Աչքերդ էի բրում, փորում.
Հենց նոր ճամփին մի կաղ ագռավ
Նայեց դեմքիս՝ ընկավ մեռավ ...
Տես ինչ ունե՛մ ...

Զղջիկ

Ի՞նչ է, տեսնե՞մ։

Զաղու

Սովից մեռած մարդու կաշի՞։

460 (Կաթսան խառնելով)

Այստեղ պուպուզ, այնտեղ պուպուզ,

Ով պատահի կտամ մի կուզ.

Ջահել մարդուն պառավություն,

Պառավին էլ անուշ մի քուն։

465 Անքար

Ասա՛, Ճիվա՛ղ, ի՞նչ ես խառնում

Քո այդ մթին խառնարանում։

Զաղու

Մի բան ահեղ և գեղեցիկ,

470 Մի գեղեցիկ և ահեղ բան։

Անքար

Ես ամպի հետ ընկել Ճամփա՝

Որոնում եմ մեծ Տիեզերք.

Ո՞վ այդ դաղտնիքն ինձ ցույց կտա։

475 Ո՞վ կտա ինձ կյանք ու վայելք։

Զաղու

Մեծ Տիեզե՞րք։ Կյանք ու վայե՞լք ...

Հոդ մի՛ անի, այդ կճարենք։—

Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ,

480 Արի՛ք, հարսնե՛ր,

Վա՛րդ աղջիկներ,

Քրքրվածներ։

Արի՛ք, վառենք մի նոր խարույկ,

Նյութեր ածենք ոսկի կաթսան,

485 Տանք Անթարին այսօր խնջույք.

Նա մեր հյուրն է, նորափեսան։
Արի՛ք, արի՛ք,
Բուն՛ը, մկնի՛ը,
Ժի՛ր չղջիկներ,—
490 Մե՞ծ ոգիներ։
Բերե՛ք այստեղ կյանքի համեմ,
Որ Անթարի վայելքն եփեմ։
(Խառնելով կաթսան)
Դի՛, անունով Համաչնչման,
495 Տաժանքներով մահամերձի,
Օրորվն ահեղ կոտորածի՝
Ահա ինձնից ձեզ հրաման։—
Շո՛ւտ, Տիեզրի անտակ խորքից,
Մահի խավար անդնդներից,
500 Տառապանքի մութ աշխարհից՝
Ելե՛ք, բոցե՛ր, հայտնվեցե՛ք։
(Պղնձի տակ բոցեր)։

Ջադու

Այս պղինձը ո՞վ կխառնի,—
505 Կարիք-Նանը՝ կյանքի՛ կարիք.
Որ՛ղ միշտ խառնի՛, խառնի՛, խառնի՛
Նյութը նյութին, նյութը նյութին։

Այն ի՞նչ հոգ է, այն, որով մենք
Պատրաստում ենք ամեն վայելք.
510 Որից կերան ազգերը բյուր
Ու չքացան չգիտեմ ո՛ւր։
Այս ապուրը միշտ եփել ենք.
Սրան կասեն կյանքի վայելք.
Չկա չուզող, ասող հերիք.—
515 Ա՛յս եփողն է կյանքի կարիք։
Ելե՛ք, բոցե՛ր, փոփոացե՛ք,
Որ Անթարի վայելքն եփենք,

Եփենք Կյանքը մեծ ու անմահ.
Որ նա ուտի, չկշտանա։
Դե՛, աղջիկնե՛ր, լա՛վ խառնեցեք։
Լավ ապուր է, լա՛վ թակեցեք.
Խառնե՛նք, խառնե՛նք նյութը նյութին,
Ուրախությունն ահեղ վշտին։
Եկան մի օր աշխարհավեր
Սովն ու ախտեր
Ու շատ ցավեր,
Ազգ հանեցին ազգի վրա,
Ժողովուրդներ ժողովրդի,
Ասին՝ երգի՛, Կարիք-Մարիկ.
Ու զիլ երգեց Կարիք-Մարիկ.
Առավ տեսե՛ք, այն չոր դաշտում
Ապրում է դեռ մուկը նիհար.
Վերջին ծեղն է դաշտից տանում.
Շուտով կընկնի նա ցրտահար։
Տեսե՛ք, տեսե՛ք ոնց է մրսում
Ու վստվստում ու հետն ասում.
«Օ՜ֆ, սև՛ Կարի՛ք, Կարի՛ք, Կարի՛ք,
Ամենազո՛ր, կյանքի կարիք։
Դե՛, չղջիկնե՛ր, լա՛վ խառնեցեք,
Մե՛ծ ոգիներ, լավ թակեցեք.
Եփենք կյանքը մեծ ու անմահ,
Որ ով ուտի՝ չկշտանա։

Կերավ նյութին նյութ անոթին
Ու կեր դառավ ինքն էլ նյութին։
Դե՛, է՛լ բերեք, բերե՛ք էլի
Գցենք՝ եռա վայելքը լի։

Խումբը

Մի վարդ բերենք Ջադու-Մեր՝կին,
Մի որդ բերենք Ջադու-Մեր՝կին,
Մի սարդ բերենք Ջադու-Մեր՝կին
Գցի՝ եռա վայելքը լի։

Ջադու

Գցե՛նք, գցե՛նք պղինձն եփե՛նք,
Մի վարդ, մի որդ, տանք մեր փեսին.
555 Ու փոխնեփոխ կյանքը բաշխենք
Մեկից մեկին, ու մյուսին։
Տա՛նք մյուսին, փոխ մի օր
Սա էլ դառնա որդերի կեր.—
Եռա՛, եռա՛, նյո՛ւթ զորավոր,
560 Նյո՛ւթ մշտասով, նյո՛ւթ ինքնակեր։
Դե՛, չղջիկնե՛ր, լա՛վ խառնեցեք,
Մե՛ծ ոգիներ, լա՛վ թակեցեք.
Լա՛վ եփեցեք կյանքը անմահ,
Որ ով ուտի՝ չկշտանա։

565 Անթարին

Ահա Կարիք մեծ Մարիկից
Քեզ մի պարգև մե՛ծ, առանձի՛ն.
Դե՛, ա՛ռ խմի՛ր ա՛յն բաժակից,
Որից ամենքն ընդունեցին։

570 Դու ցանկացար Կյանք ու Վայելք,
Ըմպելիքը կյանքի՝ անուշ,—
Դե՛, տանտիկնոջ սիրտը շահի՛ր,
Որ քեզ նա տա մի սիրտ քնքուշ։

Անթար (բաժակն առնելով)

575 Ինչո՞ւ չի դողում ձեռքս պատանի,
Որ քեզ է բռնել, ահե՛ղ իմ բաժակ.
Եվ դեռ չընդունած ջուրդ հրաշալի՝
Զգում եմ անուշ մի վախ ու հեշտանք ...
Ո՛վ նյութ մշտափոխ, դավող, անկայուն,
580 Որ ինչքա՛ն կյանքեր մարել ես քո մեջ,
Բայց և Տիեզրի այս մեծ կաթսայում
Դեռ ինչքա՛ն ունիս վառելու անվերջ ...

Ողջո՜ւյն քեզ, զաղտնի՛ք ահեղ, հրաշալի.
Մաքուր թե պղտոր, անուշ թե լեղի՝
585 Ինչ էլ որ լինես՝ հոժա՛ր եմ, արի՛,
Միայն տո՛ւր վայելք,
Մի կաթի՛լ վայելք։
(Խմում է)։
Ի՜նչ քաղցր ես, ո՜վ թույն,
590 Եվ ի՜նչ դառն, ո՜վ կյանք ..
Բայց արի՛, արի՛, ո՜վ երջանկություն,
Վայելք կարճատև, խորին տառապանք։
Ո՞ւր ես, ո՞ւր, կյանքի անո՜ւշ ուրուներ,
Քնքուշ ցնորքներ, եկե՛ք իմ դիմաց.
595 Անհայտ ծաղիկներ, չբացվա՛ծ սերեր,
Եկե՛ք վայելքի սափորներդ առած.
Ո՞ւր է այն սիրո շուշանը քնքուշ,
Այն հարսը լուսե, աչքերը մեղուշ.
Ո՞ւր է, թո՜ղ նա դա, թեկուզ մահի հետ՝
600 Եվ կքաղցրանա մահը այնուհետ։
(Զաղուն և խումբը մտնում են այրը)։

Զայն

Արի՛, Անթա՛ր, ի՜նձ արի,
Գիշեր անցավ, դե՛ արի՛,
605 Ե՛կ ինձ սիրի, գուրգուրի՛...
Ես գիշերի աղջիկն եմ,
Ծաղիկների քուրիկն եմ,
Էրված սրտիդ սերիկն եմ։

Անթար

610 Էն ո՞վ է, ո՞վ ինձ կանչում,
Սրտով, ձևնով ինձ կանչում,
Ծաղիկներում հառաչում։
Սիրելիս է սիրով լի,
Մանկո՜ւց կարոտ սիրով լի,
615 Հազա՜ր փնտրած սիրելի։

Զայն

Մատա՜ղ թուխթուխ աչքերին.
Ինքը դալար սոճի է,
Թուխ ու բարակ նոճի է։

620 Անբար

Իմ սիրելին ոսկեծամ՝
Լուսնի կտոր, քնքո՜ւշ է,
Աչքերի սերն անուշ է։

Զայն

625 Սարեր ձորեր մնջել են,
Մի ձեն մնաց՝ «դե արի՛»։
Սարեր ձորեր փնտրել եմ,
Քե՛զ եմ փնտրել, դե՛ արի՛։

Անբար

630 Սարեր ձորեր շա՛տ համբույր,
Մինը կարոտ՝ էն ի՞մն է,
Սրտով սիրով մի համբույր
Հազարի մեջ՝ էն ի՞մն է։

Անբար

635 Ի՜նչ անուշ գիշեր... Տես ո՛նց այն բլրիս
Լուսնակի շողը գցած գլխներին՝
Շորոր են գալիս ուռիներն աշխույժ՝
Ջահել հովերի սրնգով անուշ։
Տես ո՛նց է առուն քարեքար ընկած՝
640 Մեր պարզ հարսանքին շաղում գոհարներ։
Տես ո՛նց է ժպտում ժայռն մի ասուված
Ու գետում գոչում հազար մանուկներ։

Հավերժահարս

Ի՜նչ անուշ գիշեր... Տես ո՜նց լուսընկան
Թափել է հովտում սափորն իր լույսի,
Ու ո՜նց չհանած շորերն հարսնիկան՝
Քնել են ծաղկունքն այնտեղ, մեկուսի։
Տես ո՜նց են կախել մութ քնով բարձված
Ճյուղերը իրենց կաղնիներն հեռուն,
Ու ո՜նց է վճիտ երազով տարված՝
Մանկան ձայներով ծիծաղում առուն։

Անթար

Այսպես մի գիշեր,
Երբ հովն անտառում պահեց շունչն հանկարծ,
Տերևը քնեց ոստին ճիտ արած,
Այսպես մի գիշեր,
Երբ բլբուլն անուշ իր դանդաան արավ,—
Անթարի սիրուց փերին դալկացավ։

Հավերժահարս

Այսպես մի գիշեր,
Երբ լուսատուտը իր լապտերն առած՝
Դարձավ գնաց տուն հարսնիքից հոգնած,
Այսպես մի գիշեր,
Երբ թուխ շվաքը փչակում քնեց,—
Անթարը փերուն հուսահատ սիրեց։

Անթար

Այսպես մի գիշեր կործվո՜ւմ է ահա
Երկնքի սափորն իմ հոգուս վրա,
Լցվում են հոգիս բյուր բյուր կրակներ...
Վա՜յ, ով չի սիրել այսպես մի գիշեր։

Հավերժահարս

Այսպես մի գիշե՜ր, արծա՜թ մի գիշեր
Հազար ծաղիկներ, հազար էակներ
Դողացին մի խո՜ր, անուշ համբույրով ...
Էրնե՜կ սիրողին այսպես մի գիշեր։

Անբար

Կյանքը գրկիս՝
Միտ է հոգիս,
Թռչում է վե՛ր.
680 Օխա՜յ, սարե՛ր,
Օխա՜յ, ձորե՛ր,
Թռչում վե՛ր։

Անտառի մայրը

Է՜յ, լսեցե՛ք, ձի՛զ եմ ասում,
685 Հեքիա՛թ ասող կաղնիներ,
Լսե՛ք, հպա՛րտ բարդիներ,
Դուք է՛լ, սգվո՛ր նոճիներ,
Գիշերն անցավ, քուն եղեք։

Հավերժահարս

690 Մայրս ինձ կանչեց. դե՛, մնաս բարով.
Անո՛ւշ սիրելի, դու է՛լ գնաս բարով.
Այժմ էլ դո՛ւ գնա լցվիր Անհունի
Մեծ, անբավ կյանքի պղինձն ահռելի ...
Գնա՛, գնա ...
695 Ամպը չուեց թևերն ահա.
Աչքերը կույր՝ գալիս է նա
Հսկայական
Բուի նման։

Ամպ

700 Ողջո՛ւյն, ամպացու,
Դե՛, կանգնել չունի մեր ցեղը տարերք,
Եվ ժամ է արդեն... «Դեպի Տիեզե՛րք»...

Անբար

Ա՛խ, ո՞ւր ենք գնում.
705 Ինձ ո՞ւր ես տանում։

Ամպ

Այստեղից է աշխարհն անհուն իմաստության,
Բնավայրը հզոր ու մեծ Տառապանքի,
Այստեղից են ծագերն անլույծ Տիեզերքի,—
Թո՛ղ կյանքդ կարճ. սա է դուռը Հավերժության։

Հով

Եվ զարթնում է ահա մի հով
Մարում երազն իր նուրբ թևով։

ԼԵՆԿ-ԹԻՄՈՒՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հասավ չա՜ր, սև՜ տարի.—ձմեռ դաղջ ու անձյուն,
Գարունն ամպ, ջրահեղձ և ամառ չոր մշուշ.
Արևգակն ամպերում աչքի պես՝ մեջն արյուն՝
Սպառնում հայացքով նայեց վար արնագույժ.
Ամպերն էլ չորըստինք կաթեցրին թույն ու ժանդ,
Անդաստանն ամլացավ՝ շունչն հիվա՜նդ ու խորշակ.
Մեռելներ լքեցին մահիճներն հավերժի,—
Պիտի գա սով ու սո՜ւր, կոտորա՜ծ աշխարհի ...

Ա

Գիշեր է խորին։ Մասիսը խոշոր
Նոթերը կիտած նայում է խոժոռ.
Եվ Արարատյան լայն դաշտի վրա
Ագռավը սևթույր փռվել է ահա։
Մեռելն է խոսում. թռչունը խավար
Մվում է ահա ձայնով ժանգահար,
Ու ինչ դժոխքի բացված դռներից՝
Փչում է խորշակ հիվանդ, թունալի՜ց։

Բ

Ահա Մասսի տակ
Մի դեղ մեն-մենակ,
Նայում է դաշտին մռայլ, անպաշտպան.
Մի կտոր լուսին
Դալուկն երևին։
Անդունդ է իջնում մեռելի նման։
Ահա մի կտուր սևցած ամբոխով,

Այնտեղ այս գիշեր բացվել է ժողով.
25 Հենց այս երկու ձիավոր գնաց,
Նա էլ իր լուրով մթանը մնաց։
Նրան են մնում.
Մինչ ներքև մթնում
Հոտ, հովիվ, նախիր եկել տարաժամ՝
30 Ականջ են դնում
Շների գուլժին սոնող ու դաժան։

Գ

Ժողով է նստել ծեր Օհան ապին՝
Ինքսուն տարու ակոսը ճակտին,
Գլուխը աշնան մի սար ալևոր,
35 Մորուքը ջրվեժ ոլոր ու մոլոր։
Ու միտք է անում ծեր Օհան ապին.
Մտքեր են գալիս՝ մթնում են ճակտին.—
Էն ե՞րբ էր մին էլ բարձած լաց ու կոծ՝
Քանդվեց իր բնից ժողովուրդն հայոց.
40 Քանդեց տուն ու բուն, խաղաղ ընտանիք,
Որջեր, անձավներն արավ հայրենիք,
Վառեց նոր օջախ էն բաց երկնի տակ,
Մինչև որ անցավ թշնամին կրակ։
Բայց այս անգամ հեռուներից
45 Գալիս է Նե՞ռ Լենկ-Թիմուր.—
Հա՞յ կպրծնի նրա ձեռից՝
Ճամփան կրակ, սով ու սուր։
Մեկ էլ տեսար՝ մեջ-դիշերին
Գրողի պես երևաց,
50 Ձենը գցեց գեղի ծերին,
Հասավ՝ թուրը պլոկած ...
Ո՞վ սիրտ կանի՝ գնա լիզի
Փոշին ձի՛ու սմբակի,
Որ նա դթա խեղճ գեղացուն,
55 Սև ամպի պես չզարկի։

Դ

Եկավ ահա մռայլադեմ
Գեղի ռեսը՝ քաջ Մարտոն
Ու մթնդեց ժողովի դեմ,
Մութ աչքերով մրահոն.
60 —Ի՞նչ եք սավել... Պատրաստվեցե՛ք,
Բերե՛ք զենքեր՝ ինչ որ կա.
Դե՛, վե՛ր կացեք, թո՛ւր կապեցեք,
Ուր է, ուր չէ՝ նա կգա։

—«Մե՛ծ է վերև աստվածն հայի,—
65 Խոսեց Օհան ծերունին.—
Թե որ վերից նա չնայի՝
Վայն է տարել մեր հային։
Հի՛ն ճամփա կա. է՛ն կբռնենք,
Որ բռնել ենք շատ անգամ.
70 Շա՛տ ենք քաշել, է՛լ կքաշենք,
Էս է՛լ կանցնի, բարեկա՛մ»։

«—Քաշե՛նք, մինչև ե՞րբ... Սատելով ծերին՝
Գոռում է Մարտոն գեղի մեծերին.—
Ուր սուր է տալիս աստվածը մարդուն՝
75 Էնտեղ չեն կանչում նորից աստրծուն»։
«—Մի՛ խոսի այդպես, մի՛ խոսի, Մարտո՛,
Աստված է էլի ամենից հետո.
Վե՛ր կաց, քանի չէ՛ հասել թշնամին
Է՛լ աստված կանչենք, գնանք մեր բանին»։
80 —Է՛հ, քանդվի գնա ձեր աղգն էլ, ձեր բանն էլ,
Երբ չեք իմանում ոչ ապրել, ոչ մեռնել,
Բռնեցե՛ք, ախպեր, ձեր պապի ճամփան.
Ես կապրեմ իմ տան, կմեռնեմ իմ տան։
Բարկացավ Մարտոն
85 Ու գնաց իր տուն։

9—179

Ե

—Էն ո՞վ է կանչում... Ապա նայեցե՛ք...
Թռան տեղներից մարդիկ ահաբեկ.
Ողջ գեղը բռնեց շիվան ու ոռնոց
Ընկավ տնետուն աղմուկ, լաց ու կոծ։
90 Հարայ տվին, զոռգոռացին.
«Ելե՛ք, փախե՛ք, եկավ Թիմուր».
Թռավ Մարտոն, հեծավ իր ձին,
«Դե՛, տղե՛րք, ասավ, լա՛վ կացեք, ամո՛ւր ...»։
Թռան կտրիճներն, հեծան ձիերին
95 Եվ հոծ սևացան մոտակա բլրին.
Օհանն էլ ահա իր կտրան ծերից
Կանչում է ինչպես արծիվը բնից.
«Հավաքվեցե՛ք, պատրաստվեցե՛ք,
Սել ու պաշար կապկապեցե՛ք,
100 Հսկո՛ւմ արեք, արթո՛ւն կացեք,
Ահ ու մահ է էս գիշեր»։

Զ

Ահ ու մա՛հ գիշեր... Ահա հերսոտված՝
Նայում է դաշտից հազար աչքերով.
Սև-սև պահնորդներ գեղի մոտ ցրված՝
105 Խավարն են դիտում շուքեր որսալով։
Եվ ժամն էլ ինչպես արծիվ սևաթև
Կարմիր աչքերով նայում է վերև.
Հսկում կա այնտեղ, տխուր լաց ու կոծ,—
Աստված է կանչում ժողովուրդն հայոց ...
110 Կանչում է նա տխուր ձայնով,
Մի սրտախոր շարականով.
Եվ լսվում է, լսվում ահա՝
Տե՛ր, ողորմյա՛, տե՛ր, ողորմյա՛ ...

Խավար է անհուն... Մասիսը խոշոր
115 Ունքերը կիտել՝ նայում է խոժոռ,

Եվ Արարատյան լայն դաշտի վրա
Լռությունն ահեղ չոքել է ահա ...

Թա՜կ, թա՜կ, թա՜կ, թա՜կ,
Զարկին կոչնակ,
120 Վերջին անգամ
Կանչում են ժամ ...

Եվ լսվում է, լսվում ահա
Տե՛ր, ողորմյա՛, տե՛ր ողորմյա՛ ...

Է

Գյուղը պատրաստվել
125 Նստել է, սառել ...

Եվ գիշերն ահա երկյուղով լցված՝
Խոսել սկսեց հազար ձայներով.
Տղերքն էլ գյուղի փեշերում ցրված՝
Նստել են անխոս, մահի մտքերով։
130 Գիշերն է հոսում,
Ոչով չի խոսում ...
Էս ի՞նչ էր՝ ոռնաց հեռու դաշտերում ...
Ճամփո՞րդ էր, նվաց՝ կորցնելով ճամփան ...
Հարա՞յ են տալիս հեռու գեղերում ...—
135 Ո՛չ, լուռ է դաշտը լա՜յն, Արարատյան։
Նստած է Մարտոն իր կտրան ծերին։
Եվ շուրջը նրա՝ տղերքը գյուղի,
Ականջը ձենի, սև պահնորդներին՝
Հսկում է արթուն գիշերն երկյուղի։
140 Ականջ են դնում, սպասում երկար.
Հանկարծ մի շարժում... Նայում են իրար ...
«Տղե՞րք»,—ձայնում է Մարտոն կտուրից.
Լսվում է «էհե՜յ»... Եվ լուռ է նորից։

Ամբո՞խ է գոռում ու սաստիկ գալիս,
145 Թե՞ ոռնաց ձորում քամին խլաձայն.
Էն հա՞վն էր կանչեց, թե՞ վայ են տալիս ...
Ո՛չ, լուռ է դաշտը լա՛յն, Արարատյա՛ն։
Սևումո՛ւթ դիշեր, ճգնաժա՛մ դիշեր ...
Նստած է Օհանն ու միտք է անում.
150 Ու ցավեր հին-հին ու հազար հուշեր
Գալիս են ծերին երևութանում։—
Քանի՞ դիշերներ եկել են անցել
Սև բուերի պես հայոց աշխարհից ...
Երթա՞ն ու չդան անցած դիշերներ,
155 Կանցնի՞ այս մեկն էլ հայոց աշխարհից ...
Ու մին էլ հանկարծ հուսահատ ժամին
Մի սև կասկածով մթնում է Օհան.
Թե ծովի նման չդա՞ թշնամին,
Հային արմատով քշի՝ տեղահան։
160 Դե՛հ, ճամփա՛ ընկեք, կանչով սրտնեղած
Արծիվը ծերուկ ելավ ու գոռաց.
Վե՛ր կացեք, գնա՛նք, մեր ազգը պահենք.
Ցավ շա՛տ ենք քաշել, այս մինն էլ քաշենք։

Եվ գեղն հուսահատ կանգնեց երկպառակ.
165 Մեկդին փախչողներ, մեկդին՝ նահատակ։
—Տղե՛րք, տեր ընդ ձե՛զ, կանչում է Օհան.
—Եվ ձե՛զ, լսվում է մռայլ, խլաձայն։

Նրա ետևից սայլերը ճռռում,
Մանուկ ու ծծկեր ծվում են, գոռում։
170 Խաչակնքում են կանայք անընդհատ,
Լալիս են, գնում ծերերն հուսահատ։

Վաղը կոտորա՞ծ, կոտորա՞ծ ահեղ՝
Գյուղե՞ր, քաղաքնե՞ր, վանքե՞ր-ամե՞ն տեղ ...
Տնքում են սայլեր, քարերին դոփում,

175 Եռում են նրանց շարքերը ճամփում։
«Էհե՜յ», կանչում է Օհանն առջևից.
«Էհե՜յ», ձգում են հեռո՜ւն, վերջերից.
Եվ նորից ահա ծերերը ճոճվում,
խորդում են սայլերը ու կանայք նվում ...
180 Հայի գիշե՜ր, անլույս գիշե՜ր.
Ե՞րբ կլինի փրկություն.
Հայի գիշե՜ր, անհո՜ւյս գիշեր,
Տե՜ր, դու հասնես օգնություն։

Բայց լուսանում է... Սև հավը կանչեց ...
185 Եվ դաշտը ահեղ աչքերը բացեց։

Ը

Զիու ականջն ահա մտած՝
Զիավոր է պրծել գալիս.
Ասես փոշին ամբակների
Մի օձ լինի հետևելիս։

190 Ու ի՞նչ է նա թռչում արագ՝
Երիվարը կրակելով,
Փեշերն հովին՝ բազեի պես՝
Մեկ սրվելով, մեկ բացելով։

Ահա եկավ փոթորկալից ...
195 Ու չէր տվել դեռ ոչ մի լուր,
Զիավորներ պրծան հեռվից՝
Հոլովելով նիզակ ու սուր։

Թ

Կոտորա՜ծ է, կոտորա՜ծ է, սարսափելի՜,
խելահե՜ղ,

Կոտորած է, բաղաքնե՞ր, գյուղեր, վանքեր,
ամեն տեղ ...
200 Կոտորած է ահռելի, ով ծնվում եք՝
չծնվե՞ք,
Ով աչք ունեք՝ կուրացե՞ք, ականջ ունեք՝
խլացե՞ք ...
Կուրացրե՞ք, բրեցե՞ք օրվա աչքը՝ արեգակ.
Տրեզերքը վերից վար սև վարագո՞ւյր
քաշեցեք։
Բացվե՞ք, անսասան քամիներ, հասատատությունը
շարժեցեք.
205 Բա՞ց արդանդդ, ո՞վ քաոս, ե՞կ, կոտորա՞ծ
դժնդակ։
Սա ի՞նչ ցեղ է ճիվաղային, դաժանագեմ,
մեծգլխանի.
Սա ի՞նչ ահեղ շեփորներ են նման վերջին
դատաստանի.
Խո՞ւժ է եկել սարսափելի, ծեծում է բյուր
սմբակներով,
Զրհեղեղ է համաշխարհյան՝ ափից ելած
մռունչներով։

ժ

210 Սուրո՞ւն, սուրո՞ւն[1]... Ասպազենքից
Զնգզնգում է սար ու ձոր,
Սուրո՞ւն, սուրո՞ւն... Փախե՞ք, փախե՞ք,
Ասպատակ է սար ու ձոր ...
Վա՞յ է եկել մեր լեռներին,
215 Վա՞յ է եկել մեր ձորերին,
Վա՞յ իշխանին, ռամիկներին,—
Եկել է չար Լենկ-Թիմուր ...
Փախե՞ք, ծերե՞ր, մանուկնե՞ր,
Փախե՞ք, տերե՞ր, մշակնե՞ր,

[1] Սուրուն՝ հին թաթարների աղաղակը հարձակում գործելիս։

220 Մտեք այրե՞րն, աղջիկնե՞ր,
Վա՞յ է եկել, Լենկ-Թիմուր ...
Սուր է քաշում, հուր է ձգում,
Զարդանդ լցնում սար ու ձոր,—
Սուրո՞ւն, սուրո՞ւն... Փախե՞ք, փախե՞ք,
225 Ջլջլում է սար ու ձոր ...

ԺԱ

Հայրենի դաշտում, հայրենի բնում
Թևեր են բացել աքլորներն հսկա,
Հայրենի դաշտում, հայրենի բնում
Ընկած է Մարտոն, ու խումբը չկա ...
230 Թևերն են շարժում կարմիր աքլորներ,
Ժայթքում են բերնից ծխի քուլաներ,
Գյուղեր են լափում աքլորներն հսկա,
Տնքում է Մարտոն, ու լսող չկա ...

Ճայթում են գեղեր, բոցերը ժայթքում,
235 Ծխի կծիկներն օդի մեջ քանդվում,
Եվ խումբը հավետ մտել է խոր քուն
Հայրենի դաշտում, հայրենի բնում։

ԺԲ

Սեգը ծեգեց. ելան քնից թաթարները
օրդա-օրդա,
Մռնչացին խժաբարբառ՝ ոնց որ դժոխք
ահեղ թնդա,
240 Լավաներով մոնղոլական, առատությամբ
Ջիհուն գետի՝
Բերնեբերան ծփծփացին դաշտավայրում
Այրարատի։
Ամպերի պես ժողված ունեն կայծակ
նետեր հազար-հազար,

Անտառի պես անկած ունեն դեպի երկինք
տեղ ու տապար,
Ինչպես ալիք փոփոում են նժույգների
արձակ բաշեր.
245 Զո՞րք է լցվել Այրարատում՝ ասես մի սև՝,
ծանր դիշեր։
Ահա ելավ բանակը մեծ՝ մրրիկների
արագությամբ,
Ու սփռվեց զորքը դեղին, դեղնեցրեց
դաշտեր ու հանդ.
Ամբոխների հեծյուներով շվշվացին օդ ու
երեր՝
Ինչպես գարնան վարարելիս վշվշային
հազար գետեր։
250 Ճամփա պարող ջրերի պես իրար եկան
զորքերն արի,
Կարկտի պես վժվժացին փափախները
ձիավորի։
Ժամեր անցան աղմկելով՝ մինչև ամպերն
համայն զորքի
Հանդստացան շփոթվելուց, բոթբթելուց
մեկզմեկի։
Ի՞նչ էր զոռաց հիազարհուր՝ նման լեռան
լավաժայթքի ...
255 Թե՞ երկնքի առաստաղը ճաքեց, թափվեց
հանկարծակի.
Գոչում ընկավ զորքերի մեջ ղլղլալով
քամու նման.
Ու կայծակեց Թիմուրն ահեղ լայնատարած
դաշտի վրան։
Շբախմբի գլուխն անցած, ճերմակ ձիով,
խոժոռադեմ,
Մահի դաժան վճիռի պես՝ եկավ Թիմուր
զորքերի դեմ,

260 Ետ-ետ փախավ զորքը ստվեր էդ արևից
արյունագույժ,
Բացեց ազատ հրապարակ, ինքը պատեց
շուրջը մշուշ։
Ահա և նա, Լենկ-Թիմո՛ւրը, եկավ դեպի սև
այրուձին.
Ու երիվարն օրորում է շարությունից էն
դեղնածին.
Կասես դաշտերն հոտոտելով՝ որոնում է
սառը դիակ,
265 Ասես եթե վերև նայի՝ հրաման է ու ավերակ։
Իր ետևից ստվերն ահա փարվել ձիու
սմբակներին՝
Սիրտ է արել աղերսելու, որ նա գթա մեր
աշխարհին։
Սակայն նա խուլ՝ ձիու վրա օրորվում է
ինչպես դիակ,
Ահ է փչում կերպարանքից, ինչպես մահից
էն դժնդակ։
270 Եկավ ահա հրապարակ և կանգնելով նրա
մեջտեղ՝
Աչքերը վեր բարձրացրեց դաշույնի պես
սառն ու ահեղ.
Եվ նայելով մոտիկ, հեռու փոշում կորած
փափախներին՝
Կրակ ավեց սրովն հանկարծ, գոռաց ամպոտ
անտառներին։—

Լսե՛ք, զարմե՛ր թաթարի,
275 Զորությունն ե՛ր Բայքալի,
Լսե՛ք, թռչո՛ղ ավազներ,
Ձիավորնե՛ր, մրրիկնե՛ր.

Ինչքա՛ն աստղեր ու արև
Ունի երկինք հարատև՝

280 Կտանք այդքանն ու հեռուն
Երկնաբնակ Աստծուն։
Բայց մինչև ուր հոգնելու
Մրրիկները կհասնեն,
Եվ այնքան շատ, ուր հեռու
285 Հորիզոններ կհասնեն՝
Ճանաչեցե՛ք մեր սահման
Եվ տիրեցե՛ք դուք նրան։

Հայրենի դաշտում, հայրենի բնում,
Թևին են տալիս հսկա աքլորներ,
290 Հայրենի դաշտում, հայրենի բնում
Խնդում են, ծափում վայրի բանակներ։
Դժվում է, ճվում, պարում է վայրագ
Թաթարը կարճոտն ու ցանցամորուս,
Պոկվում են, թռչում հեծվորներն արագ
295 Ջիրիդը ղլում մեծ, մրրկահույզ։
Նետում են մեջտեղ մի դառ սպիտակ,
Մի հեծվոր նրան խլում է արագ,
Փախչում է ահա փոթորկի նման,
Եվ խումբը թռչում բռնելու նրան։
300 Իրար են բոթում ու դառը պատռում,
Խլում իրարից մսերքն արյունոտ,
Իրար գետնելով՝ ճվում են, գոռում,
Ցրվելով արագ, թռչելով մոտ-մոտ։
Մինչև դաշտերից գալիս են անդուլ
305 Զորքեր գիրևար, զորքեր ասպատակ ...
Հոգնել է երկիրն ու տնքում է խուլ,
Տնքում անհանգիստ անթիվ ոտքի տակ։

Բայց մթնում է. այգիների
Սև շուքերը ձիերքն ահա
310 Տարածում են արյունալի
Շունչը հատած երկրի վրա։

Խոժոռվում է Մասիսը ծեր
Առաջացող դիշերի դեմ,
Եվ գեղերը ինչպես կայծեր
315 Պլպլում են հեռո՜ւն, դես-դեն։
Բանակն արդեն մտնում է քուն,
Ջրից դարձել նժույգները,
Եվ դաշտերում ահա թաքուն
Շշնջում են դիակները։

ԺԴ

320 Դեսպան եկավ սպառնալի՝ Օսմանլուից Լենկ-
Թիմուրին.
Արյան գրով կռիվ կանչեց արնոտ սուլթան
Մեծ Բայազիդ.
Կռիվ կանչեց հոխորտանքով աշխարհների
թագավորին,
Ասավ. «Կանգնի՛ր՝ որտեղ որ ես գամ
զարկելու թուրս թրիդ։
Ծովեր ունիմ անծայրածիր, բյուր քաղաքներ—
պողպատ բերդեր։
325 Ինչքան դաշտեր որ դու ունիս, այնքան
անտառ, բաղ ունեմ ես.
Ինչքան ունես ծառ ու մացառ, այնքան
ունեմ մարդ ու զորքեր.
Ի՛նչ դու անձրև՝ ես այնքան նետ ... Դե՛, պի՛նդ
կանգնիր որտեղ որ ես»։
Նայեց թղթին քմծիծաղով ու դեն գցեց
դաժան Թիմուր,
Կծեց բեղերն ու մրմռաց. «Դե՛, ես կգամ,
դու է՛լ արի»։
330 Գնաց դեսպանն ու սուլթանին տարավ ահով
այս խոսքն ու լուր,
«Ելե՛ք»,—գոռաց Սուլթանն հպարտ կատաղած
զորքին օսմանլուի։

ԺԴ

Եվ Անգորի դաշտումը, բաց
դաշտում ռազմական
Եկան ելան դիմաց-դիմաց
զորքերն հաղթական։
Ելավ մի կողմ ու շնթռկեց
Թիմուր չարախինդ,
Գիշերի պես մեկդին չոքեց
Սուլթան Բայազիդ։
Դեռ այս մեկի հետքերն ավեր
մխում են հեռու,
Մրրկել է Դանուբն ի վեր
զորքով ահարկու.
Իսկ մյուսը դժոխքն իր հետ՝
այրել խոարեզմ,
Հնդիկ ու Ֆարս արել անհետ,
կանգնել գանգի դեզ՝
Եկել դեռինն հոտոտելով
մրմռում է չար,
Ինչպես աչքերն արյուն կոխած
հովազ խելագար։

ԺԵ

Մեգը ծեգեց, ու արևելք
Պարզեց դրոշն արյունալի,
Երկու զորքին ասին՝ «Ելե՛ք,
Հասավ օրը զարհուրելի։

Արյունի՛ են մնում ծարավ
Այսօր դաշտերն Անգորայի.
Բյուրերի օրն եկավ հասավ,
Եվ բյուրե՛րն են մնում մահի»։

350 Ելան ահա իրարու դեմ
Երկու զորքերն արնածարավ
Ու կանգնեցին հոխորտադեմ
Պատրաստելով դիմադրավ։

Մեկ էլ ինչպես ամենայն տեղ
355 Լցված դևեր ելնեն ափից՝
Իրար եկան զորքերն ահեղ
Որոտալով ամեն կողմից։

Կարկըտի պես թակեց գետինն
Հետևակը ոտքով արագ,
360 Եվ սուրացին ձիեր չորսդին՝
Բուքերի պես բաշեր արձակ։

Կատաղած քաջին չկա՞ էլ դարձ,
Խիստ մղեցին թույլին ետից.
Ու ծառացան ձիերն ահռած՝
365 Փնչատելով ամեն կողմից։

Սրերը մերկ դեպի երկինք,
Փեշերն հովին փռփռալեն,
Կուրծքերը թեք դեպի առաջ՝
Ձիավորը քշում է դեմ։

370 Բուքի նմա՞ն փոշին ելավ,
Դեղնեցրեց լույսն արևի.
Միջին կորչում, դուրս են պրծնում
Անտառները չալմաների։

Սուր ու խենչար կրակելով՝
375 Հետևակներ խցվում են ներս
Ու կատաղի հարու տալով՝
Թափթփվում են մեղուի պես։

Ո՞նց է դոփում գետինը խուլ,
Ո՞նց է տնքում բյուր ոտքերից,
380 Ժաժք է ասես, գալիս է փուլ
Փախչոտելով ամեն կողմից։

Կատաղել է թաթարը դև,
Կատաղել է և օձանում,
Ֆշշում է թուրքն ու հևիհև
385 Բզբկտում է և գալարվում։

Ու ցրվելով զորքերի մեջ
Գնաց մի բոթ ամոթալի.
«Գետի՛ն անցնք, օսմալինե՛ր,
Սուլթան Կայծակն ընկավ գերի...»։

390 Բայց է՜հ, ի՞նչ կա անկարելի
Ռազմադաշտում բախտի համար.—
Փուվից զորքը օսմանլուի,
Խնդում գցեց զորքը թաթար։

ԺԶ

Խնդում է տերն աշխարհների
395 Ու ծաղրալից նայում իր դեմ
Մյուս տիրոջն աշխարհների,
Որ գերի է գալիս իր դեմ։

Եվ սա օտար սարկության,
Որպես առյուծ մեծսրտանի,
400 Գերի թեև, բայց դեռ սուլթան՝
Նայեց բախտին Լենկ-Թիմուրի։

Դարձավ Թիմուր ծաղր խոսքով
Սուլթան Կայծակ Բայազիդին.—
«Հը՞, էն ո՞վ էր գալիս զորքով,

405 Եվ ո՞վ պիտի նայի գետին ...»։

Կայծակնահար լսեց նրան
Ի՞նքը՝ Կայծակ մեծ Բայազիդ,
Նայեց, նայեց Լենկի վրան,
Մնաց սեցած ու սեասիրտ ...

ԺԷ

410 Թնդում է խրախճան Աղդամի դաշտում,
Թաթարը անզուսպ կռնչում սուր-սուր.
Թիմուրը հարբած իր զորքն է դիտում,
Կախած են սյունից վահանն ու իր թուր։
Բաժնում են զորքին ավար ու պատանդ,
415 Ճամփորդ են էգուց դեպի Սամարկանդ.
Եվ զուր բառնալով անզոր լաց ու կոծ՝
Գերի է գնում ժողովուրդն հայոց։
Եվ Թիմուրն հարբած տալիս է հրաման,
Որ զոհեր բերեն իրեն հանդիման.
420 Եվ ահա թունոտ արքայի դիմաց
Բերում են մի խումբ գերիներ կապած.
Կանչում են զորքին հանդես մահագույժ՝
Պարիսպ է կանգնում ամբոխը խուժդույժ։
Կանգնում է մեջտեղ դահիճն արնագույն՝
425 Ձեռքերն ուժապիրկ դրած կողքերին։
Նայում է արքան աչքով չարաթույն
Իր դեմ նկարված դժգույն զոհերին.
Եվ տվեց նշան... Վզեր կռացան,
Խենջարը վառվեց, գլուխներ պրծան ...
430 Փռված են բոլոր... Մի ծերուկ մնաց,—
Վերջին նահատակն արքայի դիմաց։
«Դու ո՞վ ես,—հարբած հեգնում է արքան
Աչքերը արնոտ դեպի վեհ վկան.—
Եթե դերվիշ ես՝ ասա՛ մի լավ բան.

435 Իսկ եթե ռայա՝ կմտնես տապան...»։
Լռում է ահա բանակ ու գերի.
Պատկառ է ազդում ալիքը ծերի.
Հպարտ Օհանն է. բայց ինչքա՜ն գունատ ...
Կանգնած է ահա ծեծված ու ծվատ,
440 Ինչպես թևաբեկ զառամ մի արծիվ,
Որ խոցված արդեն՝ շարժվում է հազիվ։
Փայլում է Օհան ձյունոտ սարի պես.
Եվ ձեռքը ոսկոր՝ ճակտին դեմ արած՝
Նայում է Լենկին ու խոսում այսպես.
445 «Քեզ չե՛մ բարեկամ և ոչ թշնամի,
Սակայն ճշմարի՛տն ասեմ քեզ հիմի.
Ինչպես իր շղթան կտրած փոթորիկ՝
Թռչում ես, գիտեմ, ցամաք ու ալիք,
Եվ անվերջ զորքով հեղեղ ու հեղեղ
450 Անցնում ես աշխարհ մահի պես ահեղ,—
Բայց վերջը էլի՜ այս երկրի ռայան
Կհերկե զութնով քո վերջին կայան»։
Մթնում է Թիմուր ... Նշա՜ն զայրացման.
Թե խոսի՝ կերթա՜ն գետերը արյան.
455 Բայց մոտ է վազում դահիճը ահա,
Խլում է ծերին, որ շուտ մահին տա։
Ընկավ, կարմրեց-ճերմակ ծերունին,
Նստած է սև Դևն աչքերը գետնին։

ԺԸ

Թնդում է խրախճան Աղդամի դաշտում,
460 Թաթարը անդուսպ կռնչում սուր-սուր.
Նստած է Թիմուր արնոտ, անկշտում,
Կախած են սյունից վահանն ու իր թուր։
Եվ իր համհարզին՝ կանգնած գլխիկոր՝
Հարցում է տալիս այսպես մեծագոռ.
465 «Ես չէի՞ Հինդու գլուխը կերա,

Մոսկովի ձայնը կտրեցի, տարա.
Եվ չէ՞ր այս սրով, որ Կասպից դռան
Ալիքներն ամեն ինձ գերի դառան.
Բայց տեսե՛ք ահա որ ցե՛ղն է անարգ
470 Փչելու մի օր իմ փառքիս ճրագ։—
Այսպես չխոսե՞ց այն ծերն աներկբա,
Թե չէ՛ր նա տեսիլ կամ փուչ խաբեբա»։

—«Նա չէ՛ր իմաստուն, այլ վատ սրիկա,—
Վրա են գալիս էմիրներն հլու.
475 Եվ այս երկրի մեջ էլ դութան չկա,
Էլ չի՛ ռայան գա՛ դութան քշելու.
Դու քեֆդ արա, արև-աստղի հետ
Միշտ վառ կմնա քո փառքն այսուհետ»։

Թնդում է, դոռում խրախճանն անխել,
480 Ջորքերը գոչում, ծփում ծովի պես,
Նստած է Թիմուր, գլուխը կախել՝
Գետնին է նայում խոժոռ քարի պես։
Ու աչքը գետնին՝ ծերին հիշելով
Դոռում է այսպես՝ հարբած խնդալով.
485 «Բաժանեցե՛ք ինչ որ հասնում է որին՝
Երկինքն՝ աստծուն, աշխարհ՝ Թիմուրին»։

ԺԹ

Ահա տխրամած ամայի ճամփով
Ճամփորդ է գնում քայլելով հանդարտ,
Եվ պանդուխտ կյանքի սովոր իր ցուպով
490 Կարճում է, կտրում դաշտերն Արարատ։
Հոգի՞ մեղավոր, կարոտ աղոթքի
Լալու է գնում մի սուրբ հարկի տակ,
Թե՞ սին ժխորում ունայն աշխարքի
Լքվել է, ընտրել մենիկ մի լուռ կյանք։

10—179

495 Ռամի՞կ մի խղճուկ՝ փախած թաթարից
Ունի ապավեն վանքերն երկնահուպ,
Ուր միայք է անում ասուված թախծալից,
Ուր ցավն իր աղգի ողբում է մի սուրբ.
Բայց ո՞վ իմանա, այն խառ օրերին ...
500 Երբ մահն է դիտում ամեն մի քարից,
Երբ քեֆ է սարքել խարդախ բորենին,
Երկիրը դատա՞րկ, լքվել բնակչից։
Մեռել է, սառել դաշտն Արարատյան՝
Մատնած անսովոր, ահեղ լռության։
505 Ճամփորդը կանգնեց
Ու դաշտը աչքից։
Ահա նա՝ փուված անհույս ու տխուր,
Դեղին՝ մահի պես, շիրիմ մշտալուռ.
Երբ մահը աչքիդ էակ ես հարցնում՝
510 Նա խուլ, անտարբեր ականջ է դնում
Ու աչքը վրադ՝ նայում է անօգ,
Բայց և անողո՞ք։
Կարծես մեռելի հսկա այն դիմքին
Կերոնի նման արևն է շողում,
515 Եվ նա՝ աչքը բաց՝ նայում է երկնքին,
Նայում է դաժան ու սառ ծիծաղում,—
Եվ հանկա՞րծ, նորից մեռած է ու լուռ,
Կարկամ ու տխո՞ւր։
Ահա մի սև գյուղ ավեր, գետնամած՝
520 Սողաց ու փուվեց ճամփորդի դիմաց։
Տե՛ս ահա՛ մի գանգ թունով ծիծաղեց,
Զախկալը խնծուղ մի դռնից նայեց։
Խնջո՞ւյք է գյուղում. լողում են ահա
Ագռավի ամպեր դիերի վրա։
525 Այրված գերաններ դիտում են համառ,
Ճոճվում է մի տեղ կաչաղակն հիմար։—
Այստեղից անցավ Լենկ-Թիմո՞ւրն ահեղ
Գնդերովն իր սև ինչպես գոռ հեղեղ,

Այստեղից անցավ մրրկի նման,
530 Եվ իր հետքն ահա—մա՜հ ու գերեզման։
«Հը՜մ, ա՜յ քեզ ավեր...»,
Ժպտաց անցորդը և ուրվի նման
Գնաց անշտապ իր տխուր ճամփան։

Ահա չոր բլրին մի վանք մենակյաց՝
535 Մթին, թևարձակ մի արծվի նման՝
Արևի դեղին լուսի տակ խանձված՝
Սևին է տալիս օդի մեջ վառման։
Գնաց դեմ առավ այդ վանքի դուռն
Ու դուռը ծեծեց ծանր չափերով.
540 Ծեծեց մե՛կ, երկո՛ւ ...
Բայց լուռ, ահարկու
Տաճարն աստծու ինչպես դերեզման՝
Մահի բարբառով
Տվեց պատասխան։
545 —Չէ՛, փա՜ռք աստծու, փչվել եք դուք է՛լ,—
Մրմռաց ու դուռն սկսեց թակել։
«Է՜... Ո՜ո՜ւվ է...»,—խորքից ծոր դցեց նվազ,
Տանջվողի ձայնով, տապանից կարծես։
«—Հե՛րիք սուս կենաս,
550 Բա՛ց ես անտերը, քավթառա՛ծ աղվես»։
«—Ո՞վ ես, ի՞նչ ունիս,
Թաթա՞րն է գալիս»։
«—Ի՞նչ թաթար, ի՞նչ բան, էլ թաթար չկա՜.
Եվ ինչո՞ւ կդա.
555 Վաղուց է նա ձեր գլխի սուգն արել,
Ձեր կույր ու կաղը Բաղդադ հասցրել»։
Դուրս նայեց ահով ժամհարը կուզյան,
Աչքը նորեկին՝ աղվեսի նման.
Տեսավ, հառաչեց և լալահառաչ՝
560 Դարպասը բացեց, եկավ ընդառաջ.—
«Մարտո՛ ջան, աշխարք

Դարձրին բրիշակ.
Վանքն ավերեցին»...
«Աչքդ է՛լ հանեցին, սատանի՛ ժամկոչ.
565 Եվ ինչո՞ւ համար մնացիր դու ողջ».
Ու նայեց վանքին,
Խցերին, բակին ...
Այստեղ հավաքունն իջել է արդեն,
Սկսել են այնտեղ պատերն հրդեհից,
570 Եվ մագաղաթի թերթեր կան դես-դեն
Խանձված ու ցրված կողոպտման օրից։
Թափ տվեց գլուխն ու մի նեղ դռնով
Իջավ մի խցիկ՝ մեջքը ծռելով։

Ի

Խավար խցի մեջ, թեքված մի գրքի՝
575 Նստած էր ահա ծերուկ մի խորին.
Եվ մոմի լուսից արծաթը միրքի
Խաղաղ մի նշույլ սփռում էր չորսդին։
Կարծես չլիներ այս երկրի զավակ,
Այլ ծով երկնքի բնակիչ անհույզ,
580 Որին նայելիս՝ կկարծես թե նա
Մարդ չէ քո դիմաց, այլ հեռու մի լույս։
Արդյոք Նարեկի աղո՞թքը թրթռուն
Գգվում էր մի պահ հոգին ալեկոծ,
Թե ուշքը խլել՝ տարել էր հեռուն
585 «Հայրը քերթողաց, ողբացաան հայոց»։
Բարձրացրեց ահա գլուխը ճերմակ,
Նայեց Նորեկին անխռով ու հեզ,
Եվ իր հոնքերի արծաթ ամպի տակ
Փայլեցին աչքերն անդորր լուսի պես։
590 Նորեկը կանգնեց ու հոգնած արդեն՝
«Աստված օգնական»,—ասավ սառնորեն։
«Աստված պահպանե. բարի՞ է, եղբա՛յր»։
«Ի՞նչ բարի, ի՞նչ բան. քանդվել է աշխարհ։

Գնում եմ բերեմ ժողովուրդը նա,
595 Եթե ժողովուրդ մնա աշխարհում ...
Նա էսպես անտեր, մեծերս անպետ,
Լողում ենք ահա ցավերի ծովում»։
«Մի՛ լքվեք, որդի՛ք, կանչեցե՛ք աստված».
Հառաչեց ծերուկն ու նայեց մթնած։
600 «Ի՞նչ աստված կանչենք, է՞լ աստված մնաց.
Բոցն հասավ երկինք ու խանձեց աստված։
Աշխարհը դառավ սրի կերակուր,
Աղգով փչացանք, դառանք գետակուր։
Մեկ դո՛ւրս արի է՞, տես ոնց ենք քանդված.
605 Ո՞ւր է ժողովուրդ, ո՞ւր են մեր գեղեր.
Զարթի՛ր էդ քնից, աչքերդ մի բա՛ց.
Էլ ո՞ւմ համար ես տեսնում երազներ։
Գիտե՞ս թե մենք օր քաշեցինք էնտեղ ...
Գիտե՞ս թե հասա՞վ դատաստանն ահեղ ...
610 Երանի՜ նրան, ով մեռավ երեկ,
Եվ ով չի ծնվի այսուհետ երբեք»։
Գոռում էր այսպես առյուծի նման
Վիրավոր Մարտոն, խոսում անընդհատ,
Ինչպես մի հեղեղ թափվում էր ելման,
615 Եվ ծեր հայր սուրբը լսում էր հանդարտ։
Բայց մթնեց նա է՛լ,
Սկսեց խոսել.
Է՜հ, ի՞նչ է այսօր
Այս բոլոր ժխոր.
620 Եկե՞լ են, անցե՞լ, կգա՞ն ու կերթա՞ն՝
Սովի, փոթորկի, ժանտախտի նման։
Հա՜, տեսա՜նք, եղբա՛յր, շատ բռնավորներ,
Շատերի վեպը լսեցինք մենք է՛լ,
Որ ժամանակը՝ մանուկ անտարբեր՝
625 Նետեց խաղալով անդունդը անել։
Է՜հ, գնա՛, հանգչի՛ր.
Եվ ցավերս անվերջ թո՛ղ տուր ինձ հիմի

Հեղեղեմ, գրեմ այս գրքում մի-մի ...
«Ո՛չ, մնա՛ս բարով.
630 Դու կա՛ց ողբալու ցավերը ազգի,
Որպես բու լալկան մութ ավերակի».—
Ասավ ինս Մարտոն և ահա նորից
Խռով ելավ դուրս այն տխուր վայրից.
Ու կրկին ընկավ իր տխուր ճամփան՝
635 Հայացքը գցած հեռուներն ունայն։
Գնա՛ց, հեռացա՛վ անիծողն անմեղ՝
Իր հետ տանելով իր ցավն ալեկոծ.
Մնաց սգավոր ծերուկը այնտեղ՝
Նորից միայնակ, որպես բու հայոց ...
640 Եվ ձեռքն առնելով փետուրը թեթև՝
Նորից սկսեց գրել անդադրում
Պատմությունն ազգի սգավոր ու սև
Ու նեղիչների գործերն անպատում։

ՈՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ

Ի՞նչ է մեր կյանքը.—մի ողբ սև՛, անվերջ,
Ու մեկ-մեկ միայն պայծառ մի հնչյուն
Ժպտում է առ ժամ այդ մեծ ողբի մեջ,
Եվ կորչում որպես մի աստղ թռչուն։

5 Եվ Նա՝ հյուսիլիս էակը հողն,
Որ նրան հյուսեց խղճալի այնքան,
Հենց Նա սրտով էլ բարի էր գոնե,
Որ Իր կերտածին հիշեց մի անգամ։

Եվ անշուշտ վիշտը մեղմելու համար,
10 Այն վիշտը, որով էակն արձանեց,
Որպեսզի չլնի մարդը շատ թշվառ՝
Խղճաց ու նրան երազն ուղարկեց։

Ա

Նա ինձ պատահեց տխուր մի ի՛րկուն
Ժպտուն աստղի պես խավար հոգուս դեմ.
15 Եվ երբ սրտահույզ նայեցի թաքուն՝
«Սա նա՛ է», ասի. բայց ո՞վ,—չգիտեմ...
Նա ինձ պատահեց այն մութ օրերում,
Երբ ինձ չորս կողմից մենությունն անճար
Նայում էր, նայում սուված ու տրտում՝
20 Ինչպես չորս կողմից անանց, սև անտառ։
Նայեցի նրան... Ու ինչպես հանգած
Վառ մանկությունդ տեսնես դու հանկարծ,

Կամ անուշ մի ձայն լսեա անցյալից՝
«Սա ա՞յն էակն է»,—ասի ինքս ինձ։
25 Եվ սա, որ վսեմ, սիրուն է այսպես՝
Գույնն և սրտով բարի է և հեզ։
Եվ քանի՞ անգամ թե արթուն թե քուն՝
Երևրվել է սա երազող աչքիս.
Ու լուռ, մտերիմ՝ ինչպես իրիկուն՝
30 Եկել է ինձ մոտ, խաղաղել հոգիս։
Թեև չգիտեմ անունը սրա՝
Բայց ի՞նչ է անուն.—մի ձա՞յն է ունայն.
Ա՜խ, ես գիտեի, որ ապրում է սա,
Թեև ոչ մի տեղ չեմ տեսել սրան։

Բ

35 «Դու ո՞վ ես, քուրի՛կ»—ասի մի անգամ.
«Ե՞ս, ճամփորդ աղջիկ»,—խոսեց ժպտադեմ.
«Արի՛ գնանք դյուղ»—ասի ես նրան.—
Գնանք ունկնդրենք ծաղկանց սվվոցին
Եվ անտառների խոր-խո՜ր հոգոցին.
40 Ես տեղեր գիտեմ մարդկանցից հեռու,
Ուր զողանջում են ձայներն ասածու.
Ե՛կ, քուրիկ, գնանք.
«Գնա՛նք»—ասավ նա։
Եվ կես գիշերի աղբրի ձայնի պես
45 Անուշ էր ու ջինջ խոսվածքը նրա։

Գ

Գարուն էր կարմիր, մեր գարունն անցած,
Որ սիրուն Լոռուն մեր հյուր գնացինք.
Եվ ինչպես սիրուն բաներ են վաղանց՝
Այն էլ կարճ եղավ՝ թեև դեղեցիկ։
50 Եվ ինչքա՜ն, ինչքա՜ն սիրուն էր Լոռին,
Այդ ծաղիկների հայրենիքն անդորր,

Այդ հարսը նախշուն՝ ամպե շղարշով,
Գոգում սեզ ու վարդ՝ անուշ, ցողաթոր։
Տեսանք վտակներ ծիծղուն, կենսալի,
55 Որ զեղում էին ժայռից լույսի պես,
Անցանք մարմանդներ խոհուն, թախծալի,
Ուր երգ էր հյուսում հավքը բանաստեղծ։
Եվ երկինքն ինչպե՜ս վճիտ էր ժպտում,
Արտուտը ճխում բերկրանքից գժված,
60 Եվ ինչպես անհո՜գ երգում էր արտում
Ծղրիդն իր կյանքը ուրախ ու վաղանց։—
Ժպտա՜ց վերն ասված, երբ հյուսեց Լոռին,
Ու այդ ժպիտը մնաց մինչ այսօր.
Եվ նրանից ետ դեռ մի երգ վերին
65 Այն անդորր երկրում ղողանջում է խոր։

Դ

Բայց ո՛չ Սանահնի գարունը նախշուն,
Ո՛չ էլ զմրուխտե գահերը Լոռու
Ծաղկով երփնագույն, սեզերով շրշուն
Սև տրտմությունս վանեցին հեռուն։
70 Ու այս տրտմությամբ Հաղպատ, Սանահին
Անցա նրա հետ ինչպես սև ստվեր.
Եվ տխուր էին անտառնին հին-հին
Ցրված ու մոլոր՝ ինչպես սև մտքեր.—
Քանի որ մենք ջոկ սարերից ծագող
75 Երկու ջուր էինք իրար հանդիպած՝
Ես մի դեռ պղտոր՝ ափերից փախչող,
Նա մի լույս-վտակ ձյուներից սերած։

Ե

Բայց ո՞ւր է հիմի այն համերգն անդուլ,
Ջրերի երգը բարձրիկ ու ազատ.
80 Էլ ո՞ւր անտառի փսփսոցն այն խուլ,
Երկնքի ժպտուն աչքերն անարատ ...

Նրանք անց կացան մի հառաչի հետ,
Որ թռավ մի օր սրտից այնուհետ ...

Զ

Վանքի բակից վեր՝ կար դահ մի կանաչ.
85 Գնացինք մի օր այնտեղ հանդչելու.
Իրիկուն էր լուռ, երբ որ մեր առաջ
Մթնեց վեհ լոռին ու ձորն ահարկու։
Վանքից մի զանգակ օրհնում էր լռռուն,
Եվ մի շարական ոգիչ, սրտախոր՝
90 Վերև մանվելով՝ գնում էր հեռուն՝
Տեսնելու աստվածն իր մեծ, ահավոր։
Գնա՜ց, վերացավ... Ու երբ որ չորսդին
Գիշերը բացեց ծածկոցը իր թուխ,
Ու երբ ընկուզի քնկոտ մի ոստին
95 Մնչաց ու քնեց թռչունը պանդուխտ,
Հնչեց հոգուս մեջ գաղտնախոս մի ձայն
Ախորժ ու թեթև քան հովը լեռան.
Նա ինձ ասում էր. «Սպասի՛ր, թշվա՛ռ.
Սպասի՛ր, կգամ սիրով ու լուսով,
100 Կտանեմ ես քեզ մի վերին աշխարհ,
Կապրինք միասին շքեղ երազով ...»։

Հանկարծ օրորվեց մի հով իրիկվան,
Եվ խոսքերն անուշ ցնդեցին, կորան.
Միայն լռության շշունջն էր գաղտնի
105 Փսփսում մի բառ անհասկանալի։

Է

Բայց ո՞վ էր արդյոք
Այդ խոսողն անհոգ,
Որ խոսեց այդպես
Անհնչյուն, անտես։
110 Դարձա ընկերիս ...
Արդյոք ո՞ւր էր նա մոլորվել մտքով,

Տեսնո՞ւմ էր ծածուկ՝ հոգիս իր հոգով.
Է՜հ, ի՞նչ իմանաս.
Ո՛չ հոգին գիտես,
115 Ո՛չ սիրտը անտես ...

Ը

Եկավ սև գիշեր. մենք բաժանվեցինք.
Ու ես գնացի սենյակս մենիկ։
Դատա՞րկ մի սենյակ... Նոթերը կիտած.
Ահա նայեցին պատերս ինձ լուռ.
120 Ցնդեցին ձայներն հոգիս պաշարված,
Եվ մենությունը մրմնջաց տխուր։
Է՜հ, ի՞նչ ես պարում՝ ի՞նչ, իզուր է միշտ.
Սա կինն է միայն և սիրտ կանացի.
Կմարն հոգուդ բռնկումն ընդմիշտ
125 Մի բառ կոպտաձայն և հարևանցի։
Այսպե՛ս է աշխարհ, այսպե՛ս են մարդիկ,
Այսպես են եղել սրտերն ու հոգիք։

Թ

«Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ,
Գոչեցի հանկարծ.
130 Այս ի՞նչ աշխարհ է, այս ի՞նչ սև դժոխք,
Այս ի՞նչ ողբեր են, ճիչեր, հառաչանք.
Ի՞նչ կերպ-կերպ մարդիկ, աստվա՛ծ իմ անհոգ,
Ինչո՞ւ ես հյուսել մեզ այսպես մենակ ...»։
Եվ նորից տխուր մահերգը կյանքիս
135 Եկավ հառաչով խոժոռեց հոգիս։
Նորի՞ց մենություն՝ անսիրտ ու ծանոթ,
Նորի՞ց իսկություն՝ տարտամ ու վշտոտ։

Ժ

Ու մինչ այս թախծով մթնած էր հոգիս՝
Գթաց մի հեշտ քուն հոգնած իմ աչքիս.

140 Եվ ձայներ անվանկ, ձևեր երերուն։
Հանգցրին աչքիս աշխարհն ապարդյուն։
Ինչպես մի հնչյուն թախծալի երգի՝
Թռան իմ մտքերն հեռու հեռատան,
Փչեց իմ հոգուս մի շունչ գարունքի
145 Եվ անուշ թևով գուրգուրեց նրան։

ԺԱ

Երա՞զ էր արդյոք, թե արթուն և լո՞ւրջ,
Կամ տեսի՞լ արթուն, որ սահում է լուռ,—
Մի լույս ներս եկավ հանդարտ, անշշունչ
Եվ ցողեց ժպտով սենյակս մխուր։
150 Եկավ, նայեց ու այնպե՞ս մտերիմ
Նայեց աչքերիս աչքերով բարի,
Որ նրանց միջին դեռ անդրադարձած
Ցոլում էր տեսքը Եդեմա երկրի.
Դեռ նրա դեմքից չէր ցրվել խոպառ
155 Երկնային լույսի թաթախը պայծառ։

ԺԲ

«Ես նա եմ»—ասավ, «ինձ չե՞ս ճանաչում.
Քեզ տես եմ եկել՝ սիրտդ ամոքում,
Քնով է աշխարհ հիմի մեղմ շնչում.
Հոգիների ժամն հասել է արդեն.
160 Տեսա՞ր, թերհավատ, ինչպես եկա ես.
Եվ ի՞նչ, ինձ երբեք չէիր սպասում.
Երբ ծաղկում էի ես նոր գարնան պես՝
Դու կույր, վշտաբեկ՝ ինձ չէիր տեսնում»։
«Ա՜խ, ի՜նչ թեթև են խոսքերդ քաղցրիկ,
165 Այդպես ոչ ոք չէ կյանքում ինձ ասել.
Բայց, ա՜խ, ո՞ւր դամ ես, թշվա՜ռ եմ, քուրի՜կ,
Ցավի համար է ստեղծած ինձ հյուսել։
Իմ կյանքս խավար՝ որպես գուբ շիրմի,

Չի կաթում այնտեղ արևի մի լույս,
170 Մենացած՝ որպես մի բու գիշերի՝
Հիվանդ եմ, քուրի՛կ, հիվա՛նդ եմ անհույս»։
Բայց նա այնպես հեզ հանդիմանությամբ
Նայեց աչքերիս ժպտալի, դողտրիկ,
Ինչպես կնայեր երկինքը անամպ՝
175 Երբ անց է կացել արդեն փոթորիկ։
«Անցա՛վ, ասաց նա, անցա՛վ այդ քեզնից.
Անցա՛վ, ի՛մ թշվառ, թո՛ղ այդ վրդովմունք.
Երկրի՛նն էր, ինչ որ պատմեցիր դու ինձ.
Սա ա՛յլ աշխարհ է և ա՛յլ զգացմունք։
180 Ահա կփչեմ քեզնից կասկածանք,—
Կանցնի երկրային վշտերդ ու սևեր,
Ահա կտամ քեզ թռի՛չ, անրջա՛նք,
Գնա՛նք դեպ անհուն ու հավերժն ու վե՛ր։

ԺԳ

Թեթև՛ դառա ես
185 Գարնան սյուգի պես,
Որ ծաղկից ծաղիկ
Թռչում է մեղմիկ։
Ու սուր՝ որպես հևք,
Դյուրի՛ն, սլացի՛կ,
190 Թռված՝ իբրև երգ,
Թռանք գնացինք։
Սահո՛ւն, վերառաք
Մի աղոթք դառանք,
Մի վաղ մանկություն
195 Կայտառ ու ժպտուն։
Կապույտ աչքի պես
Ժպտում էր երկինք.
Ու մենք մեկուսի՛
Հեռո՛ւ, միասի՛ն ...

200 Ա՛խ, ի՞նչ անուշ է թռչելն երազում,
Սիրե՞լ, չիմանա՞լ, որ երազ է դա,
Երբ մեղմ կիսարթուն հոգիդ է հուզվում,
Ու չես իմանում, որ վերջ պիտի գա։
Տարված, գորոված, չգիտեմ ինչպես
205 Աչերին էի հպել համբույրով ...
«Դու համբուրո՞ւմ ես, ասավ ժպտալի.
Ա՛խ, թո՛ղ երկրինը, այն անցա՛վ, անցա՛վ.
Համբուրում է նա՛, ով պիտի մեռնի,
Որ գոնե սիրով կյանք տեսնի սակավ։
210 Եվ ի՞նչ է սերը մարդկային, խեղճիկ,—
Մի ցող մայիսյան վաղ առավոտի.
Ժպտում է մի պահ շողով աշխարհիկ,
Որ հետո անհետ արևում ցնդի։
Եվ ի՞նչ են արդյոք համբույրներն անզոր,—
215 Օ՜, սրտապատիր բառեր եղծելի,
Որ գրվում են լոկ ավազի վրա,
Որ և ջնջում է ալիքը ծովի ...
Այնտեղ մնաց մեր մարմինը հողի.
Քոնը սենյակում այն լուռ, մթնասավեր,
220 Իմը պատերում այն պաղ, սրտակեր,
Որոնց և մի օր քամին կշաղի.
Է՜հ, մի՛ ափսոսա մի բուռ այդ հողին.
Ի՞նչ էր մարմինը—բե՞ռ հոգու համար,
Օտա՜ր՝ մտերմին, ատող՝ սիրողին,
225 Այսօր՝ ժպտադեմ, վաղը՝ վշտահար։
Դե՛, էլ մի՛ հիշի, ինչ անցավ գնաց.
Այն մի երազ էր տխուր ու վաղանց.
Եվ ա՛յն, որ երբեմն կյանք էր մեզ համար,
Եվ ա՛յն, որի խեղճ անունն էր աշխարհ,
230 Թող մնա՛ այստեղ լոկ որպես մի հուշ,
Որպես փարատված մի տխուր մշուշ»։
Եվ քանի խոսեց ընկերս աննյութ,

Աշխարհը այնքան մնաց ետ, մեր տակ,
Եվ մնաց որպես հեռավոր ու մութ
235 Մի հիշողություն, երբեմնի տանջանք։
Թե՞ն տվինք մենք, թռանք, գնացի՞նք
Հեռուն ծավալված երկինքը պայծառ,
Այդ մով անդաստանն անհուն, գեղեցիկ,
Իր բյուր աստղերի ծաղկով զառ ու վառ։
240 Եվ բխում էին ինչպես մի աղբյուրից
Արև ու աստղեր անգին քարերով։
Որ առատն աստված շաղում էր չորսդին,
Որպես ադամանդ լայն-լայն թափերով։

Եվ գեղեցիկ էր այն աշխարհն անհուն,
245 Հրաժիններին դաշտերը կապույտ,
Այն խոր, հոգեկան աշխարհը ժպտուն,
Ու աղատ էինք՝ որպես միտք անփույթ։
Եվ տուն չունեինք՝ աստծու նման.
Մեր տունն էր թռիչն անվերջ ներշնչման,
250 Եվ եդեմական բառերը անվանկ
Մեր վճիտ կյանքի սնունդը միակ։
Երբեմն միայն մենք զգում էինք,
Թե ծովի ափով գնում ենք մենք լուռ,
Եվ ալիքները հևում են մեղմիկ՝
255 Ափին թողնելով կրծքները փշուր.
Թվում էր հանկարծ՝ թե հեռու, հեռո՜ւ,
Կապույտ աչքի պես, ժպտում է ահա
Ամպերի ճեղքից ծովիկը ուռնու,
Եվ մենք թռչում ենք վե՜ր, նրա վրա։
260 Թվում էր հանկարծ՝ թե քայլում էինք
Բարձրադիր գահին մի խորունկ ձորի՝
Եվ լռությունից ցայտում էր մեղմիկ
Մի ձայն վտակի հնչուն, սրտալի,
Եվ զառիվայրին անվե՜րջ ծաղիկներ,
265 Որ ժպտում էին արևին անբիծ ...

Հանկարծ մի կակաչ հեզ օրորվում էր,
Եվ մենք մոքի պես թռչում այնտեղից։
Ու երգը, որպես խունկ ու բույր ծաղկի,
Որ գարնան հովին մանվում է սահուն՝
Ասում էր. «Ինչ լա՜վ, ինչ լա՜վ է այստեղ,
Ինչ թեթև՜, անհուն»։
Բայց ո՞վ էր արդյոք՝ ծանոթ բառերով
Մնչում էր վարթ. ձայնով բերկրալի.
Կարծես աստծու հետ թոթով խոսքերով
Մանուկն էր խոսում այնքա՜ն դուրալի։
Բացի աչքերս... Այդ հավքն էր անդարդ,
Որ բարի լուսի բերկրանքից զարթել՝
Երգում էր ծառի ոստերում հանդարտ
Եվ թև էր առնում, ուզում էր ճախրել։
Բայց զուր էր այդքան երգով թովչալի
Պատմում ու գովում աշխարհն հողեղեն.
Ինձ համար ոչի՜նչ սա չուներ հիմի,
Օտա՜ր էի ես աշխարհից արդեն։
Եվ երբ որ դժգույն առավոտի հետ
«Նա» եկավ՝ ինչպես հեզ խաղաղություն,
Ու երբ նայեցի նրան՝ զգացի,
Որ մեզ սպասում է մի քաղցր անջատում ...
Եվ անդորր էի՝ խաղաղության նման,
Որի բոցն արդեն ապրըված անուշ՝
Եվ դեռ հեզ մի կայծ ժպտում է վրան,
Որին կծածկի մոխիրը քնքուշ։
Նայեցի նրա անդորր աչքերին,
Որ բաժին էին վշտի ու մահի ...
Է՜հ, մի շող դուցե՜ դողում էր այնտեղ,
Բայց այն էլ արդեն ո՜չ այս աշխարհի ...

ԺԵ

Ի՞նչ է մեր կյանքը.—մի ողբ սև՜, անվեր՜ջ,
Ուր մեկ-մեկ միայն պայծառ մի հնչյուն

ՍՐԲԻ ԱՂՋԻԿԸ

Նախերգանք

Նորի՞ց դամ ձեզ մոտ, վայրե՛ր ժպտադեմ,
Երբեմքն՝ իմ շուրջ, հիմի երանի՜.
Նորի՞ց վազեմ ետ, մին է՛լ ձեզ գրկեմ,
Ժպտով հեռացող օրե՞ր երբեմնի։
Նախշո՜ւն ծաղիկներ—գարնա՜ն քուրիկներ,
Մանո՜ւկ սահանքներ արծաթ բաշերով,
Կարո՞ղ եմ մին է՛լ դառնալ ձեզ ընկեր
Իմ այս միդամած աշնան երգերով։
Մեգե՜ր թարմաշունչ, որ միշտ նազանքով
Անցնում եք, շոյում հազար ծաղիկներ՝
Ապրեցե՜ք հեռուն, ձեր անուշ կյանքով,
Ես էլ զուրկ ձեզնից՝ կապրեմ տրտունջով
Իմ կարոտ օրեր։

Ա

Անուշ մի պատկեր եկավ երևաց
Աչքերիս դիմաց
Ահա վեհ սարերն իմ սեգ Ճորոխի
Ամպերի միջից նայում են հպարտ.
Այդ ծով ամպերում մի լուռ պատանի
Լեռան շավիղով գնում է հանդարտ։
Նա ուխտ է գնում հեռավոր մի տեղ՝
Անհայտ մի սրբի, անհայտ իղձերով.

11—179

Նայում է հեռուն ու ժպտում անմեղ
Իր դեռ երազուն, անփորձ աչքերով։
Այնպե՞ս մտերիմ և մոտ եմ նրան,
Այնպե՞ս կուզեի խոսեմ նրա հետ.
Բայց ինչպե՞ս խոսեմ.—ուրուի նման
Խոսքիս հարվածից կցնդի անհետ։

Նրա ոտի տակ ծովի փրփրի պես
Բարդվում են ահա մեղերը դեզ-դեզ,
Ճպուռը անլուռ ծղրում է մի երգ,
Անտառը ուժով փչում մի համերգ.
Ժայռերի կրծքից կաթում են, հնչում
Լեռնային ջրեր՝ արծաթ, կաթնորակ,
Առյուծի նման սահանքն է դոչում,
Քնում լռանիստ մարմանդն անբնակ։
Ճորոխի՜ աշխարհ, աշխա՜րհ դյութական,
Ջքնաղ հրաշալիք կախարդ բնության,
Ո՞ւր ես տանում դու այդ հեզ պատանուն,
Քաշում երազի այրերդ անհուն։

Բ

Անուշ մի պատկեր եկավ երևաց
Աչքերիս դիմաց։—
Ահա մի տնակ լեռների միջում,
Եվ կտրան վրա ուխտավոր աղան
Քնել է, հանգչում։
Ծառերի տակին քնած են մեղմիկ
Նրա հետ մի խումբ ուխտավոր մարդիկ։
Ջորս կողմը անտառ, վեհապանծ լեռնե՞ր
Պատմում են անվերջ ահեղ հեքիաթներ,
Ծղրում է անուշ ճպուռը անլուռ
Եվ լուսատուտը կայծում ոսկեհուռ։
Ի՞նչ անհուն դիշեր, ասաղալո՛ւյծ գիշեր,

Ի՞նչ բզեզների ոսկեղեն խմբեր
Երկնքի կապույտ անհուն դաշտերում.
Ի՞նչ խաղաղություն այնտեղ վերևում:
Ահա եղևնու նեռների միջին
Ճաքեց, կրակեց լուսնակը ոսկի.
Եկան ուրուներն անտառի կոչին՝
Կարծես անսալով դյուցազական խոսքի:
Ահա վեսվեսաց զունատ օդի մեջ
Ոստայնը նրբին արծաթ թելի պես,
Ահա ձյունափայլ ծառերը անվերջ՝
Ճերմակ կապայով կանգնեցին վեհ-վեհ:

Գ

Մի անուշ պատկեր եկավ երևաց
Աչքերիս դիմաց։—
Ճերմակ մի ուրու պարտեզի խորքից
Մշուշի նման սահում է ահա.
Ինչպես հորդ փրփուր ժայռերի կրծքից
Բխել է հանկարծ, գալիս է վրա:
Ահա մոտեցավ... Ի՞նչ նուրբ է, գալուկ,
Գաղտնալի՝ ինչպես մենասեր լուսին.
Նայում է հեռուն կարոտով անձուկ,
Կարծես սպասում անտառի կույսին:
Նայում է նրան տղան քնարգել,
Նայում հիացքով, ժպիտը բերնին,
Ասես մի փարթամ երազ է ընկել,
Ուր իրերն այնպե՞ս անուշ են, դյուրին:
Այնպե՞ս է մոտիկ ուրուն պատանուն,
Սակայն և այնպե՞ս թվում է հեռուն.
Մազերը ոսկի, երեսը ձյունի,
Կարծես հեքիաթի աշխարհից լինի:
Օ՜, գունա՜տ գիշեր, ձյունեղե՜ն գիշեր,
Օ, գոհարազարդ բեհեզո՜վ գիշեր ...

Ուզում եմ նրան ուղղել մի խեղճ հարց,
Վախում եմ խոսեմ՝ ցնդի նա հանկարծ։
Երկար նա կանգնեց լուսնակի դիմաց
Հետո մեզի պես անշշուկ, կամա՞ց,
Ստվերից ստվեր, ծաղիկից ծաղիկ
Սահելով անցավ, չքացավ մեղմիկ։
Ցնցվեց պատանին, վեր կացավ հանկարծ,
Տեսիլը սակայն մարել էր անդարձ։

Դ

Անուշ մի պատկեր եկավ երևաց
Աչքերիս դիմաց։
Խորին անտառում խոսուն և խշշուն՝
Լռում է մամռոտ մատուռ մի նախշուն.
Մատուռի միջին պարզուկ մի աղբրիկ
Սաղմոս է ասում միալար քաղցրիկ.
Ահա մի քանի դեղջուկ ուխտավոր
Աղոթք են անում այնտեղ գլխակոր.
Այնտեղ է և նա՞, լռիկ պատանին՝
Ականջը տված աղբյուրի ձայնին։
Ամենքի առջև կանգնած է ահա
Գեղջուկ զգեստով ուրուն գիշերի.
Դալկաթույր մոմի՞ նմանում է նա
Դեմքը ողողված լուսով մոմերի։
Եվ ինչպե՞ս խաղաղ, ինչքա՞ն վեհ է նա.
Վախում եմ խոսեմ՝ անհետ չքանա։
Ի՞նչ անուշ էրան, անդորր սրտեր,
Ի՞նչ օրոր հովեր և արծաթ ձայներ,
Եվ ի՞նչ նարինջներ արևաշողի
Ցանում է վրձինն անհաս Ներկողի։
Ականջը տված աղոթքի ձայնին՝
Նայեց աղջկան լռիկ պատանին.—
Որքա՞ն մանկատիպ, անմեղ է և սուրբ.

Կարծես հենց սրբի աղջիկն է մաքուր։
Եվ որքա՜ն օտար և քա՜ղցր էր ինչքան
Զգալն երջանիկ առաջին անգամ,
Թե ծնվեց մի բան աշխարհիս վրա
Տանջող ու անուշ, և սուրբ սերն է դա։

Հ

Անո՜ւշ մի պատկեր եկավ երերաց
Աչքերիս դիմաց։—
Հալվել են, լցվել շուքերն իրիկվան.
Սիրուն հարսի պես ծաղկունք զարդարված,
Աստղերն հրդեհի կայծերի նման
Ցոլում են անհուն երկնքում ցրված։
Հագին սև սավեր՝ թաքուն, հանդարտիկ
Սաղմոս է քաղում մատուռը սրբի.
Քնած են խաղաղ ուխտավոր մարդիկ,
Քաշվում է տերևն անգամ սոսափի։
Մռայլ շուքի պես նստած է ահա
Մատուռի դռան անքուն պատանին
Եվ միտք է անում իր մեղքի վրա,
Եվ իր մեղքն է սուրբ, մի սեր անքննին։
Եվ մութ ծառերի քունը լուռ ու խոր
Վրդովեց այսպես խոսքով սրտախոր.
«Խղճա՛ ինձ, ո՛վ սուրբ, տո՛ւր այս աղջկան,
Եվ քեզ բյուր աղոթք մնամ պարտական»։
Եվ սուրբը եկավ ճերմակ ամպի պես.
Ահա երերաց երես առ երես,
Նայեց պատանուն ահեղ աչքերով
Ու այսպես խոսեց անձայն բառերով.
«Ինչպե՞ս սիրեցիր դու իմ աղջկան,
Նրան, որ մաքուր և սուրբ է այնքան»։
«Ների՛ր ինձ, ո՛վ սուրբ, մրմնջաց տղան,
Այդ սի՛րուս սիրեց. դու պատժիր նրա՛ն...»։

Սուրբը

Երբ սիրաց սիրեց՝ դե՛ թող չմոռնա.
Ու մեկ սիրելով՝ այրվա՛ծ միշտ մնա։
Սիրիր իմ կույսին. բայց լավ իմանաս,
Որ մի հաստուցում հետո պիտի տաս։

Պատանին

Հազա՛ր դառը վարձը կտամ քեզ հետո,
Հազա՛ր դառը մահ՝ ոտներին սիրտ ...
Թող իմ կյանքից ետ դժոխք դնամ ես.
Միայն տո՛ւր այդ սերն, աղաչում եմ քեզ։

Սուրբը

Դե՛ սիրիր նրան, մեղավո՛ր սիրով,
Թո՛ղ քեզ լինի նա. իսկ վարձդ հետո ...

Հոսեց մի ղով հով սրբի անտառից
Եվ քունը փչվեց պատանու աչքից։

Զ

Անուշ մի պատկեր եկավ երերաց
Աչքերիս դիմաց։
Ահա մի բացատ սրբի անտառում,
Միջին արևի մի լճակ ոսկի.
Քայլում է այնտեղ մի զույգ վառվռուն.
Հավքերի նման բռնված խոսքի։
Մեկը աղջիկն է՝ լուսեղե՛ն, երազ,
Մյուսն երազող տղան դեռահաս ...
Արևն իր ոսկի թելերը փռած
Ոստայնի նման որսում է նրանց։
Ա՛խ, այնպե՛ս անուշ քայլում են, խոսում,
Ինչպես ամեն բան քաղցր է երազում։
Ա՛խ, ո՞ւր եք սահում, ամպե՛ր-կարապներ,

Ո՞ւր եք սողոսկում ոսկեթել շողեր.
Ինչո՞ւ իսկությամբ հեռու եք ինձնից։
175 Ինչո՞ւ եմ վախում՝ ցնդեք իմ ձայնից։

Է

Տխուր մի պատկեր եկավ երևաց
Իմ հոգու դիմաց։—
Վերջին օրերիս, տարիքով հիվանդ
Ընկել էի ես անտառն հնավանդ
180 Եվ պտրում էի մի կորուստ անդարձ,
Անգին մի կորուստ,—անցյալս կորած։
Ա՜խ, ո՞ւր հոսեցին այն օրերն անուշ.
Եվ ուր չքացավ արծաթն ամպերի,
Նարինջն արևի, լուսնակը մեղուշ,
185 Փրփուրը մարգրիտ քրանած ջրերի.
Եվ խոսքով՝ նման աշնան սոսափի՝
Դիմեցի ահա վշտացած սրբին.
«Ա՜խ, ո՞ւր ես, ո՜վ սուրբ, արի՛, ստացի՛ր
Քո վարձդ ահեղ, վրեժդ սիրո.
190 Դե բե՛ր դժոխքիդ տանջանքը անլուր.
Բե՛ր այդ էլ կրեմ ոչ մեռնեմ հետո»։
Ա՜խ, ի՞նչ դառն է սա.—անցյալի դռան
Անհուն ափսոսով հիշելը իրան.
Հիշելը իրան՝ անմեղ պատանի
195 Եվ մի աղջկա հրեշտակ նազանի։
Բայց զո՞ւր էի ես կանչում իմ դարնան՝
Անտառ լցնելով երգերս ունայն.
Չկար պատասխան, և սուրբն էլ չկար,
Միայն ե՛ս էի՝ տխուր ու տկար։

200 Վեր կացա վշտով, ընկա հուսահատ
Այն շքեղ անտառն՝ այժմ մերկ, գունատ.
Արևն էր հիվանդ իմ հոգուս նման՝

Ներկում անցյալիս լուսահետ ճամփան։
Զգիտեմ հանկարծ տեսի՞լք դնացի ...
Մի ձայն ականջիս հնչեց կանացի.
Այնպես մե՞ղմ էր նա, սրտալի՞, քնքուշ,
Կարծես մանկության մի երգ էր անուշ։
Աստվա՛ծ իմ, ահա՛, ահա նա՛, նրա՞նք.
Ե՞ս՝ այն պատանին, նա՞՝ կույսն անապակ.
Գնում են հուշիկ իմ կշտով, մոտի՞կ,
Եվ մեղմ ծվվլում օդում հանդարտիկ։
Ահա իմ կույսի մազե՞րը խարտյաշ,
Աչե՞րը՝ աստղեր, երե՞սը մատղաշ ...
Կարծես թե սա չէ՞ր երբեմն իսկություն,
Այլ մի վեհ հեքիաթ, շքեղ պատմություն։
Լսի՛ր ինձ, մի բա՞ռ, անո՛ւշ պատանի,
Խղճա՛ ինձ, լսի՛ր, հեքիաթի՛ աղջիկ.
Մի անգա՛մ գոնե դեմքդ նազանի
Շրջի՛ր դեպի ինձ, տո՛ւր լույսդ քաղցրիկ։—
Ա՛խ, այդ պատանին, որ չի նայում ինձ,
Որ չի տալիս ինձ մի շող իր աչքից.
Ես չե՞մ միթե նա, նա չե՞մ միթե ես ...
Աստվա՛ծ, կարո՞ղ է մարդ փոխվել այսպես։

Եվ քե՞զ եմ միթե սիրել մի դարնան,
Ի՞մ սեր, աչքի՞ լուս, ի՞մ ձայն փրկության,
Քե՞զ եմ, լո՛ւյս աղջիկ, մի շող տուր կյանքիս,
Նայի՛ր մի անգամ՝ թող մեռնեմ հանգիստ ...

Բայց, ա՞խ, չեն լսում... Ես ո՞ւր, նրանք ո՞ւր ....
Ես՝ անշուք մոխիր, նրանք՝ փայլուն հուր։

Սուրբը

Եվ քեզ նրանցից չկա՞ սփոփանք.
Եկա՞վ հատուցում, եկավ տառապանք.
Եվ սա՞ էր դժոխք.—տեսնել տեսլի մեջ
Անցյալը կյանքիդ՝ արդեն կյանքիդ վե՞րջ ...

ԴԵՊԻ ՏԻԵԶԵՐՔ

Ա

Տեսե՞լ եք դուք էն շահիրին,
Նա՛, որ գալիս հին դարերից
Ականատես հին ազգերին
Խոսում է և ծիլ ազգերից։
Գուցե ասեք թե ո՞վ տեսավ
Էս անցքերը դյուցազնական.
Գուցե ասեք թե ո՞վ ասավ
Էս երգերը հեքիաթական.—
Բարձունքներո՞ւմ Հինդուքուշի
Էս երգերին ականջ դրին,
Թե՞ բովերում Միջագետքի՝
Մոտիկ հպարտ Կովկասներին։—

Եթե հարցնեք՝ մենք կգնանք
Էն դաշտը հին Արարատյան,
Ուր կանգնած է երկնահասակ
Մասիսը ծեր, հնադարյան։
Կանգնած է նա իբրև արձան
Երեք անհուն աշխարհների.
Նրա մոտով եկան անցան
Ազգերը դու հին օրերի։
Նրա գլխից Նոյեն բերավ
Կենդանություն ու մարդկություն,—

Ու էն դաշտի միջում դրավ
Է՛ն առաջին օջախն ու տուն։

25 Նոյեն էր էն շահիրը հին
Էս երգերի դյուցազնության
Նա՛, որ տեսավ էն առաջին
Առավոտը մեծ մարդկության։

Դե՛, լսեցեք, որ չհարցնեք
30 Թե ո՞ր գրքից արքաների,
Ո՞ր աշխարհի հեքիաթներից
Եկան վեպերն էս ազգերի։

Բ

Երբ որ Նոյեն կրակ արավ
Տաքացրեց աշխարհն էլի,
35 Երգեց՝ ձեռին գինի ու գավ
Երգն առաջին հույսերով լի,

Երբ որ ապրեց ու մոռացավ
Տարիների թվերն անվերջ
Թոռի ծոռի հաշիվն անցավ
40 Արարատյան օջախի մեջ,—

Կանչեց իր մոտ որդիներին,
Սրանց բոլոր թոռնիկներին,
Ու մարդկության էս ակներին
Էսպես դարձավ ու խրատեց.

45 —Է՛հ, ծերացա՝ ինչ երկրի հող՝
Ճերմակեցի Մասիսի պես.
Ոնց տեսնում եմ չմոռացող
Մահի մոքից ընկել եմ հս։

Ես ինձ կլսամ շահիրության ...
50 Դուք ապրեցե՛ք ու բազմացե՛ք,
Լցրե՛ք դաշտերն Արարատյան,
Միայն չլինի՛ հեռուն ցրվեք։

Եվ այսուհետ որ չմոռնաք
Ձեր տապանի վեպերը հին՝
55 Բան ու գործից երբ որ դառնաք՝
Արիք լսե՛ք ձեր շահիրին»։

Ականջ դրին ու ... խոստացան
Խոսքը պահել ծեր շահիրի,
Ելան խումբ-խումբ ու հեռացան
60 Ամեն կողմերն էս աշխարհի։

Ու էստեղից մինչև Մոն-Բլան,
Մինչև Նոյեն Սիահ-Պոշի,
Մինչև թախտը Սողոմոնյան
Աժդահիցեղ Հինդուքուշի,

65 Տապանի վեպն հետներն առած՝
Ճամփա ելան տոհմերը սեգ,—
Ով Հույսինն էր՝ դեպ Արևմուտք,
Ով Ոչնչին՝ դեպ Արևելք։

Մինը ափերն էն խաղաղի
70 Շինեց մահիճ, շուրջը պատեր,
Խորհրդածեց իր Նիրվանան,
Քունը տարավ, քնեց դարեր։

Մինն էլ գնաց էնտեղ, ուր գոռ
Մրմռում է Մեշասեքեն,
75 Ուր Ամազոնն հոսում է խոր
Երկնքի հետ օվկիանի դեմ։

Մի բազուկն էլ գնաց հախուռն
Ու դարբընեց իր ցեղերով
Աֆրիկան մեծ, խավարակուռ՝
80 Բերբերներով, նյամնյամներով։

Ծուխ ոլորվեց Տեռոններում,
Կղզիներում օվկիանական,
Ծուխ ծառացավ Սկոտներում,
Սառույցներում ասատանդական։

85 Շենացրին, ձենձընեցին,
Ուրախացրին աշխարհ-արար,
Բազմանալով ջոկնըվեցին,
Ու... Խորթացան հետո իրար։

Գ.

Մնաց մենակ շահիր Նոյեն
90 Լեռնադաշտում Արարատյան,
Ու սպասեց շահիր Նոյեն
Թե գան իր մոտ, թե երևան։

Տեսավ չիկան՝ իր սազն առավ
Գնաց ընկավ արար-աշխարհ,
95 Թափառական կմախք դառավ
Ճամփաներից երկա՜ր-երկա՜ր։

Եվ ո՞ւր չեղավ շահիր Նոյեն՝
Այցելելով ամեն մեկին ...
Ժամանակը ըսպիտակեց
100 Գետանման նրա միրքին։

Բայց ոչ սևերն էն Աֆրիկի,
Դեղինները Չինա միջում,

Ոչ կարմիրներն Ամերիկի
Չէին նրան էլ ճանաչում։

105 Տեսավ յանկուն, տեսավ հինդին
Պրերիաներում, պամպասներում,
Տեսավ ռուսին, տեսավ չուդին
Տունդրաներում, ստեպներում։

Ու հարցրեց. «Ո՞ւր եք գնում»։
110 —Մենք գնում ենք մեր արտը նոր։
Ու հարցրեց. «Ո՞ւր եք գնում»։
—Մենք գնում ենք անտառը խոր։

—«Դուք չե՞ք գնում ձեր արտը նոր,
Դուք չեք գնում անտառը խոր,
115 Եվ չե՞ք գնում սար ու ծովեր,—
Դուք գնում եք Մասիսն ի վեր...»։

Ու սազը հին բարձրացրեց՝
Հնոց երգեր մեջը պահած,
Օդի միջին տարավ բերեց,
120 Ու հին ձայնով մին որոտաց։

«—Է՞յ, ո՞ւմն է դուռն էս աշխարհի,
Էն ո՞ր ցեղին չկա էլ վերջ,
Էն ո՞ր ազգին պիտի լինի
Մասիսների շուրջը ու մեջ։

125 Ապա տեսնեմ ո՞վ է գալիս
Անվախների ահեղ ճամփան.
Էն ո՞վ կգա դեպի Մասիս
Ասելու մեզ իր վերջաբանն։

—Սլե՞ք, ասին ազգ ու ազինք,
130 Գնանք էնտե՞ղ բանանք մեր վեճ.

Գնանք էնտե՛ղ ասենք, թե ում
Պիտի մնան փառքերն անվերջ»։

Դ

Ու էն բոլոր աշխարհներից,
Ուր հին զարմեր կային արի,—
135 Կովկաս քարի սառույցներից,
Ստեպներից սկյութների,

Ավազներից եգիպտական,
Աղմուկներից Միջերկրի՝
Գորգոռալով ելան եկան
140 Աղգ ու աղինք զոռ ու արի։

Եկան ինչպե՞ս... վե՞հ, ալեհե՞ր,
Ականատես վա՞ղ օրերի,
Եկան ձայնեն ձայներով ծեր
Մեծ ապագան մեծ աղգերի։

145 Եկան տեսնեն Արարատյան
Հին օջախը դաշտի միջին,
Ուր որ լավեց նոր մարդկության
Կանչերը թարմ ու առաջին։

Ծերուկ Նոյեն էլ իր սազն առավ,
150 Գնաց նստեց Մասսի քարին,
Մասսի քարին, ամպերի մեջ,
Ճերմակ՝ նման էն ամպերին։

Ե

Ու Արազի հնոտ ափին
Բացին մի լայն հրապարակ.
155 Պաշարեցին Նոյե պապին
Էն աղգերը բոց ու կրակ։

Ու ցույց տվին Մասիսն հսկա,
Աշխարհի մորն արծաթահեր,
Ասին՝ «Թող սա՛ կանգնի վկա,
Թե ո՛ր ազգը կդառնա տեր»։

Ու նստեցին ծալապատիկ՝
Ասես ամպեր տեղվորեցին,
Ու խատուտիկ, պտպտուրիկ
Վիշապի պես նախշվեցին։

Բայց ո՞վ ներկեց, էն ո՞վ ծռեց,
Սրանց դեմքերն այլակերպեց,
Մի հոր որդիքն այլափոխեց,
Որ խորթացան իրար էսքան։

Նայի՛ր սրանց... էս նաշխունիկ,
Ազգի ազգի կապաններին,
Էս շիկափոկ շնքմեքներին,
Ոսկեկարած չալմաններին։—

Կարծես հիմի պիտի ծփար
Ծափեր համուռ մի հաշտության,
Կարծես հիմի կբռնեն պար
Հավերժական ուրախության։

Կարծե՞ս հիմի... Սակայն չզուր—
Իրար ոսոխ՝ իրար դիմաց
Բացին մի վեհ հազարլեզու
Էն ծեր դաշտում՝ ազգերի բեմ։

Ու նայեցին ազգերն իրար
Սևամորթի արաբներին,

էն դեղնավուն նողայներին
Ճերմակադեմ չերքեզներին ...

185 Մեկ էլ՝ ահա տրտնջացին.
«Էս ի՞նչ անկարգ ու ղավռան՝
Եկան էսպես խռնվեցին
Մասիսների մեր հին դռան։

Սրանց շենքսին, սրա՜նց մտիկ ...
190 Էս ո՞վքեր են սիրիացին,
Ի՞նչ են ուզում հայ ու տաճիկ,
Թաթար-մաթար, էս վրացիք»։

Ջ

Ու ազգերի էս անտառից
Բուքեր տեսած գելի նման,
195 Իր դաշույնի սառ աչքերով
Ելավ թաթար դեմ-հանդիման.

«—Էդ ո՞ւմ վրա մեծաբերան
Ղավռացիք դուք ձեր միջում՝
Լեզուներդ գազ ու գերան.—
200 Դուք թաթարի՞ն չեք ճանաչում,

Հարցո՛ւմ արեք կիրգիզներին,
Ջունգարներին, կալպակներին,
Ջարթեցրե՛ք իմ Բայքալին,
Թող նա՛ ասի՝ ով էր թաթար։

205 Բուքի նմա՜ն պրծան եկան
Հորդաներդս Բայքալն ի վար,
Բուքի նմա՜ն թափառական
Հայրենիքներ փոխելով հար։

Ու ծառացան Եվրոպն ի վեր,
210 Զարկին նրա կրծքին հսկա,
Ու հա դառնալ էս բնավեր
Հորդանիրին երբեք չկա։

Զեն տա՞մ Թիմուր-Չինգիզխանին,
Ու վեր կենան հորդա-հորդա,
215 Զարթեցնե՞մ չար Բաթուին՝
Աշխարհ ու հող փախչի երթա»։

Ծով ազգերից մի ուրվական
Արձանացավ թաթարի դեմ.
Ու ազգերի աչքերն ընկան
220 Էն պատկերին խոժոռադեմ։

«—Իսկ արաբի՞ն ինչ ես անում,
Խոսեց ուրուն Արևադարձի,—
Թե՞ աշխարհը է՛լ չի տանում
Մի հատ դոնե արաբացի։

225 Գիտե՞ս ուր է սիրտն Իսլամի
Կամ գլուխը նրա հպարտ.—
Գնա՛, հասնես՝ սիրտը-Մեքքան
Եվ գլուխը դու Սամարկանդ։

Ելնե՞մ մին էլ հրով սրով,
230 Դաշտի նման, համրատատան,
Բանամ դարպասն էս աշխարհի
Հեղեղի պես քանդեմ երթամ»։

Հանկարծ գունատ, ոխակալած,
Գերեզմանից ելածի պես,
235 Ինչպես մի մարդ օձի կծած՝
Թռավ տեղից հրեան վեր։

12—179

«Բա Իսրայե՞լն. ասավ Հրեան,
Իսրայելը կորչի գնա՞,
Փարավոններ, բուրգեր տեսած
240 Իսրայելը անհետանա՞։

Եհովան չէ՞ր խոսեց ինձ հետ՝
Սահեղասաստ բարբառելով,
Հազարամյան շառա՞վ Իրան
Սպասում ես դիմանալով։

245 Ավազ-ավա՜ղ կհաշվեմ ես
Դանդաղ օրերն Իսրայելի,
Մինչև հատ-հատ կգա Հրեան
Ելնելու դեմն իր Փրկողի»։

Էս որ ասավ՝ մռայլվեցին
250 Մեծ-մեծ գետերն էն աղգերի,
Հետո քահ-քահ ծիծաղեցին
Ջրվեժներով ծիծաղների։

Ե՞ս կմնամ-գոռաց ղպտին,
Ե՞ս, կռնչաց սիրիացին,
255 Ե՞ս, հոխորտաց ասպետացեղ
Հպարտ կանգնած սեղ վրացին։

Ծիծաղ գնաց, և ի՜նչ ծիծաղ,
Բյուրաբերան, օվկիանակա՜ն.
Եվ գոռոցներ ուրախ-ուրախ
260 Թափառեցին ու ետ եկան.

Ու նստած է Նոյեն հպարտ
Էն աղգերի ամպի միջում
Ու նայում է ծեր ու հանդարտ
Թե աղգերը ո՞նց են վիճում։

265 Ու վեր կացան դեպի Նոյեն
Գուշակները էն ազգերի,
Բարձրացրին ձեռքերը ծեր,
Որ նա իրենց դատը կտրի.—

«Զա՛րկ մի անգամ քո հին սազին,
270 Զարկ ու կտրի՛ր կռիվն ու վեճ.
Թող ամենքին քո սազն ասի՝
Ո՛ւմն է Մասսի շուրջը ու մեջ»։

«—Ես չե՛մ զարկի իմ հին սազին,
Ես չե՛մ կտրի ձեր խոսքն ու վեճ,
275 Ժամ չէ՛ դիտնալ՝ ում կմնա
Ձեր Մասիսի շուրջը ու մեջ»։

Ը

Մի անծանոթ ազգ էր գալի
Հյուսիս կողմից ամպակուտակ,
Ծովի նման ցոլք էր տալի
280 Ձենք ու զրահն արևի տակ։

Հետ գալիս էր, հետը լցվում,
Ինչպես գային աշնան մուժեր,
Եկավ քաշեց սանձը ձիու
Կանգնեց որպես մթին գիշեր։

285 Ո՞վ է էս ազգն օրհասական.
Հարցում արին ազգ ու ազինք
Ու իր բարձրից սլավական
Եկվորն էսպես խոսեց սաստիկ.

«—Ի՞նձ ես ասում, թե ո՞վ եմ ես.—
290 Դե ե՛լ, անցի՛ր դաշտերս հազար,

Գնա՛, գնա՛, թե որ հասնես
Զուգչանների աշխարհը սառ։

Ո՞վ է տերը չուվաշների,
Բաշկիրների, կիրգիզների,
295 Ո՞ւմ առաջ են ետ ետ քաշվել
Տերերը դոռ Ալթայների։

Ազգ ու ազինք ճամփա կտան,
Որտեղից որ ռուսը հոսի
Ու փառքերից սլավի տան
300 Մութ Աֆրիկան դեռ պիտ խոսի»։

Պապանձվեցին ազգերը չորս դին
Ինչպես անտառ փոթորկից ետ,
Ամպերի պես լուռ ու մթին
Ընկան իրենց մոքերի հետ։

305 Ու նայում է էն ամպերից
Նոյեն հպարտ, ամպահասակ
Ու ազգեր է տեսնում բարձրից
Որ չի տեսել և ո՛չ մի ազգ։

Թ

Ամպե՞ր ելան հորանջելով
310 Դանուբական մշուշներից,
Թե՞ քայլ առան տատանվելով
Հսկա դևեր մութ աշխարհից։

Ճակտին դրին ձեռքերը ծեր
Ազգ ու ազինք Արևելքի.—

315 Սա ի՞նչ ազգ է բխեց էլի
Հորիզոնից հանկարծակի ...

«—Դարձե՛ք»,—ասավ՝ աչքերն հեռուն՝
Ռուսը՝ արծիվն հպարտագին.
Եվրոպն է դա, մահ է փնտրում
320 Սլավական պողպատ ձեռքին։

Օրորվելով, տարածվելով
Անդունդներից վերև եկան
Յոթն եղբայր՝ յոթն տիտան—
Յոթն ազինք հսկայական։

325 Ջա՜նգ ու զրանգ, դա՜նգ ու դրա՜նգ,
Քարվանի պես շարան-շուրան
Դմբդմբալով եկան նրանք
Արևելքին դեմ հանդիման։

Ու նայեցին սպառնալից
330 Արևելքին յոթն տիտան։
«—Ո՞ւմ աշխարհն ենք բաժնում էդտեղ»—
Որոտացին յոթնեքերան։

«—Ո՞վ կմնա... Ե՛ս կմնամ»—
Գոռաց հպարտ Գալլը հսկան։
335 «—Ո՛չ, թե մնամ՝ ե՛ս կմնամ»—
Խոսեց ուրուն տևտոնական։

Առաջ եկավ Անգլ հսկան
Մառախլադեմ ինչպես օվկիան.—
«—Ի՞նչ, պարում ենք ու չենք դոնում
340 Աշխարհի տե՞րն հավերժական ...

Աղջամուղջից օվկիանների
Գալիս եմ ես ուժը բազկիս

Ու գնում եմ անհայտն հեռու
Որ գրել է գիրը ճակատս»։

345 Գալոց ռազմեր մրմռացին
Խոսքերի մեջ նոր ազգերի
Ու ամենքը պատրաստվեցին
Կոտրել դարպասն էս աշխարհի։

Ո՞վ է, ասին, ազգը ձեզնից,
350 Որ ապրում է՛ հնուց էստեղ.
Առաջ եկավ էն ազգերից
Հայը տոկուն ու հնացեղ։

Սլավ եկավ իր հին անից
Էն աշխարհից եկածի պես.
355 Ու նոր ազգերն իրենց բարձրից
Հարցում արին նրան էսպես.—

Էն ի՞նչ անդունդ ամենակուլ
Ասում են կա էս մեր ճամփին,
Որ քաջերին զցում է դող
360 Օրհասական իրեն ափին։

Ողջույն տվեց հայը նրանց
Ու հեզ խոսեց հանդարտաբան.
—Խաղա՜ղ կացեք, թող մի սրտանց
Երգվի երգը խաղաղության։

365 Թող իր թառից Գալլը խոսի,
Նա աքլորն է մեր մարդկության,
Թող օվկիանում լայն օրորվի
Ծովում ծնած Բրիտանիան։

Թող Տևտոնն ու Ռուսն էլ պահեն
370 Կշռությունը Եվրոպայի,

Որ չթափվի Եվրոպն Ասիա,
Տակով անի տունն ազգերի։

Բայց թե ճամփան դուք փնտրում եք
Անվերադարձ, օրհասական—
375 Սա՛ է ճամփան, ուր կանգնած եք,
Անցնելու են ովքեր եկան»։

ժ

Քանդեց Նոյեն իր սազը հին,
Ոսկելարած ու լիակուրծ.
Լարերը դեռ դողում էին
380 Երգերից վեհ և հինավուրց։

Ու երբ լսեց ամբոխը մեծ
Նման անհուն ստեպներին,
Սրտատրոփ երբ սպասեց
Նոյի վերջին պատգամներին՝

385 Զարկեց սազին շահիր Նոյեն.
Զարկեց ինչպե՞ս.—ինչ փոթորիկ.
Ու ճոճելով սազը օդում՝
Թունդ որոտաց ինչպես մրրիկ.—

Ողջո՞ւյն, ազգե՛ր, դուք մարդկության
390 Գետե՞ր, ծովե՞ր մեծ սրտանի,
Ձեր կռվի մեջ հավերժական
Դուք որդիներ մի Անհունի։

Գիտե՞ք թե ո՛վ կմնա էստեղ ...
Եվ ոչ մեկիդ չկա մնալ.
390 Կմնա մի ազգ հաղարացեղ,
Հազարվտակ, հազարծավալ ...

Գիտե՞ք թե ով կմնա էստեղ ...
Է՜հ, շատ գետեր դեռ պիտի գան,
Գոռան, լցվեն անդունդն ահեղ
400 Հաղարվտակ մեծ մարդկության.—

Մինչև լցվի բերնեբերան
Մեծ մարդկության օվկիանը մեկ,
Ու ամենքը մեկտեղ կերթան
Դեպի Ինքը՝—մե՜ծ Տիեզերք ...

(ՀԱՏՎԱԾ ՊՈԵՄԻՑ)

. . . . . .

Օրն էր սև օր, մո՜ւթ էր բոլոր,
Արև մարել,երկինք խոլոր,
Բոթ բոթեցին հայոց երկրին,
Ափսո՜ս ասին մեր աշխարհին,
Ասին եկավ ձեր սև գարուն,
Դաշտեր, պիտի ծաղկեն արուն,
Պիտի լռեն հով ու թռչուն,
Պիտի մնչեն սարեր սիրուն,
Պիտի քաշեն պաղ-պաղ սրին,
Ձեր նախշունիկ աղջիկներին,
Լավ ու շուշան ձեր հարսներին,
Կորիճ մատաղ տղաներին։

Զորք թափեցին քաղքի բոլոր,
Շուրջ փաթթեցին սև սևավոր,
Մեջ կանչեցին քաղքի մեծին,
Մեծին, փոքրին ողջ ժողվեցին,
Ասին բերե՜ք ձեր կորիճներ,
Թափենք նրանց կարմիր արուն,
Հանենք նրանց տաք սրտիկներ,
Փորենք նրանց աչքեր սիրուն ...
Խաբով տարան բանտեր լցրին,
Դրսև տարան սև գիշերին,
Սրեր շողաց գլխներին,—
Ափսո՜ս մեր ծիլ տղաներին։

25 Է՜յ սև արև, հայի՜ արև,
Արո՜ւն կտրես դու մեր վերև.
Բա չե՞ս տեսնում էս ծով արուն
Լցրած տանում գետն ու առուն.—
Էս ծերերի արունն է սև,
30 Էս կույսերի սրտիկն է թև,
Էս կարիճի սրտիկն է խև,
Էս հարսներինն ալ ու նախշուն,
Ելավ թափվից մեր սրտերից,
Կուրանալու մեր աչքերից,
35 Ափսոսալու մեր կյանքերից,
Մեր աշխարհից սև ու աշուն։

Է՜ն, դուք հեռո՜ւ հայի լաճեր,
Քի՞չ էր միթե, հայի՜ քաջեր.
Ձե՞ռ չունեք դուք, ո՞տ է ձեզ պետք,
40 Սո՞ւր չունեք դուք, զնդա՞կ ու տեգ.
Ո՞ր օրվա եք, ելե՜ք, եկե՜ք,
Թևե՞ր չունեք, առեք թռե՜ք.
Ա՜խ, մեր քաշած ցա՜վն է հե՜ռիք,
Սո՜ւդն է հերիք, մա՜հն է հերիք.
45 Թե մենք քար ենք՝ քար չէր դիմնա,
Թե մենք ծով ենք՝ ծով չէր մնա,
Քարն է՜լ ասավ, ծովն է՜լ ասավ,
Մարդ, Աստվածն էլ—հերի՜ք, հերի՜ք ...

<ՀԱՏՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՊՈԵՄԻՑ>

Մթնա՜ծ է հեռուն երկիր մի խոժոռ.
Այդ լոռու հնոց աշխարքն է անդորր,
Որ անդունդներով դժոխքներն իջած՝
Գագաթներ ունի ամպերից կախված։
5 Եվ ձորումն ահա այն անդնդախոր,
Ուր հին հուշերով մթնա՜ծ, մռայլվա՜ծ՝

Հին հին մատուռներ նայում են բոլոր,
Լռում են տխուր խաչքարեր բեկված,
Այն ձորում անտակ, ուր դեղնած հնրսեն՝
10 Դեբեդն է ֆշշում ինչպես մի նետ օձ՝—
Եկել է քարին խնդրել ապավեն
Խեղճի՛կ, ահառա՛ծ ժողովուրդն Հայոց ...

Անդնդում արդեն սողում էր մշուշ,
Եվ օրը դառավ տարաժամ և ուշ.
15 Մինչդեռ թինկ տված այդու մոտերքին՝
Երկու պահապան լուռ հսկում էին ...

Մոտիկ ժայռի տակ, ուր կար սառն աղբյուր,
Մի խե՛ղճ փոխանորդ տանջված մեր Տերի
Կարդո՛ւմ էր տխուր, երգո՛ւմ էր տխուր,
20 Կնո՞ւնք ուներ նա երկրիս նոր հյուրի։

Մթնում երկու մարդ կանգնել տխրամած՝
Ունկընդիր էին՝ ինչպես խղճալի
Գանգա՞տ էր անում նորեկն առ Աստված,
Որ վա՞ղ իմացավ ցավերն աշխարհի ...

25 Եվ ո՞ւր եկավ նա այս տունն անուրախ,
Ուր մահը «էրնի՛կ» և կյանքն է «ավա՛ղ»,
Ուր մարդն ալեկոծ, թշվա՛ռ ու անօգ
Ժայռին է պատմում իր վիշտն ու մորմոք ...

Բայց սև ժայռի տակ, ուր կար սառն աղբյուր՝
30 Ահա խավարում մի մոմ ժպտադեմ՝
Որպես հավատի ուրա՛խ մի սուրբ հուր
Ժպտո՛ւմ էր երկրիս ցավի, մութի դեմ ...

Տեսան մի մարդ Դեբեդի մոտ
Կանգնել ձորն էր մտիկ տալիս,

35 Կորե՞լ էր նա մտքերի մեջ՝
էն ժայռերի հետ խոսալիս։
Երեխո՞ւց նա զարիբացած
Իր վաթանն էր եկել հիմա,
Թե այս վեհությանը ապշած
40 Մի անծանոթ ճամփորդ էր նա։
Մոտ գնացին ու խոսեցին.
«Գեղջցի ես գեղապետ՝
Գալդ բարի, հյո՞ւր Աստծո ...
Շա՜տ խոսեցիր էս քարի հետ։
45 Եվ ինչքան որ դարդ ունիս դու՝
Թող այնքան օր քեզ ավելնա
Բայց մեր բախտն էր, թե քո մեղը
Դու մեր հյուրը եղար հիմա»։
Ու գնացին քողտիկն ահա.
50 Մինչ կանեին ասողերն աչքով՝
Շո՜ւրջ նստեցին, ուրախ սուփրա
Մտերմի պես իրարու քով ...
Եվ օրհնությունն ումը որ է՞ր—
Նա՛ վեր առավ թասը դինու,
55 Էն թասը շա՜տ երերում էր
Ուշ ծերություն անդորր լռու ...
Ու ոնց ճերմակ ամպի միջից
Կնայեր հեզ աստղը փայլուն,
Նայե՛ց ճերմակ հոնքի տակից
60 Ու խոսք բացեց հեռվից հևուն.—

«Է՞հ, ով որ էս՝ բարո՛վ եկար,
Թե փախած ես—Աստվա՛ծ քեզ հետ
Թե իգիթ ես—կո՛ւռդ դալար,
Բայց մեղ բաժին հանիր դարդիդ։
65 Իգիթին դարդ մի՛շտ կսաղի,
Ոնց որ ամպը էն քարափին,
Բայց կա՞ մի դարդ որ չխոսի,

Ծովի նման չտա ափին։
Ի՞նչ ես անխոս քարայրի պես
70 Մեջդ ժողվել սև ու խավար,
Խոսի՛ր մի բան՝ թե բա՛ն գիտես,
Թե չես ի՛սկ որ անզգա քար...»։

Նայեց տխուր Լոռու ձորին
Մեր դարդիման անծանոթը,
75 Շարժեց գլուխն ու ցած խոսեց
Մարդ չլիներ կարծես մոտը։
«Պատմությունը շա՛տ է սիրել
Խոսալ Լոռու էս քարերից.
Եվ երբ սրանց հյուր եմ եղել
80 էն լա՛վ օրն էր իմ օրերից ...
Ես մեկ իգիթ գիտեմ այստեղ,
Որ իր տանը քաղցր որքան՝
Ռազմի միջին այնքա՛ն ահեղ
Զայն է գցում մինչ Դաղստան.
85 Նրա անվան ապավինած
Իմ ժողովուրդն եկավ Կողբից,
Ես եկել եմ փախուստս ուզեմ
Նրա արծվե թևի տակից»։

Լցրե՛ց թասը ծեր լոռցին.
90 Ասավ՝ Լոռուց Աստված եթե
Իր ողջ տված բարիքն առնի՝
Մեզ էն քաջն էլ բավական է ...
Թող տա՛ Աստված նրան բարի.
Բայց որ ես էլ՝ հնուց որսկան՝
95 Քեզ պես անդին մի որս արի,
Այդ էլ է ինձ շատ բավական։
Բարո՛վ եկար, ասավ, Ալե՛ք,
Այն իգի՛թն է օրհնած մեր մեջ,
Որ արյունոտ կռվի դաշտից՝
100 Ետ է դառնում ամենքից վե՛րջ ...

Մեկ ահավոր գիշե՛ր եկավ
Ու հերսոտվեց այն ձորերում,
Պապանձվեցին գազան ու հավ
Դժոխային էն որջերում։
105 Եվ Դեբեդը խորունկ վշշում,
Գանգատավոր գոռում անվերջ
Մերթ սիրտն հոգնած վեր էր քաշում,
Ու մերթ մարում ձորերի մեջ։

Ու թեք ընկավ Սլեքն ահա
110 Այն գիշերին մութ տալեն,
Ինչպես ուռի թմբի վրա՝
Գլխով տխուր երերալեն ...
Գետի այն կողմ, ուր վերևից
Սև քարափն էր իր միտքն անում,
115 Ահա մարդիկ զրկված տանից
Խարույկն էին զարթեցընում։
Եվ օձացան բոցերն ահա
Լեզուները թոցընելով,
Թռան շողքերն քարփի վրա
120 Շուքերի հետ խաղ անելով։
Խաղում էին, խաղո՛ւմ վեր վեր
Մարդոց դեմքին էն թախծալի,
Ու սարքել էր պար անհեթեթ
Ժայռին նրանց շուքն անճոռնի։
125 Ու անձավներն ինչպես աչքեր
Սաստում էին վերից ահա
Կարծես հերսից կատաղելով՝
Մնում էին մարդոց վրա։
«Շա՜տ կան այսպես մեր աշխարքում.
130 Քարե վանքեր ու անձավներ...
Շա՜տ է մեր ազգն այստեղ թաքուն
Մաշել իր սև՜, դժա՜ր օրեր.
Հա՜, այստեղ է ապրել, ախպեր,

Մեր պապերի պատմությունը...»։
135 Ու խոսում էր ծեր լուրցին,
Ու չէր տանում նրա քունը ...

Մեկ մարդ եկավ մթան միջից
Ցցվեց այնտեղ դևի նման,
Նայեց ուսին աչքի տակից,
140 Ու լուրցիք թունդ վեր կացան ...
Նայեց Ալեքն, արմանք մնաց,
Էն վիթխարի տղամարդին,
Քաջությունն էր միայն գրած
Նրա աղնիվ, էն բաց ճակտին։
145 Քշած ուներ կապեն գոտկին,
Արծաթ կոճակ վրան շարած,
Ամպի նման նետն ու աղեղ
Ինչպես շանթեր մեջքին լարած։

Ու ոնց արծիվ ձայնը արծվի՝
150 Շո՛ւտ կիմանա քաջը քաջին.—
Բարև տվին Ալեքն ու նա
Սառը—վայել միշտ կարիճին...
Ու թինկ ընկած երկու քաջերն
Ամպոտվելով իրար դիմաց՝
155 Ինչպես երկու կաղնու բներ
Մեջները սև՝ մարդում ընկած ...

«Կշեռքն» եկավ, նստած գտավ
Ծեր լուրցուն իր հյուրերով.
Նստած էին կրակի շուրջ
160 Նրա խաղին մտիկ տալով ...

Ու մի զրույց տխո՞ւր ու հին
Մեջտեղ եկավ այն մութ ձորում.

Մինչ Դեբեդը գիշերային
Իր աղոթքն էր խուլ մռլտում։

165 Բայց յուզբաշին թինկը տվել
Մեծ սրտանի Լալվարի պես,
Մեկ ամսվ իջավ ու չքաշվեց
Նրա դեմքին գիշերվանես ...

«—Ա՛յ յուզբաշի, ասին նրան
170 Ինչո՞ւ էդպես դու մթնեցիր։
Ասա տեսնենք էդ ո՞րտեղից
Էլի մի նոր ցավ ճարեցիր։
Մի՞թե Լոռին հիմի ազատ
Չէ՛ ծաղկում վառ քո ձեռքի տակ.
175 Մի՞թե մի հե՛տ եդ էս ածել
Ղազբեգի զորքը կրակ»։

Ասավ Լոռին ազա՛տ է միշտ,
Ա՛խ, սիրո՛ւն է ազատ Լոռին.
Երբ այս երկրից Աստված գնաց
180 Թողեց իր շո՛ւնչն այս վեհ ձորին։
Յալբուզին էլ ու Ղազբեգին
Ցույց է տվել իրենց ճամփան,
Թեպետ Լոռով երջանի՛կ եմ,
Բայց կրծում է սիրտս մի բան։
185 Մեկ ցա՛վ եկել էս կոկորդիս
Սեղմում է պինդ սև օձի պես,
Կես գիշերվա ձորի նման
Մի սև դարդից սևցած եմ ես։
Քանի՞ դարեր միտս են գալիս
190 Հին վաղեմի պատմությունով,
Որ արտասվել քուն են մտել
Հայի բախտն անիծելով։
Մեր ռեսի պես քանի՞ սրեր

Ժանգոտեցին պատյաններում,
195 Կամ միշտ մենակ շողշողացին
Հերոսական մրրիկներում։
Քանի՞ դարեր արտասվաթոր
Դողդողալով ինչպես տերև՝
Սպասում ենք միշտ երկնելով.
200 «Ախ ե՞րբ կգաս Հայի արև»,
Բայց մեկ չեղա՞վ Հայի դատին
Աշխարհովի մի դատաստան,
Կամ թե ո՞ւր էր թնդար մեզնում
Մի ժողովուրդ քա՞ջ, ռազմակա՞ն ...

205 Լսում էին քաջ լուրջիք,
Ու լսո՞ւմ էր ծեր լուրջին,
Վառվում էին աստղերն հեզիկ,
Ու բոլորը խո՞ր լռեցին ...

«Հային Աստվա՞ծ պիտի դատի,
210 Աստվ հանկարծ ծեր լուրջին,
Հայի ճամփան շա՞տ հեռու է,
Հեռո՞ւ մինչև օրը վերջին ...
Բա չե՞ք լսել առակը հին,
Որ երբ Աստված վերջին անգամ
215 Դատի կանչե ողջ ազգերին —
Հայի՛ն կանե նախ դատաստան,
Ես կմեռնեմ ինչպես տերև՝
Դուք ապրեցեք Հայոց քաջեր,
Բայց իմ խոսքին լա՛վ միտ դրեք,
220 Որ մեզ կգա՞ն դարուն օրեր։
Թե կա Աստված ամպերից վեր
Նա Աստվածն է և ձե՛ր ազգի,
Թե ամենքին անե՛ արև
Ձեզ է՞լ արև նա կծագի ...

13—179

ԹԻ-ՆԱ-ԹՈՒ*

Հեռո՞ւն, փերուզ օվկիանոսում, ուր երգերով վայրապար
Իրենց ջրե հայրենիքում ալիքներն են շրջում հար,
Մի կղզի կար զմրուխտավառ, և այդ կղզում երգեցիկ
Վառվռում էր իր ցեղի մեջ քաջ Թինաթուն դեղեցիկ։

Չկար ցեղում Թինաթի պես ազնվասիրտ պատանի,
Նա ծաղկում էր զարդարելով իրա ցեղը վայրենի.
Բոցի նման շքեղ էր նա, աչքերն էին հնոցներ,
Որսի եռև նետի նման մրրկի պես կթոներ։

Հանդես ավեց ցեղը մի օր Թինաթուին ի պատիվ,
Բացեց մեջտեղ հրապարակ ինչպես անտառ մթնախռիվ,
Եկավ հանդես ցեղի արքան զառամացած քայլերով,
Եկավ ցեղի ծեր թագուհին հինհինալով, անքալով։

Ու բաց դաշտում պար սարքեցին հսկայական և հուժկու,
Երգ ձոնեցին հերոսական Թինաթուին ահարկու.
Թռչնափետրով զարդարեցին քաջի գլխի չորս բոլոր,
Առյուծների դասը դասվեց նրա անունն փառավոր։

Վառվե՞ց, գոռաց հանդեսը մեծ, որոտում է ողջ կղզին,
Մրրկվում է պարը հսկա, ոգևորում հերոսին։

---

* Սրա հեռավոր նմանությունն ունեցող մի բան կարդացել եմ Լեոտրնոյի «Բարոյականություն» գրվածքի մեջ և, հասկանալի է, մշակել եմ ըստ իմ երևակայության և ստեղծագործական պահանջների։

Ու մինչ այդ մեծ քեֆի վրա ժպտում են մարդն ու ասված,
20 Մռայլվել է թագավորը դահի վրա լուռ բազմած։

Նստած է նա անդամալույծ, աչքից ընկած, կիսամեռ,
Կյանքի համար մի պատուհաս, մահի համար ծանր բեռ.
Ջուր է գնում մութ աչքերից, թույլ հևում է անընդհատ,
Քայքայվել է ծերությունից, դառել դեղին փտած փայտ։

25 Ցատկից հանկարծ առյուծի պես մատաղ հերոսն իր ցեղի,
Խայտաճամուկ շրջանի մեջ թռավ մի պար կատաղի,
Խոլ ծափերի չափերի հետ ցատկեց ջլուտ ոտներով,
Ու դարձիր-դարձ գալար եկավ բոա-բոա թևերով։

Շանթ է թափում հուր աչքերից, փռփռում է ինչպես բոց,
30 Մարմնի վրա սողոսկում են մկանները որպես օձ,
Պտտվում է թաթառի պես, շողշողում է, կայծակում,
Ծով է դառել, փրփրում է, արագահոս մրրկում։

Նայում է լուռ Թինաթուին, նայում աչքով մթնալի
Արքան՝ դերին չար ծերության՝ ու ծիրանում ավելի.
35 Մինչ իր անգետ գարունքի մեջ թրվռում է Թինաթուն,
Վրնջում է ուրախագին ինչպես նժույգ արոտում։

Եվ թագուհու սև սրտի մեջ եռաց օձը նախանձի,
Երբ որ տեսավ Թինաթուին այդպես ջահել, առնացի.
Մտիկ տվեց իր ձեռքերին, փայտի նման չորացած,
40 Հետո ասավ ծեր արքային ծերությունից չարացած.

«Ի՞նչ ես ճրրում ու լնգլնգում, ի՞նչ ես լորմում ու փտում,
Կարծես կյանքը դո՛ւ ես ժողվում, դողանում է Թինաթուն.
Նայի՛ր նրա ջահելության, դեմքին բոցոտ, կատաղի,
Ի՞նչ ես լորմում... Կյանքի՛ց խմիր, կյա՛նքն է դեղը մեռնողի»։

45 —Լա՞վ ես ասում կյանքի՞ց խմիր—հեգնեց ծերը նախանձոտ,
Բայց դու ե՞րբ ես կյանքը տեսել, հանդում ցանած ինչպես
խոտ...
—«Թինաթուի մեջն է կյանքը—խնդաց կինը ժանտատես,
Նա՛ է ժողվել կյանքը բոլոր անտառներից մեղվի պես»։

Նայեց, նայեց Թինաթուին մահին խաբող մարդը ծեր,
50 Հանկարծ ցատկեց ու խնդմնդաց բորենու պես մեռելկեր,
«Հենց այս դիշեր սպանե՛լ ուզեր նրան քնում պատանի,
Հենց այդ դիշեր բե՛ր կյանքն ըմպեմ, վաղը զարթնեմ կյանքով
լի»։

Եվ պատանուն սպանեցի՞ն... Ու այն կյանքը գեղեցիկ
Դառավ դաժան մի ծերուկի փտած բերանին ըմպելիք,
55 Ամբողջ դիշեր քաջի դամփռը ոռնում էր ղիլ ու տխուր,
Ամբողջ դիշեր ցեղը սպաց այդ ընթրիքից սոսկալուր։

Ու երբ հագավ արշալույսը իր դիպակը ոսկեկար՝
Թինաթուից նրա դռան կարմիր նշան միայն կար ...
Ու մինչ այդտեղ կյանքն էր թափվել իր հոյակապ սափորից՝
60 Օրը դարձյալ գեղեցիկ էր ու նիրհում էր ծերը պիղծ ...

ԴԺՈԽՔԻ ԴՈՒԱՆ

Ա

Մեր ճամփան տխուր, զարհուրիկ ճամփան
Պիտ անցներ այն օր դժոխքի մոտով.
Չգիտեմ, աշխարհում կա՞ այդպես մի բան,
Որ մենք սև դժոխք գնանք մեր ոտով։
Այնպես տխուր օր դեռ չէի տեսել.
Այնպե՞ս էր տխուր՝ չեմ կարող ասել.
Հիշելիս անդամ ինձ այն է թվում,
Որ ինձ սխալմամբ դագաղ են դնում։

Բ

Ծանրամահ երա՞զ, թե՞ մահ արթնությամբ.
Ո՛չ գիշեր, ո՛չ լույս.
Երկնից կախվածը մոխի՞ր էր, թե ամպ.
Ո՛չ մահ, ո՛չ վախճան, ո՛չ կյանք և ո՛չ հույս ...
Ժամանա՞կն հողնեց, ստացավ կաթված,
Տիեզե՞րքն արդյոք դարձավ փլատակ.
Թե դաժան ցավով հիվանդ էր Աստված՝
Պառկած անխնամ իր ավեր տան տակ։

Գ

Օրն էր ձմռան օր. անուժ իրիկուն,
Որ մենք սահմռկած ընկանք ճանապարհ.

Հնոան շարաժանգ մեզ էր մկնագույն՝
20 Ավերակ մի տան ցուրտ կիսախավար։
Ընկանք ճանապարհ աշխարհն ազնտի,
Որտեղից չկա մարդուն վերադարձ,
Եվ եթե մի դարձ նրան էլ ժպտի,
Նա տուն կդառնա ուրվական դարձած։

25 Մեր առջև փռվեց մի մեծ դաշտավայր,
Այնպե՞ս անապատ, այնպե՞ս ողբալի.
Դա ձյուն չէր գեմքին, այլ դաջն շպար,
Սփրթնած դիմակ հակա մեռելի,
Որ մի օր լսեց մի անլուր սև լուր
30 Կատարված այտանդ, թե զաղտնի, այլուր՝
Նայում էր հեռուն անթիթթ, անհագ
Արդեն մեռելի իր աչքով ճերմակ։

Ե

Ո՛չ շունչ, ո՛չ էակ, ո՛չ հույս էակի.—
Մարդկությունն ասես գնացած լիներ.
35 Կամ վերջն էր եկել համայն աշխարքի,
Եվ ողջ մարդկության—լոկ գերեզմաններ։
Հեռացանք ասես կյանքից ու լույսից,
Դրվեցինք արթուն շիրիմների մեջ,
Զրկվեցինք իբրև մեռնելու հույսից
40 Եվ արյունոտվեց մի կոշմար անվերջ։

Զ

Երազ թվաց ինձ իմ կյանքը անցյալ
Եվ ներկան դաժան մի իրողություն։
Կորա՞ն, գնացի՞ն—ծանոթ, բարեկամ,
Դառան սուտ, չեղյալ, ինչ որ տեսած կամ,
45 Ե՛վ գարունը սուտ՝ իր ծաղիկներով,

Ե՛վ իմ սիրելիքն իրենց համբույրով,
Ե՛վ շեղյալ դառան ասողերն ու արև,
Զրույց, քեֆ, մարդիկ, խինդ, սիրո բարև ...

Է

Եվ ինչքա՜ն նրանք թվացին ինձ թանկ...
Այդպես շեղած բան ո՞ւմ զլխին կգա,
Որ երազի մեջ այսքա՜ն ժամանակ
Կարծելիս լինես թե կա, երբ չկա —
Ո՛չ ոսկի առու, ո՛չ արծաթ ամպեր,
Ո՛չ ծաղիկներով հրդեհված հանդեր,
Ո՛չ այն նազելի աղջիկը սիրած,
Որին երգել ես այնքա՜ն դորոված։

Ը

Շարժվում ենք դաշտի պատանքի վրան,
Մտել ենք ասես այն մեծ դամբարան,
Ուր մենք թաղել ենք և՛ կյանք, և՛ աշխարհ,
Որից էլ չկա մի հյուլե, նշխարհ։
Գոնե մոռանա՜ս թե ապրել ես դու,
Ապրել նրանց հետ, տեսել, խնդացել,
Գոնե մոռանաս ձայները մարդու,
Երբ նա էլ շեղած երազ է դարձել։

Թ

Եվ ի՞նչ աշխարքում ավել տխուր բան,
Քան տեսնել մարդուն հուսահատ իսպառ.
Ինչ որ բռնեցինք մեր անխոս ճամփան,
Իմ ընկերներս էլ դառան մունջ, անբառ։
Հարբածնե՞ր էին, շարժուն դիակնե՞ր ...
Դեմքեր չէին այդ, այլ մազաղաթներ,

Կաշիներ անշարժ, գունատ մահով լի,
Կպած դեմքերին մի խումբ մեռելի։

Ժ

Մեր շորս կողմերում մահացած լեռներ
Երկնի գումբն ասես հայցելով անկարդ՝
75 Վեր էին չռել գոսացած ձեռներ
Ու խեղդվել՝ ապրած կիսատ հոգեվարք,
Ու սառել էին իզուր խնդրելով
Աստծուց մի բան, երբ որ վիժվելով՝
Նա ինքն էր այդ գումբն ուրիշից խնդրել
80 Եվ չստանալով հուսահատ մեռել։

ԺԱ

Անկյանք էր այդպես դաշտում ամեն բան,
Լռած էր այդպես կապարի նման,
Երբ որ ոսկրացած մի գետի ափին՝
Մի դյուղ սողաց դուրս ամայի տափին։
85 Այդ հյուղեր չէին, այլ կոտրած դանգեր՝
Մութ մութ ծակերով, փչակ մեջերով,
Մեջերը լցված մահու սև շուքեր,
Գանգի չարծիծաղ սառ ատամներով։

ԺԲ

Մարդի՞կ էին ապրել այս պաղ փոսերում
90 Թե՞ որդեր զաղիր՝ Աստրծուց փախած,
Թե՞ խավար մկներ հենց այս ծակերում
Սև հողը փորել, կրծել են սոված։
Նեխված է նրանց միջուկներն այն սև,
Փտում է նրանց սևությունն ու մութ.
95 Ժանգել է նրանց պատերն անարև,
Կյանքն էլ նրանց մեջ չունի ելումուտ։

ԺԳ

Այս ծխանը սառ՝ նուրբ ծուխ էր մանում,
Ծիծեռն էր այնտեղ սաղմոսում բնում,
Այն դևան առջև կար մի կալ ոսկի,
100 Ուր ծաղիկ հարսներ բռնվում խոսքի։
Ապա մի ջաղաց, որ մահ է աղում,
Ահա մի առու քարի պես կարկամ,
Քարեղե՜ն ծառներ — մի ճյուղ չի խաղում,
Եվ քար են վրան մեղն ու օրն անգամ։

ԺԴ

105 Քա՜ր է ամեն բան, անշարժ հավիտյան,
Քար են ձայներն էլ, քար են հուշերն է՛լ,
Խեղդվող երազի մի անշարժ ատյան,
Նայում է աչքիդ ինչպես չար մեռել։
Եվ սին հովտի մեջ ինչ խո՜ր տրտմություն,
110 Կարծես մարդկությունն այստեղ է լացել
Իր տխո՜ւր, տխո՜ւր կյանքի պատմությունն
Ու անլաց, պարպված ելել գնացել։

ԺԵ

Եվ ո՞ւր են չքվել մարդիկ այստեղից.
Օձե՞րն են շանթող հեքերից ընկել,
115 Մա՞հն է սովատանջ մուրալու եկել
Ու ողջը տարել այս ողորմ գյուղից։
Մարդի՞կ են արդյոք այդ ոճիրն արել,
Մի ողջ ժողովուրդ գաղտնաբար տարել,
Գիշե՞րն են տարել. չտեսնի Աստված,
120 Թե՞ Աստվածն անգամ քշվել է կապված։

ԺԶ

Տխուր շավիղները սողում են չորս դին —
Ուր գնաց վերջին հուսկ ոտը կյանքի —

Եվ հետք չեն պահում, թե ադամորդին
Մի հուշ է գոնե թողնում իր վեպքի։
125 Այնտեղ ջնջված է կյանքի գիրն անհետ,
Չի թողած մի տառ տապանագրի,
Այնտեղ մահն անգամ մեռավ մարդու հետ —
Ոչ գիր, ոչ նշան, ոչ չար, ոչ բարի։

ԺԷ

Ու մենք կանգնեցինք, նայեցինք սառած,
130 Կանգնեց, դադարեց մեր հոգին անգամ.
Եվ սառ կապարն հայացքներս հառած՝
Սկսանք դիտել անկյանք ու անկամ։
Այս գյուղ ավերակ, հեռուն ավերակ,
Ողջ դաշտն ավերակ, ունայն ու անհույս,
135 Կարծես իր դուռը փակում է անշարք
Եվ շուտով մարի պիտի վերջին լույս։

ԺԸ

Դեպի արևմուտք հրեշների պես
Ահա շարված են տեղ-տեղ բլուրներ։
Ու վրան նստած գեհենի մի մեգ,
140 Թունավոր մի շունչ, որ մարդ կխեղդեր։
Եվ մութն էր այն դին շարաշուք մթնով,
Մի հովիտ անհույս գնում էր այն կողմ
Մուտքի պես դաղտնի, ոճրագործ մի տուն,
Ուր սիրտը մարդու չի գտնի ողորմ։

ԺԹ

145 Կարծես փլվել էր ոճորքը երկնի
Եվ վայր էր թափել մոխիր ու սև հող.
Անդ վերջանում էր պարիսպն աշխարհի

Ու դենը—անդունդ մարդկության լափող։
Մի դուռ էր ասես այդ պատում փակած,
150 Մի դուռ զարհուրիկ մի մութ աշխարքի,
Մի մուտք՝ հավիտյա՞ն,—ոչ մի հույս հլքի,
Սրա փեղկն հավետ պիտ մնա անբաց։

Ի

Այդ դռնից մտավ մի ամբոխ անվերջ
Եվ թողեց իր տեղ քարի լռություն.
155 Գնաց որ զարթնի ահեղ մահի մեջ
Եվ քնի ընդմիշտ դժոխք երազում։
Այդ դռնից մտավ։ Մի՛ կանչեք էլ նա,
Ինչպես ժամանակ՝ չունի ընկրկում,
Ինչպես մոռացում, կորուստ կամ հատնում,
160 Ինչ դամբանի մոտ նա մեկ է, մի հե՞տ։

ԻԱ

Ի՞նչ կա այդ մռայլ դռան հետևում...
Գինարբո՞ւք ահեղ, ճիչե՞ր զարհուրիկ,
Գանգերի կաթսա՞ բոցերի բովում,
Ծիծաղնե՞ր դժխեմ, կոծապա՞ր սաստիկ,
165 Կակա՞ն, հայհոյա՞նք, ծեծե՞ր, հրմըշտո՞ւք,
Խոշտանգումներում բորենու խնդո՞ւք,
Թե՞ բյուր ու հազար բերաններ պապանձ
Գերբնական ցավից կարկամ են, սառած։

ԻԲ

Ի՞նչ կա այն ահեղ, զարհուր աշխարհում ...
170 Անդնդախորունկ վիհե՞ր գետնամուտ,
Մահատեղ հոսող դագա՞ղ մեծ ու մութ,
Որի դանգային խոնավ խորշերում

Լցված քրտնակեզ մի հոծ բազմություն,
Կանանց ու մանկանց մի մեծ մարդկություն
175 Մահերով հիվանդ աչքերնին բյուր-բյուր
Ջռել են սառած ու հիազարհուր.—

ԻԳ

Մոլեգին գոչեր, խոշտանգի բառաչ,
Ծնկների ծեծվուք, ճանկռտուք, հառաչ,
Ամբոխվում, խեղդվում, իրար են անցնում,
180 Անեծքներ, սասռոց, մորակում, շառաչ։
Եվ նեղիչները վրեժով դեղնած,
Գուլները թռած կայծակների պես,
Գոռ չարությունից հիվանդ, քայքայված՝
Եռում են չորս դին օձերի նման։

ԻԴ

185 Գույն պղնձյա մի դաշտ է ունայն
Դեմքը հիվանդցած լուսնակի նման։
Որ ձգվում է լայն, կորչում ձիգ ու մութ՝
Վրան ոչ բնակ, ոչ շուք, ծառ ու արտ։
Եվ հեռուն քարե հորիզոններում
190 Բյուր-բյուր կմախքներ բռնած կոծապար,
Ճչալով անձայն, սուտ-սուտ, վայրապար,
Ծափեր են զարկում, փոթորկվում, սուրում։

ԻԵ

Եվ անվերջ մանկանց փախչող կմախքներ,
Մահվան մեջն անգամ անդուլ դարհուրած,
195 Ծնվում են, և դեռ կրծում խենթացած
Հետքից պապղուն խայթող դաշույններ։

ԻԶ

Թռչում է միտքս մութ թռչնի նման
Զարկում է թևերն այդ ահեղ դռան.
Ուզում եմ հասնել ու տեսնել նրանց,
Մի ձա՛յնը գոնե լսեմ ես հեռվանց։
Ու չեմ հասկանում ու խելքս է շաղվում.
Ինչպե՞ս են ապրում մարդիկ դագաղում.
Ապրո՞ւմ են նրանք թեկուզ մշտավիշտ,
Թե՞ դանդաղ մի մահ ձգվում են ընդմիշտ։

ԻԷ

Օ՜ կյանք, տրտմության դու հովի՛տ հավետ,
Օ՜ խեղճ նեղիչներ, ողո՛րմ տանջողներ.
Այս ինչքա՜ն մեծ ոխ ինքներդ ձեզ հետ,
Ի՞նչ ունայն, սև՜ գործ—այսքան արյուններ։
Արդյոք չե՞ք թշվառ տանջվողից ավել
Հենց դուք, տանջողներ և՛ կույր, և՛ անխել.
Եվ արդյոք արքել ինչպե՞ս եք կարող
Այս ձեր տեսիլքի հուշերն հավերժող։

ԻԸ

Եվ սա՛ է պարողն իր երջանկության
Այս մարդուն տանջող մարդկությունն ունայն.
Այս դժոխք հիմնող մարդը ժանտ ու չար,
Որ մարդ տանջելում դառել է հանճար։
Այսքան խոշտանգիչ մի փուչ մարդկություն
Ինչպե՞ս կգտնի էլ երջանկություն,
Քանի ոչ կորցրել, ոչ պարում է այն,
Քանի որ վեհը միշտ խորթ է նրան։

ԻԹ

Ներացավ հոգիս այդ մի օրվա մեջ,
Եվ մի օրը այդ դառավ մի ձի՜գ դար.
Կարծես կարդացի մի գիրք սևաէջ,

Որից արյունս առավ իր դադար։
225 Ինչո՞ւ ծնվեցի ես մարդ արարած.
Ավելի լավ չէ՞ր ծնվեի մի քար,
Քարի քնի մեջ ապրեի սառած,
Մինչև վերջանար տիեզերքն երկար։

Լ

Եվ քայքայվեցի հոգով ու մարմնով,
230 Զմեռած արդեն ես մահն հասկացա.
Ու մին էլ երբ որ ուշաբերվեցի,
Կարծես նոր, տխո՞ւր էակ ծնվեցի.
Էլ պե՞տք են միթե ազնիվն ու բարին.
Ինչո՞ւ է ապրում մարդկությունն համայն,
235 Երբ գործե՞ց, եղա՞վ այնքան դժվարին
Իր համար անբախտ, արդեն անջինջ բան։

ԼԱ

Ուզեցի գոռա՛մ, կանչե՛մ օգնության,
Կանչեմ օգնության ամբողջ մարդկության.
Դա՛տ արեք ասեմ, դա՛տ արեք սրան,
240 Սրա՛ն, ատանջողին՝ իր սև ատան դռան։
Սակայն ո՞ւմ կանչես, ո՞վ լոկ ապարդյուն,
Ո՞վ է այդ եկողն, ո՞վ է մարդկություն,
Արդյո՞ք է սրանց դատելու արժան
Մի ողջ մարդկություն՝ սրանց պես դաժան։

ԼԲ

245 Բայց ինչքա՞ն մոտիկ, ինչքա՞ն էր դյուրին
Երազն երջանիկ մի ուրիշ կյանքի ...
Այստեղ կար թափված մի ժպիտ վերին,
Մի լույսը անուշ, անվերջ գալիքի։

Սա չէ՞ր այն վայրը, ուր լույս օրերում
250 Մի այլ ոգու հետ—ողջ երազատան
Երազը լցված մեր ջինջ աչքերում՝
Նայել ենք ու ջերմ ժպտացել վրան։

ԼԳ

Ու ինչպես ծովում սուզվող հոգնած քար
Ընկա, սուզվեցի մի խոր երազում
255 (Մի՞թե եղել է, էլ մարդ տեսած կա՞ր,
Որ ինքն արթմնի երազն է սուզվում)։
Թե՞ հոգևարքի քաղցրամահ մի թույն
Վախճանի համար նուշ կաթեց իմ մեջ,
Թե՞ հետ ծնվեցի, դեպի արթնություն,
260 Կամ թե աշխարհին բացվեց մի նոր էջ։

ԼԴ

Մի գարուն հանկարծ ծիծաղեց չորս կողմ
Ու փչեց, սրբեց պատկերը տխուր.
Սարերից իջավ կենդանի մի հողմ
Ու մտերմացավ դառավ նուրբ համբույր։
265 Արևածաղկի պես ծաղկեց մի արև,
Ծփաց մի հորդ գետ ոսկեղեն ծաղկանց
Թռավ երգի պես արտուտը վերև,
Ու մի մարդկային երգ լսվեց սրտանց։

ԼԵ

Թնդում է գյուղը հարսանքի ձայնից,
270 Բժժում է գյուղը ինչպես հոծ անտառ.
Գժվում է մի պար ինչպես ծովի մեջ
Անսանձ պտտվող մի ջահել թաթառ,
Ու ջահել տղերք քամիներ դառած,

Վարդ աղջիկ-հարսներ քշվում են, թռչում
275 Փրփուր են կտրում արոտի միջում։

ԼԶ

Նժույգ են դառել—կարո՞ղ ես կապես,
Ալիք են կտրել ելման ու եռման,
Բզզում են սաղեր մեղուների պես,
Դոփում դհոլներ ամպերի նման։
280 Խինդից դողացող դավերը դինու
Ոթվում են ինչպես վիթվող սավերներ,
Գինով ծերուկներ բռնած մեկմեկու
Բոթում են, խնդում դառած մանուկներ։

ԼԷ

Հալչում է փեսան իր հարսի կողքին,
285 Մտքով նրա հետ թռչում սար ու ձոր,
Կանաչ հագուստի տերևի տակին
Թաքչում է հարսնուկն ինչ կարմիր խնձոր։
Շարված են մի կողմ պառավ մամուկներ,
Երջանկության մեջ մեջքները կորցած,
290 Տիկնիկների պես դիտում աներեր,
Գլուխներն թեքում ուսերին, դեպի ցած։

Չորս դին մանուկներ, չորս դին ծաղիկներ,
Թռչում է կյանքը հովի պես թեթև.
Ի՞նչ ուրախություն նրան կհասներ,
295 Նրա թևերին սլացիկ մի հև։
Ահա կույս Մարոն, մտավ ահա պար,
Ոնց նազուկ նավակ ծովի մեջ անուշ.
Ինչպե՞ս է ցայվում, ինչ դյուր սիգապար,
Ի՞նչ հով շորորուն, ի՞նչ ուռի քնքուշ։
300 Թրթռաց լեռներն, թռավ թռչնի պես,

Օրորաց օդում, խաղաց, սլացավ,
Ի՞նչ խաղեր շողշող, ի՞նչ վեր-վեր պես-պես,
Աստղերի ծփանք, ի՞նչ աշխույժ անցավ։

Ահա և Կարոն, երազող Կարոն,
305 Որին սիրում է այն երազ Մարոն,
Յոթը վերք ունեն երկուսն էլ կրծքում,
Յոթը տարի է չեն իրար գրկում։
Զը՞նգ, խփեց Կարոն խանչալը թողկին,
Ճոճվեց բարդու պես հասակը սլացք,
310 Երդացավ, հասավ Մարոյի երդին,
Եվ երկնում իրար տվին մի-մի պագ։

Երկինք է թռչում, երկի՞նք ամեն ինչ
Եվ հովը, և ե՛րգ, և բարդին, և խինդ,
Թռիչ է այստեղ, հրդեհված թռիչ,
315 Թևավորների երամ սրտաթինդ։
Խնդում են այստեղ մի խինդ անհատնում
Եվ չեն իմանում թե ինչ են անում.
Ինչպես հով անխել, ինչպես լույս թեթև
Գի՞ծ՝ ցնծության պես, աղատ ինչպես դև։

320 Հանկարծ արթնացա երկյուղից մահի.
Որպես խափանված մի չար արարքով.
Լռեց ջաղացը, և ես զարթնեցի.
Եվ տեսա պապանձ ընկերներս իմ քով։
Այնպիսի մի ցավ ճմլեց իմ հոգին,
325 Որ սիրտս մտավ սառույցը դժխեմ
Ու լռեց, կարծես ահոտ իմ աչքին
Կրկին, մահս դար, որ նորից մեռնեմ։

Նայեցի չորս դիս. նույն կոշմարն անհուն,
Անփոփոխ որպես անգութ շիրմաքար,
330 Որ տակն է առել սրտիդ սիրելուն՝

14—179

Եվ դու նրա մոտ կքվեել ես անկար,
Դիմացս դարձյալ դուռն էր դժոխքի
Մռայլ, գաղտնալի, դժխեմ և ունայն,
335 Ինչպես էր այնտեղ մահը սոսկալի,
Այդ հազիվ դուցն մենք տեսանք միայն։

Եվ դեգերելով ինչպես սովերներ՝
Անցանք առջևով դժոխքի դռան՝
340 Ջանալով լսել գոնի հուսկ ձայներ
Այնտեղ չարչարվող մի հոգ մարդկության։
Ուզեցինք կանչել—ձայնն էինք մոռցել,
Խոսելը դառավ սարսափ այնուհետ.
Ուզեցինք Աստված մենք աղավաղել,
345 Բայց մնոանք մենք էլ այդ Աստծու հետ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾՏԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ինչքան ծիտ կա ծառի ծայրին,
Կասե՞ս իսկի նրանց թիվը.
Ողջ բռնել է փողոցով մին
Նրանց վժժոցն ու ծիվ-ծիվը։
5 —Դե՛, սուս կացեք,
Դե լսեցեք ...

Մին լսում են, տասը ճչում,
Տասը ճչում ու մին լսում,
—Պստիկ, Չստիկ,
10 Ծիտիկ, Պիծիկ,
Դե շուտ, ասեք,
Ո՞նց հավաքենք
Կուտ ու հատիկ,
Սարքենք ուրախ, լավ հարսանիք,
15 Ո՞նց ...
Կթռչենք դաշտ, սար ու դար,
Կհավաքենք կուտ ու պաշար։
Կորեկ, հաճար, գարի, ցորեն,
Եվ ամենքն էլ պիտի բերեն։
20 Հասկանո՞ւմ եք։
—Հասկանո՛ւմ ենք։
Ապա՞ Ծիտիկ, Պիծիկ, Միծիկ,
Դե թը՛ռ, թռեք,
Պաշարները շուտով բերեք։

25 Ապրե՛ք Միտիկ, Պիծիկ, Միծիկ.
Ոնց են ընկել ճնճղուկները,
Մեծ ու փոքր ճամփանները,
Հավաքում են ցորեն, կորեկ,
Հավաքում են, այ շատ ապրեք,
30 Հավաքում են ...
Ինչ գտնում են, ողջն ուտում են,
Ինչ գտնում են, ողջն ուտում են։

Աշունն եկավ, մեկիկ, մեկիկ
Հավաքվեցին ծառի ծայրին,—
35 —Ապա Միտիկ, Պիծիկ, Միծիկ,
Ապա բերեք, տեսնենք ո՞ւր են.
Հաճար, կորեկ, գարի, ցորեն։

—Վա՜յ, ի՞նչ կորեկ, վա՜յ, ի՞նչ ցորեն,
—Վա՜յ, չեք բերել, վա՜յ, բա ո՞ւր են.
40 —Ապա, Ճստլիկ, ի՞նչ ես բերել.
—Հա, բան պիտի ես բերեի ...
—Դու, Պստլիկ, ի՞նչ ես բերել.
Ե՞ս ... Մոռացա բան չբերեցի։
Պահ—ո ո ո՜...

45 Ի՞նչ գտել եք,
Ողջ կերել եք։
Բա մեր ձմռան ուտելի՞քը,
Բա մեր ծտի հարսանի՞քը։
Դե թը՜ռռ, թռեք,
50 Մյուս տարի։

Մյուս տարին,
Աչքդ բարին
Միտիկները հարսնիք ունեն.
Ճրզրը, վրզրը, ճրզրը, վրզրը.

55 Պար են գալիս ու քանի պար —
Մեկի տեղակ հարյուր, հազար։
Հավաքվել են հարսնևորներ,
Հարսն ու փեսան, բարեկամներ,
Դուրսն է մնացել Ճատըլիկը,
60 Մեկ էլ սիրուն Պատըլիկը,
—Դե, թը՛ռու, թռե՛ք,
Գնանք բերենք։

ՊՈՒՅՊՈՒՅ ՄՈՒԿԻԿԸ

Մի երկիր կա՝ Հնդստան,
Մի մուկիկ կար՝ ճատճատան,
Հնդստանի անտառում,
Կոկոս ծառի ծակուռում։

5 Ապրում էր նա իր համար,
Բարիքներում անհամար,
Ու մի օր լավ, մի օր վատ՝
Ուներ ապրուստ քիչ թե շատ։

Օրը մի ճանճ, մի միջատ,
10 Մի ծեղ, արմատ, ցորնի հատ։
Ուտում էր ու քեֆ անում,
Խաղում, ապրում իր բնում։

Իր անունը Պույպույ էր,
Ազգանունը Ճատունի,
15 Լացը՝ վայ-վայ, վույ-վույ էր,
Երգը՝ տարայ-նայ-նի-նի։

Էսպես մուկիկն ապրում էր,
Վազվզելով վար ու վեր,
Ու մի օր էլ ծանր ու մեծ
20 Իրեն-իրեն միտք արեց.

«Տունս կոկոս ծառի տակ,
Բերան չունե՞մ, թե՞ ճաշակ,

Ճանճ կերել եմ, ծեղ կերել,
Տեսնեմ կոկոսի համն էլ»։

Այս ասելն էր, մեկ էլ գո՞մփ,
Ծառից կոկոսն ինչպես բոմբ
Ընկավ նրա առաջին։—
Կոկո՞ս, կապին չէ՞ հնչին։

Կաղնի տեսակ, սեխի չափ,
Միջուկն անո՞ւշ, յուղալի՞,
Բայց կեղևն է միայն հաստ,
Ահա ինչն է ցավալի ...

Վրա ընկավ մուկիկը,
Բացեց իր սուր ճանկիկը,
Կծեց, կծեց, կծոտեց,
Բան դուրս չեկավ, չհաջողվե՞ց։

Ու կոկոսի չորս կողմը
Ման է գալիս Պուչպուչը,
Կեղևն հաստ է, ո՞նց անի,
Ու սկսեց վուչ-վուչը։

«Ախր ի՞նչ է, ի՞նչ կլի,
Տեսնեմ դրա համն էլի,
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,
Գոնե մի կում, մի պուճուր»։

Դու մի ասի, ընկնելուց
Ծակ էր բացվել կոկոսում,
Էդ որ տեսավ, հիմի էլ
Ծակից մանել էր ուզում։

Բայց տեսեք ինչ պատահեց,
Ծակն էր պստիկ, ինքը մեծ,

Ծակիցը ներս չի մտնում,
Սովից էլ ուշքն է գնում,

Լաց է լինում մուկիկը,
Ո՞նց լաց չլնի մուկիկը ...
55 Սիրտն ուրիշ բան չի ուզում,
Նայում է ու նվազում։

Էսպես լացեց սուգ արեց,
Էնքան լացեց սուգ արեց,
Հետո էլ սովից լղարեց։

60 Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը, ճանճի պես
Ծակից մտավ, գնաց ներս։

Էս ի՞նչ էր, ասա, ո՞նց եղավ,
Էս ծակից ո՞նց ներս մտավ,
65 Ո՞նց, այ, նայիր, էս մուկը,
Էս կոկոսն ու միջուկը։

Դե, քեֆ արա, օխա՜յ, օխա՜յ,
Դե, պար արի, տարա՜յ, նանա՜,
Դե, միջուկը կեր ու կրծիր,
70 Կե՛ր միջուկը, հյութը խմի՛ր։

Համ ուտում է, համ էլ պարում,
Համ պարում է, համ էլ երգում.
«Ինքս Պուչպուչ, պարս՝ տուչտուչ,
Էլ ի՞նչ վայ-վայ, էլ ի՞նչ վուչ-վուչ»։

75 Էսպես թռչում ծափ էր տալիս,
Պար էր գալիս, ռանգի, չալլի,
Գոռում էր. ջա՜ն, տարայ-նի-նի,
Այ թե քեֆը ինչպես կլինի։

Էս որ էսպես կերավ մաքրեց,
80 Առաջ փոքր էր, հիմա տղեց,
Տղեց դարձավ խոշոր մի մուկ,
Ընկավ կողքին, քնեց խորունկ։

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,
Էհ, մուկիկը վեր կացավ, որ
85 Փուչ կոկոսի ծակից դուրս գա,
Ախր դուրսը դորձ կա, տուն կա։

«Լավ էր, կերանք բավականին,
Հիմի գնանք մենք մեր բանին»։
Հեշտ էր ասել... Ապա՞ փորձիր,
90 Մի կոկոսի ծակից անցիր։

Մոտեցավ, որ ծակից դուրս գա,
Պահո՞... Տեսավ ճամփա չկա,
Ինքը խոշոր, ծակը պուճուր ...
Այդ է, մնաց, բայց մնա ո՞ւր ...

95 Լաց է լինում մուկիկը։
Ո՞նց լաց չլինի մուկիկը։
Տղել է կոկոսում,
Մնացել է նեղ փոսում։

«Ինչի՞ս էր պետք կոկոսը,
100 Լավ չէ՞ր իմ տուն, իմ փոսը,
Վայ, վայ, վայ, վայ, վույ, վույ, վույ,
Հիմի տե՞ղն է, քեզ, Պո՞ւյպույ։

Ախր ի՞նչ բան ունեիր,
Գայիր կոկոս ուտեիր,
105 Չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞,
Ցավ ուտեիր, լավ չէ՞ր, հը՞...

Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ,—գահրաման՞ը,
Դե լաց, մնա քեզ համար»։

Էսպես լացեց մուկիկը,
110 Էնքան լացեց մուկիկը,
Հետո էլ սովից լղարեց։—
Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը, սուս ու փուս
Ծակից նորից ելավ դուրս։

115 Վա՛հ, էս ի՞նչ էր, էս ո՞նց եղավ,
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ,
Ո՞նց... Այ, նայի՛ր, էս ես՝ մուկը,
Էն՝ կոկոսը, էն՝ միջուկը։

Տեսա՞ր լավ բան, կեցցե՛ս, Պույպույ,
120 Տո էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «վույ-վույ»,
Տո՛, քա՛ֆ արա, օ՛խայ, օ՛խայ,
Դե պա՛ր արի, տարա՛յ-նի-նա՜յ...

Հա՛մ թռչում է, հա՛մ պարում է,
Հա՛մ երգում է, հա՛մ կանչում է,
125 Ջա՜ն, քեֆ արա, տարայ-նի-նի՜.
Ա՜յ թե քեֆը ինչպես կլինի։

ԱԳՌԱՎՆ ՈՒ ԽԵՑԳԵՏԻՆԸ

(Առակ)

Ինչպես եղավ, ինչպես չեղավ՝
Ագռավներից մեկը
Մի խեցգետին չանթեց տարավ,
Լավ որս գցեց ձեռքը։
Է՛հ, ինչ անի.—նստեց ծառին,
Որ մի համով ու լավ խժռի։
Խեցգետինը լեղու ածեց.
—Ճանաչում եմ ես քո հորը
Օ՜, օ՜, ինչքան գեղեցիկ էր,
Ի՜նչ հրաշալի վզիկ ուներ.
Նամանավանդ քնքուշ փորը։
Ագռավը լուրջ «հը՛մ-ըմ» արեց,
Կտուցները իրար սխմեց,
Ու խեցգետնին ամուր պահեց։
Խեցգետինը շարունակեց.
—Բայց քո հայրը քեզ մոտ ի՞նչ էր.—
Գիտե՞ս թե ինչ սիրունիկն ես,
Գիտե՞ս թե ինչ նախշունիկն ես,
Աչիկներդ հուլունք-հուլունք։
Տոտիկներդ մանր պտուկ։
Ագռավն այստեղ փառավորվեց,
—Հա՜ա, հա՜ա, հա՜ա,
Դրուստ ա՜ա՜ռ,
Հա՜ա, հաա՜ա,
Այնպես կանչեց կտուցը բաց,
Ու խեցգետնին՝ տըլը՜մբ՝
Գցեց ջուրը,
Տվեց տուրը։

1947

ՓԻՍԻԿԻ ՎԻՇՏԸ

Փիսիկոն այսօր տխուր է,
Աչքերն արցունք ու ջուր է,
Լաց է լինում Փիսիկոն,
Ինչպե՞ս չլա Փիսիկոն,
5 Վազեց բռնի ծիտիկին՝
Ո՞նց կբռնի ծիտիկին,
Ծիտիկը չի բռնվում,
Փախչում է ու աղատվում։

Լաց է լինում Փիսիկոն,
10 Ինչպե՞ս չլա Փիսիկոն,
Ծիտիկը չի բռնվում,
Ծիտիկն ուտվել չի ուզում։
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վայ՜, Փիսիկո՛,
Ո՞նց է բանդ, Փիսիկո՛,
15 Ծիտ ես ուզում ուտել միշտ,
Ծիտ որ չկա՝ վայ է, վիշտ։

Բայց մտածիր, Փիսիկո՛,
Խելքի՞ բան է, Փիսիկո՛,
Ծիտիկն ինչպե՞ս թույլ տա քեզ,
20 Բռնես իրեն և ուտես։

Բա մեղք չի՞ Ծիտիկոն,
Բա չապրի՞ մեր Ծիտիկոն,
Չէ՜, ծիտիկն էլ խելք ունի,
Նա բերանդ ո՞նց կընկնի։

ԾՏԱՊԱՐ

--Խե՞ղճ ծիտիկներ, պայլտո չունեք,
Դուրսն եք ապրում ցուրտ ձմեռը,
Փողոցներում շատ մրսում եք,
Դողում են ձեր տոտիկները։

5 —Ո՞վ է ասում պայլտո չունենք,
Մեր փեռուրներն ի՞նչ են հապա,
Քեֆիդ մտիկ, պստլիկ աղջիկ,
Լավ բան դիտե՞ս՝ լավ բան ասա։

—Չէ՛, չէ՛, ինչպե՞ս, կոշիկ չունեք,
10 Ախր թաց են փողոցները,
Կըրկ-նա-կոշիկ-ներ էլ չունեք,
Թրջվում են ձեր տոտիկները։

Տո՛, մեր հոգսը մի քաշի դու,
Կոշիկ-մոշիկ՝ կարիք չունենք,
15 Դու կարո՞ղ ես մեզ հաց, բան տուր,
Մի քիչ դարի, մի քիչ կորեկ։

— Կտա՛մ, կտա՛մ, լավ ծիտիկներ,
Հավաքվեցեք, եկեք մոտիկ,
Կբերեմ ձեզ տաք բլիթներ,
20 Ա՛յ ձեզ կորեկ, հաց ու հատիկ։

—Բե՛ր, բե՛ր, մատաղ. շաղ տուր գետին,
Ա՛յ, ապրես դու, պստլիկ աղջիկ,
Տես պահարանն ի՞նչ կա էլի,
Դուրս բեր քիչ-քիչ, մեկիկ-մեկիկ։

25 —Է՛ֆ, է՛ֆ, է՛ֆ, է՛ֆ, տես ինչ լա՜վ է,
Օխա՜յ, օխայ, կորեկ, հատիկ,
Բե՛ր, ախպե՛ր ջան, բե՛ր, համով է,
Ճաշ եմ ասում, ապրես, աղջիկ։

—Վա՜յ, մուսացա, տես, չբերի
30 Գդալ, դանակ, պատառաքաղ,
Դեռ մի՛ կերեք, կացեք բերեմ
Անձեռոցիկ, բաժակակալ։

—Ոչի՛նչ, ոչի՛նչ, վնաս չունի,
Մենակ շատ բեր դու ուտելիք,
35 Բաժակի հետ զլուխ չունենք,
Շատ սովոր չենք մենք գդալի։

—Խե՛ղճ ծիտիկներ, դուք տուն չունեք։
Բա դուք որտե՞ղ պիտի քնեք։
—Ի՜, պատերի ճեղքեր քի՞չ են,
40 Մեր բները տուն չեն՝ ի՞նչ են։

— Լավ, ծիտիկնե՛ր, բա որ չունեք
Պարի դահլիճ, մոմած հատա՛կ,
Դուք ո՞նց պիտի պարեր պարեք,
Վայլս, մազուրկա, տանգո, գոպակ։

45 —Բա՞ն չունես դու, պստլիկ աղջիկ,
Ի՜հ, դահլիճս դիտեր հիմի,
Պար հս ուզում՝ տե՛ս թե ոնց ենք
Թռչում տանգո, վայլս ու յայլին։

Դե՛, տպա մի ծափ տուր չափով,
50 Դե՛, ծիտիկներ, վեր կացեք մի,
Դե՛ պար, պապար, ոտ վերցրեք,
Տարա՜յ, նանա՛, տարա՜յ նանի՛։

Չէ՛, ծափ տուր ու մտիկ արա,
Էս քեզ տանգո, էս քեզ ռանգի,
55 Էս ֆոկստրոտ, ուզունդարա,
Էս էլ ծտի խաս տրնգի։

Զարկեք ամուր թև ու տոտիկ,
Ճվճվացեք աշխարքով մին,
Տեսա՛ր պարը, պստլիկ աղջիկ,
60 Տարա՞յ նանա՛, տարա՞յ նինի՛։

Տա՛շ, տաշի, տա՞շ, ծափ տվեք, ծա՞փ,
Օխա՞յ, օխա՞յ, դեսը մտիկ,
Բռեք, զլեք դուդուկ ու դափ,
Բմբուլները հանեք երկինք։—
65 Բը՞ըռռռ ...

15—179

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1922 — 1923

ԳԻՐԻԼՈՎ Վ.

ՄԵԿՄԱՅԻՍՅԱՆ ՀԻՄՆ

Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
Վերջն է կապանքի, տոնն աշխատանքի,
Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
Տոնը գարունքի և ազատ կյանքի։

Գործարաններից, ծխոտ վայրերից
Եկեք ամենքդ տոնախմբության,
Թափորիր, երկրի լիազոր դու տեր,
Դու ազնիվ մարտիկ պրոլետարական։

Ուժգի՛ն-երգիչնե՛ր, բա՛ռձր-դրոշակներ.
Փա՛ռք մեծ միության բյուր բանվորներին,
Փա՛ռք տվեք երկրիս լեգեոններին՝
Ջորքին այս յուղոտ, մով բլուզների։

Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի —
Վերջն է կապանքի, տոնն աշխատանքի,
Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի —
Տոնը գարունքի և ազատ կյանքի։

ԻՈՆՈՎ Ի.

ԿԱՐՄԻՐ ՇՈԳԵԿԱՌՔԸ

Վլադիմիր Իլիչ Լենինին

Աջ ու ձախ՝ ձյուն ու սարեր,
Դիք է ճամփան, կիսամեռ,
Ու թռչում է շոգեկառքը
Դեպի մեգոտ հեռուներ։

5 Բարձր է որոտն անիվների,
Խուլ է սույլը պահապան,
Թեք լանջերին ալիքավոր
Ծուխն է հյուսվում մանեման։

Խավարի հետ աչքն է կռվում,
10 Ճամփան շատ է մթընդել,
Բայց խիզախ է, անընկճելի
Մեքենավարը ընտել։

Տնքում են ծեր սոճիները,
Մտել՝ ոսոխը դարան,
15 Բայց պողպատե լծակները
Հավատարիմ են նրան։

Սլանում է գնացքն ահա,
Սաստկանում են ծուխն ու կայծ,
Իսկ առջևում փարոսում է
20 Լապտերը վառ, բոցկլտած։

Սո՛ւս, աղմուկ է. բուքը ճամփին
Ձյուն է կիտում սարի պես,

Մեկ ցույց տալիս, մեկ թաքցրնում՝
Թե ոնց գնաս ու անցնես։

25 Է՛լ երևաց հեռաստանը,
Ջլեց գոչը անիվի,
Ու թռչում է լի հավատով
Հսկան բոցոտ, վիթխարի։

ՊՈՒՇԿԻՆ Ա.

ԴԵՊԻ ՍԻԲԻՐ

(Դեկաբրիստներին)

Հպա՛ռտ ապրեցեք, ո՞վ աքսորյալներ
Խավար հանքերում հեռու Սիբիրի՝
Չի կորչի իզուր աշխատանքը ձեր
Ու ձգտումները ձեր վեհ մտքերի։

5 Հույսը—վշտերի քույրն հավատարիմ,
Մութ անկյուններում գետնախորշերի
Ձեզ կպահպանի առույգ ու զվարթ,
Եվ անշուշտ կգա օրը բաղձալի։

Մեր անկեղծ սերը կգա դեպի ձեզ,
10 Կհասնի մռայլ փականքի միջով՝
Ինչպես աքսորի ձեր խշտիներին
Հասնում է ձայնս երգիս զողանջով։

Եվ կընկնեն մի օր շղթաները ձեր,
Բանտը կդառնա խղճուկ ավերակ,
15 Ազատությունը դեմ կվազի ձեզ,
Ու ընկերներից սրեր կստանաք։

ՕԴՈԵՎՍԿԻ Ա.

ՊԱՏԱՍԽԱՆ ՊՈՒՇԿԻՆԻՆ

Գուշակող լարերի հնչյուններն հրավառ
Հասան մեր ականջին զողանջով քաղցրաբառ,
Դեպի սուր շարժվեցին մեր ձեռքերն շտապով,
Բայց նրանք քերծվեցին շղթայի երկաթով։
Սակայն մի հուզվիր դու, ով գուսան ոգելից,
Շղթայով—մեր բախտով—հպարտ ենք այստեղ մենք.
Խավարչտին մեր բանտի փականքի ետևից
Մեր հոգում ծաղրում ենք ցարերին չարաբնեգ։
Չի կորչի ապարդյուն մեր ջանքը տանջալից,
Կայծերից հրդեհներ կժայթքեն լուսարձակ
Ու համայն ժողովուրդ լուսավոր, գիտակից
Մի մեծ օր կխմբվի արնավառ դրոշի տակ։
Մեր ամուր շղթայից մենք սրեր կձուլենք
Եվ կրկին կվառենք ջահը մեր փրկության,
Նա ահեղ կթնդա ցարերի գլխներին
Ու ազատ կշնչե ժողովուրդը համայն։

ՍԱՎՈՖԵՎ Ի.

ԲԱՆՏՈՒՄ

(Սոնետ)

Դուռը վրաս խփեց ահա բանտապահը չար ու խիստ,
Դուռը վրաս խփեց, գնաց—լուռ է շուրջս ու հանդիստ.
Եվ նորի՞ց ես բանտի մեջ եմ, դարձյա՛լ ընկա փակի տակ,
Կտրված եմ ողջ աշխարհից ու կրկի՞ն եմ միայնակ։

Սակայն և այս մռայլ բանտը, շղթաները, ծաղրը չար
Պնդացնում են ոսոխների հանդեպ ոգին հաղթության,
Այս գուշակող պատերի մեջ կա մի լեզու անբարբառ,
Որ խոսում է.—Բողոքեցե՛ք, դա՛շն կապեք հաղթության։

Շուտով, շուտով կխորտակվեն սև կարգերը գահական.
Կատաղեցե՛ք, չա՛ր դահիճներ, շոնդացրե՛ք բանալին.
Մենք այստեղ ծիծաղում ենք ձեր բռնության, ձեզ վրա։

Բյուր քայլերի տրոփն ահա՛, ձայներ ըմբոստ, տիրական.
Դա մեր զորքն է աշխատանքի, գալիս է բյուր կողմերից
Ու աճում է պայքարն ահա... Մենք կհաղթենք անպայման։

ՈՒԻՏՄԵՆ ՈՒ.

ԶԱ՛ՐԿ, ԹՄԲՈ՛ՒԿ ...

Զա՛րկ, թմբո՛ւկ, զա՛րկ ուժգին, փչի՛ր փո՛ղ, շեփորնե՛ր.
Ներս թափվեք դռներից՝ ինչպես զորք մոլեգին.
Եկեղեցի՛ն—հեռացե՛ք աղոթողնե՛ր,
Դպրոցնե՛րը—հեռացե՛ք, աշակերտնե՛ր,
Փեսա՛, թո՛ղ հարսնացուդ, ժամը չէ՛ նշանվելու,
Մաճկա՛լ, թո՛ղ գութանդ, ժամը չէ՛ վար անելու,
Կատաղի թմբկահարում են, մոլեգնած փողհարում են.
Թնդացե՛ք թմբուկնե՛ր,
Զլեցե՛ք շեփորնե՛ր,
Գոռացե՛ք քաղաքի աղմուկի վրա,
Ճայթեցե՛ք կառքերի որոտի վրա։
Ի՞նչ... Քուն մտնողներն անկողին են փռել.
Այն ո՞վ է կարող այս գիշերը քնել...

Վերջացրեք առևտուրը, փակե՛ք բազարը, ամեն ինչ.
Լռեցե՛ք. դուք, շատախոսնե՛ր, դադարեցրո՛ւ երգդ, երգի՛չ.

Ի՞նչ... Իր ճա՞ռն է ծամծմում փաստաբանը դատարանում...
Չի՛լ թնդացեք, գո՛ռ թմբուկնե՛ր, գոռա՛ շեփո՛ր ու պատռվի՛ր
Խլացրե՛ք ճիչը մանկանց ու մայրենի լաց ու կոծեր.
Ի՞նչ փույթ լացող-աղոթողը և վախեցած ծերուկները,
20 Թեկուզ գոռան մեռելները՝ որ դագաղի են սպասում,
Որոտացե՛ք շեփորնե՛ր, թնդացե՛ք թմբուկներ։

ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ Գ.

ՎԱՐՇԱՎՅԱՆ ԵՐԳ*

(Վարշավյանկա)

Հողմերն են ոսոխ մեր գլխին ճախրում,
Ծանր ճնշում են ուժեր դժնդակ.
Ոսոխների դեմ պայքար ենք մղում,
Մեր դիմաց դեռ կա մի անհայտ վիճակ։
5 Սակայն մենք խիզախ, բարձր կբռնենք
Մեծ բանվոր դասի դրոշը կարմիր,
Դրոշը կռվի համայն մարդկության,
Վսեմ մի կյանքի և աղատության։
Դեպ մարտ սուրբ արդար,
10 Դեպ պայքա՛ր շարք-շարք,
Մա՛րշ, մա՛րշ, դեպ հառա՛ջ,
Բանվո՛ր դասակարգ։
Մեռնում են սովից եղբայր-բանվորներ,
Երկա՞ր պիտ լռենք արդյոք, ընկերներ.
15 Մեր կռվողների աչքերը չահել
Ո՞ր կախաղանից կարող են սարսել։
Հղոր պայքարում չեն կորչի անհետ
Վեհ գաղափարին զոհված ընկերներ.

---

* Թարգմանված է ոչ երգի համար։

Նրանց անունը մեր երգերի հետ
20 Կպաշտեն մի օր բաղում սերունդներ։

Դե՛պ մարտ սուրբ, արդար,
Դեպ պայքա՛ր շարք-շարք,
Մա՛րշ, մա՛րշ, դեպ առաջ,
Բանվո՛ր դասակարգ։

25 Ատում ենք թագը բռնակալների,
Պաշտում ենք շղթան տառապողների,
Մեր արյամբ թրջված դահերը բոլոր
Պիտ ներկենք արյամբ մեր ոսոխների։
Վրե՛ժ անմոռաց մեր ոսոխներին,
30 Բանվոր մարդկության պարազիտներին,
Վրե՛ժ, մա՛հ բոլոր թագավորներին,—
Մոտեցավ ժամը ահեղ հաղթության։

Դե՛պ մարտ սուրբ, արդար,
Դեպ պայքա՛ր շարք-շարք,
35 Մա՛րշ, մա՛րշ, դեպ առաջ,
Բանվո՛ր դասակարգ։

ՇԿՈՒԼԵՎ Ֆ.

ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ*

Դուք զոհվեցիք պայքարի մեջ օրհասական,
Անշահ սիրով ժողովրդի գործի համար.
Ինչ ունեիք, դուք բոլորը տվիք նրան,—
Նրա պատվին, նրա կյանքին, աղատության։

* Թարգմանված է ոչ երգելու համար։

5 Բանտերի մեջ երկար օրեր տանջվեցիք դուք
Ու ձեր ոսոխ—դահիճները անագորույն
Դա՛տ արին ձեզ, և ահա դուք ծանր ու անձուկ
Շղթաներով անցաք առաջ, դեպ մահվան սյուն։

Իսկ դեսպոտը քեֆ է անում պալատներում՝
10 Սրտի վախը քնացնելով գինիներում,
Սակայն պատին ահա մի ձեռք օրհասական
Մահի բառն է գրում նրան սպառնական։

Կգա՛ օրը և կզարթնի հզոր ու մեծ
Ժողովուրդը՝ արդեն ազատ կապանքներից։
15 Բարյա՛վ գնաք, ո՛վ եղբայրներ, պատվով անցաք
Դուք ձեր ուղին, հերոսական ու պանծալի։

ՀՅՈՒԳՈ Վ.

ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Հին աշխարհը

Կանգնի՛ր, Ալի՛ք, քաշվիր ետ, բավ է հորդես դու սասսիկ.
Երբեք հորձդ մակընթաց չէ՛ ծառացել դեպի վեր
Այսքան հանդուգն ու անփույթ։ Եվ ինչո՞ւ ես, ո՛վ Ալիք,
Այսքան մռայլ, բնավեր։
5 Ի՞նչ է այս կես գիշերի մռունչ, տարափդ անընդհատ.
Եվ վայրենի հողմերի այդ ոռնոցդ մարտակոչ։
Հառաչում է քո հորձանքն ինչպես ահեղ հրաշալիք։
Կանգնի՛ր, Ալի՛ք, ասում եմ։ Աստ է ահա քո սահման.
Եվ մի՛ այսօր խորտակիր արշավներով կատաղի՝
10 Օրենքները հինավուրց, պաշարումներն հնավանդ,
Անմտություն, ծանր լուծ, աղքատություն ժանտաժունտ,
Եվ վաղուցեստ քուն մտած ոչնչությունը մտքի,

Ուր թմբել են առհավետ տենչերն իրենց շփոթով։
Եվ մի՛ շղթան թոթափիր՝ կնոջ վրան փաթաթած,
15 Մի՛ դիպչիր մեծ խնջույքին, ուր խեղճերին չկա տեղ,
Աստվածացնի՛ թող աշխարհն իր օրենքներն հնավանդ։
Մի՛, չդիպչե՛ս դու նրանց. նրանք սուրբ են մեզ համար։
Սհավասի՛կ հաստատուն ամրություններն ահագին.—
Բարձրություններ կառույցի շուրջը ամբողջ մարդկության։
20 Բայց վազում ես դու առաջ, ամեն վայրկյան դեպի վեր,
Ամենայն ինչ սրբելով գրոհովդ կատաղի։

ՎԵՐՀԱՍԱՆ Է.

ԲԱՆԿԻՐ

Մռայլ, անվրդով իր հին բազմոցին նստած է ահա,
Փոքր ինչ մեջքը կոր, գրչով թունդ ելած՝
Գրում է ահա՝ թղթերը ցրիվ սեղանի վրա՝
Բայց միտքն այնտեղ չէ, այն Տիեզերքի ծայրերն է հասած։

5 Բատավիա, Կոլոմբ, Կապրշտատ՝ նրա առջևը հիմա
Օվկիանը Հնդիկ, նավահանգիստներն հեռավոր Չինի,
Որտեղ փոթորկոտ ծովեր ճեղքելով նավերը նրա՝
Մերթ փոթորկի հետ կռիվ են տալիս,
Մերթ ճեպում դեպի հանգիստը նավի։

10 Նրա առջևը այն կայաններն են, որ կանգնել է նա
անապատներում
Եվ ավազներում անցկացրած իրա պողպատե ռելսեր,
Ոսկու, ակների, թանկագին խեժի հեռու աշխարհներ,
Որտեղ արևն է իշխում լուրթ-կապույտ հեռաստաններում։

Նրա շուրջն հլու շրջանն է նավթի շատրվանների,
15 Իր բազմահարուստ անթիվ հանքերի հորերը խավար,

Հնչյունը բոլոր Եվրոպին ծանոթ նրա կանտորների,
Հնչյուն, որ մարդու հարբեցնում, գրավում, միտքն է պահում վառ։

Նրա առջևն են պարտված ազգերի հլու իշխաններ.
Իր ազդեցությամբ կարող է նրանց սահմանը լայնել,
20 Ամփոփել նրանց, կռվի մեջ նետել,
Ինչպես կամենա իր թաքուն հաշիվն ու իր քմայքներ։

Նրա առջևն է և այն պատերազմն, որ քաղաքներում ամբողջ աշխարհի
Նա, որպես արքա՝ վարում է աղատ, և այդ առանց ծուխ, առանց հրանոթ։
Մեռած թվերի բյուր ատամներով կրծում է անդուլ
25 Հանդուցյն արյունոտ ճակատագրական հանելուկների։

Եվ ահա իր հին բազմոցում նստած մռայլ, անվրդով,
Թռչող տողերի ճամուկ նկարներ արագ գծերով,
Իր քմայքներին ճակատագիրը հպատակելով
Ողջ տիեզերքին փողահարում է մի ոտրսատի ճերմակ։

30 Օ՜, ոսկի, որ նա միշտ հավաքում է ամեն կողմերում
Եվ քաղաքներում հարբած, խենթացող,
Եվ աշխատանքից հալումաշ լինող անթիվ գյուղերում,
Եվ արեգակի շողքերի միջին, օդում, ամենուր։
Ոսկի՜ թեավոր, ոսկի՜ սավառնող,
35 Ոսկի՜ անկշտում, դաժան, վրիժառու,
Ոսկի՜ շողարձակ, խավար մրրկի միջին վառվողող,
Ոսկի՝ կենդանի,
Նենգավոր և խուլ,
Օ՜, ոսկի՜, որին դաժան կարիքի հազար ծակերից
40 Անքուն խմում է Արևելք, Արևմուտք,
Ոսկի՜ հնամյա, ո՜վ գեղեցկուհի երկրային հանքի,
Ո՜վ դու լո՜ւյս հատոր հույսի, արևի, դո՜ւ ոսկի՜, ոսկի՜։

Իր ոսկիների չափն էլ չգիտե.
Ողջ աշտարակներ կլլցնեն գուցե
45 Սարերը նրա դիզված փողերի,
Սակայն սառն է նա, միշտ մենակ, անձայն։
Եվ նա իր գանձը, որ ձեռք է բերել տարիներ երկար՝
Նրան ամբոխը երդում է տալիս, ամենքն են հլու
Եվ նախատում են։ Կանգնած է ահա նա ինչպես ցնորք,
50 Ընչաքաղցությունն համաշխարհային, սրտերի հրդեհ.

Ամենքի սիրտը նա բոց է գցում, իր սիրտը՝ դատարկ։
Ի՞նչ հոգ թե խաբի երբեմն մեկին՝
Նրա դուռն էգուց կրկին կբախի սա անհամարձակ.
Նրա անսահման կարողությունը ինչպես մի հորձանք եկած
ափերից՝
55 Տանում է գցում ջրապտույտը իր մրրկալից՝
(Ինչպես տերևներ, քարեր ու բույսեր)՝
Կայքեր, խնայանք, հարստություններ, սրանց խառնելով
Գրոշը վերջին,
Որ հազար խեղճեր լռության միջին
60 Գանձել են երկար իրենց սպառման
Դառն քրտինքով։
Այսպես ամեն բան իր աճող ուժի նիագարայով
Ճնշելով, նա՛, այդ կուզիանը դժնի,
Իր հաշիվների կույտերի վրա՝ տարված մտքերով
65 Բախտն է որոշում թագավորությանց։

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16—179

1894—1918

ՀՐԱԺԵՇՏԻ ԺԱՄԻՆ

Ինչո՞ւ ժպիտը քո դեմքին հանգավ
Եվ էլ հույս չկա նորից ծաղկելու,
Եվ դարնան հույսն էլ անկարող եղավ
Քո հոգնած սիրտը վերականգնելու ...
Ինչո՞ւ թոշնեցին կարմիր վարդերը,
Որ հանդչում էին մատաղ այտերիդ,
Եվ նսեմացան երկու կայծերը,
Որ շողում էին քո աստղ-աչքերիդ ...
Ինչո՞ւ պարտեզը չէ նայում երկինք
Իր խորհրդավոր մտորումներով,
Այլ հիասթափված ողբում է լռիկ,
Երբ որ ժպտում է երկինքն աստղերով ...
Ինչո՞ւ հուսահատ ես մահ եմ խնդրում,
Եվ ինչո՞ւ սառն են հրաժեշտի ձեռներ,—
Ա՜խ, այդ կասկածն է մեր սիրտը հուզում,
Փչելով մեր սիրտն սիրո ցուրտ ձմեռ ...
Սպասում էի ես այս օրերին,
Եվ հիմա հասան, օ՜ կատարվեցավ,
Այլևս մի՛ հիշիր հոգնած պանդուխտին,—
Հիմա օտա՜ր ենք, օտա՜ր, մնաս բարյա՜վ ...
Հիմա բոլորը ինչ որ զգում եմ,
Ինչ որ կարող է իմ սիրտը ասել՝
Այս է. «Ների՛ր ինձ, ես մեղավո՛ր եմ,
Սերն ինձ համար չէ այս երկիր ելել ...»։

ՆՐԱՆ

Սիրտս գարնան մի պարտեզ էր ...
Արտասուքով ցողեցի
Եվ հյուսվեցին մատաղ վարդեր,
Սիրույս բույրով շնչեցի։

5 Քե՛զ հանձնեցի սիրտս խղճուկ
Պահպանելու այնուհետ.
Դու մոտեցար իբրև մանուկ
Եվ խաղացիր նորա հետ ...

Քեզ հետ բերիր ցուրտ ձմեռը,
10 Մութ երկինքը ամպերով,
Եվ կախեցին գլխիկները
Իմ վարդերը խոր նինջով ...

ՆՐԱ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Անբախտ էր կյանքդ և տանջանքն շատ
Ազատ, անարգել քեզ ճնշում էին,
Եվ փայլուն կյանքիդ ցնծությունները
Երբեք աչքերիդ չհայտնվեցին ...

5 Բայց սպասեցիր փայլուն օրերի
Եվ հասար շուտով այդ փայլուն օրվան...
Օ՜ անգին եղբայր, ա՜խ, տանջված հոգի
Ահա բաժինդ—մի ցո՜ւրտ գերեզման ...

*

* *

Այստեղ թաղված է մի սիրտ հուսավառ,
Մի կյանք՝ խորտակված անողոք բախտից,
Այստե՜ղ թաղված է մի տանջանք համառ,
Մի ջահե՜լ կյանքի տխրամաշ թախիծ։

* *

Ա՜խ լա՜վ կյանք էր մի ժամանակ,
Այնպես լա՜վ էր նա անցնում,—
Սիրտը չուներ ոչ մի տանջանք,
Նրան հոգսը չէր մաշում։

5 Բարեկամնե՛ր շատ ունեի,
Եվ նրանց հետ միասին
Խնջույքի մեջ երգում էի,—
Առատ էր սերն ու գինին։

Մի կողմ առուն խոխոջում էր,
10 Մի կողմ գինին էր լցվում,
Ուռին գլխիս սոսափում էր
Եվ երազներ ինձ բերում ...

Նոքա ինձ հետ երգում էին
Ասպագայի երազներ.
15 Նոքա ինձ հետ ուխտում էին
Լինել կյանքի զինվորներ ...

Բայց, ա՜խ, կորավ անցյալը այն,
Կորա՜վ հոգու այն հուզմունք.—
Նոքա երազ էին ունայն
20 Արյան իզուր վրդովմունք ...

Եվ իրարից ոմանք օտար՝
Լուռ՝ ապրուստ են հայթայթում,
Եվ սեփական կաշու համար
Իրար խարում, ուրանում ...

25 Նոքա դարձան բախտավորներ,
Վարում են կյանք երջանիկ,—

Ոմանք ունեն եկամուտներ,—
Ոմանք հարուստ ընտանիք ...

Իսկ նա, ով որ դառը խոսքով
30 Կյանքի դեմ էր տրտնջում,
Նրան խաչը հասավ շուտով
Կամ իայտառակ մահու սյուն ...

Ախ, լա՜վ կյանք էր մի ժամանակ,
Այնպես լավ էր նա անցնում,—
35 Սիրտը չուներ ո՛չ մի տանջանք,
Նրան հոգսը չէր կրծում ...

*

* *

Գինո՞վ էիր, խոկուն Աստված,
Այս աշխարհը հյուսելիս.
Ասա ինչո՞ւ, հզոր Աստված,
Փոթորիկը ծովերն արիր,
5 Լավան՝ գետնի անդնդում,
Գազաններին տարար դրիր
Անտառի խոր թավուտում,
Բայց սերն, ասա, ինչպե՞ս դրիր
Այնքան փոքրիկ մի սրտում։

*

* *

Մենք բարեկամ էինք երեկ,
Սակայն այսո՛ր, ի՛մ անգին,—
Կյանքը կատակ խաղաց—և մենք
Օտարացանք լիովին։

5 Գուցե վաղն էլ կտեսնեմ քեզ,
Բայց մյուս օրն, ի՛մ անգին,—

Դու ինձանից հեռու կլինես
Ու չես հիշիլ քո երգչին։

Չե՛մ հավատում այս ամենին,
Չեմ հավատում, իմ անգին,
Որ մենք այսպես օտարացանք
Եվ պիտ իրար մոռանանք ...

*

* *

Ինչպես եղնիկ վիրավոր
Ես ընկած եմ անտառների խորքում՝
լռին, հեռավոր.
Այստեղ պիտի մեռնեմ ես—իմ սոճիի,
եղևնիների սույլի մեջ։
Մինչ գիշերը կգա վրաս կերոններովն իր
անվերջ,
Ու կերգե իմ գլխին գետը վսեմ մի
«հորժամ»,
Ու կբերե լուսընկան
իր բուրվառը մարգարտե,
Ու աստղերը իրենց ջինջ,
հավերժական աչքերով
Հստակ մի լաց պիտի լան,
կաթեն կարոտ ու գորով
Դեպի իրենց քույր ոգին, որ ընկած է
մե՛ն-մենակ։
Այս խորթ, օտար աշխարքում իր քույրերից
բաժանված,
Անհետ, անգին քարի պես, որ ընկած է ծովի
տակ
Ու շրջում է դես ու դեն
ավազների հետ թաղված։

*
* *

Էյ, այնհուն Աստված, անբավ մեծատուն,
Քո դուռն եմ ընկած, լսիր իմ հառաչ,
Քո դուռն եմ բերել իմ ծաղիկ որդուն՝
Քաղած ու դրած իմ ու քո առաջ։
5 Ասում են մեծ, վեհ գործերիդ համար
Կարեցիր սրան ու կյանքը տարար,
Ասում են հավերժ մի անհուն կյանքի
Խառնում ես այս բյուր կյանքերն էակի։
Աստված, դրա համար քեզ էլ չի բավում
10 Երկիր ու արև, աստղերի ոսկին
Եվ այս հրահուր տիեզերիդ բովում
Նյութեր ես լցնում—մեր սիրտն ու հոգին։
Եվ դրա համար անբավ մեծատուն տարար իմ
որդուն,
Եվ միայն իմ խեղճ մանկիկիս համար
15 Քո մեծ աշխարհում մի բուռ տեղ չկար։
Է՛հ տար, սա էլ թող քեզ լինի, Աստված,
Սա շատ տեսար ինձ ու զարկիր հանկարծ,
Տե՛ս, ընկած է նա իմ ու քո առաջ։

ԼՈՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ա.

Մթնաժոռեց։ Լոռին լռեց.—
Բուրեց շունչը ձորերի,
Բանաք թափեց, սև խոժոռեց
Անտառները լեռների։

5 Լեռներն ահա վեհ ճակատին
Բացին ազատ ու լայնշի՛,

Մութը մթնեց... Քո՞ւն ամենին.
Վառեց մոմերն հավերժի։

Բ

Մուժը ննջեց սարի գրկում,—
Դու է՛լ, սի՛րտ իմ, քնի՞,
Սար-ձորերն են մեծ օրոցքում,—
Քնի, սի՛րտ իմ, քնի՞.

5 Մերին կիսա՞տ հեքիաթն ասեց,—
Դու է՛լ, սի՛րտ իմ, քնի՞,
Ծաղիկն զգույշ շունչը պահեց,—
Քնի՞, սի՛րտ իմ, քնի՞։

*
* *

Հպարտ հասկերն անուշ նազով
Գլխիս վրա ծնվեցին,
Ե՛լ, ասին ինձ, ե՛լ ու ապրիր,
Ափսոս է կյանքն,—հնծծեցին։

5 Ծաղիկները հյութերով լի
Բաժակներն ինձ պարզեցին.
—Նորից սիրո մի կում խմիր,
Ափսոս է սերն,—հնծծեցին։

— Ափսո՞ս, հասկե՞ր, անուշ կյանքին,
10 Սիրուն ափսո՞ս, ծաղիկնե՞ր,
Ափսո՞ս անուշ ձեր բաժակնին,
Ափսո՞ս ոսկի այն օրեր ...

*
* *

Կանչո՞ւմ ես դու ինձ, կանչո՞ւմ ես կրկին,
Իմ լուսե զավակ, իմ շարմաղ նշխար,
Ի՞նչ մերկ ես, դողդո՞ջ կանգնել իմ շեմքին,
Կանչում ես ինձ էլ մի կապույտ աշխարհ։

5 Դեռ բռնած ունես մոմը թաթիկով,
Որով շղթայվեց մատներդ անմեղ,
Ի՞նչ անպաշտպան ես քո մերկ տոտիկով,
Եվ ոչ ոք նրանց չի ծածկում մի հեղ։

Անձրևն է հունցում երկիրը շաղախ,
10 Ծեծում է, ծեծում ուսերդ շարմաղ,
Դու լաց ես լինում ... Ի՞նչ մորմոք հուշեր,
Վազում եմ դռան... Սևակնած գիշե՞ր։

*
* *

Լեռներն ալեփառ մտան խորը քուն
Ինչպես վիշապներ առասպելական,
Հեռուն անտառից գունատ ու թաքուն
Ելավ մեռելոտ, սառած լուսընկան։
5 Դատարկ դաշտի մեջ ես-դո՞ւ ենք մենակ.
Ինչ քաղցր է թախծոտ գիշերը լուսնակ ...

Լուսնի արծաթով դեմքդ շարմաղվում,
Աչքերդ անուշ դողտրիկ շուքի մեջ ...
Քայլում եմ քեզ հետ ու չեմ իմանում
10 Թե ի՞նչ դաղտնիք է աչքիդ ծովն անվերջ։
Ի՞նչ քաղցր է լռել հովը մտածկոտ,
Եվ գիշերն ինչպե՞ս անուշ է, թախծոտ ...

Եվ ո՞վ ես, ասա՛, ինչո՞ւ ես ինձ հետ,
Ձերմակ շորերով՝ ճերմակ ուրվական.
15 Դու էլ լուսնի պես պիտ մարես անհետ՝
Թողնելով հոգուս ափսոս մշտական.
Դո՞ւ, այս աշխարքում, որ գիտես մենակ՝
Ինչու է թախծոտ գիշերը լուսնակ ...

*

* *

Հի՛ն երազներ, հի՛ն խնդում,
Հին ընկերներ, մոտ եկեք,
Անցյալի վայր այս հովտում
Մին էլ խնդանք, պարենք մեկ.

5 Ահա արոտն այս գողարիկ,
Ահա աղբյուրն ակնակուռ,
Ահա անտառն երգեցիկ՝
Հեքիաթն ասողն այժմ լուռ։

Տեսեք, այստեղ նաև ծեր
10 Մեր խրճիթը կորամեջ,
Սև ու տխուր սավևներ
Ապրում են լուռ նրա մեջ.

Եկեք քանդենք նիգը հին,
Վառենք օջախն այն ուրախ,
15 Հանենք ծուխը ծիրանի,
Սարքենք սեղան ու խրախ։

Հին երազներ, հին խնդում.
Հին ընկերներ, դե եկե՛ք,
Անցյալի վայր այս հովտում
20 Մին էլ խնդանք ու պարենք.

Ա՜խ, ես ինչպե՜ս կապրեի,
Ինչ տոն կլիներ հուզալից,
Թե մի վայրկյանն անցյալի
Ինչպես տեսիլ դառնար ինձ։

Բայց, ա՜խ, առուն մտած սուգ,
Այն երազներ մոխրագույն,
Փոշիացան այն ծաղկունք,
Փախան գույներ ցիրուցան...

Հին երազներ, հին խնդում,
Հին ընկերներ, լսեցե՜ք...
Բայց ոչ, միշտ այս հովտում
Ինձ գալու չեք էլ երբեք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՂԵՐԻՆ, ՍՊԵԿՈՒԼՅԱՆՏՆԵՐԻՆ, ՁԵՂԾԱՐԱՐՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՏՈՂՆԵՐԻՆ

Այն ո՞ւմ դիակն է ուռած ու հսկա
Լնկել դաշտի մեջ, մահվան դաշտի մեջ,
Լնկել է անտեր և թաղող չկա,
Ընկել է հոտում, քայքայվում անվերջ։

Եվ ի՞նչ հոտ, ի՞նչ հոտ, հեռո՜ւ այս հոտից.
Աշխարք են սպառնում թույները զորեղ.
Ժանտախտն է հղի սրա պեշ օդից,
Մահաբերաժամներ նյութում են այստեղ։

Եվ ի՞նչ որդունքներ, ինչքա՜ն որդունքներ,
Իրենից ծնված վժժում են դեմքին.
Ինչպե՜ս են կրծում, ուտում աչք ու ձեռ.
Ի՞նչ մեծ խրախճանք նրա սև կրծքին։

Լափեցե՛ք այս դին, անկշտո՛ւմ դայլեր,
Եկե՛ք քձձելու, սոված չախկալներ,
15 Ձեզ նա է այսօր դառնում ճոխ ընթրիք,
Որ էր երբեմն իմ հեգ հայրենիք։

Լափեցե՛ք սրան, կերե՛ք, հղփացե՛ք,
Ճիչեր բարձրացրեք խնջույքով տարված,
Ազա՛տ լափեցեք, ուրա՛խ տոնեցեք
20 Քանի սա չունի ո՛չ տեր, ո՛չ Աստված։

Ձունի՞ խղճացող մի սիրտ աշխարհում,
Ձունի՞ մեռելտեր, որ տխրի վրան,
Իրա որդիներ դառած որդունքներ
Ուտում են, ուտում, ուտում են իրան։

25 Բայց վա՛յ է նրանց, ովքեր որ մի օր
Դիակ դարձրին իմ հեգ հայրենիք.
Վա՛յ ձեզ, ճիվաղնե՛ր, չարագետ, ստոր,
Որ դուք նյութեցիք այս դավն ու չարիք։

Ընթրեցե՛ք, կերե՛ք, բարի՛ ախորժակ.
30 Բայց չմտածե՛ք ետ քաշվել կերից,
Ո՞վ, մի օր դուք էլ պիտ այսպես վժժաք
Դառած որդունքներ սրա շարավից։

Ձեզ համա՞ր է սա, ձեզ համա՞ր այս դին,
Փտում է, ուռչում, դառնում ահեղ դեզ,
35 Նա ձե՛զ է գալիս թույները շուրթին,
Փտած ձեռքերով սողում դեպի ձեզ։

Վա՛յ ձեզ թե բռնի, կքաշի իր մոտ
Երնե՛կ ինձ հազար թե աչքս տեսներ,
Ինչպե՞ս կխանձի ձեր դեզը կեղտոտ,
40 Օ՛, ատելինե՛ր, օ՛, չար ճիվաղներ։

ՓԱՌՔ ԸՆԿԱԾՆԵՐԻՆ

Այսօր, այս վեհ ուրախության և խոր սուգի հանդեսին,
Ո՞վ մարմարե նահատակներ, կանգնած ձեզ հետ միասին,
Ո՞վ խնկելի Սարդարապատ, Ղարաքլիսա, Աբարան,
Խոսեցնում եք իմ բերան։

5 Սակայն ինչպե՞ս խոսեմ ձեզ հետ՝ ցավի դողը իմ շուրթիս,
Ի՞մ, ապրողիս խղճի խայթով՝ մեռածներիդ հանդիման,
Ինչպե՞ս հնչեմ ձեր անունը՝ ամոթանքը ճակատիս,
Գովեմ ձեր փառքն աննման։

Բայց և ինչպե՞ս լռեմ հիմա, ինչպե՞ս լռե իմ բերան,
10 Վերհիշելով Սարդարապատ, Ղարաքիլիսա, Աբարան.
Դուք դնացիք, սակայն ինչպե՞ս իմ լուռ հոգին այսուհետ
Չըխոսի ձեր շուրի հետ։

Ահա տեսնում եմ ձեզ, մահատեսիլ, խստադեմ,
Երբ որ մահը մեռցընելու դուք դնացիք մահի դեմ,
Եվ դուք գտաք ձեր պտրածը—ձեզ համար՝ մա՛հ չարաթույն,
Հայրենիքին՝ փրկությո՛ւն։

Եվ այլ ի՞նչ բան պիտի սաղեր հերոսական ձեր սրտին,
Բուն այդ կատակն օրհասական հանդեպ մահվան գոռ սաստին.
Ո՞վ ավելի արհամարհեց, տեսավ մահը չըմեռած,
20 Եվ մեռնելիս չըդողաց։

Ահա այս վեհ ռազմադաշտում, որտեղ լսվեց մի մեծ օր,
Ձեր ռազմական խրոխտ գոչը, վերջի՞ն գոչը փրկության՝
Մենք երկու տոն ունենք այսօր—մեկ ձեր տոնը սգավոր,
Մե՛կ մեր սուգը խնդության։

25 Ահա ուժգին որոտում է ժողովուրդը ամբոխված,
Ձեր խնկելի շուքերի հետ, ռազմադաշտում հայրենի.

Ահա՛ կարմիր դրոշակներ՝ ձեր արյունով կարմրած
Եվ արյունով բյուրերի։

Դուք հաղթեցիք, ո՞վ ընկածներ, մահվամբ զմահ կոխեցիք.
30 Դուք հաղթեցի՛ք և չըթողիք ոչինչ էլի հաղթելու.
Մկրտվեցիք դուք մահի մեջ, մահվամբ դառաք դեղեցիկ,
Ձեզ փա՞ռք հավետ, ալելո՛ւ։

Վախենամ, թե երբեք էլ չես այն խոր ոգին վեհաշունչ,
Որին խոնարհ ես պատմում եմ իմ խինդերն ու իմ տրտունջ.
Վախենամ, թե սրտիս դավը թրծած կյանքովս իմաստուն
Ջուր եմ քեզ մոտ լցնում գինով, գինովն իմ հին, բոցկլտուն։

Ո՞վ ես, թախծոտ ասպետուհի, որ ժպտալով տրտմունակ
Ինքդ էլ ինձ հետ բարձրացնում ես, դավդ լցրած մահ ու կյանք։
Թե՞ մի քույր ես, որի նրբին, աղնվաշուք դեմքից վար
Երկու երկինք ջերմ գթության ինձ են նայում քույրաբար։

Ասա ինչո՞ւ թախծում եմ ես, քո՛ւյր իմ, քեզնից միշտ գաղտնի,
Եվ եթե դու ասպետ սիրա ես՝ ո՞ւր է խոսքդ սրտալի,
Թե՞ աննվաճ ոգի՞ ես դու, լուսի՞ն տխուր, միայնակ
Ու չես տեսնում այդ մենավոր՝ ձյունե թախծոտ լույսիդ տակ։

Օ՜, աչքերդ այդ մտերիմ, դեմքդ հիվանդ, թախծանույշ
Լուսանում են մի վեհությամբ, որ աղոթք են բերում հուշ։
Ես եմ կարծես քեզ ստեղծել մի օր քաղցր, դյութալի,
Սրտիս բոլոր աղնվությամբ քեզ կերտել եմ հրաշալի։

Բայց ինչո՞ւ է ձայնդ ինչպես լցվող գինի կարկաչում,
Շուրթիդ դուռն ի՞նչ ժպիտ է մեկ-մեկ նայում, ամաչում.
Ինչո՞ւ մերթ-մերթ մանուկ օրվա քրոջական մի կատակ
Դուրս է ցատկում, հպում է ինձ ու ծածկվում ունքիդ տակ։

Կարծես ինդրեմ՝ երկինք դառնաս՝ կանհունանաս դու մեղմիկ,
Կարծես դու իմ երկն ես անուշ, որ երգել եմ երջանիկ,
Կարծես կորցրած դու իմ սերն ես, որ գտել եմ անկորուստ,
Կարծես երկնից տուրք ես դժվար, տրվել ես հեշտ դու վերուստ։

25 Եվ ինչո՞ւ եմ քեզ մոտ ես պարզ, մի՞թե խիղճն ես իմ մաքուր,
Որից թաքուն չունեմ ոչինչ, որ չգիտե վարագույր,
Ինչո՞ւ քեզ մոտ եկավ հոգիս, երբ խոստացար դու ոչինչ,
Ինչո՞ւ քո այդ ոչինչն այսպես լի է դյութով ու թովիչ։

Եվ մեր վեպը, որ կատարվեց ի՞նչ տարօրեն, աննման,
30 Որ ավարտվեց իր սկզբում մեր երկուսիս հանդիպման.
Ես եկա քեզ ինչ հոգնած ծով, դու ինչ հանգիստ մի եզերք,
Եւ մղեցիր դու ինձ իսկույն դեպի վշտիս տիեզերք։

Մի՛ թաքցնիր վիշտը սրտիդ եղբայրական իմ աչքից,
Վաղուցհետե նայել եմ քեզ, երբ չես գիտցել բնավ ինձ,
35 Այն օր մեռավ հույսս քեզնից, երբ որ ծնվեց նա աննենք,
Այն օր ինձնից օտարացար, երբ որ ճանաչ դառանք մենք։

Բայց կա՞ արդյոք քեզնից բացի մեկը գոնե աշխարքում,
Որին այնքան քույր ճանաչեմ, ինչպես դու ես իմ հոգում։
Ի՞նչն է այսպես սիրտս բռնում իր հեզ ձեռքով դյութական
40 Եվ քեզ բերում, եթե մեր մեջ չկա գաղտնի մի այլ բան։

Քույրի՛կ, ո՛չ թե օտար ես ինձ, ոչ թե ինձ չես ճանաչում,
Սի՛րտդ, սի՛րտդ դու չես տեսնում, դինին, որ լի է միջում։
Մահի դինին, մահի սիրով եփված դինին ոսկեվառ,
Որ պիտ լցնես մի օր ինձ հետ գավդ վսեմ, սիրավառ։

45 Քո՛ւյր, կդառնանք երկու շիրիմ, խոսակիցներ գաղտնիքում,
Որ մահի մեջ պիտի լռենք, ինչ չենք խոսել և կյանքում։
Բայց և ինչ էլ որ կատարվի անօրինակ մեր կյանքում,
Մեզ երկուսիս մի վերջ պիտի կապի, պահի կապանքում։

Չե՞ս հավատում, նայի՛ր հոգուդ, որին դու չես հասկանա,
50 Չե՞ս, քանի նա իմ ստեղծած հոգին է վեհ, ի՛մն է նա։
Աղետավոր ճակատագրի խաղն էլ այսպես կամեցավ,
Որ մենք խնդանք այնտեղ միայն, ուր կա միայն դառն ցավ։

*
* *

Արծվաչքերը Գյոթեի՝
Իմաստությամբ լի,
Հանգած են մայրամուտով,
Մի վսեմ արևի.
5 Մի աշխարհ է անտիկ,
Ուրվացել վեհ ու լուռ,
Մի արձան է անմահ,
Փակում մի վարագույր։

ԱՐՓԵՆԻԿԻՆ

Հեռո՞ւն փերուզ երկնքի տակ
Մի շիրմաքար անհիշատակ
Ծածկել է քեզ, տխրում-լռիկ
Սրտիդ վրա, անո՛ւշ քուրիկ։

5 Տխուր է նա ու լո՞ւռ այնպես,
Ինչպես էիր կյանքումդ անտես,
Ուր տանջանքիդ չեղավ հերիք,
Իմ սրտախո՞ր, անբա՞խտ քուրիկ։

Եվ ի՞նչ հեռո՞ւ, հեռո՞ւ ես դու,
10 Ախ ինչպե՞ս գամ քեզ այցելու,
Հանգի՞ստ քնիդ խորն ու լռիկ,
Իմ տանջալի, սրտի՛ քուրիկ։

ԱՐՓԵՆԻԿԻՆ

Հանգի՞ստ քո սրտին, իմ տանջված քուրիկ,
Համբո՞ւյր, հեռավոր քո անշուք շիրմին,
Երնեկ իմանամ, խաղա՞ղ է հիմա
Տունդ հավերժի... Հանգի՞ստ քո սրտին։

5 Ինչպե՞ս է հողը գրկում քեզ հիմա,
Ի՞նչ քար է դրած ջերմ սրտիդ վրա ...

*
* *

Նա հողն ընկավ ու մեռավ,
Նա մի ղոհվող լուռ հատիկ,
Նա մեռավ, որ ծնի քեզ,
Քեզ, ոսկեհուռ իմ հասկիկ։

5 Դու մի լույս ես նրանից,
Դեմքից կաթած մի ժպտիկ,
Նա էր նայում այդպես ինձ,
Ի՞նձ, ոսկեհուռ իմ մանկիկ։

ՄԱՐԻԱՄԻՆ

Միայն մեռնել կարող եմ,
Ուրիշ բանի չունեմ ուժ.
Քանի որ դու չկաս էլ,
Դառել ես հուշ ու մշուշ։
5 Քանի որ ո՛չ ծաղկանց մեջ,
Ո՛չ լույսի ծով աշխարհում,
Չեմ տեսնելու քեզ երբեք,
Ու թախիծս չունի վերջ։

*
* *

Նա իր աչքերը թողեց քո մեջ,
Թողեց թախիծը և կշտամբանք,
Նա գնաց հողը—ճամփա անվերջ,
Դու ինձ նայում ես ինչ հիշատակ...
5 Նա գնաց այլևս—տարավ իր հետ
Վիրավորանքը, խոսքերը չասած,
Դու ինձ նայում ես ու միշտ հավետ,
Նաև հեռացած ու իմ դիմաց։

*
* *

Կանչում են նրանք հաղար ձայներով,
Անտառներն հեռվի, ու չեմ գնում ես,
Չեմ գնում, և ես լսում եմ խոր-խո՜ր
Սոսափը նրանց. «Կդաս դու մի օր»։

*
* *

Լեռները ջինջ կապուտակ,
Մութ ստվերներ մանիշակ,
Բաց ստվերներ մանիշակ,
Տակից նարինջ ու ոսկին
5 Խառնած սաղաֆ-սուտակին։

*
* *

Այս գիշեր հուշերիս հետ եմ —
Գիշերը մութն եմ մանում ես,
Գործում եմ մի անհուն պատանք,

Պատանելու համար վշտերս՝
Հավիտենության չափ անտակ։
Գիշերը հուշերիս հետ եմ ...

*

* *

Ա՜խ, իմ եղևիններս, իմ ոսկի՜ սոճիներս,
Հայրենի ջրերս սրտալի՜, փղձկո՜ւն,
Սերը մեծ սրտանի, կապտաչիկ ծաղիկներս,
Քուրիկներս երազուն, հովերս հեռու-հեռուն,
Դեռ հնչում եք դուք, կանչո՜ւմ ու շշնջո՜ւմ։

ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

Ինչ որ մարդ է գալկանում իմ դեմ,
Նայում՝ նրան չեմ ճանաչում.
Նա—այդ ես եմ, ես եմ, գիտե՞մ,
Բայց, ա՜խ, նրան չեմ ճանաչում։

*

* *

Շատ ծաղիկներ բերի հետս կյանքիս ուղուց,
Կա՝ որ խամրեց, կա՝ որ փոշի դառավ ունայն.
Բայց մի ծաղիկ—ա՜խ, չգիտեմ--վաղ ու վաղուց
Ընկա՞վ ճամփին, թե՞ գողացան—ընկերն էր այն։

*
* *

Ես մի աստղ եմ ընկած վերից,
Օտար, տիեզերային,
Ես զրկված եմ իմ բուն երկրից
Եվ հույս չունեմ իմ դարձին։

5 Ես դարերով շրջում էի
Աստղերի վառ ոլորտում,
Հրաշք էի, գործվում էի
Մի վառ, անվերջ հեքիաթում։

*
* *

—Ես չեմ հավատում, սին են խոսքերդ.
—Այն ժամ խոսք խնդրիր վեհ մարդուն վայել.
Անկատար մնան թե պահանջներդ,
Կարող եմ վիշտս սրտումս պահել։
5 —Շատ լավ, դե լսիր՝ քեզ շատ խնդրում եմ,
Անդարձ հեռացի՛ր քո ճանապարհով։
—Դժվար խնդիր է, բայց երբ սիրում եմ,
Պիտի կատարեմ, մնացե՛ք բարով ...

Անցան տարիներ։ Աղջիկն արտասվեց՝
10 Ես ինչո՞ւ նրան իղուր մերժեցի.
Բայց տղան սիրո երդումը պահեց,
Այլևս չեկավ աղջկան այցի։

*

* *

Ընկնեմ քնեմ վշտիս հետ,
Գուցե դու դաս երազում,
Ու հանդարտվի այնտեղ գեթ
Իմ կարոտը սիրասուն։

5 Գուցե մի խոսք շշնջաս,
Ձեռդ դնես իմ սրտին,
Գուցե շոյես և հույս տաս
Չլինելիք անհայտին։

Գուցե այնտեղ կատարվի
10 Ինչ որ մերժված է ընդմիշտ,
Սիրո, խինդի փոխարկվի,
Որ ինձ դառավ խորը վիշտ։

*

* *

Ներիր ինձ, Ա՛ննիկ, որ սրտիս ճամփով
Դեպի քեզ եկա այնքան անզգույշ
Եվ դիպա սրտիդ մատներիս տապով
Եվ այսպես հիմա անմիտ ու անուժ,
5 Խոսքեր եմ ասում քեզ խորթ, անգիտակ,
Միշտ ջերմ ու անվերջ և միշտ ընդունայն,
Ինչ որ կարող է ասել ինձ նման
Սիրո մեջ հաղթված մի անբախտ էակ։
Ի՞նչ անեմ, Ա՛ննիկ, քեզ հետ հանդիպման
10 Մեր այս դեպքի մեջ բացվեցին միայն
Հոգուս գանձերը՝ սրտիս մեջ պահված,
Որ հիմա իզուր ուրիշ են փարված։
Մի՛ հանդիմանիր, մարդիկ չեն այնքան ...

*
* *

Թռավ բոպեն սահուն
Բոպե մին և... Անհուն,
Հավերժ պիտի հիշեմ
Զգացումն այդ վսեմ,
5 Մի համբույր էր, մի՜, խո՜ր,
Մի աշխարհ էր բոլոր։

*
* *

Ինձ նվեր բերիր մի ոսկի աշուն,
Տերևներ աշնան, ողջ ալ-վառ, նախշուն,
Ասիր ա՜ռ, սրանք դու շատ ես սիրում։
Առա—դրանց մեջ կար մի վառ գարուն։—
5 Պահել եմ դրանք սրտիս էջերում,
Ինչպես գրքի մեջ խոհեր խո՜ր, անհուն։

*
* *

Հեռացել ես աստղի պես,
Եվ սիրելի, սրտառու,
Լուսո՜վ, կարո՜ղ ժպտում ես
Ե՛վ մտերիմ, և՛ հեռու։

5 Բայց և ինչպե՜ս մոտ ես ինձ՝
Ինչպես սիրտս կրծքիս տակ։

*
* *

Եթե իրավ պիտի մեռնենք,
Եվ ասում են պիտի մեռնենք,
Թող մահը գա այն վեհ ժամին,

Երբ իմ սիրտը քեզնով է լի։
5 Եվ ի՞նչ ուժեղ, ուժեղ ես դու,
Ի՞նչ անմահ ես, ի՞նչ կենսատու։

*
* *

Սպասի՞ր, սպասի՞ր,
Մի օր ինձ կկորցնես,
Ինձ այնպե՞ս կորցնես դու,
Որ փնտրես՝ չգտնես։

5 Այնպես թանկ դառնամ քեզ՝
Երբ որ չեմ լինի ես,
Այն օրը սիրես ինձ,
Երբ հավետ կորցրած ես։

*
* *

Մի՛ գնա, մնա՛, միշտ մո՞տ, սրտիս մո՞տ,
Թող միշտ տեսնեմ քեզ.
Թող ինչպես գարուն, մայիս, առավոտ,
Դիմացս ելնես։
5 Քիչ հեռանալդ հիշեցնում է ինձ
Հեռանալն ընդմիշտ,
Վախում եմ դնաս, չգաս ու քեզնից
Մնա լոկ մի վիշտ։

*
* *

Լսիր, ի՞մ վերջին վերջին, ճշմարի՞տ վերջին,
Այնպե՞ս ճշմարիտ վերջին, ինչպես որ առաջին,
Այն ճշմարիտն առաջին, որ վառվեց ու հանգավ,
Այնպես էլ դու կհանգչես, և ինձ հետ միասին։

*
* *

Կանչում եմ մտքերիս ետևից,
Թռչում են չեն լսում էլ ինձ.
Գնում են կորչում անցյալի ծովում,
Պարում են, պարում և ո՞ւմ։

*
* *

Ինչ որ արիր՝ քե՛զ արիր,
Լավ էր, վատ էր, քեզ արիր,
Ես գնում եմ, չեմ լինի,
Դու մնում ես, քե՛զ արիր։

5 Խենթությունս բերիր դո՛ւ,
Խենթությունս ներիր դո՛ւ,
Քո մեղքն էր սա, ոչ թե իմ,
Ինձ ի՞նչ, երբ ողջն արիր դո՛ւ։

Մի ամսվ ելավ բարձրացավ,
10 Եկավ, աճեց, սևացա՛վ,
Պայթեց, շանթեց գլխներիս,
Գնաց, կորավ—չո՛ռ ու ցա՛վ։

*
* *

Այդ ո՞ւմ կանչն է ինձ կանչում,
Հեռվից հեռուն հառաչում,
Ո՞վ է սրտիս ձայն տալով
Մեկ մոտենում, մեկ կորչում։

5 Մի թել նրբին ու անտես
Խորունկ քաշվել է իմ սրտից

Դեպի սիրտդ, քեզ կապել —
Եվ դու իմն ես —չգիտես։

*

* *

Ի՞նչ գեղեցկացար, երբ մերժեցիր ինձ,
Նոր տեսա դեմքդ այնպես նրբենի,
Ինչ հեզ շոյեցիր վերջին անգամ ինձ,
Ինչ մեղմ երեկո, որ պիտի մթնի։

5 Ինչ խո՞րն հեռացրիր, ինչ լա՞վ մերժեցիր,
Ես նո՞ր զգացի ի՞նչ բան է մերժում,
Ես նո՞ր իմացա· որ ի՛սկ-ճշմարիտ
Նա՛ է սիրո տեր, ով սերն է կորցնում։

Մերժված եմ քեզնից, գետնած մի ծաղիկ,
10 Անդյուրթիչ մի վարդ ոտներիդ ընկած.
Ի՞նչ քաղցր է, սե՛ր իմ, տանջվելը մենիկ,
Ի՞նչ վեհ է լինել երբեմն մերժված։

Դեռ չես լքել ինձ, դեռ դեմքդ ձեռքիս,
Շուրթերս գլխիդ՝ ես հատնում եմ հեզ,
15 Դեռ մրմնջում եմ մեծ վիշտը կյանքիս
Եվ անհուն դարձնում քո սենյակն ու քեզ։

Խորհում ենք ինչ որ բարձր ու խոր բաներ,
Անցել ենք այն կողմ կյանքից առօրյա,
Բարձր ենք տանջանքից և խինդից էլ վեր,
20 Ավելի վսեմ քան սերն է ու մահ։

Եվ ի՞նչ խոնարհ եմ ես անցել դամբան,
Ի՞նչ մտերիմ են աչքերդ հայնկուսի,
Ի՞նչ քաղցր է երբեմն կորցնելն ամեն բան,
Մարել ճրագը հուսկ վերջին հույսի։

Ի՞նչ անհունություն, ի՞նչ վեհ ու վսեմ
Տառապանք անհուն, ի՞նչ անհուսություն,
Քույրի՛կ իմ մահվան, ճշմարի՛տն ասեմ,
Քեզ նո՞ր եմ սիրում, երբ իմն էլ չես դուն։

* *

Հերոսների ջերմ սրտերից,
Բխում ես դու զուլալ աղբյուր,
Ամեն շուրթով քեզ խմելիս,
Քեզ տալիս ենք սեր ու համբույր։

* *

Ասա ինձ մի խոսք, մե՞ծդ Գյանջևի,
Այդ ինչպե՞ս եղավ, որ այսքա՞ն վսեմ,
Աղնիվ քո ցեղը վեհ պոետների
Այսքա՞ն զարդարեց դարերը դժխեմ,
Այսքան վառ ձուլեց ոսկեղեն բառեր,
Հանուն մարդկության և եղբայրության,
Չկարաց մեղմել արյունն ու ավեր,
Չկոտրեց սուրը արնոտ մարդկության։
Հանուն սուրբ սիրո, կոչեր երգեցին
Ե՛վ Պուշկինը ջինջ, և՛ Տոլստոյ հսկան
Ե՛վ Ռուսթավելին, և՛ Նարեկացին,
Երգեց Բեթհովեն, Շեքսպիրն այնքան,
Երգեցիր և դո՛ւ զավակդ հպարտ,
Կից հայրենիքդ իմ հայրենիքին,
Բայց դեռ հոսում է արյունը առատ
Ու սպասում ենք դաժան գալիքին։

*

* *

Ի՞մ ընկերներ, ի՛նձ մոռացեք,
Երբ որ կղաք իմ հուղարկման.

Ուրախ խոսքով եկեք անցեք,
Փողոցները մինչ գերեզման։

5 Իմս մահն էր, շատ մի՛ հոգաք,
Միևնույն է, ես որ՝ չկամ.
Դո՛ւք եք միայն կենդան ու կա՛ք,
Բանկը ձեր կյանքն է բյուր անգամ։

Ինձ մոռացեք, զրո՛ւյց արեք,
10 Տխուր ճամփին իմ հուղարկման,
Ծիծաղեցե՛ք, զվարճացե՛ք,
Այդպես հասցրե՛ք ինձ գերեզման։

Անեկդոտներ, դեպքեր պես-պես,
Անճիշտ հաճախ՝ ողջ պատմեցեք.
15 Չեմ նեղացել դրանցից ես,
Թեկուզ նորերն հնարեցեք։

Ես ուզում եմ ծիծաղ լսել,
Երգ-ծիծաղով դնալ ձեզնից,
Ես եղել եմ ժիր, կենսասեր,
20 Կյանքով լի եք տեսել միշտ ինձ։

Ես ուզում եմ ձեզ հետ լինել
Այդ քիչ տեղն էլ մինչ գերեզման,
Կյանքի երգում ձեզ միշտ սիրել,
Այդպես ընկնել հավերժ ճամփան։

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻ ՁԵՌ ԷՇ

(Ասա գոմեշ)

Ոեխը ցցեց երկնի կապույտ վրանը,
Մեկ էլ ոնց էր՝ մի ճառագայթ ընկավ բերանը։
—Սա է լույսն, ասաց.
Սրա՞ համար են գլուխ չարդում,
5 Լո՞ւյս, լո՞ւյս՝ երգում, գրում, կարդում։
Մի շյուղ դարման
Սրա նման
Ատամիս տակին ավելի լավ է,
Թե չէ՝ այս լույսը ի՞նչ հորս ցավն է։

ՈՒՂՏՆ ՈՒ ՃԱՆՃԸ

(Առակ)

Բան եմ պատմում լսեցե՛ք։
Միայն կարճ է, ներեցե՛ք։
Վնասակար, անպիտք, անդուր սև ճանճը
Աշնան վերջին մտավ ուղտի ականջը.
5 Ողջ ձմեռը ձմեռեց,
Քնեց այնտեղ ու ապրեց։

Բայց հենց մյուս գարնան դեմ
«Շնորհակալ եմ,—ասաց ուղտին,—գնում եմ»,
—Է՛հ, չիմացա ո՛չ գալդ,

Ո՛չ էլ հիմա գնալդ.—
Ասաց ուղտը անտարբեր
Քմծիծաղով, քիթը վեր։

Անպետք մարդու բանն է սա.
Պիտանի՞ ես, ա՛յդ ասա.
Թե չէ անպետք գնա՛, ե՛կ.
Մարդ կսիրի՞ քեզ։—
Երբե՞ք։

ԵՐԳ ԽԱՂՈՂԻ ԵՎ ՎԱՐՈՒՆԳԻ

Խաղողիկն ասաց վարունգին,
Եկ ընկե՛ր դառնանք իրար,
Դու ներքև, կանաչի միջին,
Ես վերև թփերի միջին։
Ու դառան ընկերներ քնքույշ
Վարունգն ու խաղողն անուշ։
Ա՜յ խաղող կանաչի միջին,
Ա՜յ վարունգ տերևի միջին։

Վարունգին սիրեց խաղողը,
Վարունգն էլ անուշ խաղողին։
Ու ասաց խաղողը. ջանի՛կ,
Ապրինք միշտ ուրախ երջանի՛կ,
Դու ինձ միշտ ժպտա ու սիրտ տուր,
Ես էլ քեզ համբուրեմ ամուր։
Ա՜յ խաղող տերևի միջին,
Ա՜յ վարունգ կանաչի միջին։

Մի օր էլ ներս մտան այգին
Կտրեցին տարան վարունգին,
Նայեց խեղճ խաղողը վերևից՝

20 Տարել են վարունգը ներքևից։
Ու կանչեց. Ո՞ւր ես, վարունգի՛կ,
Ո՞ւր ես, իմ ընկեր անուշիկ։
Ա՜յ վարունգ կանաչի միջին,
Ա՜յ խաղող տերևի միջին։

25 Ու ասաց. այ ծառեր, գիտե՞ք
Իմ վարունգի տեղը՝ գտե՛ք։
Ծիտիկներն եկան թռան
Ջոր ու դաշտ ման եկան, դարձան.
Չկա քո վարունգը սիրունիկ,
30 Չկա քո ընկերն անուշիկ։
Ա՜յ խաղող տերևի միջին,
Ա՜յ վարունգ կանաչի միջին։

Մնաց ու խաղողը մնաց
Մեն մենակ տերևի միջին
35 Ու մենակ տերևի միջին
Թափեց շատ արցունքներ նա ջինջ։
Ու ասաց. մանկիկներ գուցե
Դուք գտնեք սիրունիկ վարունգիս։
Ա՜յ վարունգ կանաչի միջին,
40 Ա՜յ խաղող տերևի միջին։

Ու ասաց. ասեք ե՛տ դառնա,
Ասեք թող տեղն ասի՝ գնամ,
Թե նեղն է՝ շուտ հասնեմ, օգնեմ,
Թե ծարավ՝ ջուր ու ցող տանեմ,
45 Թե չոր է տեղը, ցուրտ, փոշի՝
Գամ տերևս անկողին անեմ։
Ա՜յ խաղող տերևի միջին,
Ա՜յ վարունգ կանաչի միջին։

Եկան ու ասին՝ խաղողի՜կ,
50 Ասենք թե վարունգիկդ ուր է,

Մառանն են վարունգիդ տարել,
Շատ լացել՝ աչքերը ջուր է։
Քո դարդն է լալիս տխուր,
Քո ճամփեն է մնում միշտ լուռ։
Ա՜յ խաղող տերևի միջին,
Ա՜յ վարունգ կանաչի միջին։

Ու տարան խաղողին տարա՜ն,
Ցույց տվին լացող վարունգին,
Վարունգը կարասն էր դրած,
Խաղողն էլ վերևից կախ արին։
Ու նոր որ կարոտներն առան
Լավ, ուրախ նոր որ քուն մտան։
Ա՜յ խաղող թփերի միջին,
Ա՜յ վարունգ կանաչի միջին։

ԲԱՆՋԱՐՆԵՐԻ ԳՐՈՒԸ

Ձսե՛ք այնտեղ ո՞վքեր կան, ո՞վ,
Հավաքվեցե՛ք, եկեք ժողո՛վ,
Եկեք ժողո՛վ, արմբտիքնե՛ր
Եվ բանջարներ։
—Այս ո՞վ է մեզ, ժողով կանչում,
Ձայնը գնաց գեղամիջում։
—Էլ ո՞վ կլնի, Կարտոֆիլն է,
Տեսեք ոնց էլ ձայնը ղի՛լ է,
Մոի՛կ, մոի՛կ, ո՛նց է գալիս
Բադի նման լնգլնգալով,
Գլուխն ու փոր
Կլոր բոլոր,
Գլդի գլոր գլդորվելով։

Կարտոֆիլն էր՝ եկավ կանգնեց
Ծանդր ու մեծ
Ու ճառ խոսեց.—
—Ձեզ կանչեցի ես ժողովի,
Որ աշխատենք ընկերովի.
Այս տարի պետք է երկիրը լցնենք
Բանջարեղենով,
Արմբտիքներով,
Դե՛, մեջտե՛ղ եկեք,
Եվ ասե՛ք մեկ-մեկ,
Ովքե՞ր կօգնեն մեզ և կօգնեն ինչո՞վ
Օրակարգին էլ համաձա՞յն եք.

Շատ կարևոր է, համաձայն ենք,—
Զայն տվին բանջար-արմբտիքները —
Դոկտոր Սոխը,
Բուժակ Բոխը,
30 Բժիշկ Սխտորը,
Քույր Պոմիդորը,
Պրոֆեսոր Դդումը,
Գեր Ճակնդեղը,
35 Պոլոզիկ Սեխը.
Հետո նաև Ձմերուկը,
Ուռած Շաղգամն ու Վարունգը։

—Ապա՛, դոկտոր Սո՛խ,
Ասեք մի լավ խոսք։
40 Սոխն առաջ եկավ, բերանը բացեց,
Սուր կծու հոտը չորս կողմ տարածեց։
—Դե որ ես եմ—ասաց Սոխը,—
Առաջին խոսողը.
Ահա ասե՛մ կարգով միայն
45 Ինքնաքննադատության՝
Հոտով-համով ես կծում եմ,
Բայց բուժում, պիտանացու եմ.
Եփած եմ լինում և կամ թե հում եմ,
Բայց միշտ հարգի եմ ես իբրև համեմ։
50 Եվ ասեմ կարգով քննադատության.
Որ Սխտորն էլ հոտ ունի
Մի փոքր անհաճելի,
Բայց շատ պետք է առողջության,
Այ ինչպես
55 Ասենք՝ ես։
—Դոկտոր
Սխտո՞ր...
—Ես ոչինչ չունեմ ավելացնելու,—
Ասաց Սխտորը լուրջ եղանակով,—

Պատրաստ եմ երկրին միշտ ծառայելու
Վիտամիններով.—
Իմ ուժեղ հյութերով։
—Պրոֆեսոր Դդո՞ւմ,
Դուք խո՞սք եք խնդրում։

Պրոֆեսոր Դդումը.
—Հարգելի՛ Կարտոֆիլ,
Եվ բարեկամնե՛ր նույնքան հարգարժան.
Ես շատ չեմ խոսիլ.
Պետք է հայտնեմ ձեզ այսքանը միայն,
Որ թող իմանան հավաքվածները.—
Ես բժշկում եմ երիկամները։

Կեցցե՛ս որ կեցցես, պրոֆեսոր Դդում,
Մեծ գովասանքի արժանի ես դու։
Է, հարգելի Բո՞ղկ,
Դուք ուզում եք խո՞սք,—
Խնդրե՛մ։
—Իմ խոսքը. Ի՞նչպես ասեմ,—
Արմատիքի մեկն էլ ես եմ.
Ես ունեմ կծու համ,
Որ ախորժակ բանամ,
—Ախորժա՞կը, օ՜,
Լուրջ բան է, այո՜,
Ախորժակը հենց
Առողջություն է մեծ,—
Ասացին բոլոր հավաքվածները։
—Ի՞նչ կասեն մյուս բարեկամները։
Բայց ձյունն արդեն հալվել է,
Գարունն արդեն բացվել է։
Մնացածներն էլ նույնը կասեն.
Թող դաշտերը շատ չսպասեն.
Գնանք հերկված հողում ցանվենք
Ու լավ բերքով աշխարհ լցնենք։

Նախ և առաջ գնանք տեսնենք
Տրակտորիստն ի՞նչ է անում.
95 Ով իմանա՝ հասակով մեկ
Մեկնվել է քաղցր քնում։
—Գնա՛նք, կանչե՛նք, արթնացնե՛նք։
Ի՞նչ քնելու ժամանակ է,
Չիլ դոշեցին՝ Դոկտոր Սոխը,
100 Միշտ լուրջ խոսողը,
Բժիշկ Սխտորը,
Քույր Պոմիդորը,
Պրոֆեսոր Դդումը,
Պղուկը քթումը,
105 Գեր Ճակնդեղը,
Պոլոպիկ Սեխը
Հետո՝ նաև Ձմերուկը,
Ուռած Շաղգամն ու Վարունգը։

Հո՛ւռռռ,—վեր կացան ու վազեցին
110 Հենց շիփ-շիտակ
Տրակտորիստի տունը
Ու ի՞նչ տեսան, օհո՞ ...
Տրակտորիստն ու մի խումբ այգեպան,
Տրակտորիստն այստեղ,
115 Այգեպաններն էլ նրան հարևան
Դիմացի տանը
Մեկնվել են, քնել անուշ.
(Իսկ ժամն է ուշ...)։
Է՛հ,—Կարտոֆի՛լ դու՝ Կարտոֆի՛լ,
120 Այստեղ որ մին չդուռց դիլ,
—Ի՞նչ եք վեր ընկել ու հանգիստ քնում,
Բա դուք գործ չունե՞ք, գործի չի՞ք գնում,
Դարձավ արմբտիքներին,
Քաջարի դոկտորներին.
125 Դե ապա լցվի՛ք,

Մի լավ ցո՛ւյց տվեք,
Այս անգործներին։
Այս էր ասաց ու
Վրա տվին թունդ.
130 Ու էլ իրար հե՞րթ են տալիս
Դոկտոր Սոխը,
Բուժակ Բոխը,
Քույր Պոմիդորը,
Բժիշկ Սխտորը,
135 Կարտոֆիլը գլդի գլոր,
Գլուխն ու փոր
Կլոր բոլոր.
Շրա՜ա՜խք դուռը բաց արեցին ու
Պատուհանից,
140 Ծիննելույզից,
Արանքներից
Ներս թափվեցին ու
Տո՛ւր թե կտաս՝
Տրակտորիստի գլխին, ուսին,
145 Փորին, մեջքին ու երեսին ...
Թրախկացրին,
Շրախկացրին,
Աչք ու երես կուրացրին։
—Վա՛յ, վա՛յ, տո՛, տո՛, ի՞նչ եք անում,
150 Վա՛յ, գլուխս, վա՛յ, վա՛յ փորս,
Վա՛յ ծոծրակս, վա՛յ, վա՛յ կողս,
Ա՛յ դոկտորներ,
Պրոֆեսորնե՛ր,
Ի՞նչ պատահեց,
155 Ի՞նչ եք անում։

—Ո՞նց թե,—գոռաց ժիր Կաղամբը,
Ու դո՛ւմի իջեցրեց բամբը։
—Ախր լսե՛ք,

Մի սպասե՛ք,
160 Դոկտո՛ր Կաղամբ
Պրոֆեսո՛ր Դդում,
Հարգելի՛ Սխտոր,
Ա՜յ Պոմիդոր,
Ախր լսեք, է՜,
165 Դե, լսեք, է՜,
Տո լսեք էէ՜ է՜ է՜ է է է է
է, է՛, է՛, է՛, է՛ ...
Ի՞նչ եք բոթում,
Ի՞նչ եք թակում,
170 —Բա ինչո՞ւ դաշտ չես դուրս եկել,—
Բանջարները վրա տվին,—
Ինչո՞ւ հողը դեռ չես հերկել,
Ցանքն ինչո՞ւ ես ուշացնում,
Գործը թողնում, ինքդ քնում։
175 —Ո՞վ է քնում, ո՞վ է քնո՜ւո՜ւո՜ւո՜ւմ,—
Գոռաց քնատ տրակտորիստը,—
Դա՜շտ էլ եմ վաղուց դուրս եկել,
Հո՜ղն էլ եմ վաղուց ես հերկել
Այնքան շատ,
180 Որ հասել եմ Արտաշատ։
Ի՞նչ եք հենց հա՜ թափվել վրաս,
Թշնամի եմ հենց իմանաս։
Նախ իմացե՛ք,
Հետո՜ խոսեք։
185 —Վա՜յ ներողություն, խի՜ստ ներողություն,
Չունեինք գործից մենք տեղեկություն.
Ասին բոլոր դոկտորները
Եվ բոլոր պրոֆեսորները։
—Դու էլ, տնաշեն, այդպե՛ս ասա,—
190 Ասին բոլոր բանջարները։
—է, թողնո՞ւմ եք որ խոսք ասեմ։
Չեք իմանում՝
Հետո անում...

—Կրկին ներողություն, ընկե՛ր տրակտորիստ,
Սխալվել ենք խիստ։
Հատո՛ւկ ներողություն,—
Ասացին ու ծիծաղեցին բոլորը,
Ամենից զիլ Գլդիգլորը։
—Դե վեր հիմա էլ՝ այգեպաններին.
Նրա՞նք ինչ են անում
Ի՞նչ են վեր ընկել օրը կեսօրին,
Ինչո՞ւ չեն ցանում,—
Գոչեց Կարտոֆիլն ու
Հո՜ւռ՜ռռռռ,—գնացին ու
Դուռը բացին ու
Գո՜ւ ռ՜ռ ռ ռ գբբռռ, վրա տվին՝
Դոկտոր Սոխը,
Լուրջ խոսողը,
Քույր Պոմիդորը,
Պրոֆեսոր Սխտորը,
Եվ բոլորը։
Վրա տվին ու
Ո՞նց են տալիս՝ փորներին, գլխներին,
Մեջքներին, ուսներին ...
Էլ այգեպաններ, վա՜յ այգեպանն՜ը,—
Քնած տեղում հենց հուշտ եղան
Ու վեր թռան-—
Ի՞նչ է, ի՞նչ է, ի՞նչ կա, է՛, տո՛,
Բան հասկացրեք, ծեծը հետո՛.
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ եք անում,
Գժվել հո չե՞ք,
Թողե՛ք, թողե՛ք,
Տո լսեք, է՛,
Տո լսեք, է՛,
Լսեք է է է է է է է է է՛
է՛, է՛, է՛, է՛, է՛, է՛, ...
—Բա ինչո՞ւ չեք դաշտ դուրս եկել,

Տրակտորիստը հող է հերկել,
Իսկ դուք էստեղ ի՞նչ եք անում.
230 Ի՞նչ եք վեր ընկել ու քնում։
—Է՛, նախ լսեք՝
Հետո խոսեք.
Վեր ընկնելը քնե՞լը որն է
Այսօր չէ՞ որ հանգստի օրն է։
235 Չեք հարցնում ու վրա եք տալիս ...
—Դե, լա՛վ, ներեցե՛ք, մեր պրոֆեսորներ,
—Չէ՝ ախր առաջ բանը մի հարցրե՛ք,
—Այո, կհարցնենք, մեր պրոֆեսորներ։
—Ախր սկզբից չեք ասում ոչինչ ու
240 Տալի՛ս եք հա՛ գլխին, հա՛ փորին, մեջքին ու ...
—Դե, լավ, հարցնում ենք, պատրա՞ստ եք
ցանքին.
—Ա՛յ այդպե՛ս հարցրեք.—պատրա՞ստ ենք, այո՛,
Հերկել ենք տվել հողերը, այո՛,
Պարարտացրել ենք բոլորը, այո՛,
245 Վաղը հենց ծեգին
Անցնում ենք ցանքսին։
Դե որ այդպես է, եկեք մենք հաշվենք,—
Ասաց բոլորին ժիր Կարտոֆիլը,
Ու գնանք պատրաստ հերկերը դիտենք։
250 —Մենք համաձայն ենք,—
Ասացին բարի այգեպանները։
Տրակտորիստն ո՞ւր է, նրան էլ վերցնենք։
Գնացին վերցրին տրակտորիստին,
Գնացին դաշտը ու հենց տեղ հասան,
255 Տեսան ի՞նչ տեսան.—
Տրակտորիստը արտերը հերկել,
Այգեպաններն էլ ածուներն հարթել՝
Իրենց է սպասում մայրենի հողը,
Մարդկանց բոլորի հենց կյանք տվողը։
260 Կարտոֆիլը ոգևորվեց,

Զայնը գցեց դաշտերով մեկ.
—Այ դուք շա՜տ ապրեք
Աշխույժ այգեպաններ,
Մեր ժիր տրակտորիստ։
Նո՜ր որ հասկացանք, շատ նոր նոր բաներ
Դե, լավ է, լավ է,
Եվ այլն, բավ է։
Լավ են ամենքն իրենց տեղը,
Լավ է մեր ողջ բանջար-ցեղը,
Շա՜տ ապրեն Սեխը,
Ե՛վ Ճակնդեղը,
Ե՛վ Ձմերուկը,
Ե՛վ մեր Վարունգը։

Ապրի՛ մեր ժիր տրակտորիստը,
Ապրեն մեր այգեպանները։
Մի վերջին խոսք էլ՝
Գիտե՞ք ինչով ենք մենք օգտակար.
Նրանով, որ մենք ունենք վիտամին
Այսինքն՝ ուժ, որ տալիս ենք մարմնին,
Ով մեղնով սնվի՝ չի լինի տկար.
Դե շուտով անենք,
Եվ մարդկանց օգնենք։
Բայց մենք պետք է որ լավ հողում աճենք։
—Այո՜, այո՜, հողո՜ւմ, հողո՜ւմ,
Զայն տվեցին ողջ ժողովում
Հո՜ղը, հո՜ղը,
Հո՜ղն է ողջին կյանք տվողը։
Եկեք ցանվե՛նք,
Հողում աճենք,
Որ աշնանը հողից հանվենք
Մարդկանց կյանքը ապահովենք։

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ԿՅԱՆՔԻ ՏԵՍԻԼԸ

(Համբարձման գիշեր)

Ժողովրդական ավանդություն

1

Սարերին բաղմեց սևահեր գիշեր՝
Աստղերը ճակատին
Ու քանդեց-թողեց ծամերը սև-սև,
Շաղ տվեց շորս դին,
Հեքիաթի նման աղբյուրն է հոսում
Գիշերվա դյութիչ շուրթերի վրան,
Կարծես թե խորքից ասուված է խոսում,
Եվ աշխարը դյութված լսում է նրան։

2

Այն գիժ Ճորոխի ժայռերն են ահա,
Որ ինչպես մթնած երկու մոայլ ամպ՝
Կարծես դիմարդել երկու ամրահա՝
Իրար են նայում կանգնած պատահմամբ։
Այն գիժ Ճորոխն է, որ ահեղ ձորում
Քարվանի նման շրվում է իր շուն,
Որ մեկ գոռում է, մեկ նվաղ մարում՝
Պտրելով ճամփա խավարի միջում։

3

Սրբած է, զուգված Համբարձման երկինք,
Քաշված են մեկդի ամպերն ու դուման.
Այս գիշեր շքեղ սարբված է հարգինք,

19—179

20 Համբույր են տալու Մեջնունն ու Լեյլան։
Այս գիշեր խումբ-խումբ բույլերի նման՝
Աստղերի հույլեր ժպտալով զողտրիկ՝
Երկրի անհուն դահլիճը նկան.
Յրվեցին զվարթ Համբարձման երկինք։

4

25 Հանգչո՞ւմ են, հալչո՞ւմ ձայներն աշխարհի,
Հնչում է ժամը խորի՞ն պատանձման,
Դիզվում են, կապվում ջրերը երկրի,
Ականջ է դնում գիշերն Համբարձման։
Սիրուն հարսի պես զուգված են ծաղկունք,
30 Մնում է անտառն ուրախ հարսանքի,
Մինչև որ երկնից կիջնի սուրբ մի տուրք,
Կխոսեն բոլոր, փարվեն մեկ-մեկի։

Եվ երբ որ հալվեց հնչյունը վերջին,
Երկնքի անհուն դահլիճի միջին
35 Դողացին, թռա՞ն երկու աստղ իրար
Ու համբուրվեցին երկար ու երկար։
Փարվեցին անդուստ կարոտի նման
Երկու սիրահար— Մեջնունն ու Լեյլան։

Ու լցվեց աշխարք հաղար ձայներով,
40 Խոսեց բնությունն իր անուշ լեզվով,
Եվ նրա հնչյուն բարբառը գաղտնի
Ջորս կողմից լսվեց այնպես պա՞րզ, հայտնի՞...

5

Բնության ոգի

Ամենքիդ համար սահմանել եմ ես
45 Եվ կյա՞նք խնդագին, և մա՛հ սևատես.
Թող խայտա՛, ապրի՛, ով ունի եռանդ,

Իսկ թո՞ւյլ-հոգնածին բո՞ւն կտամ հանդարտ։
Ահա՛ ձեր առջև գանձարանն իմ լայն,
Առե՛ք, տիրեցեք՝ ինչի ցանկանաք,
50 Պտրեցեք դուք ձեր տենչածը միայն —
Կգտնեք բոլոր ...

6

Անթար աբեղա (իր խցում, գիրքը փակելով)

Բաղմե՞ց վեհ գիշեր... Բա՛ց թողեց ահա
Խավարի դռնից հոսանքը մթնի.
55 Դաշտերում, ձորում ղեփյուռներն հիմա
Փչեցի՞ն փողերն հանգստյան քնի ...
Ծիծաղեց ճրագն հեռավոր գյուղի,
Ծեծեց դուռն արդեն ճամփորդը վերջին,
Եվ աղբա՞տ արքան իր անզարդ ճյուղի—
60 Բուչունը պանդուխտ—օրհնեց Արարչին ...
Սակայն ցո՞ւրտ է կյանքն ինձ համար,
Մխիթարա՛նք չունի մի վառ,
Ա՛խ, մահու չափ տխո՞ւր է նա,
Մեկ էլ ունա՞յն ու վերանա...
65 Մաշվա՞ծ են մեր իղձերն ու հին՝
Ինչպես լույսեր դժդույն վառած,
Ու մենք հիվա՞նդ, թուլամարմին՝
Դեպի մահն ենք գնում հոգնած ...

Բնության ոգի (կանչելով քամուն)

70 Գնա՛, կանչիր մեր Անթարին։

Քամի

Ա՛խ, այն հիմար գրքակերի՞ն ...

Բնության ոգի

Այն թույլ մարդուն, հողուն հողում,
Որ կանթեղի լուսովն աղում
Ապավինած մի խե՜ղճ գրքի՝
Քաշվե՜լ կյանքից, դողում է լուռ,
Գնա՛, ծեծի՛ր լուսանցն զզույշ,
Թո՛ղ դա, ցրի վիշտը տխուր։

Անթար (բանալով պատուհանը)

Քնա՜ծ է աշխարք՝
Իր խաղաղությամբ հզոր ու հանգիստ,
Իր զարդերի մեջ շքե՜ղ ու անկարդ,
Լույսերով ժպտուն, մութերովն իր խիստ ...

Քամի (պտտելով սենյակում)

Ի՞նչ փոշի է նստել այստեղ
Հին գրքերին սև ու դեղնած.
Փչի՛ր այսպես գոնե մի հեղ,
Մաքրիր ապրանքդ, է՜, հե՛ր օխնած։

Անթար (դուրս նայելով)

Այստե՜ղ, այս տա՜նն անհունացած,
Լռության մեջ խորհրդավոր,
Բարբառո՜ւմ է կարծես աստված
Մտերմաբար ու ահավոր։
Ջեմ կարենում հասնեմ նրան,
Մեկ թվում է տեսնում եմ Այն,
Մեկ էլ կարծես երաղ է Նա,
Որ պիտ սահի, անհետանա ...

Բնության ոգի

Խաղաղությո՜ւն քեզ, եկ ինձ մոտ վստահ,
Թո՛ղ ամեն երկյուղ, կասկածանք և ահ.

Ի՞նչ է մի կյանքը մարդկային սեռի,
Որի տակ՝ որպես մի ծանր բեռի՝
Տնքում ես, վայո՜ւմ գիշեր ու ցերեկ՝
Սնելով մի վիշտ, անօգո՜ւտ, անպե՜տք.
Եվ ի՞նչ ես դողում մի կյանքի համար,
Որին ափսոս են հոգոցներն հազար։
Ե՛կ այստեղ, խորհի՛ր, երազի՛ր, ապրի՛ր՝
Մահին ու կյանքին անտարբեր ու ցիր ...

Անձկությամբ, հապճեպ դուրս եկավ Անթար
Ու ապշեց մնաց աշխարքի դիմաց.
Նայում էր իրան հինավուրց անտառ՝
Հազար զորքերով սևասփյուռ կանգնած.
Նայեց ու տեսավ՝ իր դիմացն ահա
Մի խորին ծերուկ, ճերմակ, ալևոր՝
Նստած էր լռիկ մի քարի վրա
Ու աշխարքին էր նայում լուռ, անդորր...

Անթար

Է՜յ, ո՞վ ես, ծերո՜ւկ, ի՞նչ ես թափառում,
Այս ձորերն անմարդ, սարերը վայրի
Քանի՞ տարի ես ուսերիդ կրում,
Ջոկո՞ւմ ես աչքով այս տեսքը երկրի։

Ալևոր

Էհե՜յ, հողածին... Չի՛ լինիլ հաշիվ
Ինձանից անցած անհուն դարերի,
Եվ չկա երկրում ոչ մի տարեթիվ,
Որ հավերժական ինձ վախճան բերի։

Ես այս աշխարքի վարպետն եմ անմեռ,
Եվ սար ու ձորին այդպեսան դառել՝
Շինում եմ դարուն, հյուսում եմ ձմեռ,
Ծնում ու մաշում կենդանի, մեռել ...

Անթար

Բայց գուցե, ծերո՜ւկ, անուն կունենաս։

Ալեոր

Թե կուզես՝ ասա՛ ինձ «Վարպետ Անհաս»։
Բայց արի գնանք իմ աշխարհն երազ։
Ու ընկան ճամփա Անհասն ու Անթար։

7

Անթար

Այս ո՞ւր ենք գնում,
Ինձ ո՞ւր ես տանում։

Անհաս

Ես քեզ տանում եմ իմ տունը անհուն,
Այն օթևանը վեհ, կախարդական,
Որ կանգնած անսյուն, հիմքերը կայուն,
Ջունի ավերում ու կա հավիտյան։

Նայում է ապշած Անթարը չորս դին—
Շնչով են լցված երկինքն ու գետին,
Լեզու են առել սարեր ու ձորեր,
Խոսում են չորս դին քարափ ու քարեր,
Ծաղիկներն ահա զրույց են անում,
Փսփսում շուքերն անտառի մթնում ...

8

Տեսե՞լ ես արդյոք այն ձորն ահավոր,
Որ անդունդներով անտակ ու անել՝
Դժոխքի նման ձառագեմ ու խար՝
Ողջ Լազիստանը երկու կես արել՝
Փակել է չորս դին բանտերը մութ-մութ.

Ուր թափառում են մեգերը կապույտ,
Եվ շո՞ւնչ է քաշում տարտարոսն ահեղ,
Գնհենն է կարծես եփ գալիս այնտեղ,
Ուր գիժ Ճորոխը ընկած դես ու դեն՝
Վազում է՝ դեղնած իր գոռոզ հերսեն,
Որտեղ ամդահա լեռները բաղմած՝
Ժողով են նստել իրարու դիմաց,
Եվ յափնջու պես անտառնե՞ր սև-սև
Ուսերին նետել՝ նայում են ներքև ...
Ուր հաղարավոր ջրեր են հնչում
Կուսական օդի լռության միջում,
Տնքո՞ւմ է երկիրն իր բերքի տակին՝
Որպես գոհ մշակ՝ բերկրանքը աչքին։
Ահա այդ երկրի մթին սարերով
Գնում էր Անթար խորին դիշերով։

9

Լեռ

Մոա՞յլն է նայում մթին մուժերից,
Թե՞ ամպը դաժան սողում ծովերից։

Մի քանիսը

Մթի՞ն է հերսոտ։

Բլուր (ալևորին)

Պատմիր մեզ, պապի՛, դու աչքով տեսար,
Ինչպե՞ս կռվեցին Մթինն ու Սև-Սար։

Ալևոր լեռ

Հա՞, երկու հսկան կռված են վաղուց,
Հիշում եմ նրանց կռիվը մանկուց.
Է՞, չե՞ք ճանաչում Մթինին հերսոտ,—

Հի՜ն քաջերից էր, հին ու քաջ որսորդ։
185 Բայց սարերի մեջ ամենից անպարտ՝
Այն հին քաջերից՝ Սև-Սարն էր հպարտ.
Թեկուզ գցեին հազար պարսաքար,
Ես չէի լսել, որ հսկան տնքար։
Հազար գեղ ու դաշտ առել շուքի տակ՝
190 Կանգնած էր Սևոն գոռող ու մենակ,
Բայց ահա մի օր Մթինը քինոտ
Փնթփնթաց, խորդաց ձայնովը ցասկոտ,
Պոկե՞ց այս ձորից մի ժայռ ահագին
Ու— տուր թե կտաս— հսկայի կրծքին ...

195 Սարեր

Չէ՜... էնդուր Սևի հենց կրծքի մեջտեղ
Բացված է այն խոր պատռվածքն ահեղ։

Ալևոր լեռ

Վա՜հ, դողաց երկիրն, հեղեղեց դիշեր,
200 Եկան քամիներ ամպև ձիերով,
Եկան հանդեսին ահեղ մրրիկներ,
Փաթթեցին չորս դին ոռնող խմբերով ...
Խեղճացավ Սևոն այդ վերքից ահեղ,
Որ սև կպած է պատռված լանջին,
205 Ու հենց այն օրից կքված է այնտեղ՝
Խռով ու անխոս՝ սարերի միջին ...

Բայց հին վրեժով նյութված մի անդամ՝
Թե նա կպայթեն,—հեռո՜ւ, բարեկամ ...

Է՜հ, անց է կացել հազար ու մի դար,
210 Էլ ո՞ւր են հիմի խաղերն առաջվա,
Վաղուց է լռել, Պարխարյան, Լաչքյար,
Ամենքն իր մաքով ընկած են հիմա։

Բայց հեռվից ահա շարան ու շարան՝
Տը՞նկ հա տը՞նկ՝ եկավ քարվանն ամպերի,
215 Ու սար ու քարվան իրարով դիպան.—
«Բարո՞վ ձեզ, սարե՛ր, տերե՛ր աշխարհի».
—Այ բարո՞վ, բարո՞վ,
էս ո՞ր ծովերով ...

Ամպեր

220 Պոնտիցն ենք գալիս մենք շարվե-շարան,
Գնում ենք՝ անցնենք հարթերը Կասպյան՝
Դեպի Հիմալա՛յ ...

Անթար

Ողջո՛ւյն, վեհափառ աշխա՛րք ամենի,
225 Որ վսե՛մ դիրքովդ այդ հսկայական՝
Փռվա՛ծ ես իմ դեմ անկարդ ու վայրի՝
Նման օրերիդ ըստեղծագործման,
Երբ որ նո՛ր դեռ քեզ խոր ոգևորված՝
Հյուսում էր սիրով Բանաստեղծն Աստված ...
230 Երկնայի՛ն ատաղձ, ներշնչա՛նք խորին,
Որով ըզբաղվեց Վարպետը վերին ...
Ահա սուրբ հետքերն—այս սար ու ձորեր,
Որոնց դիպել են այն հզոր մատներ ...
Ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն, նախաստե՛ղծ աշխարհ,
235 Որից չեն անցել ծերացնող դարեր,
Կարծես մնում է ըստեղծման խոսքի
Էակն առաջին դողդոջ ու երեր ...

10

Շ ա վ ի ղ

Այստեղ անտառը երաղների մեջ
240 Կախել է ահա տավիղներն իր բյուր,

Որոնց լարերին հովը մնջեմնջ
Դիպչում է տխուր։
Զգո՛ւյշ, այստեղից կախված է անդունդ,
Եվ գետը բանտված կանչում է վուշ-վո՛ւշ,
245 Նայի՛ր, ծերպերում մեգերը կապույտ
Սողում են զգույշ։

Անբար

Արծի՞վն էր՝ թռավ ...

Շավիղ

250 Հա՛, արծի՞վն հպարտ, հոգին արծվենիկ
Ապրում է այստեղ ժայռեղեն դահին.
Այդ ազատության որդուն երջանիկ
Գգվում են, սիրում ամպերն ու քամին։
Տե՛ս, սարից խուժող ձյան հյուսի նման՝
225 Ջրվեժը ինչպես քանդվել է ահա ...
Լսո՞ւմ ես գոռոց, կանգնի՛ր, բարեկա՛մ,
Բերում է կաղնուն հինգհարյուրամյա ...
Փոթորիկն այսօր վաղ առավոտյան
Անտառներն հսկա փետում էր կատղած,
260 Եվ հարյուրավոր հսկաներ տիտան՝
Խո՞ր տնքում էին՝ կուվիցը հոգնած։

Անբար

Բայց ո՞ւր է ջրվեժն, անցավ գետնի տակ։

Շավիղ

265 Օ՜, ցածում անտառն այնպե՞ս է խառնակ
Սատանա՛ն անգամ կկորչի այնտեղ.
Եվ ճեղքվածքնե՞ր են դժոխքից ահեղ.
Եղևնանտառի սևերն են սրանք։

Անքար

Ի՞նչ լուռ է այստեղ,
Եվ խավարն՝ ահե՜ղ...
Տե՛ս, ո՛չ մի տերև ահու չի խոսում,
Միայն ականջիս շշունջն եմ լսում.
Զորքերի նման ծառերը հսկա՝
Կանգնած են անշարժ, ու ծպտո՜ւն չկա ...
Բոլո՜ր կարծես կարկամել ահից՝
Սաստվել են հանկարծ վերահաս մահից ...

Անհաս

Բայց կուզի՞ս՝ իջնենք, ներքևը՝ հովտում,
Լուսնի շողերն են պարում ու խնդում։

Եվ երկուսն ահա շավիղովն հանդուգ
Իջնել սկսան դեպի ձորն անձուկ.
Անտառի ամբոխն ետ ու ետ գնաց,
Ու բացվեց ձորը երկուսի դիմաց։

11

Սվերներ

Վա՜յ, լուսնակն ելավ, թաքնվենք շուտով,
Դե՛, արի՛ք, լեռան այն ստորոտով
Սողալով զգո՜ւյշ՝ ձորերը երթանք.
Զտեսա՜վ, պրծա՜նք։

Խոժոռադեմ քարափն հսկա՝
Սարը քանց բեռ շալակին՝
Սպառնալով ձայնեց ահա
Իր բարձունքից դիմացնին.

«Հը՞, վրա գա՞մ, վրա գա՞մ».
—Էհե՜, ըզգո՜ւյշ, բարեկա՜մ.

Պատասխանեց կարճ ու հպարտ
Դիմացինը մթնապատ,
Ու նորից լո՜ւռ, ահարկու՝
Նայել սկսան իրարու։

Կկու (ընկերոջ)

Գիտե՞ս, սանհեր, ցածը՝ հովտում,
Հարսանիք կա այս գիշեր.
Ա՜յ կլինի պար ու խնդում,
Գժությունն՝ր, օյիննե՜ր...

—Չէ՜... Բաս գնա՜նք այս գիշեր։
(Թռչում են)։

12

Հով (սուրալով)

Է-հե՜յ ծառեր, է՜յ ծաղիկներ,
Մարգարիտներ, շուշաններ
Հավաքվեցե՜ք, լա՜վ զուգվեցեք,
Արի՜ք հարսանիք այս գիշեր։

Ով ում սիրուն կարող ունի
Ով ասելիք, ով լսելիք,
Ով պտրածն է ուզում տեսնի,—
Թո՜ղ դա գիշերս հարսանիք։

Գետ

Խո՜ր ձորեր ոլո՜ր-մոլո՜ր
Տալիս եմ հաղա՜ր մանեման,
Ճամփիս քարափնե՜ր խոլոր
Պանդուխտ եմ, ամա՜ն, ամա՜ն ...
Մի՜ նայեք ինձ այսպես, ժայռե՜ր,

Չե՛մ դիմանա ձեր աչքի սևին.
Ճամփա տվեք, անցնեմ, ձորեր,
Հասնիմ իմ կապտաչյա ծովին ...

325 Անքար

Տե՛ս՝ լուսնակն ինչպե՞ս աշունքի նման
Դըրել է հովտում լույսերի եղյամ,
Թփերն ու ծաղկունք հանց մատաղ հարսներ՝
Զուգվել են, հագել արծաթե շորեր։

13

Զայն

330 Համբարձում զուլա՞լ գիշեր,
Դե՛ խելոքներ, դե՛ մեր գժեր,
Հարսնի՛ք է, լա՛վ քեֆ արեք,
Զուր չկորչի այս հըրավերք։

Փա՞ռք աստըծու, տունն է անհո՞ւն,
335 Մեր օճորքը երկինքն անսյուն,
Մեր դահլիճը երկիրն է լայն,
Ապրի զուգող Մեծն-Այգեպան։

Ծառ ու ծաղիկ՝ հարսնևորներ,
Հով ու ծղրիդ՝ սաղանդարներ,
340 Ժայռ ու բըլուր՝ ունկնդիրներ,
Արջն ու կկուն են խնամի։

Էլ ի՞նչ կուզեք, ամե՛նքս այստեղ,
Չէ՛ մնացել դուրսը ոչ ոք,
Հարուստ-աղքատ՝ մեկ են այստեղ,
345 Թեկուզ դարդոտ, թեկուզ անհոգ ...

Մի ուռենի

Ամեն կողմից՝ տես՝ ո՞նց այսօր
Լցվեց հովիտն այս հարսնեևոր։

Ա ր ջ

350 Ճամփա՛ տվեք, կանչված եմ ես
Խնդրակներով մեծ հարսընտես.
Պիտի պարեմ հարսների հետ՝
Իբրև պարի նուրբ վարժապետ։

Ռու

355 Վա՜յ, լցվեց հովտում ամբոխն այս գիշեր,
Օ՜ֆ, ամեն կողմից գոռոց ու ճչե՜ր ...

14

Քրքջալով դուրս է փախչում
Ակն-Աղբյուրը քարափից,
Ակն ու գոհար ծոցի միջում՝
360 Փախցրել է սադափից,
—Ի՜նչ սոսկալի քարափ է սա,
Մեջեմե՜ջ և մութումո՜ւթ,
Հաղիվ մի լույս աշխարք ընկա,
Գնա՜մ, գետին հասնեմ շուտ։
365 Կա՜ց, ըսպասի՜ր, կաց մի՝ հասնեմ.
Դե՛, ըսպասիր, ես դալիս եմ ...

Գ ե տ

Դե՛, ըշտապիր, եկ, շո՛ւտ արա,
Վա՜յ, կողքերս, վա՜յ, ես մեռա ...

15

370 Ա ն ճ հ ա ս

Ե՜կ, այն աղբրի մոտ մենք նստենք հիմի...
Նա քո թախիծը կառնի՝ կտանի ...

Անթար

Էրնեկ ըմպեի այն անուշ աղբրից,
375 Նա իմ անցյալը ետ դարձներ նորից։

Ա ն ն ա ս

Իզուր ես կանչում անցյալը մեռած,
Որ ինձ վաղուց ես վճարել անդարձ ...
Դո՛ւ, եղբա՛յր, քայլի՛ր մնացածն հիմա,
380 Տես կյանքի խաղերն ու, բավ է, գնա՛ ...

Անթար

Է՞հ, դու էլ կծծի, գեշ շարչու նման՝
Տեսնում եմ՝ պոչդ ես ցույց տալիս միայն,
Եվ իմ անցյալը քո ինչին է պետ,
385 Որ մի կա՛րճ վայրկյան չես տալիս դու ետ։

16

Ծիծաղեց այստեղ Բնության Ոգին,
Եվ անքնն նայեց Անթարի դեմքին,
Ու լռիկ, անխոս գնացին աղբյուր —
Ոգին ժպտալով, Անթարը տխուր ...

390 Լուսնակի լույսը

Ծաղիկները՝ մի տե՞ս՝ ինչպես
Պար են բռնել արոտում,
Եվ նրանցից մեկն էլ ասես
Մի դա՛րդ չունի իր սրտում։

395 Ծաղիկները

Եկե՞ք, եկե՞ք, ա՛յ քուրիկներ,
Այս խեղճ մարդուն վրա տանք.
Փչենք վրան անուշ բույրեր,

Թող խոր քնի ժայռի տակ։
(Անթարին)
Բարո՜վ, բարո՜վ, Անթար ախպեր,
Ի՞նչ ես ուզում, մենք քեզ տանք.—
(Մեկ-մեկ վրա տալով)
Ես մահի դեմ դարման ունեմ,
Ես վառ սիրո կըրակն եմ,
Ես սրտիցը վիշտ կտանեմ,
Ջահիլություն կտամ ես ...
Ես անցյալը ետ կկանչեմ,—
Մանկությունդ երազում,
Արի՜, Անթար, քեզ կտանեմ
Հեռո՜ւ, հեռո՜ւ՝ «մեկի» մոտ ...

Մաղիկներից մինը

Տեսե՛ք, տեսե՛ք, ո՜վ է գալիս,
Քրքրվածներ, ձեզ եմ ասում։

Հովը

Ո՜ւհ, գալիս եմ,
Որ տամ թևով՝ ձեզ փախցընեմ,
Ի՞նչ եք այստեղ փսփսում։

Ու բացվելով ձորից այդպես՝
Դես-դեն ընկավ հարամու պես ...
Հազար թուփ, հազար տերև
Սըլսըլալով անցան իրար,
Գըլուխ զարկին վեր ու նեռքև,
Սը՜ս... Հոսեցին ոնց գետ վարար,
Դես-դեն դարձան ծանր ու բարակ,
Շորորացին հազար տեսակ.
Երեխի պես քրքջացին,
Հազար նազով քրքրվեցին ...

17

Կկու (ընկերոջ)

Հարսնևորն եկավ.
Լսո՞ւմ ես զուռնան, գժվե՞լ են նրանք,
Պարում են ահա գունատ լուսնի տակ։

Ընկերը

Գալի՞ս են, գալի՞ս, օխա՜յ, քե՛ֆ արա,
Խառնել են իրար զուռնա, նաղարա։

18

Մեկ էլ տեսար՝ շարվե-շարան՝
Բռնած բոլորն իրարու վեշ՝
Կուզիկ-մուզիկ առաջ եկան,
Եկան շարքեր խելառ ու գեշ ...

Անթարն ուշով նայեց նրանց,
Նայեց նրանց—արմանք մնաց,
«Ի՞նչ են շինում սրանք այստեղ,
Այս գիշերին ուշ ու ահեղ...»։
Տեսավ՝ ինչպես իր գեղջիք
Եկել՝ սարքել մեծ հարսնիք՝
Պա՛ր են գալիս, ամուր ճչում,
Թռչկոտում են ու կչկչում ...

Ջարքեր

Մենք ճանանչ ենք, մենք բարեկա՞մ,
Ես ընկե՞րն եմ քո վաղեմի,
Մի՞տդ է գալիս օրեր գարնան,
Մեր խաղերն ու կյա՞նքը թռչնի ...
Տե՛ս, հիշո՞ւմ ես խելառ Գևոն,
Ջահիլ Մոսին սիրուց ցնդած,

20—179

455 Տե՛ս, տե՛ս, սա էլ վարպետ Օհոն՝
Մեծ ուրագը գոտկում խրած։
Տե՛ս, ցավագար էն խե՜ղճ Վանին,
Շվաքի պես սև ու դժգույն,
Նյութը կտրած ճլերք Զանին՝
460 Մահատեսիլ ու դեղնագույն...
Ահա սովից կերված Հեղոն,
Տե՛ս ժամասեր Օհան ապին,
Տե՛ս նախանձոտ էն չար Եղոն,
Եվ մուրացկան ջադու Նանին ...
465 Ահա գինու դավը բռնած՝
Առաջ եկավ Սաքո ամին.
—Բարո՜վ, բարո՜վ, Անթա՜ր ախպեր,
Էս ո՞ր խաչից, էս ո՞ր քամին ...

Վարպետ Օհոն

470 Ի՞նչ ես կծկում մտքիդ թելը
Փիլիսոփա՜ բարեկամ,
Է՜հ, այդ ծովից ջուր քաշելը
Լավ է թողնես այլ անգամ։

Ու պարեցին երկուսն ահա.
475 «Տարա՜յ նի-նի՜, տարա՜յ նա-նա՜...»։

Ապշեց մնաց խեղճ աբեղան,
Խաչակնքեց. «Հիսո՜ւս, Քրիստո՜ս»։
Սև շարքերն էլ տնազ եկան
Ու կրկնեցին. «Իսո՜ւս, Կրիստո՜ւս»։

480 Անթար

Է՜յ, շարքնե՞ր եք, թե՞ մեզանից ...
Ի՞նչ եք ուզում դուք ինձանից ...

Խելառ Գեյդ

Հի՜-հի՜, ոչի՜նչ, քեֆ ենք անում
Հին ջաղացում, խոզաբնում.
Կուզե՞ս, արի՜ դու էլ մեր քով,
Գիշեր մանենք պար ու երգով։

Անթար

Թո՜ղ, ինչ քեֆ եք անում դուք,
Հարսանի՜ք է այդ, թե՞ սուգ։

Օհան ապի (պարելով)

Եթե կուզես՝ ասա սուգ,
Թե կամենաս՝ հարսանիք—
Այստեղ խինդն է արտասուք,
Տրտմությունը խաղալիք ...
Եվ Անթարի մոտ մարդու կերպ առած՝
Նստեցին շարքեր շորս բոլոր արած,
Նայեցին մեկ-մեկ նրա երեսին,
«Է՜յ, Անթար, ինչքա՜ն փոխվել ես»—ասին.
Երեխությունդ հիշո՞ւմ ես իսկի,
Երեխությո՜ւնդ անհո՜գ ու ոսկի ...

19

Մի կաղնի (ընկերոջ)

Տե՜ս, օրորվում է սերունդը մատաղ.—
Կայտա՜ռ են նրանք և մի՜շտ էլ ուրախ։
Տարինե՜ր անցան. մոռացա՜նք մենք էլ
Թե՜ ջահիլություն, թե՜ ուրախ երդել ...

Մյուսը (թոնթորալով)

Տարինե՜ր անցան—հինգհարյո՜ւր տարի ...
Տեսա ես այստեղ շատ շար ու բարի,

510 Է՜հ, ընկնելու եմ, ընկնելո՜ւ հիմի—
Խաղում է արդեն արմատս մի-մի ...

Զանիլ ուռենի

Կպառկե՜ս, քավթա՜ռ, այս տարի աշնան,
Թե քամիները այսպես զիլ գնան ...

515 Մի չարք

Ով որ այդպես քավթառանա,
Նա քամու հետ հյուր կգնա ...

Մյուսը

Մենք չենք թողնի՝
520 Մեր Անթարը քավթառանա,
Պար կբռնենք,
Կերգենք, որ նա ուրախանա։

Երրորդը

Զլի՜ր, զուռնա՜, «Նա ու առաջ»*,
525 Մե՛կ են այստեղ կաքավն ու արջ,
Դե՛ հարսն-աղջիկ, դե՛ ախպերտիք,
Ծանր ու բարակ արե՛ք տուտիկ։

Ու բռնեցին պար գեղեցիկ,
Խաղցին, թռա՜ն հարսն ու աղջիկ,
530 Հարսն ու աղջիկ օրորալով՝
Շորոր տվին հետն ասելով.
«Ի՞նչ սիրուն են, օխա՜շ, օխա՜շ,
Հարսն ու աղջիկ ալ ու խաշխաշ»։

---

* Ժողովրդական պար։

Զարքեր (երգում են)

Արի, Անթա՛ր, արի՝ սարքենք
Քեզ համար էլ մե՞ծ հարսանիք, հա՛յ հարսանիք,
Ե՛կ, քեզ աղիղ փեսա անենք,
Սիրուն փերին տանք քեզ կնիկ, հա՛յ քեզ կնիկ.

Արի՛, Անթա՛ր, հաղար-հաղար
Ծաղիկներից գորգ հյուսենք,
Նըստիր մեզ մոտ, մենք քեզ համար
Ուրախանա՞նք, պա՞ր թռչենք ...

«Սրան, եղբա՛յր, կասեն՝ կյա՞նք,
Ուրախանանք ու գնանք.
Տարայ նա-նա՞, տարա՞յ նի-նի՞...»,—
Երգեց այսպես Սաքո ամին։

«Ամեն բանից կյա՞նքն է անուշ,
Ամեն բանից սե՞րն է քնքուշ»,—
Շորոր տվեց ցնդած Մ'ոսին՝
Աչքը գցած մոտի հարսին։

«Կուզես՝ տրամի՛ր, կուզես՝ խնդա՛,
Սերն էլ, կյանքն էլ պիտի երթա»—
Ասավ, թռավ՝ ձլերք Զանին,
Թռավ, ասավ՝ տարա՞յ նի-նի...

Անքար

Դե՛, ուրեմըն ուրախանա՞նք,
Բերե՛ք շուտով վայելք ու կյանք,
Հեռո՛ւ մեղնից լաց-արտասուք,
Հեռո՛ւ մեղնից և սա՛ ու սուգ։

560 Ծղրիդ (երգում է)

Զիկ-զի՛կ-զի՛կ ...
Եկե՛ք, քնքո՛ւշ
Հարսն-աղջիկ,
Տվե՛ք անուշ
565 Մի պաշիկ,
Որ լավ երգեմ,
Պար թռչիք։

Նրա ընկերը

Բարիրիկուն, վարպե՛տ Աբել,
570 Չէ՞, տաղա՞նդ ես, ես իմ աստված,
Լա՛վ ես, եղբա՛յր, յուրացրել
Այդ դայլայլը երկնից տված։

Ծղրիդ

Հա՛, տալիս եմ հիմա համերգ,
575 Երգենք, եղբա՛յր, քանի կա երգ ...

Ու խոսում է գիշերը ուշ,
Խոսում հազար ձայներով,
Գետը անսանձ կանչում է «վո՛ւշ».
Ծառերի մեջ սողում հով.

580 Նվագում են ծղրիդները,
Գլխին վա՛յ է տալիս բուն,
Գոռում-գոչում ցածն ու վերը,
Սարում-ձորում ողջն արթուն ...

Այստեղ քնի է մրրկալի,
585 Ու զուռնան է վիլ ծորում,

Ձարքերն անսանձ պար են գալի,
Գորտերն անլուռ կռկռում ...

Անթար

Ի՞նչպես ամենքը ապրում են զվարթ
590 Եվ ի՞նչ ուրախ են ապրելու համար,
Ի՞նչպես ամեն ինչ վայրի է, ազատ.
Ողջո՞ւյն քեզ, ո՛վ կյանք դու կյանքի համար ...
Ի՞նչ երջանիկ է ճպուռը անդարդ,
Զքավոր կկուն իր անշուք ճղնում,
595 Աղքա՞տ արքաներ ... Ապրում են զվարթ
Եվ իրանց բաշխած այս կյանքն են օրհնում ...
Մեկ նայի՞ր այստեղ, ի՞նչ անհունություն,
Ի՞նչ ազատություն վայրի ու անսանձ,
Ի՞նչ աղմուկ, ժխո՞ր, գետերի թնդյո՞ւն,
600 Որ խառը, ազատ լսվում է հեռվանց:
Շաչում են, ճչում անսանձ թափերով,
Բղղում, հրահրում ռամիկ ձայներով.
Ի՞նչ են մարդկային վշտերը թշվառ
Այն անկարգ, անհոգ խմբերի համար:

605 (Անհասին)

Տո՛ւր ինձ մոռացում, անհո՛ւն ալևոր,
Թող ապրեմ մի ժամ անդարդ ու անդորր,
Թե չէ թափ կտամ այս շղթան կյանքի,
Կթափեմ ձեռքիցս թույները մաքի.
610 Ողջո՞ւյն քեզ, նո՛ր կյանք դու կյանքի համար,
Ես քեզ եմ դալիս սրտով սեահար ...
Ազատ ու վայրի,
Եկ ապրեմ այսպես ...

Անհաս

615 Թո՛ղ այդպես լինի,
Ապրիր՝ թե կուզես։

Անքար

Կա՞ կյանք այդպիսի
Բա՛ռ, անձանձի՛ր ...

620 Անհաս

Ահա՛, նա, լսի՛ր ...

Աբծիվ (բարձունքից)

Իմ ծնված օրից ասաց ինձ ասված.
«Աշխարքի մարդկանց չլինե՛ս ծառա»...
625 Եվ ահա աշխարք ողջ թողի մարդկանց,
Ազատությունը ես միայն առա ...
Դեպի լեռան իջևան
Գալիս է հյուր ամեն օր
Ամպերի ձիգ քարավան
630 Եվ ճամփա է ընկնում նոր
Ու գնում է լողալով
Հորիզոններն հեռավոր՝
Արևելյան ասողերին
Որպես կարոտ ուխտավոր։
635 Այդ ամպերն են ինձ ընկեր
Եվ հողմի՛ը գաղթական ...

Ամպ

Դեպի անհա՛յտն, հեռո՛ւն գնանք,
Բա՛ռ, բա՛ռ, դեպի եթե՛ր,
640 Ամեն սարից բա՛ռ մնանք,
Եվ աշխարքից սուզվենք միշտ վե՛ր ...

Ջադու Նանին ահա այստեղ
Պրծընելով խմբից դուրս՝
Գունդ ու կծիկ ընկավ մեջտեղ՝
645 Սուտ կաղալով կուզեկուզ։

Ջադու (երգում է)

Ո՞ւմ՝ ազատ, թե՞ այդպես,
Բա՞րձր, բա՞րձր, դեպի վե՞ր,
Կտամ մահի շալակն ես ձեզ,
650 Հետո թե՞ դեպի վեր.

Բայց ուր թռչեք, թռչել գիտի
Կարիք-Նանի խնոցին,
Ոսկի ամպից ցած կբերի
Աղատ արծիվ, հպարտ ցին ...

655 Զարքերը (վրա գալով)

Օհո՞, քո՞ռ բու, երգո՞ւմ ես դու,
Զայնդ անբոպատ, փտած ջադու։

Ցինը (կամթելով)

Բարո՛վ, մայրի՛կ, ոտքդ բարի,
660 Ո՞ւր էիր երեկ, բոպի՛կ խանում։

Ջադու

Քաղաքն էի, էն գյուղն էի,
Էն ծովն էի, ա՛յ էն բընում ...
Իմ խնոցին՝ նստած շուտ-շուտ
670 Տվի այսօր հազար պտույտ...
Հազար մի մարդ «ղրկեցի» ես—

Մեկին թոկով, մեկին շրով,
Պառավացրի հազար ու կես —
Մեկին բեռով, մեկին բրով ...

Մի շարք

675 Աչքդ ճա՜քի, Կարիք-Մայրիկ,
Ի՞նչ սիրուն ես, ի՜մ անուշիկ ...

Ջադու

Հենց նոր ճամփին մի խենթ ագռավ
Նայեց դեմքիս—ընկավ՝ մեռավ։
680 Հա՜, հա՜, հա՜, հա՜, տե՜ս՝ ի՞նչ ունեմ ...

Ջարք

— Ի՞նչ է, տեսնեմ։

Ջադու

Պինդ երեսի կաշին է սա,
685 Ի՞նչ մարդ, ի՞նչ բան, ու շո՜ւն աստա,—
Յոթը դուռը յոթն օր մուրաց,
Յոթն՝ ու մի օր չտեսավ հաց։

Ջարքեր

Վա՜յ, ի՜նչ լավն է, տեսե՜ք, տեսե՜ք,
690 Տո՜ւր, մայրի՜կ ջան, քիչ-քիչ ծամենք ...

Ջադու

Գըրո՜ղս կտամ, որ մա՜հս ծամեք,
Էհե՜... Հը՜ը՜մ ...

(Երգում է)

695 Այստեղ պուպո՜ւզ, այնտեղ պուպո՜ւզ,
Ով պատահի-կտամ մի կուզ,
Ջահիլ մարդուն՝ պառավություն,
Պառավին էլ՝ քա՜ղցր մի «քուն»...

Ողջո՜ւյն քեզ, վարպե՜տ Անհաս.

700 Անհաս

Հը՛, ի՞նչ է պակաս։

Ջադու

Հո՜ւր ու կըրակ, թո՜ւյն ու արճիճ,
Սև՛ գոլորշի—ուրիշ ոչինչ ...

705 Անհաս

Ա՛ռ, վերցըրո՜ւ՝ ինչ կամենաս։

Ջադու

Ա՜յ շատ ու շատ շնորհակալ եմ,
Շնորհակալ եմ, առա՜տ մնաս։
710 (Մոտենալով Անթարին)։
Բարո՜վ, Անթա՜ր, չարքի բարով—
Կեսը բարով, կեսը չարով ...
Կուզե՞ս սիրտը աղքատ հարսի
(Սրտաճաքի, ով սուտ ասի).
715 Եթե կուզես՝ տո՜ւր մի դըրամ,
Երթամ, խոսեմ, բերեմ նըրան ...

Ջարքեր (ծիծաղից թուլանալով)

Վա՜յ, աչքդ ճաքի՜, վա՜յ, ի՞նչ լավ ասիր,
Խնոցի հեծնո՜ղ, գըրողի՜ գզիր

720 Անթար

Կորի՛ր, քավթա՛ռ, ի՞նչ ես կպչում,
Գնա՛, ես քեզ չե՛մ ճանաչում ...

Ջադու

Կճանաչե՞ս, կճանաչե՞ս,
725 Դեռ ըսպասի՞ր, ջահիլ Անթար,
Երբ որ կապրե՞ս ու կփորձես՝
Ինչ՞ կա կյանքում վատ ու վատթար—
Երբ կփորձես հացի թո՞ւյնը,
Դառնությո՞ւնը բարեկամի,
730 Եվ բարության՝ սուտությո՞ւնը,
Փոքրոգությո՞ւնն ընկերների ...
Հը՞ը՞մ ..

Անթար

Մի՞ մրմրա, մի՛, սև շան պես
735 Մի՞ մրմրա, թե չէ՝ կուտե՞ս ...

Ջադու (խոսքը փոխելով)

Հը՞մ, հասկանում է Կարիք-Մայրիկը,
Լա՞վ է հասկանում սրտի խնդիրը.—
Բեղը թիլ-թի՞լ, կուրդ ամո՞ւր,
740 Սիրտդ գարո՞ւն, վարդ մաքո՞ւր,—
Գիտե՞մ, կուզես կյանք ու վայելք,
Հոգ մի՛ արա, այդ կըճարե՞նք ...
Ջո՞ւ, ջո՞ւ, ջո՞ւ, ջո՞ւ,
Եկի՛ք, հարսներ,
745 Վարդ աղջիկներ —
Քրքրվածներ։
Արիք՝ վառենք շուտով խարույկ,
Դընենք վըրան ոսկե կաթսան,

Տա՛նք Անթարին այսօր խնջույք—
750 Նա մեր հյուրն է, ազիզ փեսան։
Բերե՛ք, հարսնե՛ր, կյանքի համեմ,
Այսօր վայելք պիտի եփեմ ...
Դե՛, անունով Սադայելի,
Իշխանությամբ Ուրիելի,
755 Կտրուկ խոսքով Կարիք-Նանի
Հրամա՛ն եմ տալիս ես ձեզ.—
Շո՛ւտ, բյուրավոր ձեր վերքերից,
Մեռնողների անեծքներից,
Աղքատության մռայլ երկրից,
760 Ելե՛ք, բոցե՛ր, հայտնվեցե՛ք։

Ցոլա՛ց հանկարծ մի մեծ հընոց,
Օդը լափեց բոցն լեզուն,
Ելա՛վ կրակն՝ ինչպես մի օձ՝
Ոլոր-մոլոր ու ազազուն,
765 Խառնեց կաթսան Կարիք-Մայրին
Ու ըսկսեց երգել մի երգ.
«Ի՞նչ են ասում այս կերակրին.
Սրան կասեն՝ «ա՛յ քեզ վայելք».
Կերա՛ն ազգերն այս կերակուր,
770 Ու չքացան՝ չըգիտեմ ուր ....
Ելե՛ք, բոցեր, փոփոացեք,
Որ Անթարի վայելքն եփենք,
Եփենք նախանձ ու նախատինք,
Եփենք դառը մաղձ ու քրտինք։
775 Դե՛, աղջիկնե՛ր, լա՛վ խառնեցեք,
Դե՛, ժի՛ր հարսներ, լա՛վ շաղվեցեք»։

Ու խեղդում էր սև գոլորշին
Օդը տո՛թ ու գիշերվան,
Պտտվում էր նրա շորս դին
780 Կարիք-Մայրիկն անատամ։

Ջադու

Եկան մի օր Ախտն ու Ցավեր,
Եկավ Սովը աշխարհավեր,
Ասին՝ ե՞կ, Կարիք-Մայրիկ,
785 Ե՞կ՝ սարքենք մեծ հարսանիք ...

Ու սարքեցին ուրախություն,
Սարքեցին մա՞հ ու արհավիրք
Ու խառնեցին կյանքին սև թույն,
Ասին՝ երգի՛ր, Կարի՛ք-Մայրիկ ...

790 Ելավ ա՛ղգ ազգի վերա,
Ժողովուրդ՝ ժողովուրդի.
Ու երգեց Կարիք-Մայրիկ ...
Ի՞նչ երգեց Կարիք-Մայրիկ.

«Տեսե՛ք, տեսե՛ք՝ այն չոր դաշտում
795 Դեռ ապրում է մուկը նիհար.
Վերջի՛ն ծեղն է իր բերանում,
Շուտով կլինի նա ցրտահար։
Տեսե՛ք՝ ինչպե՞ս նա վստվստում,
Վստվստում է ու հետն ասում.
800 «Օ՞ֆ, Կարի՛ք, Կարի՛ք, Կարի՛ք,
Ամենազո՛ր Կարիք...»։
Դե՛, աղջիկնե՛ր, լա՛վ խառնեցեք,
Դե՛, ժի՛ր հարսներ, լա՛վ շաղվեցեք ...
Խառնե՛ք առատ սև՝ ու ժանտախտ,
805 Փո՛ւշ ու տատասկ, մա՛հ-տարաժամ,
Թո՛ւյն ու պալար, սո՛ւգ հուսահատ,
Դեղին գո՛ւյնը հիվանդության ...»։

Զարքեր

Էլ ի՞նչ ունիս։

810 Ջաղու

Բոց ու անեծք

Զարքեր

Ո՞ւմ ես տալիս։

Ջաղու

Ով պատահեց։

815 Ու խեղդում էր սև գոլորշին
Օդը տո՜թ ու գիշերվան,
Պտտվում էր նրբա շորս դին
Կարիք-Մայրիկն անատամ ...

Զարքեր

820 Սի՜րտդ ճաքի, անո՜ւշ մայրիկ,
Հազար ճիպոտ քեզ չէ հերիք.
Ապրե՜ս, ապրե՜ս,
Հազար անգամ ապրես-մեռնես։

Ու ձայներով ճիվաղային՝
825 Հարայ-հրրոց բարձրացրին
Թռան դես-դեն, եկան նորից՝
Կշկշալով ամեն կողմից
Ու ձեռ ձեռի իսկույն ևեթ
Պար բռնեցին մի անհեթեթ։

830 Ջաղու (Անթարին)

Ահա՜, Կարիք Մեծ-Մայրիկից
Քեզ մի պարգև կախարդային.
Ըմպի՜ր, եղբա՜յր, այս բաժակից,
Որից շատերն ընդունեցին ...

835 Դու ցանկացար կյանք ու վայելք—
Դե՜, նախ ըմպի՛ր այս ջուրն անուշ,
Խեղճ տանտիկնոջ սիրտը շահիր,
Որ ըստանաս սրտեր քնքուշ։

Անքար (խմում է և զզվում)

840 Թո՜ւհ, ճաքե՜ս, ջադո՜ւ,
Գետի՛նն անցնես դու ...

Անիծյա՛լ կարիք, ատելի՜ բվեճ ...
Ավա՜ղ, ըմպեցի թույներդ բոլոր ...
Ջահիլությունը թառամեց իմ մեջ,
845 Այնքա՜ն դառն էր նա, այնքա՜ն թունավոր ...

«Հա՜ հա՜, հա՜ հա՜»,—քահ-քահ խնդաց
Կարիք-Մայրիկն ուրախացած
Ու խառնելով նորից կաթսան՝
Սուր ծղրտաց ուրախաձայն.

850 «Ելե՛ք, բոցե՛ր, եկե՛ք այստեղ,
Եկե՛ք նոր-նոր կծիկներով,
Եկե՛ք, կաղմե՛ք ձեր խումբն ահեղ՝
Վշտի բոլոր անուններով»։

21

Անքար

855 Ա՛խ, ի՜նչ դաժան, ա՛խ, ի՜նչ հիմար,
Ա՛խ, ի՜նչ դառն է կյանքն ու աշխարհ ...
Հանկարծ սուլելով շար հողմի նըման,
Լափելով անհագ ոսկեվառ կաթսան,
Ճեղքելով բոցը՝ դուրս եկավ իսկույն
860 Մի խիստ ուրվական, դաժան ու դժգույն ...

Ուրվական

Ե՛ս եմ ախը, ե՛ս եմ վախը,
Ես վա՜շն եմ սև, ես վի՜շն ահեղ ...
Ասա՝ ինչո՞ւ կանչեցիր ...

865 Անթար

Սոսկալի ե՜ս, խափանվի՛ր ...

Ախ

Հայտնվում եմ ամեն հեղ,
Երբ մարդիկ են ինձ կանչում,
870 Անունս հնչվում է այնտեղ,
Ուր էակն է հառաչում։

Գիտե անունս ամեն ոք —
Թե՛ նորածինն նորընկեց,
Որ ասում է՝ «վա՜յ, ընկա՜»,
875 Եվ թե՛ ծերը մահամերձ։

Եվ դո՞ւ էիր, Թուլամարդ,
Որ բավիղում այս կյանքի
Գնում էիր վե՜ս, հրպա՜ռտ
Դեմը մաշող Կարիքի։

880 Ես եմ վիշտը դարերի,
Կործանողը մշտական,
Ես ոգին եմ խավարի,
Հառաչների չար վկան.

Ես մտրակն եմ դյուժական,
885 Որ քշում է դեպ նոր կյանք.
Թույն եմ դարձնում ես ներկան,
Գալիքն է իմ նպատակ։

21—179

Անշարժության փառում ավող,
Թույլին մահվան դուռը տանող,
890 Անգութ, ըմբոստ ու բանսարկու,
Նոր-անհայտում միշտ խուզարկու
Ոգին եմ ես.
Մինչ այսօր ու հավիտյան
Անհավասար, անմիաբան,
895 Հոգիներով միշտ մենակյաց,
Չհասկացող իրար՝ մարդկանց
Տանջանքն եմ ես.

Տառապանքն եմ աշխարհավեր,
Որ բնության հնոցներում
900 Այս ու այն կողմ միշտ վար ու վեր
Մրրկում եմ, դանահարում ...

Ես ինքնիշխան, ես թագավոր,
Ես անընտրող, անխղճմտանք,
Միշտ գործում եմ գործ ահավոր,
905 Սակայն կյանքն է իմ նպատակ...
(Անհայտանում է)։

22

Ջաղու

Ժամս հասավ, պիտի գնամ,
Որ տամ հազար-մեկ մանեման,
910 Բերեք, հեծնեմ իմ քամի ձին,
Գնա՛մ, կորչեմ ինչպես մի ցին։

Գնա՛, դա՛լակ տառապանքի,
Գնա՛, քոնն է աշխարհն անբախտ.
Տա՛ր ամեն տեղ վիշտը կյանքի,
915 Խրախճանի՛ր այդպես ապատ։

Հեծավ ջադուն իր խնոցին,
Խփեց նրան օձն մարակ,
Գնա՞ց, կորա՞վ ինքն ու իր ձին,
Ընկավ նորից աշխարքի տակ։
Մնաց միայն կրակն անմար,
Որ փլփլում աղբյուրի մոտ՝
Նվազում էր մեկ մարեմար,
Մեկ էլ հանկարծ ելնում էր օդ։

Անքար

Գնա՞ այդպես աչքիցս անտես,
Գնա՞, հիմա հասկացա քեզ.
Դու այս գիշեր ահավորից
Ահավորը ցույց տվիր ինձ ...

Ու բազմեց չորս դին խորին լռություն։

23

Գորտեր

Եկե՞ք, եկե՞ք, քեռինե՛ր,
Այստեղ գորգ ենք գտել մենք,
Կանաչազգե՛ստ սիրունիկներ,
Ծանրագոգո՛թ սանամերներ,
Համեցե՛ք, եկե՛ք բազմենք
Ու մի սիրո՞ւն երգ ասենք ...

Անքար

Ի՞նչ են խանգարում երգերով հիմար՝
Խաղաղությունը մեր այս վշտալի,
Որ ծավալված է լոկ սուգի համար...
Է՞հ, սուգ է կյանքը, ոչի՞նչ ավելի...

Եվ այս գեղեցիկ աշխարքի միջին
Մահից գեղեցիկ էլ ոչի՞նչ չկա,—
Հալվե՞ս ու դառնա՞ս մի փոշի չնչին,
945 Թո՞ղ կյանքն անտարբեր միշտ դա՞ ու գնա՞...

Մի զուրտ

Բայց լսեցե՛ք, ճահճեցին ահա
Ձա՛յնն է դալիս մեր մայրիկի,
Երկունքի մեջ տնքում է նա,
950 Վախենում եմ՝ ցավից ճաքի։

Երկրորդը

Քեֆի՞դ նայիր, նա միշտ՝ եղբա՛յր՝
Հա՛մ կտնքա, հա՛մ կլխնդա,
Համ էլ իր նոր ճուտի համար
955 Տեղ բաց կանի գորգի վրա ...

Մի ուրիշը (երգում է)

Ա՛յ ի՞նչ-պեհ՞ս
Սի-ըռ՞ա-մ եմ,
Այս ճի-ճուն
960 Նաղաճեմ ...

Մուտինը

Անո՞ւշ, եղբա՛յր, անո՞ւշ արա,
Մինն էլ իմ ճա՛նկս ընկավ ահա ...

Մինը (հեռվից)

965 Օ՜, լսել եմ մի ժամանակ
Հանճարե՞ղ, մե՞ծ Կանաչին —

Բարձրանում էր երե՞ք ութնյակ՝
Ահագին ձորի միջին ...

Մի ուրիշը (ծիծաղելով)

970 Այո՞, երգչին այն ժամանակ
Ծափում էինք, երբ անհաշիվ
Բարձրացրե՞ց երեք ութնյակ
Արագիլը մեծապատիվ ...

Բոլորը

975 Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Հե՛, հե՛, հե՛, հե՛,
Ճարքես դու, լի՞րբ ...

Անբար

Հիմա՞ր ժիսոր ու խծբծանք,
980 Թյո՞ւհ, և սրան ասում են կյա՞նք ...
Զբվե՞ս, չլինե՞ս, տանջանքի՞ աշխարհ,
Վշտերի մանուկ, անխնա՞մ, անմա՞լր,
Սև՞ լիներ էրնեկ օրըդ ըստեղծման,
Զբերե՞ր մայրդ որբին քեզ նման ....

985 Անիտա

Ափսո՞ս, որ մարդու անհամբեր հոգին
Միշտ կույր է վշտի բեռների տակին.
Լսում ես—ափսո՞ս, բայց չես իմանում,
Նայում ես—իզո՞ւր, սակայն չես տեսնում։

990 Անբար

Թո՞ղ, թո՞ղ, մի՛ խոսիր, անբա՛խտ իմ երաղ,
Իզուր է կյանքը, ցնորքներն անհաս,

Քանի որ շքեղ այս այգու միջում
Կարիքն ու վիշտն են անարգել աճում ...

995 Գետինը (Անթարին)

Արտասո՞ւք ես դու ինձ տալիս,
Տո՛ւր այդ՝ ծոցս կպահեմ.
Բայց, իմ մանուկ, զո՞ւր ես լալիս,
Կա՞րճ է կյանքը ժպտագեմ ...
1000 Քեզ պես քանի՞ն լացի՞ն, լացի՞ն
Ու իմ գրկում մտան քուն.
Է՞, խաղաղվի՛ր, լաց մի՛ լինիր,
Միայն ծաղկի՛ր, ապրի՛ր դուն ...

Ու գիշերը հաղար ձայնով՝
1005 Գրկած նրան՝ խոսում էր,
Երազների քնքույշ թևով
Նրան թոցրած տանում էր ...

24

Ծաղիկները

Եկե՛ք այստեղ, ա՜յ քուրիկներ,
1010 Տեսնք՝ ո՞նց մի խաղճալի
Գլուխը կախ՝ հոնգո՜ւր-հոնգո՜ւր
Լաց է լինում սրտալի։
Արի՛ք այստեղ, ա՜յ քուրիկներ,
Մխիթարենք թշվառին,
1015 Թե յար ունի՝ տանենք սրան,
Շուտ հասցընենք իր յարին ...

Մինը

Տեսե՛ք՝ որքա՜ն գունատ է, խե՜ղճ,
Մարել է կյանքն աչքերի մեջ ...

Կարիք մեծ-մոր թույնից խմեց—
Ահա՛ ինչու նա դունատվեց։

Բոլորը

Մենք միշտ երգում, բան ենք ասում,
1025 Չի հասկանում մեզ ոչ ոք,
Որ կսրբենք ողջ աշխարքից
Բոլոր տանջանքն ու մորմոք ...

Մենք խոսում ենք պա՛րզ խոսքերով՝
«Արի՛, վե՛րջ տանք վշտերիդ»,
1030 Բայց բյո՛ւր մարդիկ մեր կողմերով
Անց են կենում սև, անսիրտ ...

(Անթարին)

Արի՛ մեզ մոտ, ապրի՛ր դու պարզ,
Ո՛չ իմացիր, ո՛չ դառնանաս ...
1035 Թո՛ղ հովը գա՝ սրտիդ դիպչի,
Բուրե աչքիդ անո՛ւշ երազ ...

Վարդ

Ե՛կ, անհո՛գ ապրիր, անհոգ էլ գնա՛՝
Ինչպես ամեն ինչ աշխարքիս վրա ...
1040 Ոչ կյանքի՛ բարիքն արա դու անտես,
Ոչ մահո՛ւ տեսքից սարսափիր այդպես։

Լսում էր Անթարն հանգիստ ու անդորր,
Մինչև որ անո՛ւշ նիրհ եկավ վրան.
Մեռա՛ն ձայները, հանդարտվեց բոլոր,
1045 Հալվեցին շարքերն հնչյունի նման։

Եվ ահա աչքին կես արթուն, կես քուն՝
Եկավ մի տեսիլ վսե՜մ ու զժգույն ...

25

Ինտերմեցցո

Կես գիշերին, մեջ գիշերին
1050 Եկավ ափը Աղբյուրի՝
Լուսաթաթախ՝ ձյունի նման՝
Սևագանգուր մի փերի։

Եկավ, նստեց մամուռ քարին,
Ծամերն առատ թողեց ցած,
1055 Ջրի ծոցում կուրծքը նարին
Ինչպես լուսին ցոլցլաց։

Խլեց Աղբյուրն այն սիրահար
Նրա շուքը գողալով,
Շաղեց վրան լալ ու գոհար
1060 Ու մարգարիտ քրքջալով։

Եվ նա արագ, շնորհալի՝
Սանրեց ծամը վեր ու վար,
Աստղի՜ նման շողք էր տալի
Նրա սանրը ոսկեվառ ...

1065 Սանրում էր նա ու հեռո երգում
Հավերժության երգերից,
Ակն-Աղբյուրն էլ երգը կրկնում՝
Քրքջում էր բերկրանքից.

«Մեռնո՜ւմ է կանաչ, թոշնում է զարո՜ւն,
1070 Դեղնո՜ւմ է հովտի ծածկոցը սիրուն,
Գահավեժ ընկնում արծիվն իր գահից—
Ոչինչ այս երկրում չի պրծնում մահից,

Բայց մահ չկա՛ ինձ համար,
Ես անցնում եմ դարեդար ...»։

1075 Երկա՛ր-երկա՛ր հնչում էր դեռ
Երգի ալիքն այն հովտում,
Հեռո՛ւ-հեռո՛ւ դողդողում էր
Նրա դողանջն ըղգայուն ...

Անբար

1080 Ա՛խ, երանի՜ դիտենայի
Ո՞ր լույսիցն է սա հյուսվել,
Ասա՛, ծերուկ, ա՜խ, մի՛ պահի,
Ո՞վ է կույսը այս նազել։

Անհաս

1085 Եթե կուզես՝ կյանքն է սա.
Կին է սրրա անունը ...

Եվ տեսիլը այն քաղցրալից
Օրորվում էր դեռ հանդարտ,
Եվ չարքերը այնտեղ նորից
1095 Պարում էին ժիր, զվարթ։

Խաղում էին, կանչում հարա՜յ՝
Բռնած մի պար գեղեցիկ,
Թռչում էին, ասում օխա՜յ,
Երգո՜ւմ ուրախ հարսն-աղջիկ.

1100 «Արի՛, Անթա՛ր, քեզ պըսակենք
Այս գեղեցիկ փերու վրա,
Արի՛, մենք քեզ տուն-տեղ անենք,
Դու ունեցիր սիրուն տղա ...

Սիրուն տղան կապրի քո տեղ,
1105 Կերգե՞ ջահիլ մարդի վրա,
Երբ դու հավետ քնես այստեղ,
Երբ որ անուշ կյանքդ դնա...»։

Ու Անթարին պըսակեցին
Այն լուսեղեն փերու հետ,
1110 Դրին գլխին ծաղկե պսակ,
Փռեցին դորգ ծաղկավետ,

Փաթաթեցին տերևներով
Անթարին ու իր փերուն.
Եկա՞վ այնտեղ քաղցր մի հով,
1115 Երգեց մի երգ ոլորուն։

Զարքերը (երգում են)

Է՛յ, էրնեկ քո էրնեկին,
Որ քեզ փերին եղավ կին.
Քեզ տերևը հովանի,
1120 Հովը մի՞տքդ կըտանի ...
Օխա՛յ, օխա՛յ, ի՞նչ անուշ
Պիտի քնես դու մուշ-մուշ։

Անքար

Խոտն ու մամուռ անկողին,
1125 Լուսնի շողքը ինձ վերմակ,
Աստղերը ջահ իմ գլխին,
Սարն ու դաշտը ինձ սենյակ.
Օխա՛յ, օխա՛յ, սերն անո՞ւշ,
Համբույրն անո՞ւշ, կյանքն անո՞ւշ...

1130 «Հը՞, այստեղ եմ, ի՞նչ ես ուզում,
Զայն տվիր այս աշխարից...»,—

Մի ուրվական՝ տվավ հարցում
Դուրս լողալով աղբյուրից։
— «Ո՞վ ես, ոգի՛, ո՞վ կանչեց քեզ»,
1135 Անթարն ասաց, խնդագին.
«Այդ քո ասած «Օխա՛յն» եմ ես»,—
Պատասխանեց այն ոգին.
«Վայելիր կյանքդ, ո՛վ հողածին,
Քանի որ չէ չքացել
1140 Այս վայրկյանը վա՛ռ, խնդագին,
Դառել անցյալ անկրկնել։
Ես այս երկրի բերկրությունն եմ,
Եվ երազը վաղանցուկ,
Ուրախացի՛ր, թե չէ՝ կանցնեմ,
1145 Դարձյալ կապրես դու անշուք ...
Ես այնտեղ եմ, ուր նոր մանկան
Լսվում է լացն առաջին,
Երևում եմ մի կարճ վայրկյան
Ես նրա մոր աչքերին։
1150 Ի՛նձ է պարում ամբողջ աշխարք
Անհաղթելի հույսերով,
Ես պահում եմ շունչն ու այս կյանք
Ապագայի ձայներով ..
(Անհայտանում է)։

1155 Ասուպ (ընկնելով)

Զվարթ ու խոր կյանքի համար
Վայրկյանն էլ է բավական,
Որ դա թափով մի բոցավառ,
Վառի երազ դյութական ...

1160 Ախ (հայտնվելով կրկին)

Հարազատներ մի անհայտ մոր՝
Մենք եղբայր ենք դարավոր,
Նա է ես, ես եմ նա.

Եվ մեր գործն է—կյանք ու մահ ...
1165 Ինձ կոչեցին մարդիկ տանջանք,—
Բայց ծնում եմ ես միշտ կյանք.
Եվ ինձ բերկրանքն անիծելով՝
Առնում է կյանքն իմ ձեռից,
Եվ վայելքում այդ հյուծելով՝
1170 Միշտ հանձնում է վերջը ինձ,
Կյա՜նք եմ տալիս ես նրան,
Նա էլ ինձ, ու ես մահվան,
Կյա՜նք, որ ինչպես խաղ ու պար
Փոխ ենք տալիս մենք իրար ...
1175 (Անհայտանում է)։

Ցրվեց հանկարծ մի սուր ծիծաղ
Այն հովտի երեսին,
Եվ շարքերը ուրախ-ուրախ
Ծափ տվին միասին։

26

1180 Անտառի մայրը

Է՜յ, լսեցե՜ք, ձե՜ղ եմ ասում,
Հեքիաթ ասող կաղնիներ,
Լսե՜ք, հպա՜րտ բարդիներ,
Դո՜ւք էլ, սգվո՜ր նոճիներ,
1185 Գիշե՜ր անցավ—քո՜ւն եղեք։
Լա՜վ փաթաթվեցեք, ցուրտ պիտք է լինի,
Տեսե՜ք՝ որ քամին հագուստ չտանի։

Լուսնակի լույսը

Բլուրն է թավի՜շ, ծաղկունքը քնքո՜ւշ,
1190 Անքուն հովերի սրինգն է անուշ ...
Ինչքա՜ն սիրուն է այս գորգը հիմա,
Կնոջե՜մ հանգիստ ես նրա վրա ...

Անհաս

Նայի՞ր, բարեկա՛մ, ինչպե՞ս այն բլրին
1195 Լուսնի ծածկոցը գցած գլխներին՝
Ննջե՞լ են բոլոր ծաղկունքը մուշ-մուշ՝
Անքուն հովերի սրինգովն անուշ ...
Ննջե՞լ է արոտ, ննջե՞լ է նոճին,
Ոտնուծոց արել բլուրներն հեռուն,
1200 Հանգի՞ստ են հիմա հսկան ու ճճին,
Երաշտում թաղված խնդում է առուն։
Գիշեր է անցնում։ Եվ ծերուկն արդեն
Կծկում է քանդած գիշերը նորից,
Խռով լուսնակը անցել է մեր դեմ,
1205 Ոտքերն է մեկնում ստվերը բլրից։

Մշուշը (սողալով քարափից)

Հանգիստ է հովտում,
Դե՛, ե՛կ, կամացո՞ւկ այն քերծից իջնենք,
Եվ կանուխ առտուն
1210 Դեպի սարերը հանգիստ կմեկնենք։
Երկար-երկար թնդում էր
Երգ ու պարը չարքերի,
Քնած հովտում աղմկում էր
Հարսանիքը Անթարի։
1215 Սակայն ահա զարթնեց մի հով,
Մարեց երաշն իր նուրբ թևով։
Ու երբ դողդոջ պարզ նորածնի
Աղոտ աչքովն անժըպիտ
Նայեց չորս դին հըրաշալի
1220 Բարի լույսը միամիտ,
Ու կըտուցներն հավքերը երբ
Թևի տակից հանեցին,—
Ականատեսն այն տեսիլի
Քընած էր իսոր լուսանցին ...

АНТАР

(Поэма историческая)

посвящена M-elle ВАЛЕНТИНЕ ЧЕРКИНСКОЙ
от автора

ԱՆԹԱՐ

Նվեր
Օր. ՎԱԼԵՆՏԻՆ ՉԵՐԿԻՆՍԿԱՅԱՅԻՆ
հեղինակից

1

Անբար (իր սենյակում, գիրքը փակելով)

Բազմե՞ց վեհ գիշեր... Բացեց ահա նա
Մթին խոռոչներն իր կույր աչքերի.
Մեռելոտ դիմքով նայում են ահա
Ժայռեղեն բուրգերն անտակ ձորերի։
5 Գեհենի՞ ձայներ անդրաշխարհային
Մռմռում են խուլ ձորերի շուրթին,
Եվ ոսկեթարթիչ աստղիկներն անմեղ
Դիտում են անդորր այս անդունդն ահեղ։
Ծպտո՞ւմ է, նայում երկինքն աստղավառ,
10 Ուր իր անեզրին հակված մշտարթուն՝
Հսկում է հոխորտ Աստվածն ալեփառ
Խորհելով անհուն մի հավերժություն ...

Ուշացած ձայներ (անտառում)

Սրբած է, զուգած կապտաորմ երկինք,
15 Քաշված են մեկդի ամպերն ու մլար.
Այս գիշեր շքեղ սարքված է հարգինք,
Համբույր են տալու բյուրերը իրար։

Այս գիշեր խումբ խումբ քույրերի նման՝
Աստղերի հույլեր ժպտալով գողտրիկ՝
20 Եթերքի անհուն դահլիճը եկան,
Ցրվեցին զվարթ կապտահուն երկինք։

22—179

Հնչում է ժամը անձուկ պապանձման,
Հանգչո՞ւմ են, հալչո՞ւմ ձայներն աշխարքի,
Զուգված են ծաղկունք հարսների նման,
Մնում է անտառն ուրախ հարսանքի։

Երեկոյան ոգի (զեփյուռին)

Գնա՛ կանչիր մեր Անթարին։

Զեփյուռ

Ախ այն հիմար գրքակերի՞ն ...

Երեկոյան ոգի

Այն թո՞ւյլ մարդուն, հոգո՛ւն հողոտ,
Որ կանթեղի լուսովն աղոտ՝
Ապավինած մի խեղճ գրքի՝
Պտրում է զուր ծայրն աշխարքի ...

Անթար (բանալով պատուհանը)

Քնած է աշխարք
Իր հսկայական դիրքով լայնանիստ,
Իր զարդերի մեջ շքե՞ղ ու անկարգ,
Իր խաղաղությամբ հզո՞ր ու հանգիստ։

Զեփյուռ (պտտելով սենյակում)

Ի՞նչ փոշի է նստել այստեղ
Հին գրքերին սև ու դեղնած,
Փչի՛ր գոնե այսպես մի հեղ
Մաքրի՛ր ապրանքդ, է՞, հեր օրհնած...

Անթար (նայելով դուրս)

Այստե՞ղ, այս տանն անհունացած՝
Լռության մեջ անդնդախոր՝
Բարբառում է կարծես Աստվա՛ծ
Մտերմաբար ու ահավոր ...

50 Չե՛մ կարենում հասնեմ Նրան
Մեկ թվում է տեսնում եմ Այն,
Մեկ էլ կարծես երազ է նա,
Որ պիտ սահի՞, անհետանա՞...
(Դուրս է դալիս)

2

Եղևնու անտառ

55 Մի ձայն
Օրը կուրցավ,
Ձորը ժանդեց,
Ծղրիդն անցավ
Ժամը լարեց ...
60 Աղջի գնա՛ ...

Երկրորդ ձայն

Ընկավ մութը,
Ահա վառեց
Լուսատուտը
65 Լապտերն իր պեծ ...
Ո՞ւր հանդիպենք.

—Դոդոշի մոտ,
Մեջ գիշերին։
«Սառ անձավի
70 Սալի վրա՞ ...»։

—Երբ կըծնվի
Կյանքից մի մահ։

«Մայրի՛կ տես-տե՛ս,
Եղևնին ծեր
75 Ագռավի պես՝
Թևն հանեց վեր ...
(Հեռվից)

Մեջ դիշերի՞ն ...

—Մեջ դիշերին ...

Անբար (ժայռերի վրա)

80 Ո՞վ էր այդ խոսում ձայնով գերբնական ...
Սակայն ո՞վ... Ոչ ո՛ք, մենա՛կ եմ այստեղ...
Սև անտառն էր այդ որ իր դյութական
Հեքիաթը բերնին՝ քնեց ամեն տեղ ...

Քնի՛ր, սա՛ղ մարմանդ՝ ստինքդ այդպես բաց,
85 Քնեցե՛ք, գետեր, երկրի երակներ,
Քնեցե՛ք այդպես՝ սարին արմնկած՝
Գեղուշե՛ղ ժայռի դուք խո՛նջ աստվածներ ...
(Կանգնում է)։

Անբար

Սպասի՛ր, ցածում
90 Մեգն է փսփսում ...
Ահա բարձրացած գալիս է ինձ հետ ...
Կանգնի՛ր, ո՞վ ես դու, ոգի՛ անհեթեթ։

Մեգ (սողալով)

Ճերմակ պատառ մի մորուսի ...
95 Բայց երբեմն խոռո՞վքն հզոր
Մրրկահույզ օվկիանոսի,
Երկրի սիրտն եմ գնում այսօր։—
Գնա՞նք, բարեկամ,
Գիտեմ օդային այն բարձր ճամփան,
100 Որտեղից հողմերն անհոգ ու թեթև
Հպարտ մի ճախրով նայում են ներքև։
(Գնում են)։

Անբար (*հանկարծ կանգնում է*)

Այս ո՞ւր ենք գնում
Ինձ ո՞ւր ես տանում ...

105 Մեզ

Ես քեզ տանում եմ այն տո՜ւնը անհուն,
Երազի, հրաշքի այն կախարդական
Օթևանն անսյուն,
Որ չունի՛ ավեր ու կա՛ հավիտյան։

110 Անբար

Այդ պառավ մի՞գդ... Սակայն ո՞վ ես դու։

Մեզ

Կիսատն եմ ա՛յն մասնիկների,
Որ իբրև շանթ մրրիկների,
115 *Կրծկվում են, հիմա գոռում*
Տիեզերյան հսկա պարում։
Ու ինչ տենդոտ երիվարներ
Սանձակոտոր մի վազքի մեջ
Այն տարրերը համաշխարհյան
120 *Սլանում են աստղերն ընդմեջ։*

Ու գնում են ամենուրեք՝
Ուր իր անհուն խոհը ճակտին՝
Ընկողմել է ծե՜ր Տիեզերքն
Հավերժության իր անդունդին ...

125 Անբար

Սահմա՞նքն է այստեղ գոռում խելագար ...
Տես ահա կախվեց մի ահեղ անդունդ ...

Եվ սուր ծերպերում մեգերը կապույտ
Քշում են իրենց մակույկներն երկար.
130 Ի՜նչ ահեղ թնդյուն.
Կարծես անդընդում հազար հսկաներ
Վազում են, դոփում ...

Շավիղ

...Յաւեսութիւ՛ն...

135 Մեգ

Դե հիմի նայի՛ր մորուքիս տակից.
Տեսնո՞ւմ ես ինչպես ձյան հյուսի նման
Ջարդվել է սահանքն ընկած՝ սարերից
Ու գոռում ինչպես ընկած աժդահա...
140 Ահա նո՛ր գոռոց. նայի՛ր, բարեկամ,
Տանում է էն ծառն հինգհարյուրամյա...

Ամպեր

Բարև՛, ձեզ, սարե՛ր, տերե՛ր աշխարհի:

Սարեր

145 Այ բարո՛վ, բարո՛վ,
Էս ո՞ր ծովերով:

Ամպեր

Պոնտիցն ենք գալիս մենք շարվեշարան,
Գնում ենք անցնենք հարթերը Կասպյան,—
150 Դեպի Հիմալա՛յ ...

Անթար

Ողջո՛ւյն վեհափառ աշխարք ամեհի,
Որ վսեմ դիրքովդ այդ հսկայական՝
Փռված ես իմ դեմ անկարդ ու վայրի՝
155 Նման օրերիդ ըստեղծագործման,

Երբ որ նո՛ր դեռ քեզ խոր ոգևորված՝
Հյուսում էր սիրով բանաստեղծն Աստված ...
Երկնայի՜ն աստաղձ, ներշնչո՜ւմ խորին՝
Որով զբաղվեց Վարպետը վերին ...
Ահա սուրբ հետքերն—այս սար ու ձորե՜ր,
Որոնց դիպել են այն հզոր մատներ։
Ողջո՜ւյն քեզ, ողջո՜ւյն, նախաստեղծ աշխարհ,
Որից չեն անցել ծերացնող դարեր,
Կարծես սպասում է ստեղծման խոսքի
Էա՜ին առաջին դողդոջ ու երեր ...

Մեզ

...Ցտեսությո՜ւն ...

Անքար

Այստեղ անտառը երազների մեջ՝
Կախել է ահա տավիղներն իր բյուր,
Որոնց լարերին հովը մեջտեղ
Դիպչում է տխուր։
Ի՜նչ խաղաղություն.—
Տես ո՜չ մի տերև ահու չի խոսում,
Միայն մենության շշունջն եմ լսում,
Եվ պարզ լռության միամիտ աստվածն
Ահա նայում է աչքերը չռած ...

Հով (ներքև, ձորում)

Է-հե՜յ, ծառե՜ր, է՜յ ծաղիկներ,
Մարգագետիններ ու շուշանե՜ր,
Հավաքվեցե՜ք, լա՜վ զուգվեցեք,
Որ հարսանիք զաք այս դիշեր։

Ով ում սիրուն կարոտ ունի,
Ով ասելիք՝ ով լսելիք՝

Ով պարածն է ուզում տեսնի՝
Թող դիշերս գա հարսանիք։

3

Անտառապատ հովիտ, փոքրիկ պուրակ։

Լուսնի շողերը

190 Մենք լուսիկի շողիկներն ենք ...
Թույլ կտա՞ք՝
Ներքև իջնենք, մի պար բռնենք
Կաղնու տակ։

Սովերներ

195 Ա՜հ, համեցեք,
Թեև ճիշտ է, որ ցեղովին՝
Աչքի կողմից՝ թույլ ենք մի քիչ,
Ու անսովոր ձեր խաղերին,—
Բայց այդ ոչի՛նչ,
200 Ծառերի տակ թաք կկենանք
Ու ձեր պարին մտիկ կտանք։

Մի շող (պարելով)

Երբ որ ծիտը՝
Քնած ծիտը՝
205 Թևն է կոխում՝
Միշտ գալիս եմ գորտուկիս մոտ
Պարո՛ւմ, պարո՛ւմ։

Երկրորդ (պարելով)

Երբ որ ծիտը՝
210 Քնած ծիտը՝

Թևն է կոխում,
Միշտ իջնում եմ արջի մեջքին
Պարո՛ւմ, պարո՛ւմ։

Ռոեֆի

215 Ծաղիկները մի տես ինչպես
Քշփշում են արոտո՛ւմ,
Եվ նրանցից մինն էլ ասես
Մի հոգ չունի իր սրտում։

Ծաղիկները (խոսում են իրար մեջ)

220 Ես մահի դեմ մի դեղ ունեմ,
—Իսկ ես սեր եմ միշտ նյութում,
—Ես սրտիցը վիշտ կտանեմ,
—Ես տալիս եմ մանկություն։

Հովը

225 Ո՞ւհ, գալիս եմ ձեզ փախցընեմ,
Ի՞նչ եք այստեղ փսփսում։
Գլո՛ւ-գլո՛ւ, ահա և ես։

Ուխ

Վա՛յ, լուսաշող աղբյուրի՞կս ես,
230 Որտե՞ղ էիր։
Քարափի մե՞ծ
Պալատի մեջ։

«Ինչ կար այնտեղ»։

—Ակն ու բյուրեղ ...
235 (Դողալով) Ո՞ւֆ, մրսո՛ւմ եմ ...
Ալքն ասում էր. «Ճլի՞կ, ճլի՞կ»։

«Շատ գողացա՞ր»։

—Ա՜յ, ա՜յ, քուրիկ։

Ուխ (խլելով խիժերը)

240 Մերի՜կ, մերի՜կ, սպասիր դա՜մ ...

Գետ

Դե շտապի՜ր, ե՜կ, շուտ արա
Վա՜յ կողքերդս, վա՜յ ես մե՜ռա ...

Զայն (հեռվից)

245 Լուսընկա արծաթ գիշեր,
Դե՜ խելոքներ, դե՜ մեր գժեր,
Հարսանի՜ք է, լա՜վ քեֆ արեք,
Զուր չկորչի՜ այս հրավերք։

Փա՜ռք Աստծու, տունն է անհուն,
250 Օճորք ունենք՝ երկինքն անսյուն,
Դահլիճն է լայն ու բավական,
Ապրի զուգող մեծն Այգեպան։

Ծառ ու ծաղիկ հարսնևորներ,
Հով ու ծղրիդ նվագածու,
255 Ժայռ ու բլուր ունկընդիրներ,
Արջն ու կկուն մեզ փեսացու։

Էլ ի՞նչ կուզեք, ամե՜նքս այստեղ,
Չէ մնացել դուրսը ոչ ոք,
Հարուստ-աղքատ մեկ են այստեղ՝
260 Թեկուզ տխուր, թեկուզ անհոգ։

Աղջիկ Ուխն էր պակաս միայն,
Նա էլ եկավ վեր վեր թռած.
Փեշն էլ բացվեց—վնաս չունի.—
Ճերմակ տոտը քիչ երևաց ...

265 Բու (մոտակա թփերից)
Ավե՛հարս, Ավե՛հարս... Օ՛ֆ, արի՛։
Արջուկ (դալիս է թավալվում)
Ո՛չ դես, ո՛չ դեն—աշխարքը հե՛նց
Թավալվելու համար է,
270 Օխա՛յ մեջքս փառավորվեց ...
(Հանկարծ).
Պո՛, լուսինը սառե՛լ է...

Ծաղիկներ (գլխին բամփելով)

Խե՛լքդ է սառել,
Բրդո՛ւ
275 Քոթոթ։

Բու

Տվե՛ք դրա գլխին
Տվե՛ք դրա գլխին ... Օ՛օ՛օ՛ֆ։

Արջուկ

280 Ճամփա՛ տվեք, կանչված եմ ես
Խնդրակներով մեծ հարսընտես.
Պիտի պարեմ հարսների հետ
Իբրև պարի նուրբ վարժապետ։
(Մի ծաղկի ականջին).
Հարսնուկս ո՞ւր է։

285 Ծաղիկ

Օհո՛.—
Քո՛ղ էր մնում, արջի՛ քոթոթ,
Թռա՛վ, գնա՛ց սև բուի մոտ ...

Արջուկ (բարկացած)

290 Բո՛ ... Կջարդե՛մ։
(Վազում է դեպի թփերը և քիչ հետո դուրս գալիս

Հավերժահարսին գրկած)։
(Պարելով).
Հարսնո՛ւկ ունեմ ձյուն ու մարմար,
Օխա՜յ, օխա՜յ, պապա՜ր-պապար։

Ծեր կաղնի

Տեսա՞ք ախպեր արջի հարսնիք,
Դե՛ ծղրիդներ, խելոք ու դիժ
Ինչ եղանակ ունիք-չունիք,
Մեջտե՛ղ բերեք, պա՛րն է ուրիշ ...

Կախ մատներս գոս են ու սև,
Սիրտս էլ փչակ դառած թեև,
Հին է սազս էլ, բայց հնօրյա
Մի երգ կածեմ նրա վրա։

«Էն կաղնուն կաղնի կասեմ՝
Լինի էնպես ինչպես ե՛ս եմ»։—

«Մաշել եմ հաղա՛ր կապա»,
«Հաղա՛ր կապա»,
«Հաղա՛ր կապա»,

«Հաղարը՝ կանա՛չ կապա»,
«Դեղի՛ն կապա»,
«Ճերմա՛կ կապա»...

Ընկած կաղնին (դեմից)
Ծնվեցի քեզ հետ մեկտեղ,
Դե՛ արի, երթա՛նք մեկ տեղ ...
«Միասի՛ն մաշել ենք մենք»
«Հաղա՛ր կապա»,
«Հաղա՛ր կապա»,

(Միասին)
«Հաղարը կանա՛չ կապա»
«Դեղի՛ն կապա»
«Ճերմա՛կ կապա»...

Առաջին կաղնի

Դե՛ արջ ախպեր, մեջքդ դալա՛ր։

Մի ծաղիկ

Պապի, պապի, էլի՛, էլի՛։

Կաղնի

Էլ ի՞նչ էլի, էլն էն է, որ,
«Կար մի ծաղիկ»
«Կապուտաչիկ»
«Նախշուն ջրին»
«Տվեց պաչիկ»...

Բոլորը

Հա՛ հա՛, հա՛, հա՛ ...

Առաջին կաղնի

Տեսե՛ք կախված լուսնի շողից՝
Մեր Ոստայնն էլ եկավ հեռվից,
Դե՛, չոր Տերև դառի՛ր սրինգ,
Հովիկ, դու էլ փչիր մեղմիկ.
Տեսեք ինչպե՛ս Հարսն ու Ոստայն՝
Թելիկ մելիկ՝ պիտի պար գան։
Բայց միայն տես՝
Պիտի փչես
Կոհա՛կ-կոհա՛կ ու մեղմածուփ,
Թե չէ մեր Հարսն
Անում է նազ,
Ոստայնի էլ իրանն է նուրբ։

Ծղրիդ

Սպասեցե՞ք ...
Մի պատառիկ ձյուն էր քնած
Լուսնակի պես ժայռի տակին
Եվ երազում սիրեց հանկարծ
Մեր ածխադործ սև արջուկին
Օխայ արջուկ պապար պապար
Ինքդ՝ ածուխ, հարսդ մարմար ...

Բոլորը

Հա՛ հա՛ հա՛ հա՛ ...

Ոստայն (պարելով)

«Թել եմ սարդի»,
«Թել արծաթի»,
«Փաթաթում եմ»,
«Կյանքը մահին»,...

Հավերժահարս (պարելով)

«Շող եմ կյանքի»,
«Շող լուսնակի».
«Փաթաթում եմ»
«Մահը կյանքին»...

Զոր Տերև

Զոր սրտիս մեջ կյանքն է փչում,
Բայց իմ սույլը ողբ է ու մահ ...
Կյանքն իր ուրա՞խ պարն է թռչում
Ախ, մի՞շտ թռչում, թռչում է նա։

Անքար

Ինձ վի՞րք ես տալիս, է՞յ լուսնակ գիշեր,
Երազով հուռթի իմ լուսնա՛կ գիշեր.

Ինչո՞ւ ես աչքիս հարո՞ւստ, դեղեցի՜կ,
Եվ սիրտս պահում աղքատ, մուրացիկ ...

Ինչո՞ւ ես էլ չեմ
Սավերի նման անդո՞ր բանաստեղծ,
Մատաղ հովվի պես կյանքոտ ու զվարթ,
Հզո՜ր, ուժապի՜րկ՝ կաղնիների պես,
Ու ինչ ապառաժ՝ հոխորտ, գմբեթարթ ...
Տարուբե՜ր հովեր, դեղուշե՜ղ ժայռեր,
Պարզաչի՜կ ծաղկունք, մրահո՜ն շուքեր,
Դո՜ւք, որ այս խարտյա՜շ, թարմ դեղեցկության
Երկնածածկ տունն եք ընարել օթևան՝
Ինձ է՜լ, ախ, ինձ է՜լ արեք ձեզ ընկեր,
Աղքատ եմ սրտով, ավելի՜ համեստ,
Քան դո՜ւք, չքավո՜ր ու մերկ արքաներ՝
Չքավոր՝ ձեր մեծ, հզոր Աստծու պես ...
(Մոտենալով հավերժահարսին).
...Դեռ քեզ չտեսած քեզ սիրում էի,
Կյա՜նք իմ...

Հավերժահարս

Հա՜ հա՜ հա՜ հա՜ ...
(Փախչում է դեպի մի անձավ)։

Անտառի մայրը *(թփերի միջից)*

Ի՞նչ է սա միշտ անտառների սիրտը մտնում,
Ի՞նչ է վախկոտ արձագանքը քնից թոցնում,
Լռությունը դուրս փախցրնում անձավներից,
Ու թափ տալիս կաղնու քունը տերևներից ...
Օ՜օ՜օ՜օ՜ֆ,
Զանձրալի՜ ցեղ։

Մերու Շանապետ
Ո՞վ է այդտեղ

400 Մայրը

Մի լուսնոտ, ո՞վ։

Ի՞նչ է եկել,
Իմ տունն ընկել,
Ու նայում դես
410 Թշնամու պես։
Թե ցավ ունի՝
Թող որ գնա՝
Մարդու ցավը
Մարդու մոտ լա ...

415 Անբար

...Բայց ես ուզում եմ
Ապրե՞մ, ախ ապրե՞մ ...

Մեռու Շահապետ

Մի՛ տրտմիր որդի, գնա՛ քո ճամփան,
420 Թե սա՛ է կյանքդ՝ սա չէ՛ մի մեծ բան.
Ա՜յ էն այրի մեջ ապրում է մոր հետ,
Գնա կին ուզիր, քոնն է այնուհետ։

Գնա՛, ուզիր,
Եկ, քեզ համար
425 Խնդա՛, պարի՛ր,
Փափագդդ առ։

Այստեղ ամեն
Լուսնակ գիշեր
Հավաքվում են
430 Հին—նոր գժեր։

Խաղում են պար,
Իրենց համար

Շվի փչում
Ու կշկշում։

Յուրտ ձմռան էլ
Առնում ավել
Ձյունն են ավլում,
Կամ խոր քնում ...

Դու է՛լ արի,
Դու է՛լ պարի,
Ավլի դու է՛լ
Քնի դու է՛լ...
(Անթարը տխուր հեռանում է)։

4

Ինտերմեցցո

Ցղրիդ

Չի՞կ չի՞կ չի՞կ,
Արի՞ք քնքուշ
Հարսն աղջիկ,
Տվի՞ք անուշ
Մի պաչիկ,
Որ լա՛վ երգեմ
Պար թռչիք։

Գորտ (պատմում է)

Մի ոսկեթեփ ձուկն էր կենում
Լուսնակի հետ խորքն աղբյուրի,
Արծաթեհյուս իր պալատում
Ուռկանի մեջ լուսնաշողի։

Հիվա՞նդ էր՝ խեղճ Լուսիկն հալչում,
Ու չգիտեր Ձկնիկն ինչո՞ւ

Հալչում, հլուծվում ախ էր քաշում,
460 Խեղճ Զկնիկի սիրտը մաշում։

Լողացնում էր նրան Զկնիկն
Իսկ Լուսիկը դողում, դողում,
Վերջն էլ մեռավ... Եվ այն օրից
Զկնիկը խեղճ մենակ լողում,
465 Քարերի մեջ փղձկում, լալիս,
Միշտ մրմնջում ձայն էր տալիս
Լուսիկս ո՞ւր է, իմ Լուսիկս ...

Ալֆեր (ջրից դուրս գալով)

Հասե՞ք, հասե՞ք,
470 Շուտ բռնեցեք
Գորտի գլխին երկու ակ կա

Անթար (մոտենալով քարանձավին)

Ի՞նչ քարայր է սա այսպես խորն, անվերջ,
Կարծես սևասավեր դանդի աչք լինի,
475 Որ լոկ մի իմաստ դաղում է իր մեջ
Անթափանց իմաստն անթափանց մահի։

Օձեր են այստեղ հորինում միայն
Իրենց կեռուշեղ ձևերն ահռելի,
Եվ չիզչը զազիր ատում լույսն օրվան
480 Լիզելով թավիշն իր մաշկեթևի ...

Մի ձայն (անձավից)

Ո՞վ է... Ի՞նչ ես կամենում։

Անթար

Վայելքս ու կյանքս... Եվ այստեղ է նա,
485 Այս սև բավիղում։
(Մտնում է անձավը և տեսնում վհուկին)։

Ո՞վ է ժպիրհ այս զազրելին,
Որի գործն է խավարի հետ՝
Ձեռքերը չո՞ր, ճիվաղային՝
Ձևերը չա՞ր ու անհեթեթ։
Այս դեմքին գո՞րշ ու տխրասույզ,
Այս սապատին դաժան ու չոր,
Այս այտերին սևամորուս
Կա մի խորհուրդ աղետավոր։
(Մոտենալով նրան).
Խոսի՛ր, ցուցանք ...

Վիուկ

Բարո՛վ եկար, Անթար փեսա։

Անթար

Ռամի՞կ խոսքեր ...
Սակայն տակին կծիկ դրած՝
Կա քենաշարժ մի օձ կատակ ...
(Քացի տալով)։
Խոսի՛ր ինձ պես. ի՞նչ կա պահած
Փեշերիդ տակ։

Վիուկ

Մի տիեզերք։

Անթար

[Խոզ անասուն] Մի տիեզերք։

Վիուկ

Միան տնակ,
Փտած մի դանդ... (Նետում է)։

(Վեր կենալով)։

Մե՛ծ էր սիրտը Մեծն Անհունի՝
Գորշ մկնիկին տվեց տնակ.

Ապրի՛ գիրտ սիրան Անհունի՝
Որ պետք ածեց անպետ մի դանդ։
Մի անպետքն էլ եկել ահա
Գարունակովն իր երազող
Երկի՛նքն ուզում է զրկել նա՛,
Որին շատ է և մի բուռ հող ...
Հա՛ հա՛ հա՛ հա՛ ...
Բարով եկար, Անթար փեսա։
Դու ուզում ես կյանք ու վայելք՝
Հոգ մի՛ արա, այդ կճարենք ...
(Դառնալով դեպի անձավի խորքը)։
Դե՛ շուտ եկե՛ք
Դո՛ւք, որ նույնն եք՝
Բայց զանազան ձևերում ձեր։
Դո՛ւք, անանո՛ւն
Էությունները,
Եկե՛ք հագած անունը ձեր։

Մի ոգի (հայտնվելով խավարից)

Դագաղի մեջ մեկիկ-մեկիկ
Կարում էի, ասում «ճլի՛կ»—
Մեռելը ինձ լսո՛ւմ, լսո՛ւմ,
Ու չէր լսում։

Վիճուկ

Նե՛րս համեցիր, խոնավ մայրիկ։

Երկրորդ

Ահա ես է՛լ ...

Երրորդ

Ահա ես է՛լ ...

Չորրորդ

Ահա ես է՛լ ...

Մի խումբ

Ահա մենք է՛լ ...
(Այրը լցվում է ոգիներով)։

.545 Վիուկ

Բարո՜վ եկաք
Իմ ժի՛ր հարսներ,
Խոլեր խաթուն,
Վարդ աղջիկներ,
.550 *Դե՛, համեցեք,*
Վե՛ր բազմեցեք,
Լա՜վ պարեցեք,
Այսօր ինձ մոտ հարսնևոր եք։

Խոլեր խաթուն *(նրան կամթելով)*

.555 *Որտե՞ղ էիր բոպիկ խանում։*

Վիուկ *(վրա տալով)*

Հին ջաղացում, ճահճի փորում,
Աչքերդ էի բրո՜ւմ, փորո՜ւմ։

Երկրորդ ոգի

.560 *Ա՜չքդ ճաքի Մահիկ-Մարիկ,*
Ի՞նչ սիրուն ես իմ անուշիկ։

Վիուկ

Այսօր ճամփին մի խենթ ագռավ
Նայեց դեմքիս ընկավ մեռավ.
565 *Խլ՜ը՜... Տես ինչ ունե՜մ ...*

Ոգի

Ի՞նչ է, տեսնեմ։

Վիուկ

Մի կտոր մա՜շկ ...
Սովից մեռավ տերը սրա։

Զարքեր

Վա՜յ ինչ լավն է, տեսե՛ք, տեսե՛ք,
Տո՜ւր մայրիկ ջան, քիչ-քիչ ծամենք ...

Վիուկ (դրպանը խրելով)

Գրո՜ղ, գրո՜ղ, գրո՜ղ,
Զո՜ռ կտամ ձեզ,
Մահ ծամեցեք։

(Երդում է)։

Այստեղ պուպո՜ւզ, այնտեղ պուպո՜ւզ,
Ով պատահի կտամ մի կուզ,
Ջահել մարդուն՝ պառավություն,
Պառավին էլ՝ անուշ մի քուն։
(Մոտենալով Անթարին)։
Բե՜ղդ թիլ-թիլ, կուռդ ամուր,
Սիրտդ գարուն, վարքդ մաքուր,—
Գիտե՜մ, կուզե՜ս կյանք ու վայելք,
Հոգ մի՛ արա այդ կճարենք ...
Զո՜ւ ջո՜ւ ջո՜ւ ջո՜ւ,
Արի՛ք հարսներ,
Վա՜րդ աղջիկներ,
Քրքրվածներ,
Արի՛ք վառենք շուտով խարույկ,
Դնե՛նք վրան ոսկի կաթսան,
Տա՜նք Անթարին այսօր խնջույք։

Նա մեր հյուրն է, անուշ փեսան։
595 Բերե՛ք, հարսներ, կյանքի համեմ,
Այսօր վայելք պիտի եփեմ։

Դե՛, անունով Համաջնջման,
Տաժանքներով մահամերձի,
Ամեհությամբ կատարածի,—
600 Ձեզ ինձանից խի՛ստ հրաման ...
Շուտ բյուրավոր ձեր վերքերից,
Մեռնողների անեծքներից,
Աղքատության մռայլ երկրից,
Ելե՛ք, բոցե՛ր հայտվեցեք։
605 (Թռչկոտում է ու ծղրտում)։
Ցոլա՛ այդպես, ցոլա՛, հնոց,
Վիզի՛ր օդը բոցե լեզվով,
Ելի՛ր, ելի՛ր ինչպես մի օձ՝
Ոլոր-մոլոր, գազազելով։
610 Խառնե՛մ փրփուր սև փրփուրին,
Խառնե՛մ, խառնե՛մ երգին մի երգ.
Ի՞նչ են ասում այս կերակրին՝
Սրան կասեն կյանք ու վայելք։
Կերա՞ն ազգեր այս կերակուր,
615 Ու չքացան չգիտեմ ուր ...
Ելե՛ք բոցեր, փոփոացե՛ք
Որ Անթարի վայելքն եփենք—
Եփենք նախա՛նձ ու նախատի՛նք,
Եփենք սև մա՛ղձ ու դառ քրտինք...
620 Դե՛, աղջիկներ, լա՛վ խառնեցեք
Դե՛, ժի՛ր հարսներ, լա՛վ շաղվեցեք։
Խառնե՛նք խառնե՛նք մաղձը մաղձին,
Որ Անթարի
Վայելքն եփվի։
625 Տեսե՛ք, տեսե՛ք, այն չոր դաշտում՝
Դեռ ապրում է մուկը նիհար.
Վերջին ծեղն է դաշտից տանում,

Շուտով կլինի նա ցրտահար,
Տեսե՛ք ինչպես նա վստվստում,
630 Վստվստում է ու հետն ասում.
Օ՜ֆ Կարի՜ք, Կարի՜ք, Կարի՜ք,
Ամենազո՜ր Կարիք։

Տեսե՛ք տեսե՛ք ինչ խրախճան։
Ի՜նչ հարսանիք համաշխարհյան,
635 Կաղկանձում են սև ամբոխներ՝
Հնոցներում ամենակեր։
Ու թնդում են շրա՜խք-թրա՜խկ՝
Մեքենաներն ահադղորդ,
Ճզմո՛ւմ իրենց ոտքերի տակ
640 Մարդու հոգին ինչպես մի որդ։
«Հա՜ց» է ոռնում մարդը մարդուն,
Քա՜ր է դառել մարդը մարդուն,
Չոր երկիրն էլ նոթի մի քած՝
Ջադե՜րն ուտում, չի՜ տալի հաց ...

645 Հա՜ց ենք ուզում—ահա կրա՜կ,
Օ՞դ ենք ուզում—ահա կրա՜կ,
Կյա՞նք ենք ուզում—ահա կրա՜կ,
Կրա՜կ, կրա՜կ,
Տրաքվեցե՜ք բոց ու կրակ ...
650 Դե՛, աղջիկներ, լա՜վ խառնեցեք,
Դե՛ ժիր հարսներ, լա՜վ շաղվեցեք,
Խառնե՜նք, խառնե՜նք մաղձը մաղձին,
Որ Անթարի
Վայելքն եփվի ...
655 Սպասեցե՜ք,
Վա՜րդ աղջիկներ,
Ժրի՜կ հարսներ,
Սպասեցե՜ք։
Որ վայելքը պատրաստվի շուտ՝

660 Ավելացնենք էլի մի նյութ։—
Նախ սրբազա՜ն մի ստամոքս,—
Գերեզմա՜նը հին ազգերի,
Որի համար քրտնե՛ց, փտեց
Նախամարդը բիրտ ու վայրի։
665 Դնենք վրան մի դանգ բորբոս,—
Գերեզմանը վերջին մարդի,
Որի համար ճգնո՜ւմ է նա,
Եվ որի մեջ պիտի փտի՛...
Հա՛ հա՛ հա՛ հա՛ ...
670 Անապատում անթաղ ձեռքեր՝
Ջեռ ավազից՝ աղերսորեն
Ցցված են դուրս՝ խնդրելով հող
Անցորդներից, որ գալու չեն ...
Նրա՜նք լինեն այստեղ վկա,
675 Խորհրդանի՛շ այս զորության,
Մինչև վերից թե՛ը թափ տա
Ցրտին գիշերն համաշխարհյան։
Խառնե՛մ, խառնե՛մ մաղձը մաղձին,
Որ Անթարի
680 Վայելքն եփվի,
Դե՛ աղջիկներ, լա՛վ խառնեցեք,
Դե՛ ժիր հարսներ լա՛վ շաղվեցեք։

Ոգիներ

Էլ ի՞նչ ունես։

685 Վհուկ

Բոց ու անե՛ծ։

Ոգիներ

Ո՞ւմ ես տալիս։

Վհուկ

690 Ով պատահե՛ց։

Դե՛ մի բուռ էլ հասարակ հող
Ցանենք վրադ՝ պատրաստ ես դու.
Սրտին սև հող, գլխին՝ սև հող,—
Փո՞ւհ, դիա՞կ, ի՞նչ հոտած ես դու ...

695 (Անթարին)։

Ահա՛ Մահիկ մեծ մայրիկից
Քեզ մի պարգև կախարդային.
Ըմպի՛ր եղբայր այս բաժակից,
Որից ամենքն ընդունեցին ...
700 Դու ցանկացար վայելք ու կյանք՝
Դե՛ նախ ըմպիր այս ջուրն անուշ,
Քո տանտիկնոջ սիրտը շահիր,
Որ ստանաս սիրտը քնքուշ։

705 Անթար (խմում է և զզվում)

Թյո՞ւ, ճաքե՛ս, ջադու,
Գետի՛նն անցնես դու ...
Անիծյա՛լ Կարիք, ատելի՛ բվեճ,
Ավա՛ղ, ըմպեցի թույնիդ բոլոր,
710 Ջահելությո՛ւնս թառամեց իմ մեջ,
Այնքա՛ն դառն էր նա, այնքա՛ն թունավոր ...

Վիուկ

Բողալացին մտիկ արա։
Ձի՛ս մեռնի, չէ՛, հա՛ հա՛ հա՛ հա՛,
715 Լսի նման աղջիկ տամ քեզ,
Գաս իմ տանը լացդ դցե՞ս ...
Դե՛, ժա՛մն է ժամ, վե՛ր կաց, գնա՛,
Կարոտ չէի՝ որ մոտս եկար,
Դուրսը քեզ է սպասում Նա
720 Մեծ բան, հա՛ հա՛, ֆը՛, դիրկդ առ։
Ապրե՛ս,
Վայլե՛ս,

Չրկշտանա՞ս ...

Անքար

725 Օ՜, երանի ...

Վնուկ (ծանր)

Հիշի՛ր միշտ ինձ,
Չրհագենա՞ս դու նրանից ...

Դե՛ ժամս հասավ, պիտի գնամ,
730 Որ հազար մի մանեմսան տամ,
Բերե՛ք հեծնեմ իմ խնոցին,
Գնա՛մ, թռչեմ ինչպես մի ցին։
(Անհայտանում է)։

Մի ոգի

735 Ես է՛լ գնամ.—

Երկրորդ

Ես է՛լ գնամ ...

Երրորդ

Ես է՛լ գնամ ...

740 Բոլորը

Մենք է՛լ գնանք ... (Ցնդում են)։

Անքար (գնալով դեպի անձավի մութ խորքերը)
745 Այս ո՞ւր եմ ես... Եվ ո՞ւր կորավ հեղձող օդում
Այն տեսիլը ծանր-թանձր այս գիշերի,
Չէի՞ եղել այսպես դժխեմ անապատում,
Չէի լսել սրա հուշակն աղետալի ...

(Լռություն)։

750 Ո՞վ կա այդտեղ... Ո՞վ է լսում ձայնս...—Ոչ ո՞ք։

Ինչ կա այդտեղ... Ո՞վ է լռում այդ կողմ հիմա...
Մարդկությունն՝ը, պատմությունն՝ը ու դարեր
են մտել այդտեղ։
Զա՞ն տվեք ինձ... Օ՞, լռություն... Չկա՛ ոչ ոք...

755 Մի առնագանգ (խորքից մռմռալով)
Այստեղից է աշխարհն անհո՞ւն իմացության,
Բնավայրը հզո՞ր ու մեծ տառապանքի,
Այստեղից են ծագերն հավե՞ր Տիեզերքի,
Թո՞ղ կյանքդ կարճ,—սա է դո՛ւռը հավերժության։

5

760 Անթար (դուրս գալով անձավից)
Գնա՞, դայա՛կ տառապանքի,
Գնա՞, դու ես տերն աշխարքի,
Դու այս գիշեր ահավորից
765 Ահավորը ցույց տվիր ինձ ...

Գորտեր

Եկե՛ք, եկե՛ք, ա՛յ քեռիներ,
Այստեղ գորգ ենք գտել մենք.
Կանաչազգե՛ստ սիրունիկներ,
770 Ծանրագոգո՛թ սանամերներ,
Համեցե՛ք, եկե՛ք բազմենք,
Ու մի սիրո՞ւն երգ ասենք։

Անթար

Զքվե՞ս, չլինե՞ս տանջանքի աշխարհ,
775 Վշտերի՛ մանուկ, անխնամ, անհայր,
Սև՞ լիներ երնեկ օրըդ ըստեղծման,
Զբերեր մայրդ որբին քեզ նման ...

Մաղիկներ

Արիք, արիք այ քուրիկներ,
780 Տեսեք ոնց մի խղճալի,
Գլուխը կախ հոնգուր հոնգուր,
Լաց է լինում խղճալի։

Արիք, արիք այ քուրիկներ
Այս խեղճ մարդուն մի տեղ տանք,
785 Փչենք վրան անուշ բույրեր,
Թող խոր քնի ժայռի տակ։

Մի ծաղիկ

Տեսեք որքան գունատ է, խե՜ղճ,
Մարել է կյանքն աչքերի մեջ։

790 Երկրորդ ծաղիկ

Կարիք Մեծ-Մոր թույնից խմեց,
Ահա ինչու նա գունատվեց։

6

Կիրիկական ինտերմեցցո

(Հավերժահարսը աղբրի գլխին նայում է ջրին ու երգում)

795 Կես գիշերին, մեջ գիշերին
Եկավ ափը աղբյուրի՝
Լուսաթաթախ ձյունի նման՝
Ոսկեգանգուր մի փերի։

Եկավ նստեց մամուռ քարին,
800 Ծամերն ազատ թողեց ցած,
Ջրի ծոցում կուրծքը նարին,
Ինչպես լուսին ցոլցլաց։

Խլե՛ց աղբյուրն այն սիրահար
Նրա շողքը դողալով,
805 Շաղեց վրան լալ ու գոհար
Ու մարգարիտ քրքջալով։

Եվ նա արագ ու նազելի
Սանրեց ծամը վերից վար,
Աստղի՞ նման ցոլք էր տալի
810 Նրա սանրը ոսկեվառ։

Սանրում էր նա ու հետն երգում
Հավերժության երգերից,
Ակն աղբյուրն էլ երգը կրկնում,
Քրքջում էր բերկրանքից։

815 (Անթարը մոտենում է հավերժահարսին)։

Հավերժահարս

Նայի՛ր, բարեկա՛մ, ինչպես այն բլրին՝
Լուսնի ծածկոցը գցած գլխներին՝
Ննջել են բոլոր ծաղկունքը մուշ-մուշ
820 Անքուն հովերի սրինգովն անուշ։
Ննջե՛լ է արոտ, ննջել է նոճին,
Ոտնաձոց արել բլուրներն հեռուն,
Հանդիստ են հիմա հսկան ու ճճին,
Երազում թաղված խնդում է առուն։

825 Անթար

Նայի՛ր, բարեկա՛մ, ինչպես լուսընկան
Դրել է հովտում լույսերի եղյամ,
Թփերն ու ծաղկունք հանց մատաղ հարսներ՝
Զուգվել են հագել արծաթե շորեր։
830 Էն ո՞վքն է թռչում մեր լուռ հարսնիքին՝
Շաղելով լուսնին արծաթ ու մարգրիտ,
Լուսնա՞կն է փարվում աչքիդ ալիքին,
Մատա՞ղ լինեմ ես շուրին ունքերիդ ...

Հավերժահարս

835 Այսպիսի մի լուսնակ
Նայում էր ինձ,
Երբ Անթարը մի կաղնու տակ՝
Զգո՜ւյշ, զգո՜ւյշ՝
Համբույր գողցավ մի աղջկանից ...

840 Անթար

Այսպիսի մի լուսնակ
Նայում էր ինձ,
Երբ մի աղջիկ մի կաղնու տակ՝
Անո՜ւշ, քնքո՜ւշ՝
845 Իր այտիկը դեմ արավ ինձ ...

Կյանքըս գրկի՜ս՝
Մի՜տ է հոգիս,—
Թռչում վե՜ր։
Ջա՜ն, անտառներ
850 Ջա՜ն, ծաղիկներ ...
Թռչում վե՜ր։

Մի ալֆ (գալիս է պարում)

Մի շվի եմ գողցել ուռուց ...
Հա՜ փչում եմ, բան չի ածում.
855 Մի երգ կա հին, է՜հ շատ հնուց,
Սեր են ասում—հենց են ածում։
Ուռին էլ ծեր՝
Մի երգ ուներ
Երգո՜ւմ, երգո՜ւմ՝
860 Երգածն էր սեր։

Երկրորդ ալֆ

Ո՞վ է տեսել էսպես հարսնիք,
Ո՜չ սեղան կա, ո՜չ էլ սրահ,

Փեսան կիսամերկ, հարսը բոպիկ,
865 Բայց ուրախ են... Չորի՞ վրա ...
Սերն էլ խելառ՝
Աթոռ չուներ,
Գտավ մի քար
Եվ ուրա՞խ էր։
870 (Փախչում են)։

Անթար

Հովիկը քուն մտավ
Փարված էն ծաղկին,
Տերևը վայր դրավ
875 Գլուխը ճյուղքին ...
Աղջիկն ասում է.
«Զբպիտի՞ ննջենք...»։

Հավերժահարս

Կաղնին իր ճյուղքերը
880 Կախեց քնաբարձ,
Փչակում ստվերը
Քնեց աչքը բաց ...
Անթարն ասում է.
«Թե կուզես՝ ննջենք...»։

7

885 Մի ձայն հեռվից

Է՛յ լսեցեք, ձե՛զ եմ ասում,
Անսա՛զ աշուղ կաղնիներ,
Է՛յ ժամագործ ծղրիդներ,
Ջրատորտո՛զ զեփյուռներ,—
890 Դիշե՛ր անցավ, քուն եղեք։

Ժայռը քնեց գլուխը կախ,
Մարդ ու բլուր՝ փորնին բաց,

Արջուկի էլ մեղրաթաթախ
Գլուխը վար թրջփաց։

895 Տեսեք շուքն էլ վիզն երկարած՝
Փռված մնաց էն մարգում,
Լուսնակը մերկ, ամպը շապկանց՝
Անուշ անուշ մտան քուն։

Մի ուրիշ ձայն

900 Նայի՛ր, բարեկամ, ինչպես այն քերծին՝
Գլխիկը դրած լուսնակի կրծքին՝
Ծաղիկը անուշ քուն մտավ հանկարծ,
Հովն էլ քնի մեջ շվին զցեց ցած։
Գիշեր է անցնում։ Եվ ծերուկն հիմա
905 Կծկում է քանդած խավարը նորից,
Լուսնակն անկողնից վայր կախվեց ահա,
Եվ ոտքն է մեկնում սավերը բլրից։

Հով

Սակայն ահա զարթնեց մի հով,
910 Մարեց երազն իր նուրբ թևով։

8

(Աշուն։ Անթարը պառկած է Անձավի դռան։
Հավերժահարսը խաղում է թափված տերևների
հետ)։

Անթար

Լույսե՛ր իրիկվան,
915 Որբե՛ր իրիկվան—
Հիվանդնե՛ր դժգույն.
Դողացնո՛ւմ են ձեզ
Հողմերն իրիկվան՝
Ձեր տանն հազարբուն ...

24—179

920 Ախ շար աշունը տխո՞ւր, պառավձա՞յն՝
Մի հառաչանք է ձգում ընդունա՞յն,
Եվ տրտմեցնում սիրտը իր նման ...
Ախ երկա՞ր է շատ
Այդ հառաչն ունայն
925 Ինչպես մի դանդա՞տ ...

Ախ երկա՞ր է շատ
Այդ հառաչն ունայն
Ինչ կյա՞նքըս վհատ ...

930 Հավերժահարս (իր համար)

Ամպ է մոա՞յլ, սև դարբիններն
Ահա վառել հսկա քուրան՝
Ուռեցրրել մեծ-մեծ փուքսերն՝
Ու արևը դրել վրան՝

935 Փչո՞ւմ, փչո՞ւմ,
Փչում են հա՞
Փուքսն ամեհի,

Ու ներկել է
Դեմքերն ահա
940 Հուրքն արևի։

Քամին թևը թափ է տալի,
Ու մեզն հեռվից նավի նման՝
Լողում է լուռ, համր դալի՝
Խարսխելու ձորի վրան։
945 Հանդես կլինի
Այս իրիկվան ...

Անթար

Այո՛, հանդես հազա՞ր մահվան ...

(Նայում է անտառին)։

Հարկահանն աշուն անտառներն ընկած՝
Կապում է դանձերն ու ծիծում նրան,
Կաղնիներն հսկա՝ հողմերով ճաղկված՝
Հանում են իրենց ոսկեղեն կապան ...

Հավերժահարս

Տե՛ս, լսո՞ւմ ես
Աղբյուրն ինչպես
Լաց է լինում
Մութ անտառում.
Աղբյուրի թաց ասավածն հիմա՝
Աչքը չռել ջրի վրա՝
Իր դանձերն է մեկ մեկ հաշվում
Ու խռոված հեռը կրկնում.
«Բա է՞ս, բա էս,
Քիչ է, քիչ է...»։
Խեղճ աղբյուրն էլ լաց է լինում
«Ահա տե՛ե՛ս,
Քիչ չէ՛, քիչ չէ ...»
—Հա՛ հա՛ հա՛ հա՛։

Անթար

Ա՛խ, ինչպե՛ս հոգնած, հոգնա՛ծ եմ հիմի
Ապրածով բեռնած իմ խեղճ ուսերով,
Ինչպե՛ս տրամությամբ հափրած եմ ու լի,
Կարոտ՝ մոնելու հանգստյան մի ծով ...
Ջրերն ինձ համար ցավե՛ր են տանում,
Անտառն օրնիբուն խարշափում ինձ մա՛հ,
Փթիթը ինձ՝ թո՛ւյն, արևը՝ հուզո՛ւմ,
Շիրի՛մ է երկիրն ինձ համար հիմա ...
Ախ, ինձ հաղա՛ր ցավ դառած թշնամի ...

Դո՜ւ ես մնացել ինձ համար միայն—
980 Մահվա՜ն արդանդից ես քեզ խլեցի,
Ու ինքս դառա մահին պարտական ...

Անտառ

Օ՜օ՜օ՜ ...

Հավերժահարս

985 Անտառը մրսո՜ւմ է ...

Անքար

...Եվ տերևները բռնած կոծապար՝
Վազում են ահա մահի հետևից,
Վազո՜ւմ խուռներամ, հծծո՜ւմ են խելառ,
990 Փախչում՝ խոլաթև քամու մտրակից ...

Ա՜խ, ինչո՞ւ այդպես դեղեցիկ ես դու,
Կյա՜նք եմ, օ սի՜ր եմ, հատո՜ր արևի ...
Ինչո՞ւ եմ այսպես քեզ սիրում, ինչո՞ւ,
Երբ սիրող սի՜րտս ճարակ է մահի ...

995 Է՜, պիտի մեռնե՜մ... Իսկ դու Հավիտյան
Կխայտա՜ս անհոգ ինչ շող այս հովտում ...
Ախ, թե սիրում ես՝ ո՞ւր ես թողնում ինձ,
Գուցե և բնա՜վ դու ինձ չես սիրում ...
Հավերժահա՜րս ...

1000 Հավերժահարս

Ի՞նչ է, սի՜ր իմ։

Անքար

Ջա՜ն ...
Սա ինձ անիծե՜ց... Նա՜... Մա՜յրդ անգութ.—

1005 Պիտի մեռնի՞մ ես այսպես անհագուրդ ...
Հավերժահա՞րս ...

Հավերժահարս

Ի՞նչ է, սեր իմ։

Անբար

1010 Ես մրսո՞ւմ եմ... Տո՞ւր համբույրդ՝
Հավերժողիդ համբո՞ւյրն անմահ —
Եվ դրանո՞վ, դրանո՞վ իսկ
Թող մեռնի մահն երկրիս վրա ...

Հավերժահարս (զվարթ, անհանդիստ)

1015 Մութը մթնեց,
Ջորը ժանգեց,
Գիշերն ահա չռեց թևերն
Ու սևեռեց խոշոր աչքերն
Հսկայական
1020 Բուի նման ...

Մահ-մարիկն էլ նայում դես-դեն՝
Մեզ է գալիս լնդլնգալեն։

Անտառ

1025 Օ՜օ՜օ՜ ...

Հավերժահարս (նույն ձևով)

Մրրիկն ելավ ահա կատղած
Ու մտրակեց ձիերը վեհ,
Ու անտառը ֆշշոց դրած՝
1030 Ելավ հազար օձերի պես,
Ու ինչ սագեր հսկայական
Թավ ու թփերն անտառների՝
Երկարացրին վզերն ահա
Ու ֆսսում են անլռելի ...

1035 Անտառ

Օ՜, օ՜յ...

Անթար

Այո, օ՜յ ...
Մեռելները վե՞ր են կացել
1040 Ահա իրենց սարսափելի՜
Հավերժակա՜ն մահիճներից
Ու ոռնալով գալիս են ինձ ...
Գոռա՜ մրրիկ, խախտի՜ր հիմքերն
հաստատության,
Ճեղքի՜ր երկիրն ու տա՜ր ծովերն՝ ածիր
անդունդն հավերժության ...
1045 Գահավիժի՜ր տիեզերքի ապառաժներն
Ու զա՜րկ ուժով գահույքներին Նրա փառքի,
Ու տա՜ր, փշրի՜ր բյուրաբեկոր մինչև տակը
տիեզերքի ...
Մարի՜ր ջահը տիեզերյան, փորի՜ր նրա աչքի
բիբերն,
Արի՜, քա՜ոս, կախի՜ր չորս դին վարագույրդ
մշտամեզի ...

9

Ինտերմեցցո
1050 Հավերժահարս

Գիշե՜ր սևահեր, գիշե՜ր մթնավար
Սիրտդ բա՜ց, պարզվի՜ր,
Մեղմի՜ր երկնքիդ ճրագներն այդ վառ
1055 Ու արի՜ խոսի՜ր ...

Լո՜ւռ է լեռների ժայռեղեն ոգին
Ամպից դուրս ցցած իր սուր եղջյուրներն՝

Ու աչքը գցած իր ջրվեժ միրքին՝
Նայո՞ւմ է... Եվ ձի՞դ անցնում են դարեր։

1060 Չի՛ հարցնում քամին՝ ի՛նչ է նա նայում,
Չի՛ կանգնում մի ամպ հսկային նայի,
Ամպն ամպին բոթում, ամպն ամպից անցնում,—
Նայո՞ւմ է ոգին... Առա՞նց պատճառի։

Նայո՛ւմ... Ինչպես որ առանց պատճառի
1065 Երբեմն մտած դարավոր մի քուն՝
Մրափում էր նա անխոնջ ծովերի
Մշտահույզ ու լայն ջրերի խորքում ...

Գիշե՞ր սևահեր, գիշե՞ր մթնավար,
Սիրտդ բա՛ց, պարզվի՛ր,
1070 Մեղմի՛ր երկնքիդ ճրագներն այդ վառ,
Եկ այստեղ, խոսի՛ր ...

*

* *

Ջրվեժն իր բյուրեղ կանթեղն է փշրում,
Հեքիաթի նման հոսում աղբյուրներ,
Սահանքն առյուծներն արծաթաշաղ քշում,
1075 Հովերն օրորվում տատա՞ն վար ու վեր։
Էն դե՞տն է անքուն, որ ահեղ ձորում՝
Քարվանի նման չվում է իր շուն,
Որ մեկ դոռում է, մեկ նվաղ մարում՝
Պտրելով ճամփա խավարի միջում ...

1080 Գնացե՞ք բարով, է՛յ ուխտավորներ,
Գնացե՞ք այդպես օրե՞ր ու դարե՞ր,
Ձեռք ձեռքի, գրկած ալիքն ալիքին՝
Գնացե՞ք հասեք ձեր Տիեզերքին ...

*

* *

Հովերն անտառում ճոճքեր են օրրում,
1085 Օրրում են երգով ճոճքերը հսկա,
Այնտեղ աշխարքի ցավերն են քնում,
Օրրում են այնտեղ ցավերը սրա։

Օրրեցե՛ք, հովե՛ր, թող լույսը բացվի՝
Սա է՛լ ելնի վեր, երթա իր ճամփան,
1090 Ձայն չտանք, հովե՛ր, թո՛ղ անդորր քնի ...
Սա էլ է թափվել ինչ տերև աշնան։
Թափվի՛ր, տերև՛, թափվի՛ր,
Թող գարունը գա,
Քնի՛ր, Անթար, քնի՛ր,
1095 Թող գարունը գա ...

10

Մղձավանջ
Անթար

Այս ո՞ւր եմ կորել և ո՞ւր են հասնում
Այս ողորկ ժայռերն անվե՛րջ, երկնահուպ ...
1100 Ո՞ւր է այս ալիքն ինձ քշում տանում ...
Ծովե՞ր են սրանք, թե՞ խորը մի դուր ...

Մի ձայն (Անթարին)
Գնա՛ ...

Ուրիշ ձայն

1105 Այժմ անընդհատ թափառում է նա՝
Արդեն արձակած հյուլեններն իր բյուր՝
Ոչ ո՛ք չգիտե ի՛նչ է նա հիմա,—
Ավա՞ղ ծովափի, կայծա՞կ, թե աղբյո՞ւր ...
Թափառում է նա տարերքների հետ,
1110 Բուքի հետ թռչում սարերն հեռավոր,

Խաղում է ծովում պարեր անհիթեթ,
Հյուսում ու այրում նորանոր կյանքեր։
Այստե՞ղ, թե այլուր կամ խոր երկնքում՝
Բայց ապրում է նա անդեմ ու ավրած,
1115 Տարերքների հետ ցնդում, մրրկում ...
Եվ նա է տարե՛րք... Եվ նա է Աստվա՞ծ ...

Մի ձայն

Գնա՛ ...

Երկրորդ ձայն

1120 Ելե՞ք, տարրեր լայնահեղեղ,
Անլո՞ւր բուքեր միգամածի,
Սկսեցե՛ք ձեր պարն ահեղ,
Մեռա՞վ այսօր մահը մահի։

Երրորդ ձայն

1125 Ահա թռած իրենց մահճից՝
Հոնդյուններ տիեզերյան՝
Կաղկանձում են՝ անգիտակից
Մոլուքներով հսկայական ...

Մի ձայն

1130 Գնա՛ ...

Անբար

Ո՛չ, կանգնեցե՛ք, կանգնե՛ր, աշխա՞րհ,
Կանգնե՛ր մրրիկ, շո՛ւնչս տուր ինձ,
Կանգնե՛ք, լեռնե՛ր ահեղատարր,
1135 Թողե՛ք միտքս ժողվեմ նորից ...
Այս ո՞ւր եմ ես, ո՞ւր եմ կորել
Տիեզերյան այս վեհ պարում ...
Վե՞ր են կացել մե՞ծ աշխարքներ
Փոնչում են ու արշավում ...

1140 Հսկայական ջրեր

Վա՜՜՜շ... Վի՜ի՜ի՜ի՜շ...
Ժայռե՜ր, ճամփա՛։

Քամիներ

Հո՜ հո՜... Հո՜...
1145 *Սարեր, ճամփա՛։*

Լեռներ

Ամպի՛ր, ճամփա ...

Անթար *(լսում է հեռվից իր ձայնը)*

1150 *Բոց եմ, հո՛ւր եմ, ես եմ քամի՛,*
Ես կայծա՛կ եմ կատաղախանձ,
Տարերքի հետ զանգված ի մի,
Ես տարերք եմ, ես եմ Աստվա՜ծ ...

Ձայն

1155 *Գնա՛ ...*

Անթար

Եվ ես եմ Աստվա՜ծ ...

Բայց ո՞վ է այն մեծ Ամեհին այստեղ՝
Որ լսում է ինձ լռությամբ ահեղ ...
1160 *(Ցնցվում է, զարթնում)։*
Հավերժահա՜րս, հավերժահա՜րս ...

Հավերժահարս

Ի՞նչ է Անթար։

Անթար

1165 *Սե՛ր իմ, կյա՜նք իմ, խարտյա՜շ քուրիկ,*
Անունդ այնպես քա՜ղցր է, գողարիկ,

Մի վայրկյանի համար թեկուզ
Օրհնյալ լինես հավերժի՜ կույս ...
(Նայում է բնության)։
1170 Անտառը ահա մութերն է թափում
Իր բյուր թևերից,
Ամպերն սպիտակ ձորձերն են քաշում
Լեռան ուսերից,
Գետի մեջ ահա վազում են, դոչում
Հազա՜ր մանուկներ ...
Թեթև այսօր եմ, քան ամպը օդում,
Դե վե՜ր, դեպի վե՜ր ...

ԼԵՆԿԹԻՄՈՒՐ

Ու եկավ դաժա՜ն տարի,—
ձմեռն էր ջերմ ու անձյուն,
Գարունը հեղեղաբեր,
ամառը թույն ու մշուշ.
Արևը ամպի տակից
որպես գունդ պղտո՜ր արյուն,
Աչքի պես չա՜ր ու խեթող
վար նայից արյունագույժ.
5 Դաշտերից ամո՜ւլ, անբի՜ր
փչեցին գոլ ու խորշակ,
Ամպերի շարքերն անջուր
խռռված փախան արագ.
Եվ ասա՜ց դիրը ահեղ.
խավարումն արևպակի,
Սո՜վ դաժան, համատարա՜ծ,
ավերո՜ւմն աշխարհների ...

1

Եվ մեռելոտ անապատում Թաթարստան աշխարհի՝
10 Ուր չարաթույն մրրիկներն են թռչում բացը հեգնելու,
Ուր ջնջելով վերջին հետքերն աղմկահույզ քարվանի՝
Թռչող դեղին ավազներն են գնում հեռուն հատնելու,
Այն աշխարքում որտեղ թաթար կատաղի ցեղն այլազարմ՝
Խուի չի դարբնում, այլ կուռ շղթա, այլ սուր կայծակ
շանթահար,
15 Ահա այն շեկ անապատում կանգնած է գո՜ռ Սմրղանդ՝

Աչքը գցած անապատին դող է գցում ու զարզանդ...
Թաթա՞ն արդյոք գտավ անուն էդ չար արնոտ քաղաքի,
Թե էն թռչող ավազներից ծեփեց ավղանն անհոգի,—
Լենկթիմո՛ւրը նստեց մի օր էն դիվական բներում,
20 Ուր սարդի պես դարան դրած հայի պատա՞նքն էր հյուսում ...

Եվ ազազիլ սուրը մեկնած աշխարքների Տիրոջը,
Ելավ, ղրկե՞ց թաթար ազգին, արյունալի իր կոչը.
Ելե՞ք, ասավ Քե՛շ ու Թուրա՛ն, դու զա՛րմ ոսկե օրդայի,
Թող տատանվի հորիզոնը բանակներով մոնղոլի ...

25 Ու ոնց քամին թունդ վեր կենա՝ ելան թաթար օրդանները,
Քանդվեց Բայքալ, Կարակորում, մոնչացին բարբարները ...
Եվ այդ ահեղ, մոնղոլ լավան՝ անվերջությամբն յոթնգետի՝
Խուժե՛ց, լցվե՛ց ամեն կողմից օջախը լայն Սմրղանդի։
Ու ոնց ամպեր ժողովեցին կարկուտ նետեր բյուր ու հազար,
30 Անտառի պես տարածեցին դեպի երկինք տեգ ու տապար,
Նման ծովին փոփոռացին հովերի դեմ ձիանց բաշեր,
Ու զորք լցվեց անապատում, կարծես լցվեց հազա՞ր դիշեր։

Ու երբ դիպան հյուսիս հարավ ողջույններով մոնղոլական,
Ու երբ դողաց Սմրղանդը ամբոխի տակ այս հովվական՝
35 Ելա՛ն մահվան մունետիկներ դեպի խուժերն անծայրածիր,
Ու կանչեցին Թիմուրի մոտ մրրիկներին այս ցանուցիր։
Ասին՝ «ելե՛ք, գումարվեցե՛ք, անապատի՛ հարազատներ,
Կանչում է ձեզ մահու արքան համաշխարհյան պատերազմի.
Տատանվեցե՛ք ձիե՛ր, ուղտե՛ր, փոփոռացեք դրոշակնե՛ր,
40 Ելե՛ք այսօր ունկնդրելու դատավճիռն աշխարքների ...»։

Ու վե՞ր կացան սուր ու նիզակ ինչպես ծովեր պնծպծալի,
Փողփողացի՞ն դրոշակներ դեպի արքան աշխարքների,
Ճոճալ սկսան նետ ու կապարճ,—այդ շանթերը զսպած ամպում,
Ու գնա՞ց զորքն այս դեղներես, դեղնեց դաշտում
Սմրղանդու...

45 Անապա՞տն էր հևում այսպես, թե՞ վշվշում հազար գետեր,
Ամբոխների շնչառությամբ շվշվում էր օդը երեր.
Ու տեղ պտրող ջրերի պես զորքեր էին իրար գալի,
Կարկուտի պես վեր վար թռչում փափախները ձիավորի։

Անցան-դարձան ձիաններով փարաջաներ խայտաբղետ,
50 Աշնան նախշուն անտառի պես հովի առաջ միշտ վետ ու վետ.
Սարդի սեղմած գոտկի նման՝ մարդոց մեջքեր ծռմռվեցին,
Ու խթեցին նժույգներին կոշիկները կեռ ու դեղին։
Ժամե՞ր անցան աղմկալի, մինչև որ այս ամպը զորքի՝
Դադրեց, հևա՞ց փոթորկելուց, բոթբթելուց մեկզմեկի.
55 Ժամե՞ր անցան, մինչև սակավ իջավ փոշին ամպանման,
Ու կախվեցին ունքերը ծուռ Լենկթիմուրի ճամփի վրան ...

Խայտաճամուկ, ըմբոստ բուրգեր ցցված հեռուն դաժանատես՝
Պահում էին Սմբրղանդը վիշապաղուն զորքերի պես.
Ատամները ցից-ցից շարած դեղին ու բաց ընդերքներին,
60 Կարծես ահա մռմռալով սպառնում են աշխարքներին,
Բայց ի՞նչ ձայն էր պայթեց այսպես... Դահավիժվող քարա՞փ
էր դա,
Թե՞ երկնքի ձեղունն հանկարծ ճաքեց թափվեց երկրի վրա.
Դոռո՞ց ընկավ զորքերի մեջ, գնա՞ց, շրջե՞ց քամու նման,
Եվ ոնց կայծա՛կ աչքը խլող՝ ցոլա՞ց Թիմուր քաղքի դռան.—

65 Ծանր-ծա՞նր շքախմբով՝ նստած սև ձին ու ծանրագեմ՝
Ինչպես մահու անխաբ վճիռ՝ եկավ Թիմուրն ամբոխի դեմ.
Ետ-ե՞տ գնաց զորքը սավեր՝ այդ արևից արյունագույժ,
Բացե՞ց մեջտեղն հրապարակ, ինքը շորս դին՝ սև՞ ու մշուշ ...
Ու դադրեցին դաշտերն հևալ, հանգավ զենքի բոցը պեծպեծ,
70 Ու այս պապանձ անապատը ականջ դրեց ու սպասեց.
Անշարժացավ երկու շարքում մեռած քաղաքն այս մարդկային,
Ինչպես փողո՞ց երկարաձիգ Լենկթիմուրի ճանապարհին ...

Ու գնո՞ւմ էր աչքը դեսանին՝ նա՞—ճլերքը սատանածին ...
Ու ձին ծա՞նր օրորում էր շարությունից էն դեղնածին.

75 Կարծես գետինն հոտոտելով, որոնում էր մահ ու դիա՜կ,
Կարծես եթե վերև՜ նայեր—հրամա՜ն էր ու ավերակ.—
Շո՜ւքն էր միայն ընկած ձիու ոտքերի տակ սողում գետնին,
Ու խնդրե՜լ էր համարձակվել, որ նա գթա՜ր աշխարքներին ...
Մինչ գնում էր պատշաճ հեռվից շքախումբը իր ամպամած,
80 Ինչպես խավարն հոսեր դաշտում՝ չար մութերով նոթը կիտած։

Եկավ Թիմուր հրապարակ և կանգնելով նրա մեջտեղ՝
Աչքերը վեր բարձրացրեց—դաշույնի պես սա՜ռն ու ահեղ ...
Եվ նայելով մոտի՜կ, հեռո՜ւն,—փոշում կորած չալմաներին՝
Կրակեց սուրն ու մռնչա՜ց էն ամպամած անտառներին.—
85 Եվ դո՜ւք, թռչող ավազներ,
Ձիավորնե՜ր—քամինե՜ր,
Դու զորություն Բայքալի,
Դու զա՜րմ ահեղ թաթարի ...
Ահա հի՜ն-հի՜ն, քնա՜ծ դարեր հավերժության ծածկոցներից՝
90 Գլուխները հանում են վեր՝ այս օրերին ունկընդրելու,
Եվ կանգնելու ականատես գերագույնին հանդեսներից,
Այն որ բանա՜ն պիտի հիմա արշալույսներն արյունարբու...
Եվ ինչ աստղեր ու արև
Ունի երկինքն հարատև՝
95 Կտա՜նք այդքանն ու հեռուն՝
Երկնաբնակ Աստծուն։
Բայց այնտե՜ղ, ուր հոգնելու
Մրրիկները կհասնեն,
Եվ այնքան շա՜տ, ուր հեռու
100 Հորիզոնը կհատնի,—
Ճանաչեցե՜ք մեր սահման,
Եվ ողջունե՜ք դուք նրան։
Ու ինչպես ծո՜վը էն Կասպիական
Վեր կենա ափից ու դա սաստկությամբ,
105 Որ տակով անի արարած-աշխարհ,
Ոնց մորեխի ամպ
Վե՜ր կենա վարար,—

Կապե՞ց իր գաղթը սար ու դարևանդ,
Պոկվեց իր տեղից Քեշ ու Սմրղանդ,
110 Ու ինչպես մրրիկ բնից քանդվելով,
Որ վեր է կենում ու չունի էլ դարձ,—
Այդպես վե՞ր կացան,
Ու եկա՞ն ահա
Մեր երկրի վրան —
115 Հրո՞վ ու սրո՞վ ...

Էլի մթնե՞ց դարը Հայոց,
Եկան օրեր սև՜, ալեկո՛ծ —
Սև ամպեր են շարան-շարան
Գալիս Հայոց երկրի վրան ...

120 Եվ լուր է սողում թունոտ օձի պես,
Եվ անկյուններում փսփսում ժանգոտ ...
Ծպտյալ մի սարսափ շրջում է անտես,
Եվ դողն է ընկնում ռամիկը վախկոտ։
Ասում են կգա՞ն դեռ չեկած օրեր,
125 Եվ սարդը ահա կհյուսե ոստայն
Պալատների մեջ և խրճիթներում,
Եվ ահի դաշտում կժանգվի գութան ...
Կգան գաղաններ և կիսուած կոռնան,
Եվ չորս դին դիեր պիտի շշնջան,
130 Եվ ձեռքեր պարզված ավազի տակից,
Կխնդրեն շիրիմ խեղճ անցորդներից,
Եվ սպասո՞ւմ է ժողովուրդն համայն,
Սպասում դողով այդ ահեղ օրվան ...

Եվ զգալով սրտատրոփ
135 Մոտալուտը դռռ փոթորկի՝
Ահա շտապ գնում են Կողբ
Որդիները անտեր աղգի։
Ուս Ալեքի մոտ են գնում.

Արծվի մո՛տ էն հինավուրց,
140 Որ իր ազգի սև օրերում
Միշտ օգնության է վազել դուրս։

«Եվ ո՞վ է այդ ձեռքը մահու
Ցանում մոխիր մեր օջախին,
Զայնը դցել հեռվից հեռու՝
145 Դո՛ւրս է անում ողջ աշխարքին ...

Չի տալիս հո՛ղ գերեզմանի,
Մեռելները հանում տեղեն՝
Արար աշխարհ ոտը դրել՝
Սո՛ւր է ցնցում Աստծու դեմ ...

150 Թե մահ չունի—մա՛հ տամ նրան,
Դժոխք չունի—դուռը ցույց տամ.
Ապա ի՞նչ է չի կշտանում.
Իր անապատն—իր գերեզմա՛ն ...»։

—Ալե՛ք, Ալե՛ք, ի՞նչ ես ասում.
155 Դու մի անտեր ազգի որդի՝
Վեր ես կենում դեմը խոսում
Էն ահավո՛ր, գազան մարդի՞...

«Չէ՛, ա՛յ կնիկ, էս տեղս հասավ,
Առ տղերքդ քաշվիր գեղեն.
160 Ազգի համար դուրս եմ գալու
Էդ անօրեն Թիմուրի դեմ...»։

«Բարև, Ալե՛ք»,—և ահա ցած
Խոնարհվելով՝ մտնում ես ներս.
Դեսպանները այն խռովված՝
165 Եվ ասում են գուժկանի պես.

—Մեր սարերի տա՛կն է արդեն
Հայաստանի դու թշնամին ...
Պոկ է գալիս ազգը տեղեն...
Դիպա՛վ նրան ահի քամին։—

170 Երբ ունես մի բաց ճամփա՝
Վեր կաց տա՛ր այս ժողովրդին...»։

Բայց մթնա՛ծ է ոնսը Կողբա՝
Ինչպես մի ժայռ մուժը ճակտին —

Էն ո՛ր ճամփան եղել է բաց
175 Այս տարաբախտ ազգի համար,
Մի՞թե կամքը ծովերն ընկած
Ունի ճամփա և կամ մի ճար։

Դյուղամեջ է ահա գնում
Էն դաղաղած ոնսը Կողբա,
180 Եվ շուքի պես հետևում են
Դեսպանները Արարատա։

Եվ ամբոխի մեջ կանգնած նա՝
Ջոլից եկած առյուծի նման՝
Հրդեհել է ուզում ահա
185 Պատերազմը ժողովրդական։

Եվ տղերանց շուրջը առած՝
Ինչպես մատաղ ուռիներ՝
Ահա այսպես է խոսում նա —
Այդ չինա՛րը բարձր ու վեր.

190 Հա՛յ եղբայրներ, ի՞նչ եք ասում, մո՛տ է արդեն մեր թշնամին,
Ի՞նչ եք սավել, ի՞նչ եք քնում, ի՞նչ եք շվար նայում իրար.
Պատերազմը վե՛ր է կացել, խառնվո՛ւմ է աշխարք իրար,

Մի՞թե այսքան դոռն ու դոչոց չի հասնում ձեր ականջներին։
Գալիս են սև՝, դաժա՞ն օրեր որոնց նմանն ապերջանիկ՝
195 Դեռ չե՛ն նայել այս սև դաշտին, ոչ էլ տեսել են ձեր նախնիք.
Պատրա՞ստ կացեք, թե չէ շատ ուշ կլինի ձեր լացը արդեն,
Լենկթիմուրը գալի՞ս է թունդ, մա՛հ է ուզում մահերի դեմ...

«Ի՞նչ ես ասում,—կտուրներից քանդվեց ձայնը սև ամբոխի,
Լենկթիմուրը ծո՞վ է դաղան՝ աշխարքնե՞ր է լափում ճամփին,
200 Հնդիկ ու Ֆարս ու Խորասան տո՞ւն է շինել սեամահի,
Դեռ չի՛ եկել նրա վրա աչքեր չռող ադամորդին ...
Ի՞նչ ես այդպես բոցավառվել—ամբոխն ասավ քմծիծաղով,
Նման տափակ դաշտավայրի, որ հեգնում է ըմբոստ սարին.
Դարձի՛ր, ախպեր, ճամփա՝ ընկնենք գնա՛նք կորչե՛նք տուն
ու տեղով,
205 Եվ ուր գնանք էլ ետ չգանք, երե՛ս չանենք այս աշխարհին...»։

«Ա՜խ միշտ, հենց մի՞շտ այդ եք ասել և ո՛չ մի օր
ձեռքքներիդ,
Ազատության լույսի նման չէ շողացել և ոչ մի սուր»,—
Գոչեց այսպես ու թափ տվեց իր կատարը ցնորամիտ՝
Այն ծեր կաղնին՝ շատ օրորված մրրիկներում դեռ հինավուրց։

210 Բայց ռեսի մոտ մի բուռ կտրիճ
Մնացել են հավատարիմ.
Մինչ դեսպաններն ահա ձիանց
Գլուխն իրենց գյուղերն արին ...

Ու մինչ գինվում Կողբը շտապ՝
215 Հավաքվում է ամպի նման՝
Ընկա՜վ ահա մահու տագնապ
Բոլոր գյուղերն Արարատյան ...

Եվ մեջ դիշերին հարա՛յ գցեցին,
Կանչեցին գյուղում. «Եկե՛լ է Թիմուր»։

220 Ելա՛վ Ալեքը, հեծա՛վ իր սև ձին,
Դե՛ տղերք, ասավ, կապեցի՛ք սուր-թուր ...
Թռա՛ն կտրիճներն, հեծան ձիերին,
Ու մո՛ւթ կիտվեցին գեղի մի ծերին,
Շներն էլ սաստիկ զցեցին հաչեն,
225 Ու լաց ու շիվան ընկա՛վ ամեն տուն ...

Եվ գիշերն ահա նոթերը կիտած
Խոսե՛լ սկսավ հաղար ձայներով ...
Տղերքն էլ գեղի ճամփեքում ցրված՝
Սպասում են լուռ մահին մահն գալով։
230 — Այս ի՞նչ ոռնոց է գալիս դաշտերից,
Թե՞ ճամփին դողաց ոտքի շվլթու,
Հարա՛յ են տալիս հեռու գեղերից,—
Ո՛չ, լո՛ւռ է դաշտը լա՛յն Արարատու ...
Նայո՛ւմ են քարերն անհայտ ակնարկով,
235 Քամին խոտերում վսավսում արագ,
Եվ տե՛ս, չարագույժ, սպառնում դեմքով՝
Նայո՛ւմ է բլրից մի ծեր ավերակ ...

Ժպտաց ճրագը գեղի վերևից,
Այդ ժամն էլ նայեց կարմիր աչքերով,
240 Ձայներ սկսան հոսել այն կողմից,
Սաղմոսերգության ողորմ ձայներով,
Սկսվեց հսկում, ճգնաժա՛մ ահեղ
Կոչնակն էլ «Թա՛կ-թա՛կ» աղմկեց այնտեղ.
Ծեր ժամկոչն էլ ընկած չորս դին՝
245 Ժամ է կանչում ժողովրդին.
Ժա՛մ եկեք, ժա՛մ, քրիստոնյա՛յք,
Աղոթք արեք, սուրբ հարկի տակ.
Ժա՛մ եկեք, ժա՛մ, քրիստոնյա՛յք,
Ու խփում է փայտը «թա՛կ-թա՛կ ...

250 —Ամբո՞խ է գոռում ու սաստիկ գալիս,
Թե՞ ոռնաց ձորում քամին կիսարթուն.

էն հա՞վն էր կանչեց, թե՞ վայ են տալիս։—
Ո՜չ, լո՜ւռ է դաշտը լայն Արարատու ...

Եվ ահա իրենց կապույտ անկողնում
255 Ջինջ պլպլում են աստղերն անտարբեր,
Եվ թունավորված երկիրը մթնում.
Այլայլվել մռայլ, սև՜ դիտում է վեր ...

Նստած է ուսը... Եվ շուրջը նրա
Եկե՜լ են, փաթթե՜լ հաղա՜ր գիշերներ ...
260 Իր հոտի՜ մասին մտածում է նա.
Լցվա՜ծ է հոգին ու թա՜ց են աչքեր ...
Վաղը կոտորա՜ծ... Բայց ո՜չ իր համար
Վախենում է նա՜, այդքան չէ՜ վատթար.—

Իր հոտի՜ մասին մտածում է նա,
265 Որ գայլ ազգերի մեջներն է ընկած,
Եվ շուրջը իր հետ խորհում են ահա
Ահե՜ղ դաշտերը մթնում ծավալված ...
Բայց լուսանում է... Հավեր կանչեցին ...
Դաշտերը ահա աչքները բացին ...
270 Ու ինչ հով ընկնի սաղարթում քնած՝
Շարժվեցին, ելան տղերքը նստած։

Ջիու ականջն ահա մտած՝
Ջիավոր է պրծել գալիս
Գալիս է նա կրակ կտրած
275 Առավոտյան մշուշներից։
Մերթ ուռչում է, մերթ սրվում նա,
Փնչում է ձին, որսում ճամփան,
Եվ սմբակի փոշին ահա
Հետևում է օձի նման։
280 Ի՞նչ է թռչում նա շտապով,
Ի՞նչ սև ու մութ բոթ է բերում։

Ահա հասա՛վ... Ահա մատով
Յո՛ւյց է տալիս դեպի հեռուն ...

Շփո՛թ ընկավ գեղը հանկարծ,
—Ո՞վ է, ի՞նչ է, հարցրին իրար ...
Ու կաերքին սև սևացած
Կանգնեց ամբոխն ահա վարար։
Ու մի ժանգոտ ձայն էլ հանկարծ
Քանդվեց կտրից. Եկա՞ն-եկա՞ն,
Եվ ամբոխը ահաբեկված
Իրար անցավ մրջնի նման։

Դալի՞ս էր Բունդ զորքը թաթար
Կարկուտի պես վժվժալով,
Դաշտը լցվեց խառնիճաղանճ
Սև ամբոխով ինչպես անտառ։
Ու հրդեհ էր դալիս կարծես,
Ձենքի հրդեհ բոցկըլտալին,
Սև փոշի էր սև ծուխ պես
Բարձրանում վեր այդ զորքերին ...

Եվ շեփո՞ր է ահա փչում,
Այծի ձայնով, քամնալի՞.
Դատաստա՞ն են կարծես կանչում,
Դոփ է լսվում թմբուկների ...
Պտտվում են լայն վահաններ,
Փռփռում են փեշերը լայն,
Փողփողում են սև դրոշներ
Վիշապների թևի նման,
Եվ կատաղի ձիավորներ
Ձիանները մրրկելով՝
Առաջ անցան սո՛ւր ճվալեն,
Նիզակները հոլովելով ...

Ինչպես վազող ամպի սավեր՝
Ինչպես մի հոտ ահից փախած՝
Այնպես դեպի սարն է բշում
315 Գեղի ամբոխն ահաբեկված։
Փայլից Ալեքն ու ահարկու
Դոռաց խմբին ձիու թամբից,
Ու վեր կացավ ինչպես մեղու
Իր թաթունը զյած եաքից։

320 Թռչկոտելով քաջերի պես,
Ընկավ խումբը զորքի վրա,
Ու կրակե՛ց, զնդա՛ց ահա,
Կողբա կռիվն արևակեզ ...
Ինչպես վազող ամպի սավեր՝
325 Ինչպես մի հոտ ահից քշված՝
Դեպի սա՛րն է փախչում ահա,
Գեղի ամբոխն ահաբեկված։
Փախչում է նա և թշնամուց,
Եվ մարանչող իր Ալեքից,
330 Ուրացել է նա ամեն բան
Խելագարող սարսափանքից ...

Սև՜ օրեր են եկել-չոքել
Հայոց անբախտ երկրի վրա.
Ընկած վայրի զորքերի տակ
335 Տնքո՜ւմ է նա արյունլվա ...

Ու մխո՜ւմ են դաշտում մութ-մութ
Հայոց գեղերն ավեր ու սև,
Եվ ծխերի սյունը կապույտ
Ոլորվում է դեպի վերև։

340 Վրաններ են ահա նստած
Դաշտում արծվի խմբի նման.

Նժույգների ծով է կապած
Նրանց բոլորն ալեծածան։
Ինդո՜ւմ է դաշտն Արարատյան,

345 Ինդո՜ւմ է քեֆն արյունալի,
Դաշտի միջին բացել սեղան
Զորքն է եռում Լենկթիմուրի։

Ու դժվո՜ւմ է, ճվո՜ւմ, պարո՜ւմ,
Թաթարը խենթ, ցանցառմորուս.
350 Եվ ինդո՜ւմ է դաշտավայրում
Ջիահաղը մրրկահույզ։

Փոթորկում են խմբերն արագ
Պլոկած թուրն հոլովելով,
Ու կրակում արևի տակ
355 Վահանները պատելով։

Կոնչո՜ւմ է գիժ հեծյալը,
Քրտնամխա՜ծ, շառագունած,
Ու աչքերի կայտառ փայլը
Բո՜ց է կարում արնակալած։

360 Հեծյալների դեմ հանդիման
Ծառս ելնելով, հլու սանձին
Հանկարծ պոկվում է քամու նման
Կայտառ, վազուկ թաթարի ձին։

Եվ նոր խումբ է գալիս ահա
365 Գոռգոռալով հեռու ճամփից,
Ասպատակել գալիս է նա
Աղետավոր այն գյուղերից։

Մինչդեռ թեքված վրանի տակ
Ծերուկ թաթարը նենգ ու չար՝

370 Որոճում է նո՛ր արշավանք՝
Սրբելով թուրն իր բոցավառ։

Ու վժժո՛ւմ է, վժժո՛ւմ անդուլ
Մորեխի պես զորք ու բանակ,
Եվ գետինը տնքում է խուլ
375 Հազարավոր ոտքերի տակ ...

Սակայն ո՞ւր է, ո՞ւր է և նա՛,
Ծնունդը չար սատանայի.
Եվ որտե՞ղ է նյութում հիմա
Տառապանքը թշվառ հայի։

380 Ահա դաժան իր խմբի հետ
Թինկը տված վրանի տակ՝
Աղվեսի պես խորհում է նա
Որոգայթներն իր դժնդակ ...

Եվ սևաբա՛խտ Սեբաստիան,
385 Եվ Վանա բե՛ռդն աղետալի,
Եվ հոխորտո՛ղ Օսմանիան,—
Դատապարտում է նա մահի ...

«Քնե՛ց, մեռա՛վ Հայքը արդեն՝
Ասում է նա. դնա՛ց և սա ...
390 Եվ անվրդով երկու շաբթեն՝
Կդղրդա՛նք մենք Բրուսա։

Եվ ո՞ւր գրչովն իր պատմասեր
Ալ-Ջեմալը մեզնից հետո՝
Պիտի պտրե վերջին հետքերն
395 Հայքի և Գոռ Բյուզանդիո ...

Շո՛ւտ կխավրեմ նաև լույսը
Լայնաթումպան Օսմանլուի ...»—

Ու ծխո՛ւմ է, խորասուզվում
Ավազակը Թուրքիստանի ...

400 Բայց մթնո՛ւմ է. այգիների
Ստվերները ձեռքերն ահա
Տարածեցին արյունալի
Ու վաստաբեկ երկրի վրա։

Խոժոռվում է Մասիսը ծեր
405 Հառաջացող դիշերի դեմ,
Եվ հրդեհներն ինչպես կայծեր
Պլպլացին հեռո՛ւ սարեն ...

Բանակն արդեն մոնում է քուն,
Ջրից դարձել նժույգները,
410 Եվ դաշտերում ահա թաքուն
Շշնջում են դիակները...

Ցշշում է թուրքն ու հևիհև՝
Բզբքտո՛ւմ է ու դալարվում ...
Բայց քնած չէ. աչքերն արնոտ,
415 Տես խթո՛ւմ է իրա ձիուն
Կորամագիլ, կորաթիկունք
Լայնաթումպան պե՞տ Օսմանլուն։
Սարերի պե՞ս փուլ են գալիս,
Ճռռում հազար կայմերի պե՞ս,
420 Անտառի պե՞ս ջարդուփնտվում,
Ծովերի պես փրփրադեզ,
Ու բոթ տարան Բայազեդին
Կարիճ տղեքը Օսմանլուի ...
Ցշշա՛ց, վազեց հասավ զորքին,
425 Շանթե՛ց այսպես զորքի վրա.—
Գոռաց վրան սարսափելի՝
«Եա գնացեք, եա, դեպի եա,

Ո՜հ, խավարի թող ձեր արև,
Մահ ու դժոխք կանչո՜ւմ են ձեզ,
430 Գետի՜նն անցեք իրար ետև»։

Բայց թշնամին գիժ կայծակի
Թևատարած արծվի նման՝
Վրա ընկավ հանկարծակի
Ու թևաբախ լափեց նրան։
435 Հանկարծ ցրվեց ձայն մի ահեղ,
Մի ձայն ժանգոտ բոթացրիվ,
Ու զորքի մեջ ցրվեց մի ձայն՝
Թո՜ղ Օսմանլուն գետինն անցնի
Գերի ընկավ Սուլթան կայծակ։

440 Էհե՜, Սուլթանն ընկնի գերի՞,
Գերիների տերն ու արքա՞ն,
Ժպտա՜ց բանակն Օսմանլուի.
«Սո՜ւտ է»,—զոռաց հոխորտաձայն։
Ի՞նչն է սակայն անկարելի
445 Ռազմի դաշտում բախտի համար.
Փռվե՜ց զորքը Օսմանլուի ...
Խնդո՜ւմ գցեց զորքը թաթար։

Եվ փոթորիկն հազարթևկան
Կոտրեց թևերը, լռեց սամում
450 Հանգա՜վ հրդեհն այն մեծ ու թեժ,
Ու հևացին դաշտերն հոգնած։

Խնջույք սարքեց, մեծ խրախճան,
Գոռոզ հաղթողն հաղթողների.
Եկավ կազմեց բոլոր-շրջան
455 Չար ոհմակը իշխանների։

Վրանն է մեծ թևատարած,
Հաղար իշխան կա նրա տակ,

Վրանն է զառ, ոսկեկարած,
Առջևը բաց հրապարակ։

460 Հազարներով ոչխար զինեց
Իր հյուրերի ու իր պատվին,
Հազար երկրի ավար բացվեց,
Բոլորն ազնիվ ամենևին։

Հազա՛ր ազգի բեկ ու իշխան
465 Սպասավոր են խնջույքին.
Գերի ունի Սուլթան ու խան
Ականատես իր վեհ փառքին։

Աստղերի պես պա՛ր բռնեցին
Նախշուն փնջերն հուրիների,—
470 Արաբյան սև՝ հրածին,
Եվ լուսընկան Վրասատանի։

Ու ինքը շեկ բորենու պես՝
Արյուն խմած ու արդեն կուշտ՝
Բազմեց ահա գոռոզ ու վեհ՝
475 Գայլերի մեջ արյունարուշտ։

Բերին ահա և փռեցին
Քառսուն սուփրա,
Բերին մրգեր ու նշխեցին
Նրա վրա։

Ոսկի փարչեր դրին ջրով
Գավով շարբաթ,
Ու խորտիկներ սինիներով՝
Բոլորն արծաթ։

480 Եվ գուսաններ շնորհալի
Եկան մեջտեղ,

Երգեցին երգ արյունալի
Զիլ ու զորեղ։

Ու ծա՜փ տվին, ծա՜փ մեծազոր,
Լայնածավա՜լ,
Քե՜ֆ սկսվեց, լա՜յն ու խոշոր,
Աշխարհակա՜լ...

Ու խնդացին ազա՜տ ու լիք
Երկինքն ի վեր,
485 Կարծես աշխարք, ծով ու երկինք
Էլ տե՜ր չուներ։

Խնդո՜ւմ է տերն աշխարհների,
Խնդո՜ւմ է և նայում իր դեմ
Մյուս տիրոջն աշխարհների,
Որ գերի է տալիս ազգին,
490 Եվ նա օտա՜ր սարկության
Որպես առյուծ մեծարտանի
Գերի՜ թեև, բայց դեռ Սուլթա՜ն
Օրհնեց բախտը Լենկթիմուրի։

Խորհում էր նա այն ահավոր
495 Փոթորիկնե՜րն Ունգարիայի,
Դանուբական արշա՜վն հզոր,
Գոռոզ ամպերն Եվրոպայի...

Ու հանկարծ զիլ, հիաղարհուր
Գոռում է նա վանդակի մեջ.
500 Հետո նորից թո՜ւյլ ու տխուր
Լուռ է կենում նա կորամեջ...
Դարձավ Թիմուր ծաղր խոսքով
Դեպ Սուլթանը վանդակարգել,

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ. Դեմիրճյանի երկերի ժողովածուի առաջին հատորն ընդգրկում է հեղինակի չափածո ժառանգությունը՝ 1890-ական թվականներից մինչև 1956 թվականը։

Հատորում տպագրված գործերի համար հիմք են հանդիսացել 1899, 1913 և 1945 թթ. հեղինակի հրատարակած բանաստեղծությունների ժողովածուները, ինչպես նաև տարբեր պարբերականներում տպագրված և այդ ժողովածուներում չգետեղված ստեղծագործություններ։ Առաջին անգամ, որոշ ընտրությամբ, ներկայացվում են անտիպ բանաստեղծություններ, պոեմներ և քառյակներ։

Հատորում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները.

Բան I—Դ. Դեմիրճյան, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1899
Բան II—Դ. Դեմիրճյան, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1913
Բան III—Դ. Դեմիրճյան, Բանաստեղծություններ, Երևան, 1945
Դրն—Դ. Դեմիրճյան, Դարուն (քառյակներ), Թիֆլիս, 1920
Ծպ—Դ. Դեմիրճյան, Ծտապար, Երևան, Հայպետհրատ, 1947
Պպմկ—Դ. Դեմիրճյան, Պուլ-Պուլ Մուկիկը, Ժողովածու, Երևան, Հայպետհրատ, 1946
Աղ—Աղբյուր, ամսագիր, Թիֆլիս
Անհ—Անահիտ, ամսագիր, Փարիզ
Ավ—Ավանգարդ, թերթ, Երևան
Դա—Դարուն (Դրական-քննադատական ալմանախ), Մոսկվա
ԳԱԹ—Գրականության և արվեստի թանգարան
Գղ—Գեղարվեստ, ամսագիր, Թիֆլիս
ԳԹ—Գրական թերթ, շաբաթաթերթ, Երևան
ԳԼՖ—Գարեգին Լևոնյանի ֆոնդ
Գծ—Գործ, ամսագիր, Բաքու
ԴՖ—Դեմիրճյանի ֆոնդ
Ինքն—Ինքնագիր
Կոմ—Կոմունիստ, օրաթերթ, Բաքու
Հզ—Հորիզոն, օրաթերթ, Թիֆլիս
Հզդ—Հրազդան, տարեգիրք, Թիֆլիս
ՀԿպ—Հայաստանի կոոպերացիա, երկշաբաթաթերթ, Երևան
Հկտ—Հոկտեմբերիկ, ամսագիր, Երևան

26—179

Հսկ—Հասկեր, ամսագիր, Թիֆլիս
ՄՏ—Մուրճ, ամսագիր, Թիֆլիս
ՆԱշ—Նոր աշխատավոր, օրաթերթ, Թիֆլիս
ՆՀ—Նոր հոսանք, ամսագիր, Թիֆլիս
ՆՀԳր—Նոր հոսանքի գրագարան, Թիֆլիս
Պր—Պրոլետար, օրաթերթ, Թիֆլիս
ՍԳ Ար—Սովետական գրականություն և արվեստ, ամսագիր, Երևան
ՍՀ—Սովետական Հայաստան, ամսագիր, Երևան
ՍՀ—Սովետական Հայաստան, օրաթերթ, Երևան
Տզ—Տարազ, ամսագիր, Թիֆլիս

Տեքստային տարբերություններում հեղինակի ջնջված բառերը առնված են ուղղանկյուն փակագծերի մեջ [];

Կազմողների ավելացրած կամ վերծանած բառերը դրված են սուրանկյուն փակագծերի մեջ <>։

Տողը կամ տողերը չլինելու դեպքում նշվում է՝ չկա կամ չկան։

Անընթեռնելի բառերը նշվում են՝ 1 անընթ., 2 անընթ.. և այլն։

Տպ—նշանակում է տպագրություն։

Տողատակի ծանոթությունները ամեն տեղ հեղինակինն են։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊԱԳԱՆ

(էջ 9)

Դրության թվականն անհայտ է։ Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ Տզ, *1893, № 27, էջ 426—427, Դեմիրջոզլյան ստորագրությամբ։ Տպագրվում է նույնից։*

AMOUR-ին

(էջ 9)

Առաջին անգամ տպվել է՝ Տզ, *1894, № 29, էջ 326, Դեմիրջոզլյան ստորագրությամբ։ Տպագրվում է նույնից։*

Ամուր—*Հին հունական պանթեոնում սիրո աստված՝ Ափրոդիտեի անբաժան ուղեկիցն ու օգնականը։*

Լետա—*Հունական դիցաբանության մեջ մոռացման աղբյուր և գետ անդրաշխարհում։ Այնտեղ ընկնողը Լետայի ջրից խմում էր անցածը մոռանալու համար, վերադարձողը՝ հիշելու։*

ԿՈՒՅՍ—ԳԵՏԱԿ

(էջ 10)

Առաջին անգամ տպվել է՝ Տզ, *1894, № 29, էջ 433, Դեմիրջոզլյան ստորագրությամբ։ Տպագրվում է նույնից։*

ՆԱՎ

(էջ 10)

Առաջին անգամ տպվել է՝ Աղ, *1894, № 11, էջ 350, Դեմիրջոզլյան ստորագրությամբ։ Տպագրվում է նույնից։*

ՄԵՆԱՀ-ԼՈՒՀ....

(էջ 11)

Առաջին անգամ տպվել է՝ Տզ, *1894, № 38, էջ 564, Դեմիրջոզլյան ստորագրությամբ. ԳԱՐ, ԴՖ, № 1, պահպանվել է* Տզ-*ից հեղինակի արտագրած մի ձե-*

ռագիր. դատելով ուղղագրությունից, արտագրած պետք է լինի 1922 թ. հետո։ Տպագրվում է Տգ-ից։

ՔՆԱՄ ԵՐԵԽԱ

(էջ 11)

Առաջին անգամ տպվել է՝ Աղ, *1894, № 7—8, էջ 255—256, Դեմիրջոզլյան ստորագրությամբ, այնուհետև՝* Նշ, *1913, № 7—8, էջ 1165։ Տպագրվում է վերջինից։*

ՄԱՆԿԱՆ

(էջ 12)

Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1894, № 7—8, էջ 1047—1048, Դերենիկ Դեմիրճյան ստորագրությամբ. այնուհետև՝* Բան *I, էջ 3—4։ Տպագրվում է վերջինից։ Բանաստեղծությունը կրտսեր քրոջ՝ Սաթենիկի (ծնվ. 1889), վկայությամբ նվիրված է իրեն։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մն 2—4 Անմեղ *մանկիկ, քնքույշ մանկիկ,* մորդ եմ *բերում այս անգամ.*
Ես փորձում եմ մաքրել նրան, անել նրան *դեղ ու ճար,*
Բայց չե՛մ կարող, սիրուն *մանկիկ,—դու աղոթիր ինձ համար ...*

4-րդ տողից հետո

Օ՜, աղոթքը, սուրբ աղոթքը, ինձ կարող է ազատել.
Ես ուզում եմ մաքուր սրտով Քրիստոսին աղոթել,
Ես ուզում եմ հաշտությունով սիրել մարդկանց ու աշխարհ,
Բայց չե՛մ կարող, անմեղ մանկիկ,—դու աղոթի՛ր ինձ համար ...

6—8 Քարե ամուր արցունքներ են թափում նրա զույգ աչքեր ...
Ես տանջվում եմ, ես ուզում եմ աղոթք անել նուսավառ,
Բայց չե՛մ կարող, *քնքույշ մանկիկ,—ախ, աղոթի՛ր ինձ համար...*

10—14 *Ես ուզում եմ* նոգով *թռչել դեպի հեռո՛ւ ու հեռո՛ւ,*
Բայց իմ հոգին շղթայո՛ւմ են այս ցավերը *անհամար,*
Ես լքյալ եմ, անմեղ *մանկիկ,—Օ՜, աղոթիր ինձ համար։*
Ես էլ անմեղ մանուկ էի, ինչպես դո՛ւ իմ առաջ,
Գիշերները նրան էի ես *ա՛ղոթում* նուսատանջ,

16—18 *Բայց ես հիմա չե՛մ աղոթում,—ա՛խ, աղոթի՛ր ինձ համար ...*
Ինչպես մի ասող գիշերային *հանգան իմ վառ օրերը,*
Եվ ինձ համար այնպես զգվանք էլ չեն տածում *աստղերը,*

20—24 Իմ այս *հոգին մանկական չէ՛,—ա՛խ, աղոթիր ինձ համար ...*
Եվ կնասնի *վերջին օրս* ինչպես *ահե՛ղ դատաստան,*
Երբ ամենքը աղոթք կանեն, կերգեն *տխուր* շարական,

Ա՞խ. այն ժամին, երբ ես ուրա՞խ, հանդարտ թողնեմ այս աշխարհ,
Վերջի՞ն անգամ, մաքուր, սրտով, դու աղոթի՛ր ինձ համար...

ԵՐԳ
(էջ 13)

Գրության թվականն անհայտ է։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ ԴՖ, № 91։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1894, № 11—12, էջ 1567, այնուհետև՝ Բան I, էջ 5, Բան III, էջ 16—17։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ *3* *Եվ նորա տակ ալնկական*
4 *Փոքրիկ առուն խոխոջում։*
8 *Առվի մեջ էր դողդողում,—*

ՍՈՆՆՏ
(էջ 14)

Գրության թվականն անհայտ է։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ. ԴՖ, № 171։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1895, № 2, էջ 260, այնուհետև՝ Բան I, էջ 9։ ԴՖ պահպանվում է մի լուսանկար՝ Մարիամ ստորագրությամբ, որ 1907 թ. Ժնևում ընծայվել է Դեմիրճյանին. անհավանական չէ, որ դա լինի Մ. Ա.-ն։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ *6* Եվ ճանկարծ սուզվել *սրտիդ խորքերում* ...

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ
(էջ 14)

Գրության թվականն անհայտ է։ Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1895, № 3—4, էջ 435, այնուհետև՝ Բան I, էջ 10, Բան III, էջ 14։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՆ *2* *Թափառում եմ ես «նրա» տան առաջին,*
6—7 *Պատուհանը մթության մեջ թողելով.*
Խորհրդավոր, լո՞ւռ է «նրա» սենյակը,
10 Մեղմ ենջում է *այն* ձյունազույն *ամպերում,*

12 Բարդինները լուռ ենում են պարտիզում ...
15 Միայն սի՛րտս տառապում է տանջանքից,

ԹՈՂ ՀԱՄԱՌ ՎԻՇՏԸ...
(էջ 15)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, ԴՖ, № 91։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 2, էջ 258, այնուհետև՝* Բան *I, էջ 6։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՖՆ, ՄՆ 3—8 Երբ՛ֆ շխղնաս, երբ՛ֆ աշխերից
Զրափիս արցունք. բոլ ֆո արյունը
Բորբոքված նոսե ֆս խաղաղ կրծֆում,
Թող ֆո արևը շողա երկնֆում...
Ես չե՛մ հավատում կյանքի խնդության
Ես չե՛մ հավատում սիրո պսակին.

ԱՀԱ ԿԱԹԻԼԸ....
(էջ 16)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, ԴՖ, № 91։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 2, էջ 258, ապա՝* Բան *I, էջ 7։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՖՆ, ՄՆ 3 Բայց մինչև հասնելդ, ավա՜ղ, այս սրտիս,—
5 Այս աննպատակ ու փշոտ ուղին՝

Մ. Ա.-ԻՆ
(էջ 16)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, ԴՖ, № 171։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 2, էջ 259, ապա՝* Բան *I, էջ 8,* Բան *III, էջ 15։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՖՆ 4 Օ՜, նա հոգնած է զուր բաբախելուց ..
6—9 Դու, որ երկինքը դարձրիր գերեզման,
Դու, որ իմ սրտին տալով լո՛կ տանջանք՝

Իմ վառ սիրո հետ խաղում ես միայն ...
Ա՜խ, արի՛, ճոգիս, թող քո հայացքը,
11 *Գոնե կլսես իմ հառաչանքը,*

ՓՈՓՈՐԻԿՆԵՐ
(էջ 17)

Գրել է 1895 թ. ապրիլի 28-ին։ Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 5, էջ 632։ Տպագրվում է նույնից։ Բանաստեղծությունը նվիրված է Ներսիսյան դպրոցի ընկերներին։*

ԼԱՅՈՂ ՈՒՌԵՆԻ
(էջ 17)

Գրել է 1895 թ. մայիսի 1-ին։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895. № 5. էջ 633։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱՐ, Դ, № 3։ Ինքնագիրը վերաբերում է հետագային, որը ՄՆ-ի համեմատությամբ որոշ տարբերություններ ունի։ Տպագրվում է ինքնագրից, որտեղ չկա վերնագիրը։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՆ 3 *Որ թեքված դեպ ինձ մի վշտակցի պես*
10 *Երկար վարսերը փռած իր կրծքին՝*

Մ.-ԻՆ
(էջ 18)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 7, էջ 947։ Տպագրվում է նույնից։ Հավանորեն նվիրված է դարձյալ Մ. Ա-ին։*

ՀՐԱԺԵՇՏ
(էջ 19)

Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 6, էջ 801։ Տպագրվում է նույնից։*

ՌՈՄԱՆՍ
(էջ 20)

Գրել է 1895 թ. սեպտեմբերի 5-ին։ Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1895, № 9—10, էջ 1257—1258։ Տպագրվում է նույնից։*

Ա՜Խ, ԵԹԵ ԱՅՆՏԵՂ...

(էջ 21)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, Դ6, № 5։ «Խորհրդածություն» վերնագրով առաջին անգամ տպվել է՝ Մն, *1895, № 11, էջ 1450, ապա՝* Բան *I, էջ 11,* Բան *III, էջ 11։ Տպագրվում է վերջինից։ Ինքնագիրը վերաբերում է 1895 թ., որը, սակայն, Մն-ի համեմատությամբ որոշ տարբերություններ ունի։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինմն, Մն	1	*Օ՛, եթե այնտե՛ղ գերեզմանից ետ,*
	5	Ախ, *ինչպես կյանքը ես կթողնեի,*
Մն	6	*Ուր* աղոթելու *չկա սուրբ տաճար,*
Ինմն	6	*Ուր* գեղեցիկը արնոտ է արդեն
Մն	7—8	Եվ *դեպի* այնտեղ կսլանայի,
		Դեպի *այն* կյանքը հեռու փրկարար ...
Ինմն	8	*Դեպ այն կյա՜նքն անհուն, հեռու,* լուսեղեն ...
Մն	12—14	Կյանքը խորտակեց *հոգիս իր թույնով.*
		Ես կթողնեի անմիտ ճառաչանմ,
		Ինչու լալ, արժե՞ դա *կյանքի համար.*
Ինմն	16	*Դեպ հեռո՛ւ, հեռո՛ւ* աստղալի *աշխարհ* ...

ՎԱՅՐԻ ՍԵՐ

(էջ 22)

Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1896, № 9, էջ 1146, այնուհետև՝* Բան *I, էջ 13,* Բան *III, էջ 13։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մն	1	*Արի՛* ինձ մոտ, *սիրո՛ւն աղջիկ,*
	3—6	Վերև լինի *աստղո՛տ երկինք,*
		Եվ լուսինը *լողա այնտեղ։*
		Իսկ *մենք նստած* վրանի *տակ՝*
		Երգենք սիրուն, *օտա՜ր մի երգ.*

ՆՐԱՆ

(էջ 22)

Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1896, № 12, էջ 1520։ Տպագրվում է նույնից։*

Քանի՛ ժամանակ քեզ չէի տեսել
(էջ 23)

Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 3 և 186։ Երկուսն էլ արտագրություն են ՄՆ-ից։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1897, № 4, էջ 483։ Տպագրվում է նույնից։

ՔԵԶ Ի՞ՆՉ ՊԱՏԱՀԵՑ...
(էջ 24)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1897, № 5, էջ 620, ապա՝ Բան I, էջ 14, Բան III, էջ 10—11։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՆ *1* *Քեզ ի՞նչ* պատահեց, պատահի *հասակ,*
8 *Ո՞ւր են, ի՞նչ եղան քո* ցնորքները։

Մարդիկ շրջում են անհոգ խմբերով
(էջ 24)

Գրել է 1897 թ. հուլիսին։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 3։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1897, № 7—8, էջ 988։ Տպագրվում է նույնից։

ՀՆԻՔ ՍԻՐՏ ԻՄ...
(էջ 25)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, 1897, № 11—12, էջ 1536։ Տպագրվում է նույնից։

Ամենայն հավանականությամբ բանաստեղծության ստեղծմանը առիթ է տվել այդ թվականներին ծավալված այն բանավեճը, թե գրական նոր սերունդը դեռևս անկարող է որևէ բան ստեղծել։ «Մշակի» առաջնորդողներից մեկում կարդում ենք. «Մեր ժամանակակից ինքնուրույն գրականությունը այժմ վերին աստիճանի ամուլ է, ոչինչ խոշոր, աչքի ընկնող ստեղծագործություն չի տալիս... Գրականության մեջ լինում են պերիոդներ, ժամանակամիջոցներ, երբ խոշոր տաղանդները մեռնելով, հրապարակ չեն գալիս նրանց հավասար, կամ նրանցից բարձր տաղանդներ, երբ ստեղծագործող միտքը կարծես մի առ ժամանակ կանգ է առնում...» («Մշակ», 1896, № 34)։

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԿՈ
(էջ 26)

Առաջին անգամ տպվել է՝ ՄԵ, *1897, № 11—12, էջ 1537։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝* ԴԱԹ, *Դֆ, № 3. հավանորեն արտագրված* ՄԵ*-ից։ Տպագրվում է ինքնագրից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵ 4 *Որքան մոքեր զարթեցրեց...*

ՕՏԱՐ ԳԱՐՈՒՆ
(էջ 27)

Գրել է 1897 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, *Դֆ, № 5։ Առաջին անգամ տպվել է՝* ՄԵ, *1898, № 1, էջ 83—84, տպա՝* Բան *I, էջ 17—18։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵ	4	*Գետի* ափն էր երինմն *իջնում հանգչելու*
	7—8	Օտար *գարունն* իր նոր *շնչով հեշտաբար՝*
		Հանգած *սիրուն օրորանն է գուրգուրում ...*
ԻՆՄԵ	7	*Նոր գարունը* նոր երգերով *հեշտաբար՝*
ՄԵ	10	*Սիրուս հետն էլ* գարուն օրը *չբացավ,*
ԻՆՄԵ	10	*Սիրուս հետն էլ* գնաց նովտից և գարուն
	11—14	Մրնեց *ձորը,* սգաց արքան *ծառերի,—*
		Շիրմի նման լռեց վայրը գարդարուն։
		Բայց ա՞խ, ուր է նոր գարունը այս մանուկ
		Եկել *աշնան* սիրուս *վայրը նորոգում,*
ՄԵ	15	*Թող* ուռենիս *տերևազուրկ մնալով*
ԻՆՄԵ	15	Ախ, *թող* մնար, տխրեր ուռին շքազուրկ,
ՄԵ	16	Տխրե՛ր. *էլ չի՛ նա իմ սերը օրորում...*
ԻՆՄԵ	16	Նա էլ նիմա *իմ սերը չի օրորում...*
ՄԵ	17—20	Չէ՞ որ միայն կյանքիս տանարն ավերվեց՝
		Սիրուս խորանն այնտեղ միայն քարնվեց.
		Բայց նուշե՛ր կան, այն մոխրատակ կայծե՛ր,
		Նրա՛նք են, որ բերին ինձ այս վայրերը։
ԻՆՄԵ	20	*Երգս վշտո՞ւտ էլ չի այստեղ նա երգվի,*
	21—24	*Տողերը չկան*
ՄԵ	21	*Թող* այս *հովիտն այսուհետ չպանուռվի՛*

24-ից հետո

Մն		Էլ ինչո՞ւ է այս նոր զարունն հեշտարար.
		«Նա» էլ չկա՛, բող զարունն էլ չլինի՛.
		Սիրտս սև է, միտքս կենտրոտ ու խավար,
		Երգս բունոտ, այստեղ նա էլ չի՛ երգվի ...
Մն	25	Իզուր... *էլ ինձ լսող չկա. մանկան պես՝*
Ինքն	26	*Հովիտ ու ծառ ժպտում են վառ կանաչով,*
	28	Նայում է ինձ *խոժո՛ռ ու մուր հայացքով...*

ՆԱ, ՈՎ ՏԱՆՋՎԵԼ Է...

(էջ 28)

Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1898, № 1, էջ 85՝ «Նա էլ...» խորագրով. այնուհետև՝* Բան *I, էջ 16։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մն	1	Նա, *ով տանջվել է* երկար *ու դաղտնի*
	3—7	Իմ դարդն *այնպիսի սրտին է հայտնի,—*
		Իմ կյա՛նքը, իմ հո՛գին թույներով լցված։
		Ժպտում եմ, երբ որ սիրտս նվրում է,
		Երբ անդառնալի *կյա՛նքս* ջարդվում է՛.
		Ես լուտ եմ տանջվում, *ինձ չեն մոտենում,*
	9—11	Եվ նա՛, որին երբ մարդկանցից խոնջած՝
		Մոտեցա, որ սիրտս ամոքե տանջված,—
		Հենց նա՛ վերբերիս նոր վերքեր բարդեց,

ԱՆԱՌԻԿ ՍՐՏԵՐԻ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(էջ 28)

Ինքնագիր չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1898, № 1, էջ 86. Տպագրվում է նույնից։*

ՓՈՐՐԻԿ

(էջ 29)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱՌ, Դ3, № 184։ Առաջին անգամ տպվել է Մն, *1898, № 2—3, էջ 251—253։ Տպագրվում է ինքնագրից։*

ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԻՆ
(էջ 31)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 184։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 2—3, էջ 254։ Տպագրվում է ինքնագրից։*

ՔՈՒՌԻ ԱՓԻՆ
(էջ 31)

Գրել է 1898 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 6։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 4, էջ 434։ Ինքնագրի տակ նշված է գրության վայրը՝ «Թիֆլիս, Մուշտայիդի այգի», ներկայիս Օրջոնիկիձեի անվան կուլտուրայի և հանգստի զրոսայգի։ Տպագրվում է ինքնագրից։*

ԷՆ ՄԱՐԴԻԿ ...
(էջ 32)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 95։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 5, էջ 629։ Տպագրվում է ինքնագրից։*

Ճ Ա Մ Փ Ի Ն
(էջ 33)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 95։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 5, էջ 628։ Տպագրվում է ինքնագրից։*

Ա՜Խ, ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ԷԼ ...
(էջ 33)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 6, էջ 777։ Արտատպվում է վերջինից։*

ԹԵ ԹԱՐՄ ԿԱՂՆԻՆ Է ...
(էջ 34)

Պահպանվել է մեկ անվերնագիր ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 99։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 10—11, էջ 1368, այնուհետև՝* Բան *I, էջ 22,* Բան *III, էջ 5։ Արտատպվում է վերջինից։*

Թյուրիմացաբար Բան III-ում զետեղված են նաև սույն բանաստեղծության 13—24 տողերը, որպես առանձին ստեղծագործություն։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ	6	*Քեր դալար կյանքը, սիրունիկնե՞ր ...*
	10—11	*Նրանք իմ գլխիս կշորնան, սևնան,*
		Պսակներ բերեք դուք սիրու՞ս շիրմին,
	14—15	*Թարշամած կյանքս, բուժե վերիս,—*
		Ես էլ մնում եմ, որ կյանքս տանի
	17	*Ախ, երբոր ձեզ հետ ինձ է՛լ է գրկում*
ՄՆ	17	*Ախ, երբոր ձեզ հետ ինձ է՛լ են գրկում*
ԻՆՄՆ, ՄՆ	18	*Բնության երգերն հավիտենական,—*
ԻՆՄՆ	22	*Մեկ-մեկ բափբիված չոր տերևներս,*

ԽՈԺՈՒ ՆԱՅՈՒՄ Է ...

(էջ 35)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 123։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 12, էջ 1744, այնուհետև՝* Բան *I, էջ 25։ Տպագրվում է վերջինից։*

ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ ...

(էջ 35)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 123։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1898, № 12, էջ 1744, ապա՝* Բան *I, էջ 20։ Տպագրվում է վերջինից։*

Զանձրույթը սրտիս ներո՞ւ եմ փախչում

(էջ 36)

Գրել է 1898 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Բան *I, էջ 34։ Քանի որ ինքնագիրն ավելի կատարյալ էր, նպատակահարմար գտնվեց իբրև բնագիր ներկայացնել այն։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բան I	2	*Այնքան ցո՞ւրտ, այնքան տգեղ աշխարհից.—*
	5—12	*Անտառը ծա՞ռ երերցնում է*
		Իր հազարավոր վեն ճկանե՞ր,
		Ու աշնան ճողմը տանում, թաղում է
		Գետնի ցո՞ւրտ խորշում չոր տերևները։
		Այդ խորշն ամենի՛ց գրառատ գիրկն է
		Մի արյունոտված, խեղճ սրտի համար։
		Ե՞րբ պիտի ինձ է՛լ հողմն այնտեղ տանի...
		Արի բա՛ց գիրկդ, դու գրոտ խավար ...

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

(էջ 36)

Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1899, № 6, էջ 619։ Տպագրվում է նույնից։*

ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս, ՄԱՆՈ՛ՒԿ ...

(էջ 37)

Առաջին անգամ տպվել է՝ Բան *I, էջ 12։ Տպագրվում է նույնից։*

ԹՈ՛Ղ, ԸՆԿԵՐ, ԹՈ՛Ղ...

(էջ 37)

Առաջին անգամ տպվել է՝ Բան *I, էջ 15, ապա՝* Բան *III։ Տպագրվում է վերջինից։*

ՍԵՐՆ Ի՞ՆՉ Է..., Ա՜Խ, ԻՆՉ ՄԱՐԴԻԿ...

(էջ 38)

Առաջին անգամ տպվել են՝ Բան *I, էջ 23, 18—19։ Տպագրվում են նույնից։*

ԱՅԴՊԵ՛Ս, ԷԼ ՉԵ՞Ս ՍԻՐՈՒՄ...

(էջ 39)

Առաջին անգամ տպվել է՝ Բան *I, էջ 21, այնուհետև՝* Բան *III, էջ 7։ Տպագրվում է վերջինից։*

Ա՜Խ, ԹԱՌԱՄԵՑԻՆ..., Ա՜Խ, ԻՄ ԽԵՂՃ ԿՅԱՆՔՈՒՄ...

(էջ 39, 40)

Առաջին անգամ տպվել են Բան *I, էջ 24, 26։ Տպագրվում են նույնից։*

Ո՞ՒՐ ՆՆ...

(էջ 40)

Առաջին անգամ զետեղվել է Բան *I, էջ 27։ Տպագրվում է նույնից։*

ԵՐԲ ՎԱՌ ԳԱՐՈՒՆՆ Է...

(էջ 41)

Առաջին անգամ զետեղվել է Բան *I, էջ 28—30։ Տպագրվում է նույնից։*

Մանկուց աննա՛շտ եմ, նեղսի՛ռտ ու կոպի՛տ, Մե՛գ ու աշուն, ձյո՛ւն ու ձմե՛ռ

(էջ 42, 43)

Առաջին անգամ տպվել են Բան *I, էջ 32, 33։ Տպագրվում են նույնից։*

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

(էջ 43)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, *Դ*Ֆ, *№ 8։ Առաջին անգամ տպվել է՝* Մն, *1899, № 1, էջ 57, այնուհետև՝* Բան *I, էջ 31, որից և տպագրվում է։*

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Գարունն եկա՛վ շողշողալեն

(էջ 44)

Գրել է 1899 թ. մայիսին՝ Կոմքում։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1900, № 1, էջ 33։ Տպագրվում է նույնից։*

Հազար սրտերն ի՞նչ են երգում, ես մի մեծ դա՛րդ եմ քաշում

(էջ 44—45)

Երկուսն էլ գրել է 1899 թ. նոյեմբերին՝ Բաքվում։ Առաջին անգամ տպվել են՝ ՄՆ, *1900, № 1, էջ 34, որից և տպագրվում են։*

ԱՐԹԻՎՐ

(էջ 46)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, ԴՖ, *№ 9։ Առաջին անգամ տպվել է՝* ՄՆ, *1900, № 4, էջ 498։ Տպագրվում է* ՄՆ*-ից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆԹՆ *12 Քաշազոր արքան* ամպեղեն *գահի.*
14 Ընկավ
19 Ազա՛տն է մեռել *այստեղ մի անգամ.*

Ա՜խ, այն տարիքը ո՞ւր կորան, անցան

(էջ 47)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, ԴՖ, *№ 14։ Առաջին անգամ տպվել է՝* ՄՆ, *1900, № 5—6, էջ 636, որից և տպագրվում է։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆԹՆ *1—2 Ա՜խ, այն տարիքը* [ինչպես շուտ] *անցան,*
Ինչ էլ շուտ *կորան, և հուշեր դարձան.*
5 Բայց *ո՞ւր էլ լինի՛ս, ումն էլ որ լինի՛ս*
7 Քո դարդը իմն է, երնեկ դարդդ առնեմ
8 Դու անուշ ապրես, թող և՛ս սև մեռնեմ ...

Ո՞վ ես, լո՞ւռ ոգի

(էջ 47)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1900, № 5—6, էջ 651, որից և տպագրվում է։*

Ա՜խ, իմ անուշ ծաղիկները

(էջ 48)

Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1903, № 3, էջ 26, որից և տպագրվում է։*

Դժգո՞ւյն, թախծալի՞, տրտո՞ւմ ձևերով

(էջ 48)

Գրել է 1903 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԴԱԹ, Դ3, № 10 և ԳԷՅ, № 2264։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 259, էջ 2, «Հին երգերից» ընդհանուր խորագրի տակ, «Ամռան երգ» վերնագրով։ Դ3, № 10 ինքնագրի վրա կան ուղղումներ, ԳԷՅ, № 2264 ինքնագիրը, ըստ երևույթին, արտագրել է ուղղումներից հետո։ Ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել ԳԷՅ, № 2264 ինքնագիրը։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հզ	1—2	Դունա՞տ, *թախծալի՞, տրտո՞ւմ ձևերով,*
		Ջյունի սառ ձորձեր պառկած են դաշտում.
	6	*Որի պաղ ճակտին դալուկն է մահվան՝*
	8	*Եվ անդորր հուսով սպասում դարնան ...*

Ս՛ռափը աշնան կախում է ինձ նեզ

(էջ 49)

Գրել է 1903 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԴԱԹ, Դ3, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Բան II, էջ 103, որից և տպագրվում է։ Գրության ժամանակը ինքնագրում՝ 1903 թ., Բան II՝ 1913 թ.։ Կարելի է ենթադրել, որ ճիշտ է առաջինը։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն	1	Աշնան մեղմ ճիրանը *կախում է ինձ հեզ.*
	3—4	Թախծում եմ, *խորհում, սակայն ո՞չ էլ սեր,*
		Ախ ո՞չ, *հասե՞լ են թափվելուս օրեր։*
	6	Ջո՞ւր եմ կարոտով *կանչում և նրա՞ն,*
	10—11	*Քաղցր է [քնել] ննջել վերքերով սիրո,*
		Քաղցր է [քնել] ննջել սիրելուց հետո։

Տեսնես դո՞ւք էլ, անո՞ւշ աստղեր

(էջ 49)

Գրել է 1903 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԴԱԹ, Դ3, № 19 (թվագրված) և 182։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 162, այնուհետև՝ Բան II, էջ 97։ Տպագրվում է վերջինից։

Հզ և ինքնագրերում բանաստեղծությունը 12 տողից է։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4 տողից հետո

Ինքն Ա, Հզ		*Է՞հ, ո՞վ գիտե թե ձեզ համար*

		Ինչ է մեր սերն ու խնդում,
		Որոնց այնքա՜ն անհոգ, օտար
Հզ նախորդ տողը՝		*Որոնց* վրա այնքա՜ն օտար
		Նայում եք դուք ու ժպտում։
ԻՆՄՆ Բ		*Ա՛խ դուք երբե՛ք չեք իմանա*
		Սիրույս այն լուռ բերկրություն,
		Որին այնքա՜ն դուք միամիտ՝
		Նայում էիք ու ժպտում։
ԻՆՄՆ Ա, Հզ	5	Եվ *ո՞վ գիտե, թե ի՞նչ հավերժ*
ԻՆՄՆ Բ	5—8	Բայց դուք այն է՛լ չեք իմանա.
		Թե ինչի՞ցն եմ ես տրտում,—
		Դուք մի՛շտ զվարթ *նայում եք* ինձ,
		Նայում պայծա՜ռ *ու ժպտում։*

ԿԱՅՄ

(էջ 49)

Գրել է 1904 թ.։ Պահպանվել է թվակիր մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 11։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1904, № 4, էջ 24, այնուհետև՝* Բան *II, որից և տպագրվում է։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ	1	[*Ծովի* բացում, ճեռվում *վայրի,*]
ՄՆ	1	*Ծովի բացերն,* ճեռո՜ւն, *վայրի,*
ԻՆՄՆ	3	*Ընկած է* [գերին] *ալիքների*
ՄՆ	3—4	*Ընկած է* ծոցն *ալիքների*
		Մի կայմ՝ արդեն բեկվա՜ծ, տխո՜ւր ...
ԻՆՄՆ	5	*Մերթ* զարթնում է ու նետվում *վեր,*
ՄՆ	5—8	*Եվ* զարթնում է մերթ, նետվում *վեր,*
		Եվ *հուսաբեկ իջնում* նորեն,
		Եվ իր *կյանքը* վաղո՜ւց *ավեր՝*
		Անտրտունջ է ճիմի արդեն։
ԻՆՄՆ Ա, ՄՆ	10	Եվ կյանքը սին, *տխուր կատակ՝*

Հանգա՜վ երազ... Անա կրկին գունատ օր

(էջ 50)

Գրել է 1904 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 17։ Առաջին անգամ տպվել է՝ ՄՆ, *1904, № 5, էջ 35, «Գունատ օր» խորագրով, այնուհետև՝* Բան *II, էջ 100, թվակիր, առանց խորագրի։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆԳՆ	2—3	*Նայում է ինձ աչքերովն իր թաց ու պղտոր.*
		Ափսոս, փախտն զվարթուններն հրաժին,
ՄՆ	3	Թռա՞ն, կորա՞ն *զվարթուններն հրաժին,*
ԻՆԳՆ	4	Ուր *գորշ կյանքիս պերճ երազում ծաղկեցին։*
ՄՆ	4	*Որ* իմ տխուր *կյանքիս* ինում *ծաղկեցին։*

4-րդ տողից հետո

ԻՆԳՆ		[Եվ ո՞վ էին և որ երկրից բոց-անուն,
		Եվ ո՞ւր բռան իրենց թեովն այն լույսի.
		Կյանքս չկա՛ր, միտքս այլ էր, վիշտս՝ հեռուն,
		Վառվում էի առանց վշտի և հույսի]:
ՄՆ		[Բայց *ո՞վ էին և ո՞ր երկրից* բո՞ց, անուն,
		Եվ ո՞ւր բռան իրենց թեովն այն լույսի.
		Չկա՞ր կյանքս, ա՞յլ էր միտքս, *վիշտս՝ հեռուն,*
		Վառվում էի առանց ցավի և հույսի]։
ԻՆԳՆ, ՄՆ	5	Բայց ա՞խ, ինչո՞ւ *նկար, ցերե՛կ, այսպես վաղ,*
ԻՆԳՆ	6	Ինձ սառ մատով դիպար, *բերիր արթնություն...*
ՄՆ	6	Իզո՞ւր, էլ չեմ ուզում ապրել ես արթուն,
ԻՆԳՆ, ՄՆ	7	Մարի՛ր, *գնա՛, ինչպես ընկերդ անուրախ*
ՄՆ	8	Անցա՞վ *երեկ՝ քեզ պես տխո՞ւր, ապարդյո՞ւն...*

Ա՞խ, ես նիվանդ եմ

(էջ 50)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԲ, ԴՖ, № 53։ Առաջին անգամ տպվել է Մն, *1904, № 7, էջ 27, որից և տպագրվում է։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆԳՆ	8—9	*Հազար սրտերի* անվերջ ոլորտում:
		«*Դեպի ծով,* դեպ *ծով». Հոգնա՞ծ, ծարավի՞*
	13	*Դեպի լեռնե՞րը* իրանց վեհությամբ
		Աղոթքում սառած
	14	*Դեպ անտառնե՞րը* երազող, *վայրի,*
	19	Ուր ցավից անանուկ
		Միշտ զալարվում է և ուզում հասնի:

Այս գիշեր վշտից ծանրացած հոգով

(էջ 51)

Առաջին անգամ տպվել է՝ Մն, *1904, № 11, էջ 139, որից և տպագրվում է։*

—Ասա՛, ի՞նչ ես պաշտում դու
(էջ 52)

Գրել է 1904 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 16։ Առաջին անգամ տպվել է՝ Բան II, էջ 101։ Տպագրվում է նույնից։

Բան II-ում թվագրված է 1904 թ., հետագայում ինքնագրում մատիտով գրել է՝ 1905։ Պետք է ենթադրել, որ ինքնագրի նշումները կատարված են 1913 թ. հետո, քանի որ «Լիճ Լեման» բանաստեղծության ինքնագրի վրա, որը գրված է նույն տետրում, հեղինակի ձեռքով, մատիտով նշված է՝ «Տպված է 1913 թ. ժողովածուի մեջ»։ Ուրեմն՝ ավելի հավանական է 1904 թվականը։

Շա՜տ տերևներ թափվեցին
(էջ 52)

Գրել է 1904 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 17 և 19 (վերջինը թվագրված է)։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 259, էջ 2, «Հին երգերից»՝ «Ամռան դիշեր» խորագրով, այնուհետև՝ Բան II, էջ 98, Բան III, էջ 22։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն Ա	7—8	*Մերկ են դաշտեր, սար ու լին,* Ինձ է կանչում ձայնն *աշնան։*
Հզ	7—8	Նրանք անհույս թափվեցին Լավում էր ձայնն իմ մահվան։
Ինքն Բ	6—8	Վարդ *երազներն իմ դարնան։* [*Շա՜տ ողբ տավեց այս դիշեր,* *Լավում էր ձա՛յնն իմ մահվան*]։

Իր հին խմբի հետ նստած տանիքում
(էջ 52)

Գրել է 1905 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԳԼՖ, № 2264 և ԴՖ, № 17։ Առաջին անգամ թվագրված տպվել է՝ Բան II, էջ 105—106. № 2264 ինքնագրում վերնագրված է «Հերոսի երգը», որը չկա № 17-ում և Բան II։ Տպագրվում է Բան II-ից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն Ա	1	*Իր հին խմբի հետ նստած շվամում՝*
	9—12	*Եվ ահա* այն երգն սկսեց երգել, *Որ ժողովուրդն էր նրան նվիրել,* Նրան նվիրել *մի օր օրհասի*

Գովել անունը սիրած հերոսի։
Ձկան 9—12 տողերը

ԻՆՄԸ Բ 22 Ազգը՝ ապազգա, հանճարը՝ իր փառք,
27 Կդառնամ ես ձեր հողը ողջույնյան,

ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ

(էջ 53)

Գրել է 1905 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 16։ Առաջին անգամ տպվել է Հզ, 1910, № 264, այնուհետև՝ Բան II, էջ 102, Բան III, էջ 31։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄԸ 9 Բայց ինչի՞ն է փոքրիկ մանկան
12—13 Տխուր բախտի խաղերի հետ...
Երբ ոսկեհույլ վառ աստղերով
17—18 Քնի՛ր, ընի՛ր, և չարթնանա՞ս
Քեզ է՛լ աշխարհ չպիտ՝ ժպտա.

Լռո՞ւլ տնքում է ցուրտ աշուն

(էջ 54)

Գրել է, հավանորեն, 1905 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 16։ Առաջին անգամ զետեղվել է Բան II, էջ 104, այնուհետև՝ Բան III, էջ 23։ Տպագրվում է վերջինից։

Բան II և Բան III թվագրված է 1905, ինքնագրում՝ մատիտով 1911 թ.։ Ենթադրում ենք՝ ճիշտ է 1905-ը։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄԸ 8 Դեպ խո՞ր, անլույս մի գիշեր ...

Ն Ա

(էջ 55)

Գրել է, հավանորեն, 1908 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Անճ, 1909, № 7—8, էջ 149, այնուհետև՝ Բան II, էջ 107, Բան III, էջ 24։ Տպագրվում է վերջինից։ Ինքնագրում, որ անվերնագիր է, գրության թիվը՝ 1906. Անճ-ում նշված է միայն գրության վայրը՝ «Ժնևա». Բան II և Բան III — 1908 թ.։ Հավանարար ճիշտ է 1908-ը։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄԸ 1 Մուր սենեկիդ անկյունն անշուք

ԱՆՆ 1 Լուռ սենյակիդ մթնումն անշուք
ԻՆՄՆ 2—5 Նստած է նա՝ հսկելով քեզ,
Ու տխրագին ու անշշուկ
Նայում է վրադ՝ խեղճիկ մոր պես։
Ո՞վ է սակայն սևեր հագին
ԱՆՆ 5—9 Բայց ո՞վ է նա՝ այդ տրտմագին
Մտերիմդ խե՞ղճ, անծանոթ.
Գուցե քեզ շա՞տ կարոտ մի կին
Իր ստվերն է դրկել քեզ մոտ ...
Նրա անունն է մենություն.
ԱՆՆ 4-րդ տողից հետո
[Եվ իր աչքերն անհո՛ւն տխուր՝
Ուր արցունքի հետքե՞ր կան՝
Քո նայելիս ժպտում են խոր
Ինչպես հիվանդ արևն աշնան։]

Ծա՞նր մի ձեռ քաշում է ներ

(էջ 55)

Գրել է 1908 թ. Ժնևում։ Պահպանվել է մեկ թերի ինքնագիր (միայն առաջին քառատողը և երկրորդի առաջին տողը) ԳԱԹ, Դֆ, № 12։ Առաջին անգամ տպվել է՝ **Ամն**, *1908, № 7—8, էջ 149, այնուհետև՝ Բան II, էջ 108, Բան III, էջ 25։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ, ԱՆՆ 1 Ծա՞նր մի ձեռ քաշում է լուռ
ԱՆՆ 6 Ծա՞նր, հաստա՛տ պողպատի պես ...
8-րդ տողից հետո՝
[Հսկա մի զանգ տիեզերյան]
[Իր բերանից մթնարստվեր]
[Փչում է խուլ համու նման]
[Մի բառ երկար, բույլ շշուկներ...]
9—11 Ու լսում եմ, լսում, տխրում,
Ջեմ հասկանում այդ բառն անծայն ...
Մինչ ծալվո՛ւմ է, ծալվում վրաս

Աշունը եկել՝ տխո՛ւր, պատավծայն

(էջ 56)

Գրել է 1908 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԳԼՖ, № 2264 և Դֆ, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Գդ, 1911, № 1, էջ 118, այնուհետև՝ Բան II, էջ 103։

Բանաստեղծությունը փաստորեն հատված է «Կյանքի տխրությ» պոեմի «Անթարթ տարբերակից (տող՝ 920—929), որ գրել է 1908 թ., Սավոյում։ Հետագայում վերամշակելով որպես առանձին բանաստեղծություն, թվագրել է 1909, գրության վայրը՝ Թիֆլիս։ Տպագրվում է Բան II-ից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն *Ա*	*1*	*Աշունն* անտառում *տխո՜ւր,* մեղմանա՜յն
	3—4	*Ու տրտմեցնում* սիրտս *իր նման։*
		Երկար է, տխո՜ւր
Ինքն *Բ*	*4*	Երկար *է,* [տխուր,] *այդ երգն*
Ինքն *Ա, Բ*	*5*	Այդ երգը ունայն
Ինքն *Ա 5-րդ տողից հետո՝*		
		[Հառաչի նման,
		Երկա՜ր է, տխո՜ւր,
		Այդ երգը ունայն՝
		Ինչպես երգ բաղման]
Ինքն *Բ 5-րդ տողից հետո՝*		
		[Երկար է, տխուր,
		Այդ երգը ունայն,
		Ինչպես երգ բաղման]
Ինքն *Ա, Բ*	*6*	*Եվ հիշեցնում է* ձայնը իմ մահվան։

Ն Ա Պ Ո Լ Ե Ո Ն

(էջ 56)

Գրել է, հավանորեն, 1908 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր ԳԱԹ, ԴՖ, № 16, 17։ Առաջին անգամ տպվել է՝ Անն, *1909, № 9—10, էջ 238 «Մոնբլան Նապոլեոն» խորագրով, այնուհետև՝* Բան *II, էջ 110—111։ Տպագրվում է վերջինից։*

Անն *գրության վայրը՝ Լոզան։ Ինքնագրում գրության ժամանակը նշված է 1909 թ.։ Նկատի ունենալով, որ* Անն *№ 9—10 համարները լույս են տեսել դեկտեմբեր-հունվար ամիսներին, կարելի է ենթադրել, որ բանաստեղծությունը գրած պետք է լինի 1908 թ. դեկտեմբերից առաջ։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անն	*3*	*Այնտեղ* բուքերը *բռնած կոծապար*
	5	*Պառկած է Մոնբլանն էն վե՜րն Ալպերի,*

9 *Սուլում են, ճչո՞ւմ հողմերը անբուն,*
20 *Նայեն ու հիշեն անունը նրա ...*
23 Եվ զո՞ւր *կոտնա տարերքը խելառ,*
26 Իրենց բաներով *արքայակործան,*

ԻՆՔՆ *Ա 28—30* [*Բայց*] *Ու չեն կործանի այնպես մի արձան։*
Եվ կանցնեն դարեր... [կծավալվի]
[խաղաղությունը՝] նրան ձանձրալի

ԱՆՆ 30 Եվ կգա բզուկն անդո՞ռ, *ձանձրալի՞.*

ԻՆՔՆ *Ա* 30 Մի ցեղ նոր, բզուկ, *նրան ձանձրալի,*

ԱՆՆ 31—32 Եվ զո՞ւր նա կացած իր ժամանակից
Կտխրի այնտեղ *արձանը մեծի ...*

ԻՆՔՆ *Ա* 32 Իզուր *կսպասի արձանը մեծի։*

ԱՆՆ 33—34 Ոչ ո՞ք չի գիտնա անունը նրա,
Ոչ ո՞ք չի տեսնի գլխարկ մի ծանոր

ԻՆՔՆ *Ա* 34 Լսել կարծելով *փողեր ռազմական,*

ԱՆՆ 35—36 Ոչ ձեռքե՛ր խաչած մեծ կրծքի վրա
Ոչ քո՛ւն փառաճեղ, ոչ տե՞սք մաճաճոտ ...

Ինքն 40-րդ տողից հետո՝

40 [Ոչ ո՞ք չի գիտնա անունը նրա,
Ոչ ո՞ք չի տեսնի գլխարկ մի ծանոր,
Ոչ ձեռնե՛ր խաչած մեծ կրծքի վրա,
Ոչ տե՞սք փառաճեղ, ոչ քո՛ւն մաճաճոտ։]

ԼԻՃ ԼՆՄԱՆ

(էջ 57)

Գրել է, հավանորեն, 1908 թ. Շվեյցարիայում։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱՔ, ԴՖ, № 16 և 17։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 280, այնուհետև՝ Բան II, էջ 112։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հզ 3 Նրանք, *որ գլխիդ պահնորդի նման*

Հզ, ԻՆՔՆ *Ա, Բ* 4 Հանգիստ ու նպարտ *հսկում են միշտ քեզ։*
11 *Դու սիրուն՝ ինչպես հեքիաթի աղջիկ,*

Հզ, ԻՆՔՆ *Ա, Բ* 12 Նրանք՝ *վե՞հ, հսկա,* [կապույտ] *քեզ նման։*

Հզ 14 Աղջիկ հեզանուշ անեղ բնության,
16 Դատի՛կ, դու կրտսեր քրոջդ տիտան։

Հզ *16-րդ տողից հետո՝*

Ինչքան ու ինչքան պիտի քեզ ճիշեմ

Բաժան ինձանից հազար սարերով,
Քեզ սովոր աչքերս անուրջով փակեմ
Ու ինձ պատկերեմ նրանց խաբելով։

18—20 Շղարշի տակից *արոփը կրծքիդ,*
Խաղդ երկնքից թափված աստղերի
Ձյունը ճայերի խառնած *գոգնոցիդ։*

Հզ. ինքն Ա, Բ 20-րդ *տողից հետո՝*

Ինչքան ես իմ դեմ կապտել, դալկացել,
Անհայտ երազով տարվել, մեղկացել,
Հեռացել կրծքովդ այն մեծ-սրտանի,
Սիրել տվել ինձ, աղջիկ նազանի։

ԵՐԳ

(էջ 58)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, Դք, № 17, 19։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 259, «Հին երգերից»՝ «Ամռան գիշեր» խորագրով, ապա Բան II, էջ 116։ Տպագրվում է վերջինից։ Ինքնագիր № 19 գրութիւն ժամանակը՝ «1909 կամ 1910», Բան II—1911։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հզ 7—8 *Հովը ծամերդ ինձ հշեց*
Քշիչում է՝ ի՞նչ անուշ։

Անտառի միջում

(էջ 59)

Գրել է 1910 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դք, № 17։ Առաջին անգամ տպվել է՝ Հզ, 1910, № 259, այնուհետև՝ Բան II, էջ 115։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հզ 2—3 Աշունն է *շրջում*
Եվ նվում իրան

10 Կյանքս եմ ես *հիշում* ...
12 *Եվ նրա՞ աշուն։*

ԴԵՊԻ ՏՈՒՆ

(էջ 59)

Գրել է 1910 թ.։ Առաջին անգամ տպվել է Հզ, 1913, № 9, էջ 2, «Օրը դնաց»

խորագրով, ապա՝ Բան *II, էջ 114,* Բան *III, էջ 26։ Տպագրվում է վերջինից, որտեղ թվագրված է 1910։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հզ 3—4 *Մթնաժոռեց լեռնադաշտը* հայրենի,
Սրթսրթում է քամին աղա՞տ, վայրենի:
6—12 Հին, ճի՞ն *աստղերս իրենց ժպտով մանկական,*
Բարո՛վ ձորե՛ր—ամայիներ *սիրելի,*
Բարո՛վ շամբեր—իմ բախիծներ վաղեմի ...
Ի՛մ մանկություն, ի՛մ հին ձայներ սիրելի,
էլ ո՞ւր էի պարում կյանքն ու բաղդ մահ
Երբ որ այստեղ խոր ու անուշ կլինի,
Իմ բունն *հավերժ, այստեղ, դաշտում* բարձրագահ:

ԱՆՈՒՐՋ

(էջ 60)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է «ձերագ» վերնագրով մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 17։ Առաջին անգամ տպվել է Բան *II, էջ 122, այնուհետև՝* Բան *III, էջ 21։ Տպագրվում է վերջինից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն 1—8 Հեռուն *մի տնակ,* բոլորը պարտեզ,
Լուսեղեն ձյուներ կախվել են շուրջ դին.
Ճերմակ թիթեռի ցոլում թևի պես
Փարիլն է խաղում նեղ լուսամուտին:
Մի *ոսկի ճրագ,* մի սեղան, մի *գիրք* ...
Թեքվել է վրան քու դեմքը *գողտրիկ,*
Հոսում է գիշեր, ու *լուռ* անկյունում
Երազող *օջախն աչքերն է փակում։*

Մի՛ տրտմիր, քո՛ւն եղիր

(էջ 60)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Դֆ, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Բան *II, էջ 120։ Տպագրվում է նույնից։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն 3—4 Ի՞նչ մեծ, *խոր վիշտ լինի,*
Որ քնում [շրջվի] *չ*ինի

7 Շուտով և *ամեն բան*

Քարափները կիտեցին

(էջ 61)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 16, 17։ Առաջին անգամ տպվել է՝ Բան II, էջ 118, ապա՝ Բան III, էջ 18։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն *Ա, Բ* 1—2 Ժայռերը *կիտեցին*
Նորերը *իրար դեմ,*
5—7 Տրոփում են աստղերը,
Խոր շնչում ջրերը,—
Այսպես էլ *խո՞ր* կ'լինի

Մի դատա՞rկ սենյակ

(էջ 61)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 19։ Առաջին անգամ տպվել է՝ Բան II, էջ 117, այնուհետև՝ Բան III, էջ 27, որից և տպագրվում է։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն 3—9 Երազի նման նեռս նկար հանկարծ
Երգով, կարկաչով՝ աղբյուրի նման,
Աստղի ծիծաղով աշխեռդ լցված,—
Դո՛ւ, զարո՛ւն *աղջիկ*՝ աշնան հանդիման։
Դեռ խակ թևիդ մեջ ծաղիկներ փնջած,
Բաղեղ զանգուռներ նակատիդ պառկած,
Էն ջինջ *աչերումդ այնքա՞ն հոգի կար՝*

Դիշեր է, չա՞r բու

(էջ 61)

Գրել է 1911 թ.։ Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 16, 17։ Առաջին անգամ տպվել է՝ ԴԱ, 1911, գիրք Բ, էջ 138, այնուհետև՝ Բան II, էջ 119, Բան III, էջ 19։ Տպագրվում է վերջինից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գա	7—10	*Էլ ի՞նչ եմ սպասում,* *Ի՞նչ մնաց գալու։* *Էլ ոչի՛նչ, ոչինչ,* *Էլ ոչինչ չի գա*
ԻՆՐՆ Ա	10	*Էլ ոչինչ չկա*
Գա	11	*Այս տխուր,* տախտիչ
	15—16	*Ցավե՞րս է հաշվում,* *Ցավերս մեկ-մեկ։*

Ասում են ճեռո՞ւն, ճեռո՞ւն մի ճովտում

(էջ 62)

Գրել է, հավանորեն, 1911 թ.։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, Գլֆ, 2264, Դ. Դեմիրճյան ստորագրությամբ։ Առաջին անգամ տպվել է Գղ, 1911, № 4, էջ 70, որից և տպագրվում է։

Ինքնագիրը սկզբում ստորագրված է «Գ. Մանուկյան», ապա ջնջված և գրված է Դ. Դեմիրճյան. նշված է գրության ժամանակը և տեղը՝ «Երևան, 20 սեպտեմբերի», և ապա ջնջված նույն թանաքով, ինչ որ Գ. Մանուկյան ազգանունը։

Գղ գրության վայրը՝ Թիֆլիս։ Ենթադրում ենք, որ ջնջումները և փոփոխությունները կատարել է Գ. Լևոնյանը, իսկ Գ. Մանուկյան ազգանունը, թերևս հեղինակի մինչև այժմ անհայտ կնոջանունն է։

ՆՎԵՐ ՎԵՐՆԱՏԱՆ

(էջ 63)

Գրել է 1912 թ. Թիֆլիսում։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ Գլֆ, № 2418։ Առաջին անգամ տպվել է Գղ, 1917, № 6, էջ 144—146, այնուհետև՝ Ավ. Իսահակյանին նվիրած հատվածը «Հայրենի հուշեր» խորագրով, Բան III, էջ 37։ Տպագրվում է Գղ-ից։

Գղ, ինչպես և ինքնագրում Գ. Լևոնյանի ձեռքով գրված է վերնագիրը՝ «Նվեր Վերնատան», և ապա հետևյալ բացատրությունը. «1905—6 թվերին Հովհաննես Թումանյանը Թիֆլիսում ապրում էր Բերութովյան փողոցի տան մի դավթում, Դ հարկի մի բնակարանում։ Այդ բնակարանի մի ապակեպատ սենյակը գրողները կոչել էին «Վերնատուն», ուր շարունակ հավաքվում էին նրա մշտական անդամները՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը։ Դրա անդամների խմբանկարը տե՛ս Գղ, № 5, երես 91. խմբագրություն»։

«Վերնատունը» ստեղծվել է 1890-ական թվականների վերջերին և հարատևել մինչև 1908—1909 թթ.։ Մտաբերելով «Վերնատունը», Դեմիրճյանը գրել է. «Դա մի գրական փունջ էր, գրական հոգեկեցություն։ Դա նշանակում էր Ղաղարոս

Աղայան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան և սրանցից կրտսերը՝ ես։ Դա երիտասարդությունն էր մեր գրականության, ուր Աղայանն անգամ հոգով երիտասարդացել էր։ Դա գարունն էր անկրկնելի, երանելի և միշտ հիշելի» (ԴՖ, № 791)։ Ավ. Իսահակյանի հետ Շիրակում եղել է 1899 թ. (տե՛ս, Դեմիրճյան, Հուշեր, «Սովետական Հայաստան», 1940, № 297)։

Սենյակս ունայն

(էջ 68)

Գրել է 1912 թ.։ Առաջին անգամ տպվել է՝ Բան II, էջ 121, այնուհետև՝ Բան III, էջ 20։ Տպագրվում է վերջինից։

ՆԱՋԱՆՈՒՆ

(էջ 68)

Գրել է 1912 թ. Թիֆլիսում։ Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԳՀՖ, № 2264։ Առաջին անգամ տպվել է՝ Գղ, 1913, № 5, էջ 90։ Ինքնագրի վերնագրին հետագայում մատիտով ավելացրել է՝ «Աշուղ»։ Վերնագրի տակ գրված է՝ «Հ. Տերենցի հիշատակին», ապա ջնջված Գ. Լևոնյանի ձեռքով։ Լևոնյանի ձեռքով է ջնջված նաև բանաստեղծության վերջին տունը (երրորդ քառատողը), որի տակ մատիտով գրված է՝ «Գ. Դեմիրճյան»։ Ինքը՝ հեղինակը բանաստեղծությունը ստորագրել է «Գ. Մանուկյան»։ Տպագրվում է Գղ-ից։

Բանաստեղծությունը նվիրել է աշուղ Նաղանուն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1870—1912). Թորոս Թաղլանյան անունով 1892 թ. նա Մոսկվայում հրատարակել է «Սրտի խոսքեր» ժողովածուն, 1906 թ. Ալեքսանդրապոլում «Մեր խալֆան» վիպակը։ Աշխատակցել է «Գեղարվեստին», Հ. Տերենց ստորագրությամբ՝ «Աշուղ Նաղանու երգերը» ընդհանուր խորագրով աշուղական բանաստեղծություններով։

Ստորև բերում ենք ջնջված վերջին քառատողը.

Ինքն [Չէի՞ գիտում թե ուր եկար, որ փախչում ես դուրս դարդոտած,
Անտեր զուգած տուն է աշխարք թողած անհույս ու գնացած ...
Շատ մի նայիր էս աստղերին, քեզ չեն տալու լույս անմարած.—
Երգի՛ր, սիրի՛ր, խմի՛ր գինիդ, ու էս էլ քեզ բավ Նաղանի։]

Ամենից առաջ բալին չէ՞ զարթնում

(էջ 69)

Առաջին անգամ տպվել է ՆՀ, 1913, № 1, էջ 111, որից և տպագրվում է։

ԱՐԱՔՍ

(էջ 69)

Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ԳԱԹ, ԴՖ, № 70։ Առաջին անգամ տպվել է՝ ՆՀ, 1914, № 5, էջ 699—700, որից և տպագրվում է։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՄՆ 5—9 Ու նկով կանգնեց [*սառների գլխին*] ու ինչպես կանգնեց ...
Նրան նայելու էլ ո՞վ սիրտ կանի.
